ՀՀԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա դաստիարակների վերապատրաստման դասընթացներ

Մելինե Սուրենի Գյոգչյան

Թեմա՝

«Ինքնուրույնության ձևավորումը նախադպրոցական տարիքում»

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ղեկավար՝ Գ. Էմինյան

ՎԱՆԱՁՈՐ 2022

Բովանդակություն

1. **Ներածություն** ……3

Գլուխ 1.Նախադպրոցականների ինքնուրույնության ձևավորումը…… ..4

Գլուխ2. Նախադպրոցական տարիքի երեխաների ինքնուրույն երաժշտական գործունեությունը ……..……8

2. **Եզրակացություն** ……..……13

3. **Գրականության ցանկ** ……..……14

4. **Հավելված**……15

Ներածություն

Թեմայի արդիականությունը:

Կրթության և դաստիարակության ոլորտում տեղի ունեցող բարեփոխումները միտված են անհատի՝ 21-րդ դարին համահունչ, լիարժեք ձևավորմանն ու զարգացմանը որպես ինքնուրույն անհատ: Փոփոխվող մեր կյանքում փոխվում են չափանիշները բոլոր բնագավառներում, փոխվում են մշակույթները: Սակայն բոլոր ժամանակներում հաստատուն է անհատի զարգացման մանկավարժական ճիշտ որոշումը, ինչն անհրաժեշտ է և՛դպրոցում, և՛մանկապարտեզում, և՛ընտանիքում: Այս եռամիասնության թեկուզ մեկ օղակի թերացմամբ ճիշտ չեն հայտորոշվի երեխայի զարգացման, ինքնուրույնության ձևավորման հաջողություններն ու թերացումները:

Ինքնուրույնությունը մարդու կարևորագույն հատկանիշներից է, ինչի ձևավորումը սկսվում է բավականին վաղ տարիքից: Երեխայի ինքնուրույնությունն արտահայտվում է նրա կյանքի բազմաթիվ ոլորտներում. Ինքնասպասարկում, խաղեր, մշակութահիգիենիկ, հանրօգուտ գործունեություն, շրջապատի հետ շփումներ և այլն: Ինքնուրույնության ձևավորման մեջ մեծ դեր է հատկացվում երեխայի տարրական աշխատանքային գործողություններին: Աշխատանքի նկատմամբ հետաքրքրությունը, աշխատանքային հանձնարարություններ կատարելու պահանջմունքը և այլն դրվում և ձևավորվում են մանկական ինքնուրույնության շրջանակներում:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ռուսումնասիրել նախադպրոցականների ինքնուրույնության ձևավորման վերաբերյալ գիտամեթոդական գրականությունը և ինքնուրույնության ձևավորման արդյունավետ եղանակները:

Հետազոտական աշխատանքի խնդիրներն են՝

- Նկարագրել ինքնուրույնության ձևավորման կազմակերպումը մանկապարտեզում
- Բացահայտել նախադպրոցականների ինքնուրույն գործունեության կազմակերպումը և ինքնուրույն երաժշտական գործունեությունը:

Գլուխ 1. Նախադպրոցականների ինքնուրույնության ձևավորումը

Երեխան ունի իր առանձահատուկ տեսնելու, մտածելու և զգալու ունակությունները : Չկա ավելի հիմար բան, քան փորձել փոխարինել դրանք մեր ունակություններով:

(Ժ . Ժ . Ռուսո):

Ինքնուրույն երեխան՝ ազատ և անկախ անհատն է, ով իր հիմնական կարիքները բավարարելու համար կախված չէ մեծերից։ Սանի ինքնուրույնության ձևավորման կարևոր գործոն է նրան սխալվելու վախից ազատելու գործընթացը։ Միայն չսխալվելու կամ թույլ տված սխալն անկարող լինել ուղղելու բարդույթից զերծ անհատն է ի զորու գործել ինքնուրույն։

Հաճախ նախադպրոցական տարիքի երեխայի ինքնուրույնության մասին խոսելիս նկատի ենք ունենում ինքնուրույնության միայն մի՝ ինքնասպասարկման կողմը. դա կապում ենք սանի ինքնուրույն հանվել-հագնվելու, լվացվելու, սնվելու հետ։ Դրանք, անշուշտ, նույնպես համարվում են ինքնուրույնության դրսևորման կարևորագույն գործոններ, սակայն միայն արտաքին, տեսանելի ձևեր ն են։ Գոյություն ունի, բնականաբար, նաև ներքին, ոչ առերևույթ շերտը. նրանք սերտորեն շաղկապված են, լրացնում են մեկը մյուսին։ [4, էջ 45]

Այսպես, մանկապարտեզում մեծ տեղ է տրվում սանի ինքնուրույնությանը։ Մեր 2-3 տարեկան սաները կարող են ինքնուրույն սնվել, իրենց հնարավորությունների չափով հանվել, հագնվել, լվացվել։ Երբեք ցուցադրական, շինծու ոչինչ չի արվում. նկարում ենք, ինչպես կարող ենք, ծեփում ենք, ինչպես կստացվի, չենք համեմատում ստացված արդյունքները, առավելություն տալով մեկին՝ կամ նսեմացնելով մյուսին. ոգևորում ենք բոլորին։ Ցանկացած սան անհատ է, նա ունի իր առանձնահատկությունները և մենք, լավ ճանաչելով մեր սաներին, խրախուսում ենք նրանց, ջերմորեն գնահատում անգամ աննշան ձեռքբերումը, դրանով իսկ բարձրացնելով նրանց ինքնահաստատումը։ Վերջին հաշվով նպաստում ենք նրանց ինքնուրույնության զարգացմանը։ Մենք՝ դաստիարակներս, չենք միջամտում, խանգարում, առավել ևս իրենց փոխարեն ինչ-որ բան անում՝ արագ վերջացնելու, առաջանցնելու նպատակով, քանի որ երեխայի շահը գերակա է։ Որպես վառ օրինակ կարող ենք բերել գլուխկոնծի տալու կարողությունը։ Հիմնականում նոր սաները չեն

կարողանում գլուխկոնծի տալ: Մարզական խաղերի ժամանակ բոլորս համբերատար սպասում ենք, մինչև սանը թեկուզ 10-15 անգամ փորձի, որ ստացվի, ստացվելուն պես բոլորս ծափահարում և ոգևորում ենք, չստացվելուց էլ՝ չենք մատնանշում, այլ կրկին ու կրկին հորդորում ենք փորձել, մինչև կստացվի: Արդյունքում ունենում ենք խնդրի լուծման համար ինքնուրույն ելք փնտրող և բնականաբար այդ ելքը գտնող անհատ:

Սանների հետ աշխատանքը մեր կողմից տարվում է ոչ ստիպողաբար. մասնագիտական մեր հմտությունները կիրառելով՝ հասնում ենք նրան, որ նա իր կամքով, իր ինքնուրույն որոշումով միանա մեզ:

«Ես կարծում եմ, որ բոլոր քիչ, թե շատ արժեքավոր բաները ես սովորել եմ ինքնակրթության միջոցով»,- Չ. Դարվին [4, էջ 65]

Ինքնուրույնությունը անձի հավաքական հատկանիշ է, որն ունի մի շարք բաղկացուցիչներ և ենթադրում է նախաձեռնողականություն, ակտիվություն, ինքնավստահություն, նպատակասլացություն: Ինքնուրույնությունն անձի կենտրոնական հատկանիշ է:

Ինչու՞ է ինքնուրույնությունն այսքան կարևորում:

Պատճառն այն է, որ որևէ համակարգ չի կարող համարվել զարգացած կամ զարգացող, եթե այն ինքնուրույն չէ: Ցանկացած կախյալ վիճակ համարվում է ավելի ցածր մակարդակում գտնվող համակարգ, քան ինքնուրույնությունը:

Ի՞նչն է անձի անհատական զարգացման գործընթացում խթանում ինքնուրույնության ձևավոևմանը: Առաջին հերթին, կարևոր է չխանգարել տվյալ որակի ձևավորմանը, քանի որ ինքնուրույնությունն անձին ներհատուկ ու բնազդային հատկություն է.

Մարդն իր ծնված օրվանից ի վեր ձգտում է ինքնուրույնության: Օրինակ՝ տարբեր տարիքային փուլերում երեխան փորձում է իրեն հասանելի թվացող գործողությունները կատարել ինքնուրույն: Այսինքն՝սա մի բնազդային հատկություն է, որ երեխան ունի, և եթե մենք չեռք խանգարում այս հատկության զարգացմանը, ապա այն ինքնաբուխ զարգանում է և արդյունքում ունենում ենք կայացած անձ և անհատ, ով հստակ գիտակցում է՝ ինչ է ցանկանում, ինչպիսի հնարավորություններ ունի իր ցանկություններին հասնելու համար և ինչ է իրենից պահանջվում լրացուցիչ:

Երեխայի ինքնուրույնության ձևավորմանը նպաստում է նաև նրան ազատելը սխալվելու վախից: Միայն սխալվելու վախ չունեցող մարդիկ կարող են ինքնուրույն լինել: Ինքնուրույն մարդիկ փորձում են հավատարիմ լինել սեփական ցանկություններին և ինքնուրույն մարդիկ կարողանում են ավելի իրատեսորեն գնահատել իրենց հնարավորություններն ու կարողականությունները: Մնացած բոլորը հավատում են արտաքին աշխարհից եկած գնահատականներին և իրատեսորեն չեն գնահատում սեփական կարողությունները: Ինքնուրույն մարդիկ պատասխանատու են վերաբերվում սեփական քայլերին: Եվիվերջո, սաայնորակնէ, որի կարիքը մենք ունենք անկախ քաղաքացու ձևավորման գործընթացում: Մեծանալ՝ ամենից առաջ նշանակում է սովորել ամեն ինչ անել ինքնուրույն: Եվ իսկապես, մանկության հիմնական առանձնահատկությունը փոքրիկ մարդու կախվածությունն է մեծահասակներից: Հասունանալ՝ նշանակում է ինքնուրույնություն ձեռք բերել: Հասուն դառնալու գործում երեխային օգնելը այն հիմնական խնդիրներից մեկն է, որ ծնողները դնում են իրենց առջև: Բայց երբ մենք ջանքեր ենք գործադրում երեխաներին ինքնուրույն լվացվել և հագնվել սովորեցնել, թվում է, թե դրանք հիշյալ նպատակի հետ որևէ կապ չունեն: Իսկապես, անկախ այն բանից, մենքնրանցշտապեցնումենք, թե ոչ, նրանք ի վերջո ձեռք են բերում այդ հմտությունները: Ահա թե ինչու մեր առջև նման խնդիր ենք դնում ոչ թե վախից, որերեխաները երբեք ինքնուրույնաբար հագնվել չեն սովորի, և ոչ էլ մեր սեփական հոգսերը թեթևացնելու ցանկությունից, այլ այն պատճառով, որպեսզի խրախուսենք փոքրիկների ձգտումը՝ իրենց մտքերում և արարքներում անկախություն ձեռք բերել:

Ինչպե՞ս պահպանել երեխայի ինքնուրույնությունը...

Երեխաները պետք է ունեն անհավասարակշռություն առօրյայի և ազատության միջև՝ իրենց ինքնուրույնությունը զարգացնելու համար:

Որքան ավելի շատ թույլ տանք երեխային մտածել իր մասին, այնքան ինքնուրույն նա կդառնա:

- Խրախուսել երեխային առավոտյան ինքնուրույն դասավորել իր հագուստը և հագնվել:
- Թող նա ընտրի իր նախաճաշի ուտեստը և իր ուտեստը դնի իր ափսեի վրա ինքնուրույն.

Զախողումների մեջ ոչ մի վատ բան չկա:

- Պետք է երեխային հնարավորություն տալ սխալներ թույլ տալու, անկախ նրանից, թե որքան դժվար է դա: *Նա կսովորի կյանքի կարևոր դասերը սխալներից: [2, էջ 34]*

Գլուխ 2. Նախադպրոցական տարիքի երեխաների ինքնուրույն երաժշտական գործունեությունը

Երաժշտությունը հզոր աղբյուր է երեխաների գեղագիտական և հոգևոր պահանջմունքների բավարարման համար: Մանկապարտեզում երաժշտական դաստիարակության նպատակներից մեկը երեխաների ինքնուրույն երաժշտական գործունեության ձևավորումն ու զարգացումն է: Երեխաների ինքնուրույն երաժշտական գործունեությունը ներառում է այն ամենը, ինչ նրանք սովորել են մեծերից և ընդօրինակում են ըստ իրենց պատկերացումների և հույզերի: Դաստիարակն այդ գործընթացն ուղղորդում է աննկատ, զգույշ միջամտությամբ, ինչն էլ ստեղծում է հատուկ անկաշկանդ մթնոլորտ:

Անհերքելի է արվեստի դերը մատաղ սերնդի հուզական աշխարհի և գիտակցության ձևավորման գործում: Երաժշտական արվեստո անմիջական ու վառ ազդեցություն ունի մարդու վրա կյանքի առաջին իսկ տարիներից: Մանկապարտեզում երաժշտական դաստիարակության նպատակներից մեկը երեխաների ինքնուրույն երաժշտական գործունեության ձևավորումն ու զարգացումն է: Նրանք ծանոթանում են երաժշտական բազմազան ժանրերին, ունկնդրում, երգում, պարում, խաղում: Երեխաները երաժշտական արվեստի բազմազան ձևերի և տեսակների մասին պատկերացում ձևավորելու և այն գնահատելու հմտությունները ձեռք են բերում այն ժամանակ, երբ իրենց սեփական նախաձեռնությամբ ունկնդրում են երաժշտություն, երգում են, նվագում նվագարաններով, պարում, խաղում: Ակտիվորեն մասնակցելով երաժշտական գործունեությանը, երեխան գիտակցաբար յուրացնում է գիտելիքներ, ձեռք բերում հմտություններ: Հաճախ երաժշտական դաստիարակը, երեխաների երաժշտական ինքնուրույն գործունեություն է համարում նրանց կողմից արված նմանակումները: Երեխաները նմանակում են դաստիարակի երգելու հնչերանգը, պարային շարժումները, սակայն հաճախ չեն կարողանում դրանք համաձայնեցնել ո՛չ երաժշտության բնույթին, ո՛չ էլ արտահայտչամիջոցներին:

Մանկապարտեզներում անցկացվող տոներն ու զվարճանքները նույնպես կարևոր աղբյուր են երեխաների ինքնուրույն գործունեության ձևավորման համար, ինչպես նաև համապատասխան երաժշտական միջավայրի ստեղծումը: [1, էջ 15]

Երաժշտության ունկնդրումից հետո դաստիարակը երեխաներին հիշեցնում է, որ հաջորդ պարապմունքին իրենք պետք է ինքնուրույն զբաղվեն երաժշտական գործունեությամբ՝ երգեն, պարեն, շարժվեն երաժշտության ներքո: Եթե երեխան գիտակցաբար ընկալում է երաժշտությունը, ապա այն նպաստում է նրա երաժշտական զարգացմանը: Հետևաբար, ինքնուրույն երաժշտական գործունեության զարգացման, ինչպես նաև երեխաների արդյունավետ ուսուցման համար անհրաժեշտ է երաժշտական պարապմունքներին տրված նյութի ակտիվ և գիտակցված յուրացում: Ցանկալի է, որ կրտսեր խմբերից անցկացվի երաժշտական ստեղծագործության վերլուծություն: Նպատակահարմար է, որ նրանց առաջադրվեն հետևյալ հարցերը. «Ի՞նչ բնույթի երաժշտություն է», Քանի՞ մաս ունի ստեղծագործությունը. Արա՞գ է հնչում, թե՝դանդաղ: [2, էջ 37]

4-5 տարեկան երեխաների ինքնուրույն երաժշտական գործունեությունն առաջին հերթին արտահայտվում է երգերի, պարերի, խաղերի կատարման ժամանակ, առանց դաստիարակի մասնակցության և անմիջական օգնության: Այս տարիքի երեխան ինքնուրույն մտորում և արտահայտում է ունկնդրած երաժշտության մասին, որոշում դրա բնույթն ու տրամադրությունը, արտահայտչամիջոցները, կառուցվածքն ու տեսակը՝ ժանրը:

Միջին խմբում հանգստի ժամերին երեխաները կարող են բեմականացնել փոքրիկ երաժշտական պատկերներ՝ խաղալիքների միջոցով կամ տիկնիկային թատրոնի կերպարներով: Նրանք բեմականացնում են իրենց անցած հեքիաթներն ու երգերը, ունկնդրում երգեր ու հեքիաթներ:

Ավագ խմբի երեխաները կարողանում են տարբերել սխալ կատարումները ճիշտ կատարումներից, կարողանում են հորինել փոքրիկ երգեր՝ տրված բառերով, բեմականացնել նոր երգեր՝ դաստիարակի օգնությամբ: Հորինում են պարային և խաղային տարրեր ու հաճույքով ցուցադրում իրենց հորինածը:

Երաժշտության ունկնդրում

Զրույցն ունկնդրած երաժշտության շուրջն անհրաժեշտ է կազմակերպել այնպես, որ երեխաների մոտ զարգանա ինքնուրույն մտածողությունը: Երեխաներին կարելի է տալ հետևյալ հարցերը՝

- Ինչի՞ մասին է պատմում երաժշտությունը:

- Ի՞նչ էիք դուք հիշում, երբ հնչում էր երաժշտությունը:
- Ինչի՞ մասին էիք դուք մտածում:
- Ի՞նչ բնույթ ունի երաժշտությունը:
- Ինչպե՞ս պետք է երգել այդ երգը և ինչո՞ւ; [3, էջ 35]

Այս հարցերը երեխաներին օգնում են երաժշտական ստեղծագործության տարերային ընկալումից անցնել գիտակցական ընկալմանը: Դաստիարակի բացատրությունները, երեխաների մեկնաբանությունները, համեմատությունները կյանքի երևույթների, շրջապատող աշխարհի հետ, երեխաների մեջ ցանկություն են առաջացնում կրկին ունկնդրել այդ ստեղծագործությունները:

Այսպիսով, երեխաների երաժշտական ինքնուրույն գործունեությունը շարունակական և երկարատև գործընթաց է, որը պահանջում է դաստիարակներից լուրջ մոտեցումներ, խնդրի կարևորության գիտակցում, քրտնաջան աշխատանք և սեր երաժշտության և երեխաների հանդեպ:

Երեխաների ինքնուրույնությունը բացահայտելու համար հարցում ենք անցկացրել Վանաձորի 11-րդ մանկապարտեզի դաստիարակների և ծնողների հետ:

Հարցաթերթիկի[տե՛ս հավելված 1]հարցերին պատասխանել են 12 դաստիարակ և 15 ծնող:

Երեխայի ինքնուրույնությունը որտե՞ղ է ձևավորվում:



Ի՞նչն է ավելի շատ նպաստում երեխաների ինքնուրույնության ձևավորմանը:



Դաստիարակների մեծ մասը նշեցին, որ բեմականացումները շատ են օգնում, որ երեխան ինքնուրույն և անկաշկանդ դառնա: Իրենք են ընտրում իրենց դերը:

Շատերը նշեցին, որ երեխաները ամեն ինչ լավ են հիշում, երբ ինքնուրույն են կատարում:



Դաստիարակների 10%-ը պատասխանել են, որ գեղեցիկ լինելու համար օգնում են կամ մի մասն էլ վերջում իրենք են ավելացնում, որ վերջում գեղեցիկ պատկեր

ստացվի: Բայց չէ՞ որ ա երեխայի աշխատանքն է և ո՞վ է աել, որ պարտադիր պետք է գեղեցիկ լինի: Կարևորը ինքնուրույն անի և իր աշխատանքը լինի:

20%-ը ժամանակի մեջ տեղավորվելու համար աշխատանքի մի մասը կատարում են երեխայի փոխարեն, որը նույնպես սխալ ենք համարում: Ավելի լավ է դանդաղաշարժ երեխային հանձնարարել ավելի պարզ աշխատանք, որպեսզի տեղավորվի ժամանակի մեջ:

Եզրակացություն

Այսպիսով՝ ուսումնասիրելով նախադպրոցականների ինքնուրույնության ձևավորման վերաբերյալ գիտատեսական և գիտամեթոդական գրականությունը և ինքնուրույնության ձևավորման արդյունավետ եղանակները ներկացնելով, եկանք այն եզրակացության, որ երեխայի ինքնուրույնությունը ձևավորվում է և՛ տանը, և՛ մանկապարտեզում: Երեխային պետք է տալ ազատություն և վստահել նրան:

Հետազոտության մեջ ներառել ենք մեր կողմից իրականացրած հարցումները դաստիարակների հետ: Հարցումների արդյունքում բացահայտվել է նախադպրոցականների ինքնուրույնության ձևավորման ամենահեշտ ու հարմար եղանակը, պատրաստ լինելու առանձնահատկությունները, բնութագրիչները, նրանց հոգեկան գործընթացների ձևավորվածության մակարդակները, դասիարակի առջև ծառացած խնդիրները, որոնք պետք է հաշվի առնել դպրոցամուտին երեխայի հարմարման և, ընդհանրապես, վաղ ուսուցման կազմակերպման գործընթացում: Միևնույն ժամանակ, հարցաթերթիկի պատասխանների վերլուծությունը ցույց է տվել, որ ծնողներին անհրաժեշտ է մանկավարժական աջակցություն երեխայի ինքնուրույնության ձևավորմանը դպրոցամուտին նախապատրաստելու համար:

Գրականության ցանկ

1. Հովհաննիսյան Ա. և ուրիշներ << Պարտեզ>> նախադպրոցական կրթական ծրագիր, Երևան 2008, էջ 200
2. Մանուկյան Լ. և ուրիշներ. «Նախադպրոցական կրթական համալիր ծրագիր», «Զանգակ-97», Երևան, 1999
3. ՄիտոյանԼ. ՍմբատյանՈւսումնականձեռնարկմանկապարտեզիհամար,Երևան, 2010թ, էջ 270
4. Նախաշավիղ 6. 2016, 62 էջ
5. Նախադպրոցական կրթության կառավարումը, Երևան 2008թ. էջ 170

ՀԱՎԵԼՎԱԾ

Հարցաթերթիկծնողներիհամար

Հարգելի՛ծնող, խնդրում ենք արտահայտել անկեղծ կարծիք, Ձեր երեխայի ինքնուրույնության վերաբերյալ, քանի որ հարցաթերթը անանուն է:

1. Նշել երեխայի սեռը: _____

2. Ի՞նչ տրամադրությամբ է երեխան հաճախում մանկապարտեզ: _____

3. Օգնո՞ւմ եք երեխային հագնվելիս, լվացվելիս, ուտելիս _____

4. Ճանաչողական հետաքրքրություն ցուցաբերո՞ւմ է շրջապատի նկատմամբ: _____

5. Դուք պատժում կամ զայրանո՞ւմ եք սխալ արարք կատարելիս: _____

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<< ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>>
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ **Գեղարվեստական գործունեության դերը նախադպրոցականների գեղագիտական դաստիարակության գործում:**

Կատարող՝ **Նազելի Հրաչիկի Մուրադյան**

Ղեկավար՝ **մ.գ.թ., Լ. Միրաբյան**

Վանաձոր 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն_____3

2. Նկարչության դերը նախադպրոցականի գեղագիտական զարգացման գործում__5

3.Ապլիկացիա _____6

4 Փորձարարական մաս_____7

5.Բանաստեղծության ուսուցում _____9

6.Հեքիաթի ուսուցում _____11

7. Եզրակացություն_____14

8. Գրականություն_____15

Ներածություն

Թեմայի արդիականությունը.

Նախադպրոցականի զարգացման, դաստիարակության և կրթության գործում անգերազանցելի է գեղագիտական դաստիարակության դերը: Գեղարվեստական գործունեության արդիականությունը կայանում է նրանում, որ արվեստը մշտապես նորացող և արժեքը չկորցնող մի ոլորտ է, որին երեխաներին պետք է ծանոթացնել վաղ տարիքից: Գեղագիտական դաստիարակությունը արվեստում և կյանքում ձևավորում է պատկերացում գեղեցիկի վերաբերյալ, գեղեցիկը ընկալելու, զգալու և գնահատելու ընդունակություն: Գեղագիտական դաստիարակությունը զարգացնում է հուզազգացմունքային ոլորտը: Այն նպաստում է նախադպրոցականի անձնային ձևավորման կարևոր հատկություններին:

Գեղագիտական դաստիարակությունը նպաստում է գեղեցիկը նկատելու և գնահատելու, ճանաչելու կարողությունը: Գեղագիտական ուսուցման եղանակով իրականացվում են գեղագիտական դաստիարակության այս խնդիրները. Նկարչական կարողությունների ձևավորում , ծեփակերտման կարողությունների ձևավորում, ապլիկացիայի ուսուցում, երաժշտական ընդունակությունների զարգացում, կառուցողական ունակությունների ձևավորում:

Որքան միջավայրը բարեկիրթ է այնքան զարգացած կլինի նախադպրոցականի գեղագիտական դաստիարակությունը:

Նախադպրոցականի գեղագիտական դաստիարակության գործում կարևոր դեր են կատարում գրական ստեղծագործությունները: Ստեղծագործություններն այնպես պետք է ուսուցանել,որ երեխաները մշակեն հասկանալու, հերոսների գործողությունները վերլուծելու,լավը վատից, չարը բարուց տարբերելու, դատողություններ անելու,պարզ վերլուծություններ կատարելու կարողություններ:

Ստեղծագործությունը ուսումնասիրելիս անհրաժեշտ է երեխաներին օգնել՝ թափանցելու նրա հուզական գունապնակի մեջ: Պետք է կարեւորել ստեղծագործության զգացմունքային ազդեցությունը:

Խմբասենյակում պետք է ստեղծել այնպիսի հոգեբանական մթնոլորտ,որ երեխաները ոչ միայն անհամբեր սպասեն նյութի ընթերցմանը,այլեւ ակտիվորեն,ազատ ու անկաշկանդ մասնակցեն ընթերցածի շուրջ իրականացվող

քննարկմանը:Այսպիսի մթնոլորտ ապահովվում է ընթերցելուց առաջ դաստիարակի վարած նախապատրաստական զրույցը, որը բացատրական ընթերցանության մեթոդի կարեւոր բաղադրամասերից է:

Խմբասենյակում խմբերով աշխատելիս միջանձնային առողջ հարաբերությունների առկայության դեպքում գեղարվեստական ստեղծագործությունների՝ անձի զարգացման եւ արժեքային համակարգի ձեւավորման գործում ունեցած դերը դառնում է խմբային գործունեության հիմքը հանդիսացող զգացմունքային ապրումների ապահովման պայման:Երեխաների վրա նյութի ունեցած ներգործությունն ուժեղացնելու նպատակադրումով օգտագործել ստեղծագործության գործող անձանց էությունը: Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ է արտահայտիչ, հասկանալով ընթերցել նյութն ամբողջությամբ: Ցանկացած ստեղծագործության հիմնական մտքի ընկալման արդյունավետությունը պայմանավորված է դաստիարակի արտահայտիչ ընթերցմամբ ,որպեսզի երեխաները ստեղծագործության գաղափարն ամբողջությամբ ընկալեն, դաստիարակն ինքը պիտի հասկացած լինի ստեղծագործության բովանդակությունը, հերոսների տրամադրությունն ու արարքների տրամաբանությունը, պատկերացնի իրադրությունը,դեպքերը եւ դրանք ներկայացնի երեխաներին՝ հաղորդելով իր ապրումները եւ տրամադրությունը:

Հեքիաթներն սկսվում են գրավիչ արտահայտություններով՝ § Լինում է, չի լինում ,§ Կար-չկար եւ այլն:Դաստիարակի խնդիրն է ոչ թե երեխաներին սահմանումներ եւ գիտական եզրույթներ սովորեցնելը ,այլ նրանց մեջ գեղարվեստական զգացողությունների ձեւավորումը:

Աշխատանքի նպատակն է.

Սույն հետազոտության նպատակը ուսումնասիրել նախադպրոցականի գեղագիտական դաստիարակության գործում գեղարվեստական գործունեության դերը լուսաբանող գիտական, մեթոդական, գիտամեթոդական գրականության, այլոց փորձը և կատարել եզրահանգումներ:

Հետազոտության խնդիրներն են.

ա) նկարագրել գեղարվեստական գործունեության դերը նախադպրոցականների գեղագիտական դաստիարակության գործում:
բ) բացահայտել գեղագիտական դաստիարակություն ձեւավորելու առավել արդյունավետ մեթոդներ:
գ) իրականացնել հետազոտություն ուսումնասիրելով այնպիսի գրական ժանրեր, որոնց միջոցով կբացահայտվի գեղարվեստական գործունեության կարևորությունը դաստիարակության գործում :

Աշխատանքի կառուցվածքը.
Աշխատանքը բաղկացած է ներածական մասից, չորս կետերից, փորձարարական մասից, եզրակացություններից և գրականության ցանկից:

2.ՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ստեղծագործական գործունեության առաջին տեսակներից է նկարչությունը: Նկարչության նկատմամբ հետաքրքրությունը երեխաների մոտ ի հայտ է գալիս վաղ տարիքից: Շատ կարևոր է երեխաներին տալ հնարավորություն նկարելու , որի միջոցով երեխաներն արտահայտում են իրենց հույզերն ու զգացողությունները: Նախադպրոցական տարիքի երեխաները վերցնում են ներկերն ու մատիտները և ստեղծում են իրենց պատկերավոր աշխատանքները: Այս տարիքում նշանակություն չունի երեխան ունի տաղանդ, թե ոչ:Կարևորը նկարչության դասերը նրա համար նախապայման է, ներդաշնակ ու բազմակողմանի զարգացման և ձևավորման համար:

Նախադպրոցականը նկարչության միջոցով արտահայտում է նաև իր հոգեբանական վիճակը, այն նաև համարվում է հանգստացնող գործողություն: Նկարչության միջոցով նախադպրոցականները սովորում են ստեղծագործորեն հասկանալ իրենց շրջապատող աշխարհը: Եվ ամենակարևոր հիմնական բանը,որը տալիս է նկարը նախադպրոցականի գեղագիտական դաստիարակության տեսանկյունից դա համաշխարհային մշակույթին ծանոթացնելն է:

Չափազանց մեծ է գեղարվեստական նյութերի դաստիարակչական նշանակությունը,երբ նոր է ձեւակերպվում երեխայի բարոյական կերպարը:Այդ նպատակով պարապմունքի ժամանակ ուշադրություն է դարձվում դրանց դաստիարակչական կողմի վրա: Գեղարվեստական նյութերի մեջ կան ներքին տարբերություններ,որոնք պայմանավորված են դրանց ժանրային առանձնահատկություններով: Դրանք եւս որոշակի ազդեցություն ունեն պարապմունքի մեթոդների ու մեթոդական ձեւերի ընտրության վրա:

<<Գեղարվեստագեղագիտական զարգացումն սկսվում է նախադպրոցական տարիքից՝ իր առջև խնդիր դնելով ակտիվացնել երեխաների շփումը արվեստի հետ: Արվեստն և բնությունն իրենց մեջ ներառում են կյանքի ու մարդկության հավաքական գեղեցկության տարրեր, որոնք ընկալելի և ընդունելի են բոլորի կողմից: Գեղարվեստագեղագիտական զարգացման հիմքում ընկած են գեղարվեստական արժեքներն ընկալելու, վերարտադրելու, դրանց հանդեպ գիտակցական վերաբերմունք դրսևորելու գործընթացներ>>:[4,էջ124]

3. ԱՊԼԻԿԱՑԻԱ

Գեղագիտական դաստիարակությունը սեր է գեղեցկության նկատմամբ: Եթե այս գեղեցիկը միայն գեղեցիկ իրերով չի սահմանափակվում , դա կամաց-կամաց սկսվում է վերածվել դաստիարակության:

Գեղագիտական դաստիարակությանը նպաստում է նաև ապլիկացիան, որը շատ օգտակար է վաղ տարիքի երեխաների համար: Նախադպրոցական տարիքի երեխաների սիրելի զբաղմունքը կտրատել և սոսնձելն է թղթի տարբեր կտորները:Ապլիկացիայի առանձնահատկությունն այն է, որ այն առաջին հերթին ազդում է փոքրիկի ընդհանուր զարգացվածության վրա: Այս աշխատանքի միջոցով նախադպրոցականները դառնում են ավելի կոկիկ և ուշադիր : Ապլիկացիայի միջոցով փոքրիկը ճանաչում է աշխարհը, զարգանում է նաև նախադպրոցականի մանր մոտորիկան և ստեղծագործական հմտությունները: Նախադպրոցականը ծանոթանում է նաև գույներին և տարբեր ֆիգուրների հետ ապլիկացիայի միջոցով:<<Ապլիկացիան հնարավորություն է տալիս երեխային ավելի լավ հասկանալ առարկայի ձևը: Ապլիկացիայից հետո երեխան ավելի հեշտ կնկարի այս կամ այն առարկան: Շատ արդյունավետ է նաև ապլիկացիան՝ նկարչության տարրերով>>:[5,էջ86]

Փորձարարական մաս

Թեմա <<Ձմեռային տնակ>>

Թղթի վրա նախապես ուրվագծած տնակը երեխաները ներկեցին իրենց նախընտրած գույներով, ներկեցին նաև տնակի կողքի եղևնիները , որի ընթացքում կատարեցինք քննարկում , որ տարվա բոլոր եղանակներին եղևնիները չեն փոխում իրենց գույնը : Ներկելուց հետո երեխաները տնակի տանիքը և բակը պատում են բամբակյա շերտով, որպեսզի ստանան ձյան տեսք:

Երեխաները կատարելով աշխատանքը պատկերացում են կազմում ձմռանը տեղի ունեցող եղանակային փոփոխության մասին : Աշխատանքի շնորհիվ երեխաների մոտ ձևավորվեց գեղագիտական ճաշակ դեպի բնությունը: Նպաստեցինք զգայական ընկալումների , գունազգացողության, կոմպոզիցիայի, ստեղծագործական և մանր մոտորիկայի զարգացմանը:

4.Բանաստեղծության ուսուցումը

Բանաստեղծությունները ըստ ժանրային առանձնահատկությունների լինում են՝էպիկական եւ քնարական:Էպիկական բանաստեղծությունները ավելի մատչելի են նախադպրոցականներին,որովհետեւ նրանցում նկարագրվում են դեպքեր, գործողություններ, կան գործող անձինք:Էպիկական բանաստեղծությունը կարող են բաժանել տրամաբանական ամբողջություն ունեցող հատվածների, վերնագրել, վերարտադրել բովանդակությունը եւ այլն:Քնարա կան բանաստեղծություններն ավելի շատ են եւ ունեն ավելի մեծ նշանակություն գեղագիտական դաստիարակության,գրական խոսքի ուսուցման ու չափածո ստեղծագործության առանձնահատկությունների ընկալման համար:[1.էջ157] Նախադպրոցականներին առավել մատչելի են բնությանը,հայրենիքին նվիրված քնարական բանաստեղծությունները:

Քանի որ քնարական բանաստեղծությունների հիմքում ընկած են տեսողական,լսողական,հոտառական, համի զգայություններ,ուրեմն այդ բանաստեղծության շուրջ տարվող աշխատանքի նպատակը պետք է դառնա երեխաների մեջ հեղինակի զգայությունների արտացոլումը: Թե քնարական, թե էպիկական բանաստեղծության ուսուցման պարապմունքի հաջողությունը պայմանավորված է երեխաներին բանաստեղծության բովանդակության ընկալմանը նախապատրաստելու ձեւերով.սա ստեղծագործության բովանդակության եւ գաղափարի ընկալման կարեւոր պայմանն է:Ցանկացած գեղարվեստական ստեղծագործության ուսուցման գործընթացում դաստիարակն այնպես պիտի կառուցի իր աշխատանքը, որ երեխաները հստակորեն ընկալեն ենթատեքստը,հասկանան նրա իմաստը: Եթե էպիկական բանաստեղծությունը կարելի է պատմել սովորեցնել,ապա քնարականի ուսուցման խնդիրը երեխաների մեջ զգացմունքային երանգների արթնացումն է: Անթույլատրելի է զգացմունքներով հարուստ ստեղծագործությունը պարզունակացնել:

Բնության նկարագրությանը նվիրված բանաստեղծությունները ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է նախապատրաստական աշխատանք տանել,որպեսզի երեխաները ոչ միայն ճիշտ ընկալեն նկարագրված երեւույթները,այլեւ մտովի պատկերացնեն, զգան դրանց գեղեցկությունը եւ հաճույք ստանան բանաստեղծությունից: Կարելի է բնությանը նվիրված բանաստեղծությունները անցնելու ժամանակ կազմակերպել էքսկուրսիա,որը կնպաստի ավելի լավ զգալու նկարագրված տեսարանները, բնության գեղեցկությունը եւ հրաշքը:

Բանաստեղծության ուսուցման ժամանակ պետք է հատուկ տեղ հատկացնել նրա գեղարվեստական գեղեցիկ, արտահայտիչ, սահուն ու հուզական ընթերցմանը: Վերարտադրել կարելի է տալ միայն սյուժետային կամ էպիկական բանաստեղծության բովանդակությունը,որը նպաստում է երեխայի պատմելու կարողության զարգացմանը: Բանաստեղծություններն անցնելիս որոշակի աշխատանք պետք է տանել նաեւ անգիր արտասանելու ուղղությամբ:Անգիր սովորելու տեսակետից օգտակար է վերլուծությունն ու քննարկումը երեխաների կողմից:Բանաստեղծության ուսուցման մեթոդական շղթան.

•նախապատրաստական զրույց

•Բանաստեղծության ընթերցում դաստիարակի կողմից

•բարձրաձայն ընթերցում մեկնաբանություններով եւ կատարելով բառային աշխատանք

•հիմնական մտքի վերհանում

•անգիր սովորելու նախապատրաստում

•ամփոփում:

5. Հեքիաթի ուսուցումը

Հեքիաթներ սիրում են բոլոր երեխաները:Հեքիաթն ունի դաստիարակչական մեծ նշանակություն,բարոյական արժեքավոր սկզբունքներ,որոնք արտահայտվում են հերոսների արարքներով, խոսքերով :Հեքիաթը միաժամանակ բանավոր կապակցված խոսքի զարգացման արդյունավետ միջոց է:Հեքիաթները լինում են երեք տեսակ՝ կենդանական,հրաշապատում եւ իրապատում:[2.էջ159] Նախադպրոցական տարիքում ավելի լավ հասկանալի են կենդանական ու իրապատում հեքիաթները:Կենդանական հեքիաթները առաջացել են խոր հնադարում,երբ մարդը նոր սկսել է ընտելացնել կենդանիներին,դրա համար էլ այս հեքիաթներում գործող անձերը հիմնականում կենդանիներն են: Կենդանական հեքիաթներից հետագայում առաջացել են առակները: Իրապատում հեքիաթները ըստ թեմատիկայի լինում են՝ կենցաղային,հերոսական,սոցիալական եւ այլն:Դրանց բոլորի հիմքն էլ մարդկային կյանքն է:Երբեմն դրանցից շատերը ավելի ճշմարտապատում ու իրական են, քան սովորական իրապատում հեքիաթները: Պարապմունքների ընթացքում երեխաները ծանոթանում են ոչ միայն ժողովրդական հեքիաթների,այլեւ հեքիաթների գրական մշակումների, ինչպես նաեւ օտար հեքիաթների,որոնց միջոցով իմանում են այլ ժողովուրդների կյանքի եւ կենցաղի մասին: <<Հեքիաթը բարոյական եւ մտավոր զարգացման համար շատ եւ շատ նման է մայրական կաթին>>,-ասում էր Ղ.Աղայանը:[1.էջ161] Հենց դա էր պատճառը, որ ՈՒշինսկին պնդում էր,թե ժողովրդական հեքիաթները մանուկների համար գրված բոլոր տեսակի պատմվածքներից ավելի բարձր կարելի է դասել: Հեքիաթի ուսումնասիրումը իրականացվում է հետեւյալ քայլերով՝

- հեքիաթի ամբողջական ընթերցում
- երեւակայական կողմի բացահայտում
- հեքիաթի դաստիարակչական արժեքի վերհանում:

Հեքիաթում իրականն ու երեւակայականը հանդես են գալիս միաձուլված ձեւով,դա նրա ժանրային առանձնահատկություններից մեկն է: Նախադպրոցական տարիքում հեքիաթը պետք է ուսուցանել որպես գեղարվեստական ստեղծագործություն:Երբ հեքիաթի բնագիրը մշակված ու յուրացված կլինի,այդ ժամանակ կարելի է անցնել հեքիաթի երեւակայական կողմի բացահայտմանը: Երեխաների առաջ պետք է բացել հեքիաթի հեքիաթային կողմը,ցույց տալ իրականն ու անիրականը, երեւակայականն ու ճշմարտապատումը,այս ամենը կատարելով մատչելի ու պարզ ձեւով:Բացատրական ընթերցանության մեթոդի բաղադրիչներով հեքիաթը ուսումնասիրելուց հետո պիտի անցնել նրա բովանդակության երեւակայական կողմի

բացահայտմանը: Անհրաժեշտ է,որ երեխաները իրենք որոշեն,թե դեպքերից որոնք կարող են իրականում կատարվել, եւ որոնք կլինեն անիրական:Երեւակայական կողմի բացահայտման ժամանակ դաստիարակը չպետք է ակտիվ դեր կատարի,երեխան ինքը պետք է որոշի `ինչին է հավատում,ինչին`ոչ:

Հեքիաթի շուրջ տարվող աշխատանքների ընթացքում պիտի կարեւորել հերոսների այն արարքները,որոնց շուրջ են զարգանում դեպքերը: Դրանց միջոցով որոշվում են հերոսի արարքների դրդապատճառները, հեքիաթի տրամաբանությունն ու գլխավոր միտքը:Օրինակ՝Ղ.Աղայանի <<Կամակոր այծերը>>[1.էջ520] հեքիաթի ընթերցումից հետո կարելի է առաջադրել.§Գտեք այն բառը կամ արտահայտությունը, որը ձեզ համոզեց, որ այծերը կամակոր էին¦,կամ<<Կացին ախպերը>>[3.էջ40]հեքիաթի ուսուցման ժամանակ կարելի է հարցնել.§Ի՞նչ կասեր կացինը գյուղացիներին,եթե լեզու ունենար¦:Հեքիաթի ուսուցման ժամանակ շատ կարեւոր է նրա ժանրային առանձնահատկությունների շուրջ տարվող աշխատանքը:Համեմատելով տարբեր հեքիաթների լեզուն եւ ոճը,դրանց միջեւ ընդհանրությունները գտնելուց հետո ,ինչպես նաեւ երեխաների ուշադրությունը հրավիրելով հեքիաթի սկզբի, ավարտի վրա,որոշել եւ ասել `կարդացած նյութը հեքիա՞թ էր,թե՞ պատմվածք: Երեխաների հետ խոսելով տվյալ ժանրի կառուցվախքի մասին՝ պետք է նրանց բացատրել այն հանգամանքը, որ հեքիաթում մի խումբ կերպարներ գործում են ինչ-որ արարքներ՝ իրենց նպատակներն իրականացնելու մղումով: Այդ կերպարներն իրար օգնում են կամ խանգարում: Իրար դեմ կանգնած են բարի և չար ուժեր: Հեքիաթը պետք է անպայման ավարտվի բարի ուժերի հաղթանակով:Իսկ բարու հաղթանակը հեշտությամբ չի տրվում: Ընտրյալ հերոսներն անցնում են բազում դժվարին փորձությունների միջով: Երեխան ըմբռնում է բարու և չարի գործոնը ոչ միայն հեքիաթում այլև կյանքում, առօրյայում: Հեքիաթի միջոցով երեխան հասկանում է, որ թագավորն էլ կարող է բարի, ազնիվ և իմաստուն լինել:Աղքատն աննախանձ է, լիաչք ու լիասիրտ: Նա անտրտունջ կրում է իր դժբախտությունները, անվրեժ է չարիքի դեմ: Հեքիաթի միջոցով երեխան գիտակցում է այն հանգամանքը, որ ոչ աղքատությունը, ոչ որբությունը և ոչ էլ ձախորդությունը արատներ չեն: Հարկավոր էերեխային բացատրել և ցույց տալ այդ երևույթները՝ իրական կյանքի օրինակներով , առանց վերամբարձ խրատաբանության: Այդ կերպ վեր է հանվում հեքիաթի բարոյախոսությունը:

Հեքիաթն այն ստեղծագործություններից է,որը կարելի է դերերով բեմականացնել:Դերերով բեմականացնելուց առաջ պետք է կատարել բովանդակության եւ գաղափարի վերլուծություն,քննարկել հերոսների

բնավորությունների առանձնահատկությունները,դիտարկել նրանց դրսեւորած վարքը:Այս ամենից հետո նոր կարելի է անցնել հեքիաթի բեմականացմանը:Հաշվի առնելով այն հանգամանքը,որ երեխաները հաճույքով են ունկնդրում հեքիաթներ,դաստիարակը պարապմունքի ժամանակ պիտի նաեւ հեքիաթներ պատմի: Դաստիարակի խոսքը նպաստում է ,որ երեխաները ոչ միայն ստանան հեքիաթ պատմելու արտահայտչականության նմուշ,այլեւ զգան հեքիաթի լեզվի եւ ոճի ողջ հմայքը:Հեքիաթի վերարտադրության ժամանակ պետք է հասնել նրան,որ երեխաները հարազատ մնան նրա լեզվին եւ ոճին,պատմեն հենց այն բարբառով,որով շարադրված է հեքիաթը, օգտագործեն հերոսների խոսքերը,արտահայտությունները,անշուշտ պետք է բացատրվեն անծանոթ բառերը:Հեքիաթի ուսուցումը կարելի է կատարել հետեւյալ պլանով՝

•նախապատրաստական զրույց թեմայի շուրջ

•հեքիաթի ամբողջական ընթերցում դաստիարակի կողմից

•բառային աշխատանք

•աշխատանք երեւակայական կողմի բացահայտման,լեզվի,ոճի, հիմնական մտքի,դաստիարակչական գաղափարի բացահայտման, ենթատեքստի կռահման ուղղությամբ

•նախապատրաստել պատմելուն

•ամփոփում:

Եզրակացություն

Իմ կատարած հետազոտական աշխատանքի արդյունքում եկա այն եզրահանգման որ նախադպրոցական տարիքի երեխաները կարող են հեշտությամբ և ակտիվորեն շփվել, հաղորդակցվել, ներգրավվել խաղի մեջ, հրապուրվել հորինված կերպարով:Տեսնել կենցաղում, բնության մեջ հանդիպող և դրանց բնորոշ հատկությունները, ձևը ,ուրվագիծը, գույները: Նախադպրոցական երեխաներին հատուկ է՝մեծ ոգևորությամբ զննել և ուսումնասիրել այն նմուշը, որն առաջարկվում է նկարել կամ ծեփել: Նրանք ուսումնասիրում են առարկայի արտաքին տեսքը, դիտում են, զննում:Սովորում են թղթով , պլաստիլինով, գունաներկերով, բնական նյութերով տարբեր աշխատանքներ կատարելու ձևերն ու եղանակները: Նախադպրոցական տարիքի երեխաները հաճախ իրենց նախաձեռնությամբ ինտեգրում են կերպարվեստային գործունեության տեսակները:Իմ հետազոտական աշխատանքի արդյունքում եկա այն եզրակացության, որ գրական ստեղծագործությունները ևս ունեն դաստիարակչական հզոր արժեք: Մեծ է դերը անձի զարգացման , արժեքային համակարգի եւ աշխարհայացքի ձեւավորման, երեխայի մտահորիզոնի զարգացման, հետաքրքրությունների բավարարման, գործում: Միաժամանակ կապակցված խոսքի զարգացման արդյունավետ միջոց է:Նախադպրոցական տարիքում գրական ստեղծագործությունների ուսուցման ժամանակ խմբերով աշխատելը նպաստում է միջանձնային առողջ հարաբերություններ ստեղծելուն:Զարգանում է երեխայի բանականությունն ու հուզականությունը,նա կարողանում է ճանաչել կյանքն ու որոշել իր տեղը:

Գրականություն

1.Ղազարոս Աղայան <<Երկերի ժողովածու>>

Երևան, Հայպետհրատ, 1962, 592 էջ

2.Ջուլիետա Գյուլամիրյան <<Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա>>

 Երևան, Զանգակ-97 , 2006, 349 էջ

3.Հովհաննես Թումանյան <<Հայ ժողովրդական հեքիաթներ>>

Երևան <<ՀԱՇ ԸՆԴ ՀԱՇ ՓՐԻՆԹ>> ՍՊԸ 2015 , էջ 80

4. Կրթական համալիր ծրագիր Երևան 2011

5.Н. А.Ветлугина <<Дошкол. Педагогика и психология>>

М. Просвещение, 1983.-255 с.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա դաստիարակների վերապատրաստման դասընթացներ

Թեմա՝

«Ավագ նախադպրոցական տարիքի երեխաներին դպրոցական ուսումնառության նախապատրաստումը»

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ղեկավար՝ մ. գ. թ. Լ. Միրաբյան
Կատարող՝ Ղազարյան Նազելի

ՎԱՆԱՁՈՐ 2022

Բովանդակություն

1. Ներածություն
……..…3

Գլուխ 1. Նախադպրոցականների՝ դպրոցին նախապատրաստելու հիմնահարցերը…….
….5
Գլուխ 2. Վեց տարեկան երեխան և նրա պատրաստվածությունը դպրոցական ուսուցմանը
……7
2. Փորձարարական մաս ……14
3. Եզրակացություն ……15
4. Գրականության ցանկ ……17

Ներածություն

Թեմայի արդիականությունը

Վաղ ուսուցման հիմնահարցը Հայաստանում ունի տասնյակ տարիների պատմություն՝ չնայած այն բանին, որ ժամանակ առ ժամանակ այն ընդհատվել է՝

պայմանավորված երկրում առկա տնտեսական, քաղաքական և մանկավարժահոգեբանական մի շարք գործոններով:

Դպրոցը մեծ փոփոխությունների միջով է անցել. ներդրվել են նոր ծրագրեր, փոխվել է ուսուցման կառուցվածքը, և ավելի մեծ պահանջներ են դրվում առաջին դասարան գնացող երեխաների վրա: Նոր ծրագրերի ներդրման, նորարար մեթոդիստների մշակման արդյունքում կա երեխայի կրթությունը որոշակի ծրագրում ընտրելու հնարավորություն՝ կախված դպրոցին նախապատրաստվելու աստիճանից: Այլընտրանքային մեթոդների հաստատումը, որպես կանոն, տեղի է ունենում ավելի ինտենսիվ ծրագրով:

Հետազոտական աշխատանքի նպատակն է.

✓ Ուսումնասիրել 6 տարեկան երեխաների հոգեբանական, ֆիզիկական առանձնահատկությունները

- Ուսումնասիրել 6 տարեկան երեխաների դպրոցական ուսուցման պատրաստվածության վերաբերյալ տեսական և մեթոդական գրականությունը
  - Նպատակից բխող խնդիրներն են՝
- Նկարագրել նախադպրոցականների պատրաստվածությունը ուսուցման գործընթացին, նրանց ֆիզիկական և հոգեբանական առանձնահատկությունները:
- Իրականացնել փորձարարական աշխատանքներ՝ միտված նախադպրոցականների՝ դպրոցին նախապատրաստելու կազմակերպման ձևերի բարելավմանը
- Բացահայտել երեխաների հետ նախապատրատական աշխատանքների կազմակերպման ձևերը:
- Կատարել համեմատություններ, վերլուծություններ, համադրություններ և անել եզրահանգումներ:

Քանի որ երեխան դպրոց է գնում ազատ միջավայրից և նրան հատուկ են խաղն ու զվարճալիքները, պետք է ստեղծել նրա համար հարմարավետ պայմաններ:

Այսպիսով՝ պետք է համատեղել տեսական և գործնական աշխատանքները, ցանկալի արդյունք ստանալու համար, որպեսզի երեխան կարողանա ինքնուրույն եզրահանգումներ կատարել:

Հետազոտական աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլուխներից, փորձարարական մասից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Գլուխ 1. Նախադպրոցականների՝ դպրոցին նախապատրաստելու հիմնահարցերը

5-6 տարեկան երեխան, որը գտնվում է նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքային շրջանների սահմանագծում, բնականաբար մտավոր զարգացման մակարդակով, խոսքով, աշխարհընկալմամբ, շփումներով, ֆիզիկական և ֆիզիոլոգիական հնարավորություններով առանձնանում է կրտսեր դպրոցականից: Դպրոց հաճախելիս փոխվում են նրա ապրելաձևը, հիմնական գործունեությունը, դիրքը միջավայրում, փոխվում են նաև մեծերի կողմից նրան ներկայացվող պահանջները: Մինչև դպրոց հաճախելը երեխան չի կատարում այնպիսի պարտականություններ, որոնք պարտադիր են և պահանջում են որոշակի ջանքեր: Նախադպրոցական տարիքում հիմնականը խաղն է, թեև ուսուցումն ու տարբեր հանձնարարությունների կատարումն իրենց տեղն ունեն

ուսումնադաստիարակչական գործընթացում: Դպրոցական ուսուցումը պահանջում է մտավոր լարվածություն, կամային ջանքեր, բարձր աշխատունակություն: Այդ ամենը վեց տարեկան երեխայի մոտ երբեմն առաջացնում է բացասական վերաբերմունք ու հույզեր դպրոցի նկատմամբ: Դրա հավանականությունն ավելի մեծ է, եթե երեխան նախապատրաստված չէ դպրոցական ուսուցմանը, իսկ մեծահասակները չեն օգնում նրան՝ ուսուցման սկզբնական շրջանում հաղթահարելու դժվարությունները:

Վեց տարեկանում երեխան կորցնում է այն անմիջականությունն ու պարզամտությունը, որն ուներ մինչ այդ: Այդպիսի փոփոխությունների պատճառը երեխայի գիտակցության մեջ ներքին և արտաքին կյանքի տարբերակումն է: Վեց տարեկան երեխան արագորեն աճում է ֆիզիկապես, դրա հետ մեկտեղ տեղի են ունենում որոշակի փոփոխություններ նրա օրգանիզմում: Երեխան կտրուկ փոխվում է, դառնում քմահաճ, վարքում նկատվում են որոշակի ձևական, արհեստական դրսևորումներ: Կարևորագույն ձեռքբերումներից է սեփական ես-ի գիտակցումը և ներքին սոցիալական դիրքի ձևավորումը: Այդ տարիքում ի հայտ է գալիս վառ արտահայտված ձգտումը՝ կյանքում մեծահասակի դիրք զբաղեցնելու և նոր գործունեություն կատարելու: Դա արտահայտվում է դպրոցականի սոցիալական դիրք զբաղեցնելու ձգտումով: Ճգնաժամի միջոցով վեց տարեկան երեխան սկսում է գիտակցել սեփական զգացմունքները, հոգեվիճակները, հասկանում է, թե ինչ է նշանակում «Ես ուրախ եմ», «Ես տխուր եմ» և այլն: Կարողանում է սեփական գործողություններին և զգացմունքներին գիտակցված գնահատական տալ: Այս տարիքի հիմնական կարևոր ձեռքբերումը ինքնասիրության և ինքնագնահատականի ձևավորումն է: Այս փուլում խիստ կարևորվում է երեխային շրջապատող մեծահասակների դերը: [1, էջ 22]

Այսինքն՝ վեց տարեկան հասակում ճգնաժամի դրսևորումը խոսում է այն մասին, որ երեխան սոցիալական առումով պատրաստ է դպրոցական ուսուցման համար: Այս տարիքի երեխաների ներառումը ուսումնական գործունեության մեջ պահանջում է հստակ պայմաններ, ուսուցման խաղային մեթոդներ և անհատական մոտեցում:

«Հայտնի է, որ երեխայի մտածողությունն արմատական փոփոխությունների է ենթարկվում, երբ նա ունակ է դառնում լեզվական հաղորդակցության և ուսուցումը նրան սովորեցնում է տիրապետել սեփական մտքերին »: (Լ.Ս.Վիգոտսկի) [2, էջ 46]

Գլուխ 2. Վեց տարեկան երեխան և նրա պատրաստվածությունը դպրոցական ուսուցմանը

«Ուսուցման և դպրոցական կյանքին պատրաստության ձևավորումը երեխայի հոգեբանական, ֆիզիկական, մտավոր, բարոյական, աշխատանքային, գեղագիտական զարգացման այնպիսի մակարդակի ձեռբերում է, որը թույլ կտա նրան հաջողությամբ սովորելու և գործելու դպրոցական կոլեկտիվում»:

Ռ.Ե.Գերասիմովա[4, էջ 29]

Զարգացման և մանկավարժական հոգեբանության մեջ «դպրոցի պատրաստակամություն» հասկացությունը բավականին տարածված է, ինչը պայմանավորված է երեխաների դպրոցական կյանք մուտք գործելու մի քանի տարբերակներով (վեցից յոթ տարեկանից), ինչպես նաև մարզադահլիճում նախադպրոցականների ընտրությամբ, ճեմարան, մասնագիտացված և մասնագիտացված դասարաններ: Այս առումով խնդիր առաջացավ մշակել ցուցիչներ, չափորոշիչներ երեխայի պատրաստակամության համար դպրոցին և, որպես հետևանք, ախտորոշիչ մեթոդներ, թեստեր, որոնք թույլ են տալիս սահմանել պատրաստվածության աստիճանը, կանխատեսել զարգացումը ուսումնական գործընթացում: [2, էջ 78]

Մենք առանձնացրել ենք այս հարցի ուսումնասիրության երկու մոտեցում: Առաջին մոտեցումը կարելի է անվանել մանկավարժական, ըստ որի դպրոցի պատրաստակամությունը որոշվում է 5-6 տարեկան երեխաների կրթական հմտությունների առկայությամբ (կարդալու, հաշվելու, գրելու, պատմելու կարողությամբ):

Այնուամենայնիվ, ախտորոշման համար միայն առարկայական թեստերի, ստուգման առաջադրանքների և ախտորոշման մեթոդների օգտագործումը միակողմանի տեղեկատվություն է տալիս երեխայի մասին: Չլուծված են մնում նրա իրական և պոտենցիալ մտավոր զարգացման, հոգեբանական տարիքին համապատասխանելու, նրանից հնարավոր հետ մնալու և առաջ անցնելու հետ կապված խնդիրները: Այս առումով մանկավարժական մոտեցումը կանխատեսող վավերականություն չունի. այն թույլ չի տալիս կանխատեսել որոշակի երեխայի կողմից մանկապարտեզում կամ տարրական դպրոցում գիտելիքների յուրացման որակը, տեմպը և առանձնահատկությունները:

Դպրոցում սովորելու համար երեխայից պահանջվում է մտավոր, հուզական և սոցիալական զարգացվածության որոշակի մակարդակ: Երեխան պետք է կարողանա խոսել, մտածել արտահայտել իր մտքերն ու զգացմունքներն, ունենա որոշակի բառապաշար, կարողանա կատարել տարրական տրամաբանական մտահանգումներ:

Շատ կարևոր է երեխայի մոտ նախապես ձևավորել որոշակի դիրքորոշում դպրոցական դառնալու, դպրոցում սովորելու նկատմամբ: 6 տարեկան երեխաների մեծ մասը ձգտում է աշակերտ դառնալ, բայց ոչ բոլոր դեպքերում են նրանք բավականչափ հստակորեն պատկերացնում, թե ինչ է իրենից ներկայացնում սոցիալական այդ դիրքը: Երբեմն նրանց գրավում է գործի միայն արտաքին կողմը, նրանք ցանկանում են պայուսակ ունենալ, մեծ համարվել, գնահատականներ ստանալ և այլն:

«Իմանալ երեխաների հոգեբանությունը. Հետաքրքրվել նրանց ներքնաշխարհով, ուսումնասիրել նրանց անհատական ընդունակությունները»: Կ. Դ. Ուշինսկի [3, էջ 19]

Հոգեբանական մոտեցումը դպրոցի պատրաստակամության խնդրին չի կարելի համընդհանուր անվանել: Այնուամենայնիվ, հոգեբանների կողմից դպրոցական պատրաստվածությունը որոշելու համար օգտագործվող ախտորոշիչ գործիքների լայն տեսականիով, կա ընդհանուր տեսական պատկերացում, որ դպրոցական պատրաստվածությունը երեխայի ընդհանուր մտավոր զարգացման արդյունքն է իր ողջ կյանքի ընթացքում:

Դպրոց ընդունվելիս 6-7 տարեկան երեխաների զարգացման մակարդակի մասին տեղեկատվություն ստանալու մեթոդներից մեկը կարող է լինել էքսպրես ախտորոշումը, որի հիմնական նպատակն է որոշել, թե որ երեխաներին է պետք ուղղել և զարգացնել:

«Պատկերի թեստ»օգնում է որոշել գործունեության նախընտրելի տեսակը

Մեթոդ «Նկարիր ինքդ քեզ» օգնում է որոշել ձևավորված փոխաբերական պատկերների մակարդակը (խմբային թեստ): [1, էջ 24]

Այնպիսի բաղադրիչը, ինչպիսին է հոգեբանական պատրաստվածությունը դպրոցին, շատ բազմակողմ գործոն է, որը ենթադրում է երեխայի պատրաստակամությունը ձեռք բերելու նոր գիտելիքներ, ինչպես նաև վարքային, կենցաղային և այլ հմտություններ: Հասկանալով...

Ինտելեկտուալ պատրաստակամություն. ***Այն բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.***

Հետաքրքրասիրություն.

Արդեն առկա հմտությունների/գիտելիքների պաշար:

Լավ հիշողություն:

Մեծ հեռանկար.

Զարգացած երևակայություն.

Տրամաբանական և փոխաբերական մտածողություն.

Հասկանալով հիմնական նախշերը:

Զգայական զարգացում և նուրբ շարժիչ հմտություններ:

Սովորելու համար բավարար խոսքի հմտություններ.

Փոքրիկ նախադպրոցականը պետք է...

Իմանա, թե որտեղ է նա ապրում (հասցեն), ծնողների լրիվ անունը և տեղեկություններ նրանց աշխատանքի մասին:

Կարողանա պատմել, թե ինչպիսին է իր ընտանիքի կազմը, ինչպիսին է նրա ապրելակերպը և այլն:

Կարողանա տրամաբանել և եզրակացություններ անել:

Տեղեկատվություն ստանալ եղանակների մասին (ամիսներ, ժամեր, շաբաթներ, դրանց հաջորդականությունը), շրջակա աշխարհի (բուսական և ֆաունա այն տարածաշրջանում, որտեղ ապրում է երեխան, ամենատարածված տեսակները): [2, էջ 13]

Որոշ ծնողներ դեռևս նախադպրոցական տարիքում ուժեղացված ուշադրություն են դարձնում երեխաների մտավոր զարգացմանը, ինչի հետևանքով երեխան կարող է գրել և կարդալ դեռևս մինչև դպրոց հաճախելը: Սակայն փորձը ցույց է տալիս, որ դրան հավասար երեխայի մոտ կարող է բացակայել դպրոցում ուսումնական գործընթացին հոգեբանական նախապատրաստվածությունը, որը հետագայում կարող է բացասական հետևանքներ ունենալ:

Դպրոցական կրտսեր տարիքի երեխաները 40 րոպե տևող դասաժամի ընթացքում դժվար են կենտրոնանում: Առաջին դասարաններում ավելի արդյունավետ կլիներ 15-20 րոպե տևողությամբ դասաժամեր մտցնելը: Դրանից բացի, փոքրիկ աշակերտների դասասենյակում պետք է խաղալիքներ լինեն, որ նրանք կարողանան դասերից հետո լիարժեք հանգստանալ:

Արդյունավետ ուսուցման համար կարևոր դեր են կատարում երեխայի հուզական վերաբերմունքը դպրոցի նկատմամբ, դպրոց հաճախելու ցանկությունը: Հաճախ երեխան անհամբեր սպասում է դպրոց գնալու առաջին օրվան, ուրախությամբ ու ոգևորությամբ է սկսում հաճախել, բայց շատ շուտով հիասթափվում է: Դպրոցին հարմարվելը սովորաբար տևում է 4-7 շաբաթ: Այդ շրջանում նոր ծանրաբեռնվածությունը և պահանջները երբեմն երեխայի վարքում առաջացնում են որոշակի ֆունկցիոնալ շեղումներ: Ոմանք դառնում են չափից դուրս աղմկոտ, անհնազանդ, ոմանք էլ, հակառակը՝ կաշկանդված, անհամարձակ, լացկան, կամակոր: Ընդ որում՝ դժվարություններ են կրում և՛ մանկապարտեզ հաճախած, և՛ ընտանիքից եկած երեխաները:

Ջերմ մթնոլորտում, զգալով մեծերի հոգատարությունը, կարեկցանքը, երեխան կարողանում է գործել ավելի նպատակաուղղված, ձգտում է հաղթահարել դժվարությունները, հավատ ձեռք բերում իմ ուժերի նկատմամբ: Այդպիսի հարաբերությունների դեպքում զգալիորեն բարձրանում է երեխայի աշխատունակությունը:

Նախադպրոցական մանկության շրջանում երեխայի ամենակարևոր ձեռքբերումներից մեկը մայրենի լեզվին տիրապետելն է: Լեզուն միջոց է, որի

օգնությամբ մարդիկ հաղորդակցվում են միմյանց հետ, փոխանակում մտքեր և հասնում փոխադարձ ըմբռնման:

Երեխան մայրենի լեզվի բանավոր խոսքին տիրապետում է կյանքի առաջին մի քանի տարիներին: Նախադպրոցական հաստատության խնդիրն է զարգացնել երեխայի խոսքը: Խոսքի զարգացման ընթացքում շրջապատի հետ շփման, հաղորդակցության արդյունքում ձևավորվում են երեխայի խոսքային հաղորդակցական ունակությունները, զարգանում է նրա բանավոր խոսքը:

Խոսքի զարգացումը հոգեկան բարձր իմացական գործընթաց է և սերտորեն կապված է մտածողության հետ: Խոսքն ունի զարգացման իր փուլերը, որոնք ընթանում են երեխայի տարիքային առանձնահատկություններին համապատասխան:

Լեզուն նախ և առաջ հաղորդակցման միջոց է: Հետևաբար հատկապես նախադպրոցական երեխայի մայրենի լեզվի ուսուցման և խոսքի զարգացման հիմնական նպատակը պետք է լինի շրջապատի հետ խոսքային հաղորդակցման ունակությունների ձևավորումն ու բանավոր խոսքի զարգացումը: Լեզվի հիմնական միավորներն են հնչյունը, վանկը, բառը, բառակապակցություն, նախադասություն, տեքստ: [3, էջ 46]

Ըստ այդմ էլ, երեխայի խոսքի զարգացման խնդիրները կարող են լինել.

1. խոսքի հնչյունային կուլտուրայի դաստիարակում,
2. բառապաշարի զարգացում,
3. խոսքի քերականական կողմի, այսինքն՝ քերականական կառուցվածքի ընկալման ձևավորումը,
4. կապակցված խոսքի զարգացում (մենախոսություն և երխոսություն)
5. խոսքի և լեզվի տարրական երևույթների գիտակցման ձևավորում
6. գեղարվեստական գրականության հետ ծանոթացում:

Նախադպրոցական տարիքը ամենաբարենպաստ ժամանակահատվածն է խոսքի հնչյունային կուլտուրայի զարգացման համար:

Եթե երեխաները մեծանում են այնպիսի միջավայրում, որտեղ կարդում ու գրում են, ապա նրանք այդ մասին բավական բան են սովորում իրենց առաջին ուսուցչին հանդիպելուց տարիներ առաջ: Նրանք իրենց համար բացահայտում են լեզվական կառուցվածքների իմաստը, սովորում են այն հմտորեն կիրառել:

Երեխաները շատ բան կարող են սովորել վաղ տարիքում: Գրքերի հետ երեխայի վաղ շփումը օգնում է երեխային սկսել իր ճանապարհը դեպի ընթերցող և սովորող դառնալը: Գրաճանաչության հիմքերը դնելու համար պետք է դիտարկենք,

թե ինչն է շրջապատում գրավում երեխայի ուշադրությունը և հիմնվենք երեխայի բնական հետաքրքրությունների վրա:

Երեխային գրքերի հետ կապելու, գրքերի հրաշալի աշխարհը նրանց համար բացելու համար պետք է երեխաներին ներգրավելու բազմազան ձևեր գտնենք:

Գրքերը երեխաների հետ զրուցելու, նրանց բառապաշարը հարստացնելու և պատմելու հմտությունները զարգացնելու կարևոր հնարավորություն են:
Գրքերն առաջարկում են զրույցի թեմաներ, գաղափարներ և նոր բառեր են ավելացնում երեխաների առօրյա բառապաշարին: Գրքերի հետ ընկերանալու համար մենք երեխաներին օգնում ենք

- ճանաչել գլխավոր հերոսներին,
- հիշել ու արտասանել նրանց անունները և հասկանալ նրանց փոխհարաբերությունները
- ավելի մեծ տարիքի երեխաների հետ խոսում ենք դեպքերի հաջորդականության, կանխատեսելի ու անսպասելի դեպքերի և պատմության շրջադարձերի մասին:
- օգնում ենք նրանց վերհիշել դրանց նման կամ դրանցից շատ տարբեր դեպքեր իրենց կամ մեր սեփական կյանքից:

Երեխաների հետ գրքերի ընթերցելը և դրանց շուրջ զրույցները հնարավորություն են տալիս ավելի շատ բան պարզելու երեխայի, նրա հետաքրքրությունների ու նախասիրությունների մասին: Նույնիսկ երբ երեխաներն արդեն կարողանում են ինքնուրույն կարդալ, շատ կարևոր է միասին կարդալ ու խոսել գրքերի մասին:
«Մանկությունն անհնարին է առանց հեքիաթների: Վերցնել մանկությունից հեքիաթը՝ նշանակում է երեխայից խլել նրա հեքիաթը» : Վ. Սուխոմլինսկի [1, էջ 28]

Փորձարարական մաս

Այսպիսով, հարցումների արդյունքում բացահայտվեց վաղ ուսուցման գործընթացի մեջ ընդգրկված երեխաների դպրոցամուտին պատրաստ լինելու առանձնահատկությունները, բնութագրիչները, նրանց հոգեկան գործընթացների ձևավորվածության մակարդակները, ուսուցչի առջև ծառացած խնդիրները, որոնք պետք է հաշվի առնել դպրոցամուտին երեխայի հարմարման և, ընդհանրապես, վաղ ուսուցման կազմակերպման գործընթացում: Միևնույն ժամանակ, հարցաթերթիկի պատասխանների վերլուծությունը ցույց տվեց, որ ծնողներին անհրաժեշտ է մանկավարժական աջակցություն երեխային վաղ ուսուցմանը և դպրոցամուտին նախապատրաստելու համար:

Հարցումներին մասնակցեցին 10 դասվար, 15 դաստիարակ և 20 ծնող:

Դասվարների հետ զրուցելիս հասկացանք, որ ոչ միշտ են գոհ մնում, երբ նախադպրոցականները գիտելիք ստացած դպրոց են մտնում:

Ինչպե՞ս կգնահատեք առաջին դասարան եկած երեխայի պատրատվածությունը դպրոցական ուսուցմանը:



Այլ պատասխանն ընտրած դասվարներն այն կարծիքին են, որ շատ ծնողներ իրենց երեխաներին տանում են զարգացման կենտրոններ, որտեղ երեխաների գլուխն ուղղակի լցնում են տարբեր տեսակի տեղեկատվություն: Նախադպրոցական տարիքի երեխայի առաջատար գործունեությունը խաղն է, նրան սովորեցնում ենք խաղալով, ոչ թե գիտական և բարդ հանձնարարություններ տալիս: Այնտեղ երեխաներին գրել են սովորեցնում, որն ընդունելի չէ: Երեխաներին այնքան են ծանրաբեռնում, որ երեխան արդեն հիասթափվում է և չի սիրում սովորելը: Մանկապարտեզից եկած երեխան տարբերվում է կենտրոններից եկած երեխաներից: Մանկապարտեզում երեխան բացի սովորելը հանգստանում է, խաղում է, երգում, պարում: Այլ է մանկապարտեզ չհաճախած երեխաների դեպքում: Նրանք ավելի դանդաղ և ուշ են հարմարվում ռեժիմին, կարգ ու կանոնին, գրիչ բռնելուն:

Այսպիսով՝ մանկապարտեզը շատ կարևոր դեր ունի երեխայի կյանքում:

Եզրակացություն

Այսպիսով՝ նկարագրելով նախադպրոցականների պատրաստվածությունը ուսուցման գործընթացին, բացահայտեցինք նրանց հետ աշխատանքի բովանդակությունը: Նրանց հետ տարվող աշխատանքը պետք է լինի խաղերով և հետաքրքիր դադարներով, բեմադրությամբ:

Նրանց ֆիզկական և հոգեբանական առանձնահատկությունները նկարագրելով՝ եզրակացրեցինք, որ 6 տարեկան առաջին դասարանցին իր հոգեկան զարգացման մակարդակով մնում է նախադպրոցական, նա պահպանում է նախադպրոցական տարիքին հատուկ մտածողության առանձնահատկությունները, նրա մոտ գերիշխում է ոչ կամածին հիշողությունը (հիմնականում հիշում են այն, ինչը հետաքրքիր է, ոչ թե այն, ինչը պետք է հիշել), ուշադրության առանձնահատկությունն այնպիսին է, որ երեխան միևնույն գործով ընդունակ է արդյունավետ զբաղվելու 10-15 րոպե:

Իրականացնելով փորձարարական աշխատանք՝ մենք փորձում էինք նախադպրոցականներին ուսուցման գործընթացին նախապատրաստող կազմակերպչական ձևերը բացահայտել և հասկանալ՝ որն է ավելի դյուրին ճանապարհը:

Այսպիսով՝

Երեխային դպրոց պատրաստելիս նրանց պետք է սովորեցնել.

- հաղորդակցման կանոններ;
- հասակակիցների և մեծահասակների հետ շփվելու ունակություն;
- առանց ագրեսիվության իրենց վարքագիծը կառավարելու ունակություն.
- նոր միջավայրին արագ հարմարվելու ունակություն.

Մեր հետազոտական աշխատանքի տեսական գրականության ուսումնասիրության և վերլուծության, և դրանց գործնական փորձարկման արդյունքում եկանք մի շարք եզրահանգումների.

- Երեխայի խոսքի զարգացումը, լեզվական հաղորդակցումն ու փոխազդեցությունն իր անմիջական միջավայրի, շրջապատի հետ, հասակակիցների և մեծահասակների հետ համատեղ գործունեությունը նրա զարգացման ամենակարևոր գրավականներն են:
- Երեխաների հետ աշխատանքը, մասնավորապես՝ նախադպրոցական տարիքում, արդյունավետ կարող է լինել միայն այն ժամանակ, երբ ընտանիքն ու ծնողները դառնում են մանկապարտեզի գործընկերները, երբ մանկավարժական, խոսքային, լեզվական պահանջները նույնն են լինում թե՛ տանը, թե՛ մանկապարտեզում, ուստի շատ կարևոր է ընտանիքի հետ աշխատանքը, անհրաժեշտ է, որ ծնողները նույնպես դառնան մեր համայնքի մի մասը և սովորեն ու աշխատեն մեզ հետ:

Գրականության ցանկ

1. Երեխաների հետ հոգեբանական աշխատանքի ուղեցույց, Երևան 2018, 187 էջ

2. Մխիթար Գոշ, Գիտամեթոդական հոդվածներ, 2020/2, էջ 400

3. Սարգսյան Ա., Երեխայի հոգեբանական պատրաստությունը դպրոցական ուսուցմանը, Երևան, 2002թ 180 էջ

4. Տաթև գիտակրթական համալիր, Նախադպրոցական կրթություն: Երևան 2008թ., էջ 63

ՀՀ կրթության,գիտության,մշակույթի և սպորտի նախարարություն
ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ << Սաների հայրենաճանաչության ձևավորման կարևորությունը>>

Դաստիարակ ՝ Նարա Մարգարյան

Ղեկավար՝ Գագիկ Էմինյան

ՎԱՆԱՁՈՐ-2022

Բովանդակություն

Ներածություն……3

1. Սաների հայրենաճանաչության ձևավորման կարևորությունը……5

2.Հայրենաճանաչության դաստիարակման մեթոդական նյութերը……9

3. Եզրակացություններ և առաջարկություններ……..13

4. Օգտագործված գրականության ցանկ……15

Ներածություն

Թեմայի արդիականությունը .Ազգի նկարագիրը պահելու և հայրենիքին տեր կանգնելու հիմքում ընկած է հայրենաճանաչությունը։Անհատն այնքանով է տեր իր երկրին ,որքանով ճանաչում և սիրում է։Հայրենաճանաչ հայը բոլորովին այլ վերաբերմունք ունի հայրենիքի հանդեպ,ով չի կարող անպիտան լինել սեփական երկրի հանդեպ։ Այս հարցում ես կարևոր եմ համարում նաև մարդկային բարձր որակները,ինչի մասին Ղուկասյան Ա. Հայոց պատմությունը 6-7-րդ դասարաններում / ուսուցչի ձեռնարկում / նշված է հետևյալ միտքը. << Դաստիարակել մարդկային-բարոյական այնպիսի որակներ ու արժանիքներ,ինչպիսիք են բարությունը,անկեղծությունը,համբերատարությունը,հանդուրժողականությունը և համագործակցությունը>> [2.,էջ7]։

Ազգը ձևավորվում է իր ժողովրդով,զգային արժեքներով,ուստի պետք է հենց վաղ մանկության տարիքից՝ սկսած ընտանիքից,այնուհետև մանկապարտեզից ,լուրջ քայլեր ձեռնարկել այդ հարցում։

Նախնիների ժառանգած ազգային արժեքների պահպանման հարցում ամենաճիշտ ճանապարհը հայեցի դաստիարակությունն է։

Թեման համարում եմ արդիական ,որովհետև այն հայրենաճանաչության, նրա կարևորության,արժեքների ու վերաբերմունքի ուսուցման նախապայմաններից է։ Կարծիքներ եմ զետեղել նաև մանկավարժների՝ տարբեր հարթակներում ներկայացրած հետազոտական աշխատանքներից։ Թեման հետաքրքրել է ինձ։ Առաջարկություններս կիրառել և դիտարկել եմ մասնագիտական գործունեությանս ընթացքում թիրախային տարբեր խմբերում։

Ես գտնում եմ, որ հայրենիքը ճանաչելու և բացահայտելու համար շատ կարևոր են էքսկուրսիաները և արշավները, ինչը կլինի մշակութային կարողունակության ու նաև բոլոր կարողունակությունների տարբեր ենթակետերում առաջադրված պահանջների լուծումը։ Արդյունքում երեխան կճանաչի հայկական և մարդկային քաղաքակրթությունների մշակույթը և ձեռք կբերի Հայաստանի պատմության մասին իմացություն,նրա մոտ կարժևորվի սեփական ինքնությունը և կձևավորվի մշակութային գրագիտություն և ճաշակ։

Հետազոտության նպատակը. Ուսումնասիրել սաների հայրենաճանաչության ձևավորման առանձնահատկությունները և առաջադրել մանկավարժական արդյունավետ պայմաններ:

Հետազոտության խնդիրները.

1. Ներկայացնել սաների հայրենաճանաչության ձևավորումը
2. Դիտարկել հայրենաճանաչության դաստիարակման մեթոդական նյութերը

1. Սաների հայրենաճանաչության ձևավորման կարևորությունը

Այսօր հայրենասիրական դաստիարակությունը մեր երկրում համարում եմ հիմնական նպատակներից մեկը: Ակնհայտ է դարձել, որ մեր երկրում տիրող այժմյան քաոսի հիմնական պատճառն այսօրվա երիտասարդների մեծամասնության մոտ հայրենիքի հանդեպ անտարբերությունն է, նրանք գրեթե չեն մտածում բարոյական սկզբունքների մասին, չեն հարգում իրենց հայրենիքի պատմությունը և գրեթե չեն մտածում երկրի ներկայի մասին։ Ես գտնում եմ,որ որպես հայրենասեր մարդ առաջին հերթին ձևավորվում են ընտանիքում,այնուհետև ուսումնական հաստատություններում,որտեղ սովորեցնում են անվերապահորեն սիրել իր հողն ու ջուրը,մայրենի լեզուն, ինչը հայրենասիրության առաջին նախապայմանն է …այս նպատակով ուզում եմ մեջբերել Յու. Ամիրջանյանի,Ա.Սահակյանի մանկավարժություն ուսումնական ձեռնարկից մի հատված, որտեղ նշվում է հետևյալ միտքը. << Ցանկացած մարդու համար իր հայրենիքն սկսվում է իր տնից,իր բակից,իր այգուց։ Հայրենիքն սկսվում է իր երկրի մի թիզ հողից,մի կում ջրից,մի հանդամասից,մի կտոր երկնքից։ Եվ ամենակարևորը՝իր մայրենի լեզվից։ Եթե այս ամենը մարդը չի հասկանում,ապա <<հայրենիք >> հասկացությունը նրա համար կդառնա ինչ-որ անորոշություն>> [1.,348 էջ]:

Նախադպրոցական տարիքի երեխաների հայրենասիրական դաստիարակության նպատակն է երեխայի հոգում սեր սերմանել և սնուցել բնության, տան և ընտանիքի, երկրի պատմության և մշակույթի հանդեպ, որոնք ստեղծվել են հարազատների և ընկերների, նրանց աշխատանքով կոչված հայրենակիցներ։ Նախադպրոցական տարիքի երեխաների մեջ հայրենասիրական զգացմունքների

դաստիարակումը բարոյական դաստիարակության խնդիրներից է, որը ներառում է սիրո դաստիարակությունը սիրելիների, մանկապարտեզի, հայրենի քաղաքի / գյուղի / և հայրենի երկրի նկատմամբ:

Հայրենասիրական զգացմունքները դրվում են կոնկրետ սոցիալ-մշակութային միջավայրում գտնվող մարդու կյանքի և լինելու գործընթացում: Ծննդյան պահից մարդիկ բնազդաբար, բնականաբար և աննկատ կերպով ընտելանում են իրենց միջավայրին, իրենց երկրի բնությանը, մշակույթին, իրենց ժողովրդի կյանքին:

Պետք է նկատի ունենալ, որ նախադպրոցականը հուզականորեն է ընկալում իրեն շրջապատող իրականությունը, հետևաբար հայրենասիրական զգացմունքները հայրենի քաղաքի, հայրենի երկրի նկատմամբ դրսևորվում են հիացմունքի զգացումով իր քաղաքի, իր երկրի հանդեպ: Որպեսզի երեխաները սիրեն իրենց հայրենիքը, քաղաքը, գյուղը,մենք պետք է նրանց ցույց տանք գրավիչ կողմից:

Նրանց քաղաքացիական դիրքորոշման և հայրենասիրության ձևավորումն ի վերջո կախված է նրանից, թե ինչպես կհայտնվի հայրենի քաղաքը նախադպրոցական տարիքի երեխայի առջև, ինչ հույզեր ու ապրումներ կառաջացնի, որքանով կհարստացնի երեխայի երևակայությունը: Սկսելով այս գործը՝ որպես դաստիարակ, ես առաջին հերթին պետք է ինքս լինեմ հայրենասեր, սիրեմ և լիարժեք ճանաչեմ իմ հայրենիքը, իմ քաղաքը,որպեսզի կարողանամ երեխայի մեջ սեր սերմանել դեպի հայրենի հողը:

Ես իմ առջև նպատակ եմ դրել՝ կրթել երեխաներին հարազատ հողին,մշակույթին ծանոթանալու միջոցով,ուզում եմ դաստիարակել մեր երկրին պիտանի մարդիկ,ովքեր կգնահատեն,կարժևորեն և որպես հայրենասեր մարդիք այլ վերաբերմունք կունենան հայրենիքի հանդեպ:

Հայրենիքի զգացումը երեխայի մեջ սկսվում է ընտանիքի անդամների հետ հարաբերություններից: Սրանք այն արմատներն են, որոնք նրան կապում են իր տան և անմիջական միջավայրի հետ:

Մեծ նշանակություն ունի նախադպրոցականներին ծանոթացնել պատմական, մշակութային, ազգային, աշխարհագրական ինքնատիպությանը: Որպիսի երեխան կարողանա գիտակցել ինքն իրեն, պետք է ծանոթանա հայրենի քաղաքին, նրա տեսարժան վայրերին:

Երկրի հզորությունը նրա քաղաքացիական համայնքի մեջ է,դեռ վաղ մանկությունից պետք է սկսել երեխայի մեջ հայրենիքի նկատմամբ հարգանք ու սեր սերմանել։Ճիշտ ժամանակին նախադպրոցականների գրագետ, բարոյական և հայրենասիրական դաստիարակությունը կօգնի մեծացնել այնպիսի սերունդ, ովքեր անտարբեր չեն լինի իրենց հայրենի երկրի պատմության, նրա մշակույթի, ավանդույթների և իդեալների նկատմամբ։

Ազգային արժեքները և հայրենասիրական գաղափարը մարդն ամբողջովին ընկալում է ողջ կյանքի ընթացքում՝ հայեցի դաստիարակության շնորհիվ։Հայրենաճանաչության կարևոր խնդիրն ազգայինի պահպանումն է,ինչը պետք է սկսել հենց վաղ մանկության տարիքից։

Մանկապարտեզում, այնուհետև դպրոցում և համալսարանում համակարգված և նպատակաուղղված աշխատանքի միջոցով հնարավոր է երեխաների մոտ ձևավորել ճիշտ, հարգալից քաղաքացիական վերաբերմունք հայրենիքի նկատմամբ, հանդուրժողականություն միմյանց նկատմամբ, սեր և հարգանք ծնողների նկատմամբ։

Երեխայի մեջ հայրենասիրություն դաստիարակել առանց հարազատ մշակույթին ծանոթացնելու պարզապես չի ստացվի։

Բարոյական դաստիարակության համար մեծ նշանակություն ունի գիտակցված հետաքրքրությունը սեփական ժողովրդի ինքնության հանդեպ։ Երեխայի մշակութային անհատականության «մշակումը» տեղի է ունենում
աստիճանաբար. այն սկսվում է ինչ-որ բանի նկատմամբ հասարակ հետաքրքրությամբ,
միայն դրանից հետո՝ ինքն իրեն մասնակցելու ըմբռնումով և ցանկությամբ։

Նախադպրոցականների հետ հայրենասիրական դաստիարակության ժամանակ պետք է հաշվի առնվի երեխայի հոգեկանի առանձնահատկությունները՝ կարճաժամկետ ուշադրություն, հետաքրքրություն, ամեն ինչի նկատմամբ բարձր հուզական ներգրավվածություն։ Մեթոդաբանական մշակումների մեծ մասը, որոնք կիրառվում են նախադպրոցական հաստատություններում, հիմնված են դրա վրա։

Երեխաներին պետք է պատմել մեր անցյալի կարևորագույն իրադարձությունների մասին, թե ինչ սխրագործություններ են կատարել իրենց

պապերն ու նախապապերը հանուն հայրենիքի պահպանման, որքան անձնուրաց են պաշտպանել իրենց հայրենի հողը մարտերում և որքան ազնվորեն են աշխատել նրա համար: Պետք է, որ երեխաները հպարտանան, որ իրենք այդ հրաշալի ժողովրդի մի մասն են, և որ նրանց ընտանիքներն անմիջականորեն ներգրավված են երկրի պատմության կերտման մեջ:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում հայրենասիրական դաստիարակության հետևյալ ձևերը թույլ են տալիս երեխաներին զարգացնել բարոյական և հայրենասիրական զգացմունքներ.

- Դաստիարակի պատմությունը հայրենի հողի / քաղաքի կամ գյուղի /մասին:
- Էքսկուրսիա դեպի տեղական պատմության թանգարան:
- Այցելություն տեսարժան վայրեր:
- Հանդիպում պատերազմի և աշխատանքի վետերանների հետ:
- Հայրենիքի պաշտպանների մասին պատմվածքներ կարդալը:
- Հարցազրույց հարց ու պատասխանի տեսքով:
- Հայրենիքի մասին բանաստեղծությունների, ասացվածքների սովորում:
- Լսելով ժողովրդական երաժշտություն, սովորելով երգեր Հայրենիքի մասին:
- Թեմատիկ բանահյուսական ցերեկույթ:
- Տեղական արհեստների հետ կապված արհեստների պատրաստում:

Դաստիարակի խնդիրն է երեխային շրջապատող աշխարհայացքում ստեղծել ճիշտ հաջորդականություն՝ նրա մտքում հնարավոր շփոթմունքից խուսափելու համար: Նախադպրոցական տարիքի երեխաների հայրենասիրական դաստիարակության վերաբերյալ մեթոդական գրականության մեջ կարելի է գտնել այս աշխատանքի կազմակերպման տարբեր սցենարներ: Եվ թող մեր երեխաները սովորեն հավատալ իրենց, հարգել իրենց սիրելիներին, պաշտպանել իրենց հայրենի բնությունը և հպարտանալ իրենց սիրելի հայրենիքով:

2. Հայրենաճանաչության դաստիարակման մեթոդական նյութերը

Այսօր, առավել քան երբևէ, արդիական են երիտասարդ քաղաքացիների շրջանում ազգի պատմական հիշողության վերակենդանացման, հայրենիքի հանդեպ արժեքային վերաբերմունքի և սիրո ձևավորման խնդիրները: Հայրենասիրական դաստիարակության կազմակերպումը ուսումնական գործընթացի կարևոր բաղադրիչ է, որի օժանդակությունն ու գործիքը մեթոդական աշխատանքն է:

Նախադպրոցականների հայրենասիրական դաստիարակության խնդիրները.

- բնության և բոլոր կենդանի էակների նկատմամբ զգույշ վերաբերմունքի ձևավորում.
- աշխատանքի նկատմամբ հարգանքի կրթություն.
- հետաքրքրության զարգացում հայկական ավանդույթների և արհեստների նկատմամբ.
- գիտակցական վերաբերմունք ձևավորել հայրենիքի զգացողությունն ամուր պահելու առումով
— մարդու իրավունքների մասին տարրական գիտելիքների ձևավորում.
- Հայաստանի քաղաքների մասին պատկերացումների ընդլայնում.
- երեխաների ծանոթությունը պետության խորհրդանիշերին / զինանշան, դրոշ, օրհներգ /.
- զարգացնել պատասխանատվության զգացում և հպարտություն երկրի ձեռքբերումներով.
- հանդուրժողականության ձևավորում, հարգանքի զգացում այլ ժողովուրդների, նրանց ավանդույթների նկատմամբ.

Այս խնդիրները լուծվում են երեխաների գործունեության բոլոր տեսակներում՝ խմբասենյակում, խաղերում, աշխատանքի մեջ, առօրյա կյանքում, որոնք երեխայի մեջ ձևավորում են և՛ հայրենասիրական զգացմունքները և՛ նրա հարաբերությունները մեծահասակների ու հասակակիցների հետ:

Այս ամենն օգնում է գտնել ճանապարհ հասկանալու սիրելիներին, տեսնելու և ընդունելու շրջապատող աշխարհը:

Քաղաքացի, հայրենասեր լինելը շատ կարևոր է: Ուստի հայրենիքի հանդեպ սիրո դաստիարակությունը, հայրենիքի հանդեպ հպարտությունը պետք է զուգակցվի

այլ ժողովուրդների մշակույթի, յուրաքանչյուր մարդու նկատմամբ անհատապես, անկախ մաշկի գույնից և կրոնից, բարյացակամ վերաբերմունք ձևավորելու հետ:
Իհարկե, մարդկային վերաբերմունք տարբեր ազգերի մարդկանց նկատմամբ երեխայի մոտ ստեղծվում է հիմնականում ծնողների ,ուսուցիչների, մեծահասակների ազդեցության տակ, ովքեր նրա կողքին են:Մանկապարտեզում ես աջակցում և ուղղորդում եմ երեխայի հետաքրքրությունը այլ ազգի մարդկանց նկատմամբ: Երեխաներին պատմում եմ,թե որտեղ է ապրում յուրաքանչյուր ժողովուրդ՝ տարածքային առումով, բնության յուրահատկության և բնակլիմայական պայմանների մասին, որոնցից կախված է նրա ապրելակերպը, աշխատանքի բնույթը և այլն: Ներկայումս այս աշխատանքը արդիական է և հատկապես դժվար, պահանջում է մեծ նրբանկատություն և համբերություն.

Իմ պատկերացմամբ այժմյան երիտասարդ ընտանիքներում հայրենասիրության դաստիարակության հարցերը կարևոր չեն համարվում և հաճախ միայն տարակուսանք են առաջացնում: Այդ պատճառով իմ աշխատանքի հիմնական գաղափարը ուսուցիչների և ծնողների ջանքերը համախմբելն է, որպեսզի երեխաների մեջ ձևավորվի պատկերացումներ տան, ծնողների, այն վայրի մասին, որտեղ նա ծնվել է, այն ամենի մասին, ինչն իրեն շրջապատում է և այն, ինչը կոչվում է փոքր հայրենիք:

Սխալ է կարծել, թե սեր սերմանելով ընտանիքի հանդեպ՝ մենք արդեն սեր ենք սերմանում հայրենիքի հանդեպ: Ցավոք, լինում են դեպքեր, երբ սեփական տան հանդեպ նվիրվածությունը համակցված է երկրի ճակատագրի նկատմամբ անտարբերության, երբեմն նույնիսկ դավաճանության հետ:Ուստի կարևոր է, որ երեխաները հնարավորինս շուտ տեսնեն իրենց ընտանիքի «քաղաքացիական դեմքը»,ծանոթանալ,թե ինչու են իրենց պապերն ու տատիկները մեդալներ ստացել, ճանաչել հայտնի նախնիների և այլն:

Ցանկացած մարզ, քաղաք, նույնիսկ փոքրիկ գյուղ յուրահատուկ է: Յուրաքանչյուր վայր ունի իր բնույթը, ավանդույթներն ու ապրելակերպը: Համապատասխան նյութի ընտրությունը թույլ է տալիս նախադպրոցականներին պատկերացում կազմել այն մասին, թե ինչով է հայտնի իր հայրենի երկիրը:

Հայրենասիրական դաստիարակության մեջ մեծերի, հատկապես մտերիմ մարդկանց օրինակը մեծ նշանակություն ունի: Ընտանիքի ավագ անդամների / պապիկների և տատիկների, Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների, նրանց առաջնագծի և աշխատանքային սխրանքների / կյանքից կոնկրետ փաստերի հիման վրա անհրաժեշտ է երեխաների մեջ սերմանել այնպիսի կարևոր հասկացություններ, ինչպիսիք են «պարտքը հայրենիքի հանդեպ», «սեր հայրենիքի հանդեպ», «ատելություն թշնամու հանդեպ», «աշխատանքային սխրանք» և այլն: Շատ կարևոր է երեխային հասցնել այն ըմբռնմանը, որ ամեն ինչից առավել սերն է դեպի հայրենիքը,որ մեր նախնիները դժվար ճանապարհով են կերտել մեր երկիրը,ինչը պետք է սրբորեն պահպանել:

Երեխաները պետք է ճանաչեն մեր հերոսներին ,ովքեր իրենց կյանքը տվել են հանուն մարդկանց երջանկության և խաղաղության ու նրանց անունները հավերժացել են քաղաքների, փողոցների, հրապարակների անուններով, նրանց պատվին կանգնեցվել են հուշարձաններ:

Նախադպրոցական տարիքի երեխային բնորոշ են կարճաժամկետ հետաքրքրությունները,անկայուն ուշադրությունը,հոգնածությունը:Երեխաների ուշադրությունը զարգացնելու նպատակով անհրաժեշտ է պահպանել երկարաժամկետ հետքրքրությունն պարապմունքները համատեղել մեկ թեմայում մայրենի լեզվով և բնությանը,երաժշտությանը,տեսողական գործունեությանը ծանոթանալուն:

Երեխաների տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելով անհրաժեշտ է կիրառել խաղային տեխնիկայի, ինչը կարևոր է ինչպես երեխաների ճանաչողական ակտիվությունը բարձրացնելու, այնպես էլ պարապմունքների համար հուզական մթնոլորտ ստեղծելու համար:

Քանի որ նախադպրոցական տարիքի երեխաներին բնորոշ է տեսողական-փոխաբերական մտածողությունը,առօրյա կյանքին, ավանդույթներին, առանձին պատմական պահերին ծանոթացնելու նպատակով անհրաժեշտ է օգտագործել ոչ միայն գեղարվեստական գրականություն, նկարազարդումներ և այլն, այլ նաև «կենդանի» տեսողական առարկաներ և նյութեր (ազգային տարազներ, հնաոճ կահույք, սպասք, գործիքներ և այլն): «Առօրյա կյանքը» չափազանց արդյունավետ է

երեխաներին հեքիաթներին, ժողովրդական արհեստներին, կենցաղային հնառճ իրերին ծանոթացնելու համար,այդ պատճառով ցանկալի է այցելություններ դեպի թանգարաններ, ինչպես նաև մանկապարտեզում հատուկ հարմարությունների կազմակերպում,որտեղ երեխայի համար առաջին հնարավորությունն է բացվում ներթափանցել իր հայրենի հողի պատմության մեջ։

Երեխաների բարոյական և հայրենասիրական դաստիարակության պարագայում շատ կարևոր է ծնողների հետ սերտ հարաբերությունները։ Սեփական ընտանիքի պատմությանը շոշափելը երեխայի մոտ ուժեղ հույզեր է առաջացնում և ստիպում է կարեկցել, ուշադիր լինել անցյալի հիշողության, պատմական արմատների նկատմամբ։Այստեղ ուզում եմ մեջբերել Յու.Ամիրջանյանի,Ա.Սահակյանի մանկավարժություն ուսումնական ձեռնարկում նշվում է հետևյալը .<< Ուսուցիչները, ծնողները պարտավոր են ձևավորել երեխաների հայրենասիրական զգացմունքներ։ Պարտավոր են նրանց մեջ սերմանել հոգատար վերաբերմունք հայրենիքի պատմության ,մշակույթի,հայրենիքում ապրող հարազատ ժողովրդի, ազգի ավանդույթների, սովորույթների նկատմամբ։ Անկախ տարիքից, հասարակության բոլոր անդամների մեջ պետք է սեր դաստիարակել հարազատ վայրերի, իրենց գյուղի, ավանի,քաղաքի, հայրենի բնաշխարհի նկատմամբ։ Դաստիարակել հայրենիքը պաշտպանելու պատրաստակամություն,փաստացի օրինակներով երեխաների մեջ ամրապնդել սերը ժողովրդի նկատմամբ>>[1.,348]։

Այս հարցում ծնողների հետ փոխգործակցությունը նպաստում է ավանդույթների նկատմամբ զգույշ վերաբերմունքին, ուղղահայաց ընտանեկան կապերի պահպանմանը։

Եզրակացություն

Ես եկել եմ այն եզրահանգման, որ մանկապարտեզի սաների հայրենասիրական զգացմունքների դաստիարակությունը բարդ գործընթաց է,նպատակին հասնելու համար պետք է հնարավորություն ընձեռել ,որպեսզի երեխաները շրջագայեն Հայաստանի տարբեր վայրերով՝ հայրենիքը ճանաչելու,սիրելու,գնահատելու և հետագայում պաշտպանելու նպատակով:Պետք է հնարավորություն տանք երեխաներին տեսնելու սեփական հայրենիքի գեղեցկությունն ու հիանալ դրանով:

Երեխաների մոտ հայրենասիրական դաստիարակության ձևավորումը տեղի է ունենում կյանքի, կրթության և դաստիարակության օբյեկտիվ պայմանների, տարբեր աշխատանքների գործընթացում,ինչն արդյունավետորեն կիրականացվի որպես մանկավարժական ամբողջական գործընթաց, որը համապատասխանում է Համընդհանուր բարոյականության նորմեր, երեխայի ողջ կյանքի կազմակերպում ՝ հաշվի առնելով նրա տարիքը և անհատական հատկանիշները: Ուստի դաստիարակչական աշխատանքը պետք է ներառի հայրենասիրական գաղափարներ,իրականացվի տարբեր ու արդյունավետ ձևերով՝ բովանդակալից և պատշաճ զգացմունքային հարստությամբ:

Կրթական և խաղային գործունեության հայրենասիրական բովանդակության հարստությունը,պարապմունքներից դուրս գործունեության բազմազանությունը, ընտանիքում ապրելակերպը երեխաների հայրենասիրության ձևավորման հիմնական ու կարևորագույն աղբյուրներն են:

Հայրենասիրական դաստիարակության համար որոշիչ նշանակություն ունի դրական բարոյական փորձը, առանձնահատուկ նշանակություն,ինչի կուտակման համար երեխաների հաղորդակցությունն ու համատեղ գործունեությունը շատ կարևոր է:

Առաջարկություն. Գտնում եմ,որ պետք է հնարավորություն ընձեռել երեխաներին շրջագայելու Հայաստանի տարբեր վայրերով՝ հայրենիքը ճանաչելու և բացահայտելու նպատակով , ինչի շնորհիվ մենք կստանանք հետևյալ պատկերը.

1. Ստացված տպավորությունների մասին արտահայտվում է.
2. Ժամանակը ճիշտ է կառավարում.

3. Հասկանում է՝ով է ինքը
4. Ձևավորվում է որպես հայ
5. Դիտարկում է բնագիտական երևույթները, ճանաչում բնությունը,մտածում միջավայրի պահպանության մասին

Ամենակարևորը, վերջնարդյունքում ունենում ենք ազգային նյութական և ոչ նյութական ժառանգությունը ճանաչող,ազգայինը առժևորող, հայրենասեր և օրինակելի քաղաքացի։

Նախադպրոցական տարիքի երեխաների հայրենասիրական դաստիարակության արդյունավետությունը մեծապես կախված է նախադպրոցական հաստատության և ընտանիքի համակարգված աշխատանքից,ինչը պետք է իրականացվեն զուգահեռաբար՝ լրացնելով միմյանց։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու.Ա., Սահակյան Ա.Ս., Մանկավարժություն, Եր., 2005,էջ 456:
2. Ղուկասյան Ա. Հայոց պատմությունը 6-7-րդ դասարաններում։ Ուսուցչի ձեռնարկ, Երևան, 2007.էջ 88

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՅՆ ԱՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՒԱԾԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԽՈՐՈՒՄԱՅՆ ՊՈՒՆԿՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՌԻԼԵՈՒԲԻԿԻ ԱՌՅԱԼ
ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԹԹԼ ՍԻՈՒԲՅԱԼ

ՎԱՆԱՁՈՐ 2022

Բովանդակություն

Ներածություն ……..……..3-4
ԳԼՈՒԽ 1 ԽԱՂԸ ՈՐՊԵՍ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ……..…..5-10
1.1 Խաղի առանձնահատկությունները ……..….5-8
1.2 Խաղի նշանակությունը երեխայի դաստիարակության և զարգացման գործընթացում ……...…..8-10
ԳԼՈՒԽ 2 ԽԱՂԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐՆ ՈՒ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ……11-17
2.1 Խաղերի դասակարգումն ու տեսակները ……..11-16
2.2 Խաղերի կազմակերպման օրինակներ ……...16-17
Եզրակացություն ……..18
Օգտագործված գրականության ցանկ ……19

Ներածություն

Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ այսօր էլ նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության և զարգացման վրա մեծ ազդեցություն ունի խաղային գործունեությունը: Խաղը, որպես նախադպրոցականի առաջնային գործունեություն կարևոր դեր է խաղում անձի զարգացման, առանձին հատկանիշների ձևավորման և ներքին բովանդակության հարստացման գործում: Խաղի միջոցով նախադպրոցական տարիքի երեխաների մեջ ձևավորվում և զարգանում են այն գործողությունների համար անհրաժեշտ կարողություններն ու որակները, որոնք նրանք պետք է կատարեն ապագայում:

Խաղը միջոց է, որտեղ կրթությունը վերածվում է ինքնակրթության: Այն սերտորեն կապված է անհատականության զարգացման հետ, մասնավորապես մանկության հատկապես ինտենսիվ զարգացման շրջանում այն առանձնահատուկ նշանակություն է ստանում: Խաղում այս կամ այն չափով ձևավորվում են դպրոցում սովորելու համար անհրաժեշտ հատկություններ, որոնք որոշում են սովորելու պատրաստակամությունը: Մասնակցելով երեխայի զարգացմանը՝ խաղն ինքն էլ զարգանում է: Ահա այս ամենում է կայանում հետազոտման թեմայի արդիականությունը:

Խաղային գործունեության բացառիկ մանկավարժական նշանակությունը նախադպրոցական երեխաների կյանքում կարևորել են խոշորագույն հայ մանկավարժներ և գրողներ՝ Խ. Աբովյանը, Ղ. Աղայանը, Հ. Թումանյանը, Ս. Բաբայանը և այլք: Խ. Աբովյանը մանկավարժներին հորդորում էր «չզրկել երեխային անմեղ խաղերից»: Հովհ. Թումանյանը գտնում էր, որ խաղը երեխայի «բնական, օրգանական պահանջն է, նրա լրջությունը, նրա էությունը»: Վերջինիս կողմից մշակված խաղերի մեծ մասը տարբերակված ձևով առ այսօր օգտագործվում է նախադպրոցական դիդակտիկայում (օրինակ «Գույների խաղը», «Աստղերի խաղը» և այլն):

Աշխատանքի նպատակը: Մեր աշխատանքի նպատակը նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման գործում խաղի՝ որպես առաջատար գործունեության, նշանակության ու դերի վերաբերյալ գիտական, մեթոդական, գիտատեսական գրականության և այլոց փորձի ուսումնասիրությունն է:

Աշխատանքի խնդիրներն են՝

1. Նկարագրել խաղը, որպես նախադպրոցական տարիքի երեխայի գործունեության առաջատար ձև,

2. Բացահայտել խաղի տեսակները և առանձնացնել խաղի դասակարգման ձևերը,
3. Ներկայացնել խաղի կազմակերպման օրինակներ:

Աշխատանքի կառուցվածքը. Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, ենթագլուխներից, եզրակացությունից: Առաջին գլխում, որը վերնագրված է խաղը որպես նախադպրոցականի առաջատար գործունեություն, մանրամասն ներկայացված են խաղային գործունեության առանձնահատկությունները և երեխայի զարգացման ու դաստիարակության գործընթացում ունեցած նշանակությունը: Երկրորդ գլուխը, որը վերնագրված է խաղի տեսակների ընդհանուր բնութագիրն ու դասակարգումը, մանրամասն հետազոտել և ներկայացրել ենք խաղի տեսակներն ու նրանց դասակարգումը: Մեր հետազոտական աշխատանքին կցված է խաղի կազմակերպման մի քանի օրինակ: Աշխատանքի կազմված է 19 տպագիր էջից: Թեմայի ուսումնասիրության ժամանակ օգտագործել ենք մեզ հասանելի դարձած աղբյուրներ և գրականություն:

ԳԼՈՒԽ 1
ԽԱՂԸ ՈՐՊԵՍ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1.3 Խաղային գործունեության առանձնահատկությունները

Խաղը մարդկային գործունեության ամենահետաքրքիր ձևերից մեկն է, այն ծագում է մանկության շրջանում և ուղեկցում մարդուն ողջ կյանքի ընթացքում: Խաղային գործունեության ընթացքում երեխայի համար ստեղծվում են լավագույն պայմաններ (ազատ և բնական միջավայր, հուզական ներդաշնակություն, հավատարմության մթնոլորտ)՝ հասակակիցների միջավայրում «այստեղ և անհապաղ» ինքնահաստատավելու համար: «Այստեղ և անհապաղ» ինքնահաստատվելու հնարավարությունը երեխայի խաղային գործունեության հիմնական դրդապատճառն է, հետևաբար երեխաների խաղային գործունեության կազմակերպման և կառուցման գլխավոր սկզբունքը [1, 95]:

Խաղը հատուկ տեղ է զբաղեցնում նախադպրոցական տարիքի երեխայի կյանքում: Ազատ ժամանակ երեխաները խաղում են խաղեր, որոնք շատ դեպքերում իրենք իրենց են հնարում: Հետազոտողները նշում են, որ հենց խաղի ինքնուրույն ձևերն են, որ մեծ նշանակություն ունեն երեխայի զարգացման գործում: Նման խաղերն անվանում են «կյանքի լաբորատորիա», որոնց ժամանակ երեխայի անհատականությունն առավել լիարժեք է դրսևորվում, ուստի և խաղը համակողմանի զարգացման միջոց է (մտավոր, գեղագիտական, բարոյական, ֆիզիկական) [4, 11]:

Յուրաքանչյուր խաղացող երեխա առաջին հերթին ջանում է ինքնահաստատվել հասակակիցների միջավայրում, և խաղի առավելությունը, մանկան գործունեության այլ ձևերի համեմատությամբ այն է, որ խաղում կան ինքնահաստատվելու բոլոր հնարավորությունները: Նշված բնութագիրը խոսում է այն մասին, որ այն իրենից ներկայացնում է ներքին պահանջմունքներով պայմանավորված գործունեություն, որն ունի յուրաքանչյուր երեխայի համար սուբյեկտիվ՝ ներանձնային նշանակություն և արժեք [1, 95]:

Տեսականորեն խաղը դիտարկվում է տարբեր դիրքերից: Փիլիսոփայական մոտեցման տեսանկյունից նախադպրոցական տարիքի երեխաների համար խաղը աշխարհը ճանաչելու հիմնական միջոցն է: Խաղացողն այն մարդն է, ով ստեղծում է իր աշխարհը խաղի միջոցով: Հոգեբանության տեսանկյունից նշվում է խաղի ազդեցությունը երեխայի ընդհանուր մտավոր զարգացման, նրա ընկալման,

հիշողության, երևակայության, մտածողության ձևավորման վրա: Սոցիալական ասպեկտը դրսևորվում է նրանով, որ խաղը սոցիալական փորձի յուրացման ձև է, դրա զարգացումը տեղի է ունենում շրջապատող մեծահասակների ազդեցությամբ [4, 12]:

Նախադպրոցական տարիքի երեխայի համար խաղն իսկապես ինքնարժեք գործունեություն է և բացարձակ անփոխարինելի է նախադպրոցականի կյանքում: Որևէ այլ գործողություն չունի խաղային գործունեության նշված առավելությունները: Այս մասին վկայում նաև Դ. Էլկոնինը: Նա նշում էր, որ երեխան հասարակության անդամ է և հասարակությունից դուրս ապրել չի կարող: Նրա հիմնական պահանջմունքն է ապրել շրջապատող մարդկանց հետ: Խաղն էլ հենց այն գործունեությունն է, որում երեխան սկզբում էմոցիոնալ, իսկ հետո ինտելեկտուալ ձևավ յուրացնում է մարդկային հարաբերությունների ողջ համակարգը [12, 12-13]:

Էլկոնինի պնդմամբ, խաղը պատմական զարգացում ունի, այն առաջ է եկել պատմական զարգացման որոշակի փուլում, երբ դրվել է մեծերի աշխարհի բաժանման հիմքը, որի արդյունքում երեխաները դուրս են մղվել աշխատանքի գործընթացից: Տարանջատվում է մանկական աշխարհը մեծերի աշխարհից և վերջինս երեխայի համար դառնում է իդեալ, և երեխաները իրենց խաղի մեջ այդ աշխարհը սիմվոլիկ իրականություն են դարձնում: Չէ որ երեխայի մեջ կյանք մտնելու, աշխարհը ճանաչելու իրենց տեղն ունենալու ակտիվ տենդենց կա, որի հիման վրա էլ ծագում է խաղը [12, 14-15]:

Խաղային գործունեության հիմքում, ըստ Դ. Մենջերիցկայի, ընկած են հետևյալ դրույթները.

1. Խաղը նախատեսված է ընդհանուր դաստիարակության խնդիրները լուծելու համար, որոնց թվում առաջնահերթությունը բարոյական և սոցիալական որակների զարգացումն է,
2. Խաղը պետք է ունենա զարգացող բնույթ և լինի մանկավարժի հսկողության ներքո,
3. Խաղի առանձնահատկությունը կայանում է գործունեության տարբեր տեսակների (աշխատանք, ուսում, կյանք) ներթափանցման մեջ [9, 26-27]:

Նախադպրոցական խաղային գործունեությունը զարգանում է հետևյալ առանձնահատկություններով:

1. Խաղային գործունեության ընթացքին բնորոշ է սյուժե, որն ի հայտ է գալիս երկու տարեկան հասակում և աստիճանաբար բարդանում ու հարստանում է:

Եթե կրտսեր նախադպրոցականի խաղի սյուժեները անկայուն են, փոփոխական, հաճախ, նույնիսկ, անտրամաբանական, ապա ավագ նախադպրոցականների սյուժեն իրենից ներկայացնում է թեմատիկ բովանդակության տրամաբանական զարգացում և վերլուծություն՝ խաղային կերպարների, գործողությունների և հարաբերությունների միջոցով: Սյուժեի զարգացումը պայմանավորված է մի շարք գործոններով՝ խաղացող երեխաների սոցիալական փորձով, խաղային գործունեության դրդապատճառներով, կազմակերպման և ղեկավարման եղանակով:

2. Խաղային գործունեության նպատակը սոցիալական դերի յուրացումն է, որն ուղղված է նաև մարդկության հավաքական փորձի փոխանցմանը՝ խաղային փոխհարաբերությունների սոցիալական նմուշների յուրացման եղանակով:

Սոցիալական դերերով պայմանավորված խաղային հարաբերությունները սոցիալական հարաբերությունների նմուշների արտապատկերները չեն, դրանք ենթակա են վերլուծության, վերանայման և կատարելագործման: Վերակառուցված խաղային հարաբերությունները կարող են խաղից հանգիստ փոխանցվել իրականություն և դառնալ սոցիալական հարաբերությունների նմուշ: Նախադպրոցականի խաղային գործունեության հիմնական միավորը դերն է, որի յուրացմանն են ուղղված խաղային գործողություններն ու հարաբերությունները: Խաղի դերերով է պայմանավորված խաղի զարգացման ընթացքը [1, 100]::

Դերային խաղի զարգացումն ընթանում է նախադպրոցականի մտածողության զարգացման հետ համահունչ, փոխկապակցված: Նախադպրոցական տարիքում, ըստ այդմ, տարբերում ենք՝ խաղ-գործողություններ, խաղ-պատկերումներ, խաղ-հարաբերություններ: Խաղային գործունեության ընթացքում կրտսեր նախադպրոցականն առաջնորդվում է գործողություններով և գործողություններից բխում է նրա միտքը, երեխան սկզբից գործում է, հետո՝ մտածում:

Միջին նախադպրոցական տարիքում երեխան պատկերացնում է և պատկերավոր կերպարները փորձում է արտացոլել խաղային գործողությունների միջոցով: Ավագ նախադպրոցական տարիքում արդեն երեխան սկզբից պատկերացնելով մտածում է, և վերլուծում, որից հետո նոր պլանավորում է խաղային գործողությունները: Պ. Ուսովայի կարծիքով ավագ նախադպրոցականների խաղերում, ճիշտ դաստիարակության պարագայում հստակ արտահայտված է մտադրությունը, ձևավորվում են դերերը, դերային կանոններն ու գործողությունները [11, 39]:

3. Ստեղծագործական բնույթի խաղային գործունեությունը նախադպրոցական երեխայի համակողմանի զարգացման և դաստիարակության արդյունավետ միջոց է՝ մանկավարժից պահանջող կազմակերպման վարպետություն և ղեկավարման նրբանկատ հմտություններ:

Խաղային գործունեության գրագետ ղեկավարումը ենթադրում է խաղի ընկալում և դիտարկում երեխայի տեսանկյունից: Նախադպրոցական տարիքի երեխաներին խաղը հրապուրում է իր երկակի բնույթով: Այն միաժամանակ և' հաճույք է և' լուրջ աշխատանք: Խաղը ազատ և ինքնուրույն գործունեություն է, միևնույն ժամանակ այն չի բացառում մեծահասակների աջակցությունն ու մասնակցությունը: Խաղը նախադպրոցականի կողմից ընկալվում է նաև որպես դերերով սահմանափակված գործունեություն, կանոնակարգված ազատություն: Խաղը երեխայի համար «հնարովի» երևակայական գործունեություն է, նա շատ լավ գիտի, որ «սուտի» է խաղում, միևնույն ժամանակ նա խաղի ընթացքում իսկապես վերապրում է իրական կյանքի տարբեր իրողություններ, խաղում է ամենայն լրջությամբ և պատասխանատվությամբ: Ստեղծագործական խաղային գործունեության ղեկավարումը պահանջում է անուղղակի միջամտություն՝ ուղղված խաղի ինքնակառավարմանը և երեխաների ներքին կազմակերպվածության բարձրացմանը [1, 100]::

1.4 Խաղի նշանակությունը երեխայի դաստիարակության և զարգացման գործընթացում

Խաղը նախադպրոցական տարիքի երեխաների կյանքի ու գործունեության կազմակերպման ամենահարմար ձևն է: Խաղի էական, կարևոր նշանակությունն այն է, որ երեխան կագնում է ուրիշ մարդու դիրքերի վրա, կարծես թե նայելով աշխարհին նոր՝ մեծահասակի տեսանկյունից, որի դերը նա կատարում է: Խաղը նպաստում է երեխաների բազմակողմանի՝ մտավոր, բարոյական, գեղագիտական, ֆիզիկական, աշխատանքային դաստիարակությանը: Այս ձևով էլ խաղը նախապատրաստում է երեխաներին դպրոցական ուսուցմանը, նպաստում անհրաժեշտ դիրքորոշման ձևավորմանը, օգնում կատարելու իր վրա կամավոր վերցրած պարտականությունները [11, 48-49]:

Նախադպրոցական շրջանը երեխայի կյանքի մի մեծ հատված է: Կյանքի պայմաններն այս ընթացքում կտրուկ ընդլայնվում են: Երեխան իր համար բացահայտում է մարդկային փոխհարաբերությունների աշխարհը, գործունեության տարբեր բնագավառները և մարդկանց շփման, հաղորդակցման ֆունկցիները: Երեխան մեծերի կյանքի մեջ ընդգրկվելու, նրանում ակտիվ մասնակցություն ցուցաբերելու մեծ ցանկություն է դրսևորում, ինչը ինքնին չի համապատասխանում

երեխայի հնարավորություններին: Բացի այդ, ոչ պակաս մեծ ուժով նա ձգտում է ինքնուրույն գործունեությունը, որտեղ երեխան մոդելավորում է մեծերի կյանքը [7, 6]:

Խաղի ընթացքում երեխաների մոտ ձևավորվում է կենտրոնանալու, ինքնուրույն մտածելու, ուշադրություն զարգացնելու, գիտելիքի ձգտումը: Տարված լինելով խաղով՝ երեխաները չեն նկատում, որ սովորում են, նոր բաներ են հիշում, կողմնորոշվում անսովոր իրավիճակներում, համալրում են գաղափարների, հասկացությունների պաշարը և զարգացնում երևակայությունը: Երեխաներից նույնիսկ ամենապասիվները մեծ ցանկությամբ են ընդգրկվում խաղի մեջ:

Պարզ է, որ նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության և զարգացման գործընթացում խաղը մեծ նշանակություն ունի: Ներկայացնենք դրանցից մի քանիսը:

Խաղային գործունեության ընթացքում բավարարվում են նախադպրոցականի հիմնական պահանջմունքները՝ ակտիվության և ինքնուրույնության, հաղորդակցման և մեծահասակների կյանքին անմիջականորեն հաղորդակից լինելու, արտաքին աշխարհը ճանաչելու և այն արտացոլելու: Նշվածը հաստատում է Կ.Դ. Ուշինսկին, ով նշում է, որ երեխան խաղի ընթացքում փորձարկում է իր ապագա կյանքը և «փորձում սեփական ուժերը» [2, 102]:

Խաղային գործունեության ընթացքում բնականոն ճանապարհով զարգանում են երեխայի հոգեկան գործընթացները, ձևավորվում նորագոյացություններ, որոնք նախապատրաստում և ապահովում են երեխայի հոգեկանի զարգացման հաջորդ փուլը: Հետաքրքիր են նախադպրոցականի երևակայության զարգացման յուրահատկությունները, որոնք լավագույնս դրսևորվում են խաղի ընթացքում:

Խաղային գործունեությունը նպաստում է գործունեության նոր ձևերի՝ աշխատանքի և ուսումնական գործունեության առանձնացմանը: Երեխայի խաղն իր զարգացման ընթացքում ձեռք է բերում աշխատանքային և ուսումնական գործունեությանը բնորոշ կառուցվածքային տարրեր՝ նպատակ, պլանավորում, արդյունք, որոնք ձևավորվելով խաղային գործունեության ընթացքում, տեղափոխվում են գործունեության այլ ձևեր:

Խաղային գործունեությունը բնական գործունեություն է, ուր չկա ճնշում և հարկադրանք, առկա է երեխաների համար բնական միջավայր: Խաղի ընթացքում երեխաներն ազատ են և ինքնուրույն, ունեն հավասար իրավունքներ և ինքնադրսևորման լայն հնարավորություններ: Խաղն ապահովում է հուզականությամբ հագեցած հաճելի մթնոլորտ և համագործակցելու լավագույն պայմաններ [1, 96]::

Խաղը ստեղծագործական գործունեություն է, քանի որ այն նպաստում է յուրաքանչյուր խաղացող երեխայի անհատական առանձնահատկությունների բացահայտմանն ու ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը: Խաղի ընթացքում են լավագույնս դրսևորվում, հետևաբար և ախտորոշվում երեխայի ժառանգական նախադրյալները, հակումներն ու հետաքրքրությունները: Խաղի ընթացքում երեխան փորձում է ինքնահաստատվել և բնականաբար ջանում է առավելագույնս դրսևորել իր բոլոր հակումներն ու կարողությունները: Խաղը նաև երեխայի ընդունակությունների ու կարողությունների ախտորոշման արդյունավետ միջոց է:

Խաղը աշխարճանաչման և աշխարհի արտացոլման եղանակ է, իմացակա գործունեություն է: Խաղային գործունեության ընթացքում ձեռքբերած գիտելիքները կրկնակի արժեքավոր են՝ դրանք և տեղեկատվական են և գործնական բնույթի: Գիտելիքի՝ խաղում անմիջապես կիրառելու կամ փորձարկելու հնարավորությունը, նպաստում է դրա յուրացմանը և ամրապնդմանը, խաղի ընթացքում ձեռքբերած գիտելիքները չափազանց կայուն են:

Խաղային գործունությունն իր բնույթով ուղղված է նախադպրոցական հուզակամային ոլորտի զարգացմանը, հետևաբար և հիմնարար անձնային որակների ձևավորմանը: Նախադպրոցականի անձնավորության ձևավորման գործընթացը պայմանավորված է նրա հուզական և կամային ոլորտների ներդաշնակ զարգացմամբ, ինչը լավագույնս ապահովվում է խաղային գործունեության ընթացքում [1, 96]:

Այսպես, կարելի է վստահ ասել, որ խաղը մեծ նշանակություն ունի երեխայի դաստիարակության և զարգացման գործընթացում: Այն հանդես գալով, որպես նախադպրոցական տարիքի երեխաների առաջատար գործունեություն, նախադպրոցական երեխաների զարգացման և դաստիարակության լավագույն միջոցն է, նրանց կյանքի և գործունեության կազմակերպման հիմնական ձևը:

ԳԼՈՒԽ 2
ԽԱՂԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐՆ ՈՒ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

2.1 Խաղերի դասակարգումն ու տեսակները

Երեխաների խաղերը բազմազան են իրենց բովանդակությամբ, ինքնուրույնության աստիճանով, իրականության արտացոլման եղանակներով, կազմակերպման ձևերով, մանկավարժական արժեքով և այլ գործոններով: Գիտամանկավարժական գրականությանը հայտնի են խաղերի դասակարգման տարբեր եղանակներ և մոտեցումներ: Խորհրդային մանկավարժության ներկայացուցիչները դասակարգում են խաղի խմբերն ըստ բնույթի, բաժանելով դրանք երկու խմբի՝ ստեղծագործական և կանոնով: Ստեղծագործական խաղերը բնորոշվում են ստեղծագործական բնույթով և ներքին «թաքնված» կանոններով: Կանոնով խաղերի բովանդակությունը նախապես մշակվում է և սահմանափակվում մեծահասակների կողմից հստակ կանոններով: Բնույթով դրանք ուսուցանող և զարգացնող են [1, 101]:

Ժամանակակից նախադպրոցական մանկավարժությունն ընդունելի է համարում Ս.Ա. Կոզլովայի և Տ.Ա. Կուլիկովայի կողմից առաջադրված խաղերի դասակարգման եղանակը, որի հիմքում ընկած է խորհրդային մանկավարժության մոտեցումը [7, 108]: Խաղային գործունեությունն իր բնույթով լինում է ստեղծագործական և նպատակաուղղված զարգացնող կամ կանոնով: Առաջին խմբին դասվում են.

ա)սյուժետա-դերային խաղերը,

բ)խաղ-թատերացումները,

գ)կառուցողական խաղերը,

դ)ռեժիսորական խաղերը և խաղ-երևակայությունները:

Ստեղծագործական խաղերի բովանդակությունը կառուցվում է խաղացող երեխաների կողմից, այն ստեղծագործական բնույթի է: Այդպիսի խաղերում արտացոլվում են երեխաների տպավորություններն ու պատկերացումները արտաքին աշխարհի հանդեպ, ինքնուրույնության և ակտիվության մղումները, դրսևորվում են «ազատության աստիճանները», ցանկությունները, նախասիրություններն ու հետաքրքրությունները: Խաղի սյուժեն ընտրվում է խաղացող երեխաների կողմից և դրա հիման վրա կառուցվում է խաղի բովանդակությունը: Այսպես էլ ինքնուրույն եղանակով յուրացված սոցիալական

փորձը վստահություն է ներշնչում աշխարհի և սեփական «ես»-ի հանդեպ և օգնում երեխային ինքնահաստատվելու հասակակիցների միջավայրում [1, 101]:

Խաղերի երկրորդ խումբն են կազմում կանոնով խաղերը, որոնք հատուկ կազմակերպվում են մեծահասակների կողմից երեխաներին ուսուցնելու, դաստիարակելու և զարգացնելու նպատակով: Այս խմբին են պատկանում դիդակտիկ խաղերը, շարժողական խաղերը և տարբեր բնույթի զարգացնող խաղեր: Կանոնով խաղերը մշակվել են ժողովրդական խաղերի հիման վրա, դրանք ունեն հստակ մանկավարժական ուղղվածություն: Կանոնով խաղերի բովանդակությունը նախապես մշակվում և պատրաստի ձևով ներկայացվում է երեխաներին:

Խաղի բովանդակությունը միտումնավոր սահմանափակվում է կանոններով, որոնք կարգավորվում և նպատակաուղղում են երեխաների խաղային գործողությունները: Կանոնով խաղերի բացառիկ նշանակությունը նախադպրոցականի ներդաշնակ զարգացման գործում առանձնահատուկ կարևորվել է Դ. Էլկոնինի կողմից, որը նշում է դրանց կրկնակի մանկավարժական ներգործությունը՝ մի կողմից մանկավարժի նպատակաուղղված ներգործությունը, մյուս կողմից՝ երեխաների փոխներգործությունը, այսինքն, ինքնաուսուցումը: Կանոնով խաղերը ուսուցանվում են և դաստիրարակում, կրթում են և զարգացնում, նպաստում են ինքնագնահատմանը և փոխգնահատմանը [1, 101]:

Այսպես՝ առանձին ներկայացնելով նախադպրոցական տարիքի երեխայի խաղի տեսակներն ու նրանց ընդհանուր բնութագրերը, խոսենք նախ ռեժիսորական խաղերի մասին: Ռեժիսորական խաղը ստեղծագործական բնույթի, ինքնուրույն խաղ է, որը շատ նման է սյուժետա-դերային խաղին: Ի տարբերություն սյուժետա-դերային խաղի, ռեժիսորական խաղն անհատական գործունեություն է և ունի ընդամենը մեկ դերակատար:

Ռեժիսորական խաղը միանձնյա խաղ է, քանի որ մյուս «մասնակիցները» անշունչ առարկաներ են՝ խաղալիքներ, տարբեր իրեր, փոխարինող առարկաներ: Խաղացող երեխան միաժամանակ գործում է իր և մնացած բոլոր «խաղընկերների» կողմից, դրանով իսկ կառավարում խաղային իրադրությունը և կարգավորում խաղի ընթացքը [1, 101]:

Նախադպրոցական մանկության շրջանում անփոխարինելի է սյուժետադերային խաղերի դերը: Դրանք այն խաղերն են, որոնց ընթացքում լավագույնս դրսևորվում են նախադպրոցականի ազատության և ինքնուրույնության ձգտումները, ստեղծագործելու ցանկությունն ու կարողությունները, ուր կան լայն հնարավորություններ արտացոլելու սեփական տպավորություններն ու պատկերացումները, կարծիքն ու վերաբերմունքը:

Խաղում ընդհանրացված գործողությունների հայտնվելը, փոխարինող առարկաների օգտագործումը, մեկ սյուժեի մեջ օբյեկտիվ գործողությունների համադրությունը, այստեղ երեխայի հերոսի անուն ստանալը, հարստացնում է խաղի բովանդակությունը վկայում են դերային խաղի անցման մասին, որը սկսում է աստիճանաբար զարգանալ փոքր խմբից: Այս խաղերը սկսում են արտացոլել մարդկային հարաբերությունները, վարքագծի նորմերը և սոցիալական շփումները [10, 119-120]:

Երեխան սյուժետադերային խաղերում արտացոլում է ոչ միայն առանձին տպավորություններ կամ պատկերացումներ, այլև տարբեր իրադրություններ, անձնական փորձից փոքրիկ դրվագներ կամ հասարակական երևույթներ: Բնականաբար, նշվածը վերարտադրվում է սեփական դիրքորոշմամբ և պարունակում է վերլուծություն և նոր մոտեցումներ: Բացի այդ, սյուժետադերային խաղերը ենթադրում են նպատակադրման անհրաժեշտություն, թեկուզ և պայմանական, որը դրդում է նպատակային գործունեության և որոշակի արդյունքի ակնկալման:

Սյուժետադերային խաղերն իրենց բնույթով հուզական են, հագեցած են դրական հույզերով և լիցքերով: Սյուժետադերային խաղերին բնորոշ հուզականությունը, ներքին բավարարվածության զգացողությունը, խաղի ընթացքում պահպանվող բարձր տրամադրությունն ու ուրախությունը նպաստում են առավել ազատ և անկաշկանդ ինքնադրսևորմանն ու ինքնահաստատմանը [6, 52]:

Ստեղծագործական խաղերին, այդ թվում և սյուժետադերային խաղերը բնութագրվում են որոշակի կառուցվածքային տարրերով: Դրանք են՝

1. Երևակայական խաղային մտահղացում
2. Խաղի սյուժե
3. Խաղի բովանդակություն
4. Դեր

Վերոնշյալ տարրերը հակիրճ ներկայացնելով, նշենք, որ ստեղծագործական խաղերի հիմնական կառուցվածքային միավորը երևակայական խաղային մտահղացումն է, որն իրենից ներկայացնում է խաղային իրադրություն, խաղային մթնոլորտ, կարելի է ասել՝ խաղի մոդել, որը հնարավորություն է տալիս երեխային իրական հարաբերությունները փոխանցելու երևակայական հարաբերությունների դաշտ:

Հաջորդ կարևոր կառուցվածքային տարրը խաղի սյուժեն է: Առանց սյուժեի խաղը վերածվում է դերային խաղի, որն ավելի պարզ գործունեություն է, և իրենից

ներկայացնում է մեծահասակներին ընդօրինակելու ընդունակությունների դրսևորման գործընթաց, որի ստեղծագործական բնույթը արդյունք է զարգացած երևակայության:

Սյուժեից բխում է սյուժետադերային խաղերի հաջորդ կառուցվածքային տարրը՝ խաղի բովանդակությունը: Սյուժետադերային խաղերի գլխավոր կառուցվածքային տարրը դերն է: Իսկ սյուժետադերային խաղերի ղեկավարումը պահանջում է աշխատանք երկու ուղղությամբ.

- ✓ Խաղային գործունեության կայացման,
- ✓ Խաղային գործունեության մանկավարժական ուղղորդման՝ երեխաների դաստիարակության և նրանց փոխհարաբերությունների ձևավորման նպատակով [1, 103-105]:

Վերջին տարիներին արձանագրվում է խաղերի բավական ցածր մակարդակ և դրանց նկատմամբ երեխաների հետաքրքրությունների զգալի նվազում: Սյուժետա-դերային խաղը կարևոր նշանակություն ունի երեխաների մոտ հատուկ տեսակի խաղի՝ թատերական խաղի առաջացման գործում:

Խաղ թատերացումները երեխաների կողմից նախաձեռնված վեմականացումներ են, խաղ-ներկայացումներ, որոնց միջոցով երեխան փորձում է վերարտադրել իր երազած աշխարհը, աշխարհի այն կատարյալ պատկերը, որին նա ներքուստ ձգտում է, նմանվելով հեքիաթային հերոսներին և առասպելական կերպարներին: Հետաքրքիր է, որ հեքիաթ՝ «marchen» բառն ունի հին իռլանդական արմատներ և թարգմանաբար նշանակում է «լուր»: Հին սլավոներենից «kazatu» հեքիաթ բառը նշանակում է «ասել, ցուցադրել» [1, 106]:

Խաղ թատերացման առանձնահատկությունն այն է, որ ժամանակի ընթացքում երեխաները իրենց խաղերում այլևս չեն բավարարվում միայն մեծահասակների գործունեության արտապատկերումով, նրանց սկսում են տարվել գրական ստեղծագործություններից ոգեշնչված խաղերով (հերոսական, աշխատանքային, պատմական թեմաներով): Նման խաղերն անցումային են, ունեն դրամատիզացիայի տարրեր, բայց տեքստն այստեղ ավելի ազատ է օգտագործվում, քան թատերական խաղում, երեխաներին ավելի շատ հետաքրքրում է բուն սյուժեն, դրա ճշմարտացի պատկերումը, քան խաղացած դերերի արտայայտչականությունը [3, 8]

Կառուցողական խաղեր են շինանյութով խաղերը: Կառուցողական խաղն իրենից ներկայացնում է բնույթով ստեղծագործական, արդյունավետ գործունեություն, որի օգնությամբ երեխան ձեռք է բերում մարդկային պրակտիկ գործունեության կարողություններ և հմտություններ: Շինանյութով խաղերը կամ շինարարական խաղերն իրենց բնույթով և կառուցվածքով ստեղծարար են,

արգասաբեր ու նպաստում են մանկան գործունեության նոր ձևերի առաջացմանը [1, 109]:

Գոյություն ունեն նաև կանոնով խաղեր, որոնք կոչվում են նաև խաղեր պատրաստի բովանդանությամբ, քանի որ այդ խաղերի բովանդակությունը նախապես մշակվում է մանկավարժների կողմից և ներկայացվում երեխաներին կանոնների ձևով: Կանոնավոր խաղերը լինում են դիդակտիվ և շարժողական:

Նախադպրոցական տարիքի երեխաների համար դիդակտիկ խաղերն ուսուցանող բնույթի խաղեր են: Դրանք հայտնի են որպես ուսուցանող բնույթի խաղեր, սակայն դրանցում ուսումնական առաջադրանքը ուղղակիորեն չի երևում: Դա հասկանալու համար նրանք կատարում են խաղային գործողություններ, հետևում են խաղի կանոններին: Դիդակտիկ խաղն ունի որոշակի կառուցվածք և իր մեջ ներառում է ուսուցման ու խաղային առաջադրանքներ, խաղային գործողություններ, խաղի կանոններ [5, 36]:

Դիդակտիկ խաղերին բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները.

- ✓ Դիդակտիկ խաղերն ունեն ուսուցանող հստակ նպատակ ու խնդիրներ,
- ✓ Դիդակտիկ խաղերը զարգացնող և դաստիարակող բնույթի են, ուսուցման խնդիրների հետ միատեղ լուծվում են երեխայի դաստիարակության և զարգացման խնդիրները,
- ✓ Դիդակտիկ խաղերը նպատակաուղղված և կազմակերպված բնույթի են, ինչը հնարավորություն է տալիս ծրագրել խաղային ուսուցման գործընթացը,
- ✓ Խաղային ուսուցման արդյունքները ենթական են գնահատման և վերահսկման,
- ✓ Դիդակտիկ խաղերը նախադպրոցականի համար աշխարհաճանաչման միջոց են:

Դիդակտիկ խաղերը լինում են.

- ✓ Խոսքի զարգացման,
- ✓ Երաժշտական,
- ✓ Մաթեմատիկական,
- ✓ Բնագիտական [1, 112]:

Ժամանակակից նախադպրոցական դիդակտիկայում լայն տարածում են ստանում համակարգչային դիդակտիկ խաղերը, որոնց մանկավարժական հնարավորություններն ակնհայտ են և կարիք ունեն լրացուցիչ մշակման:

Կանոնով խաղերի հաջորդ տեսակը շարժողական խաղն է, որն ուղղված է երեխայի ֆիզիկական զարգացմանը:Շարժախաղերի միջոցով բավարարվում են նախադպրոցական տարիքի երեխաների շարժման, ֆիզիկական ակտիվության

պահանջմունքները, ձևավորվում են ֆիզիկական կարողություններն ու հմտությունները, ձեռք են բերվում շարժողական հատկություններ ու որակներ:

Շարժախաղերը լինում են ընդօրինակող բնույթի, առարկայական, խաղ-մրցույթներ և խաղ էստաֆետներ, սպորտային շարժախաղեր և շարժախաղեր նպատակային ուղղվածության, օրինակ, խաղեր՝ուղղված տարածության մեջ կողմնորոշմանը կամ խաղեր՝ ուղղված գեղեցիկ կեցվածքի ձևավորմանը [1, 112]:

2.2 Խաղերի կազմակերպման օրինակներ

Մեր հետազոտական աշխատանքում ներկայացնում եմ խաղերի կազմակերպման մի քանի օրինակ:

- Դիդակտիկ խաղ- Միջին Ա խումբ

Առարկա. «Ի՞նչ միջատ է, անուն տվեք»:

Նպատակը՝ երեխաների մոտ ձևավորել «միջատ» հասկացությունը:

Ճանաչեք և անվանեք միջատների ներկայացուցիչներին՝ ճանճ, թիթեռ, ճպուռ, մեղու, մորեխ:

Դիդակտիկ նյութ՝ կտրե'ք միջատների նկարներ, պատկերներ:

Մեթոդաբանությունը՝ Երեխաները պետք է արագ հավաքեն նկար, անվանեն միջատ: Եթե ինչ որ մեկը դժվարանում է, կարող է օգտագործել հանելուկներ, օրինակ՝

Նրա մեջքը կարմիր է, նրա մեջքին կան շրջանակներ, կամ նա ունի չորս թև, մարմինը նիհար է, ինչպես նետը, եվ մեծ մեծ աչքեր: Երեխաներ նրան անվանում են…:

- Սյուժետադերային խաղի օրինակ է «Բժիշկ-բժիշկը»:

Նպատակը՝ երեխաների մոտ հնարավորինս նվազեցնել վախի զգացողությունը բժշկի, հիվանդանոցի նկատմամբ:

Իմ տիկնիկը հիվանդ է, զանգ բժշկին:

Բժիշկը գալիս է, ստուգում է հիվանդին, բուժում է նշանակում, չափում է ջերմությունը, ստուգում է կոկորդը…:

- «Ստոպ» խաղ

Նպատակը՝ խաղի ընթացքում երեխան լիցքաթափվում, դրական հույզեր է ստանում, դրա հետ մեկտեղ երեխան կենտրոնացնում է ուշադրությունը, լսողությունը, որպեսզի կարողանա խաղալ:

Միացված է լինում որևէ երաժշտություն և երեխաները սկսում են պարել, շարժվել, ուրախանալ, սակայն երբ լսվում է «ստոպ» բառը, նրանք պետք է քարանան և կանգնած մնան այնքան ժամանակ, մինչև երաժշտությունը չմիանա:

- «Ձյուն» խաղը

Նպատակը՝ խաղը ուրախություն և զարմանքարտահայտելու համար է: Ի դեպ այս խաղը նաև օգնում է երեխաներին լիցքաթափվել և ազատվել ագրեսիայից: Երեխաներին բաժանում են սպիտակ թղթեր, որից պետք է ձյուն պատրաստեն: Այդ թղթերը նրանք ձեռքով մանր-մանր կտրատում են, վերև նետում, շաղ տալիս իրար վրա՝ ուրախության ձայներ հանելով և ծիծաղելով: Իսկ ամենավերջում «ձյան փաթիլներից» ձնագնդիկներ պատրաստում և դրանով խաղում:

- «Դինոզավրիկներ» խաղը կարելի է խաղալ երեխաների մոտ վախերի, տագնապների և անհանգստությունների ժամանակ:

Մի պահ խնդրում եք երեխաներին դառնալ դինոզավրիկներ, վախենալու դեմքեր ընդունել, բարձր ձայներ հանել: Նրանց նաև թույլատրվում էր վազվզել սենյակով մեկ: Երեխաներին տված ազատության շնորհիվ նրանց մեջ կուտակված ամբողջ բացասական հույզերն ու վախերն անհետանում են:

Եզրակացություն

Այսպիսով՝ ավարտելով մեր աշխատանքը, փորձեցինք հնարավորինս պարզ ու հստակ ներկայացնել խաղի էությունը, խաղի դերը երեխայի, որպես նախադպրոցականի առաջատար գործունեություն: Խաղը երեխայի մոտ զարգացնում է շրջակա միջավայրում էականը տարբերելու ունակությունը, օգնում է նրան ավելի խորը և լիարժեք տեղեկացված լինել իրականության երևույթներին: Խաղը նպաստում է ստեղծագործական երևակայության զարգացմանը, որն անհրաժեշտ է երեխայի հետագա կրթական և աշխատանքային գործունեության համար: Աշխատանքի հիման վրա եկանք եզրահանգմանը.

- Խաղը հսկայական ազդեցություն ունի երեխայի զարգաման գործընթացում,
- Խաղը երեխաների մոտ ձևավորում է կամային որակներ՝ իրենց գործողությունները որոշակի կանոններին ստորադասելու, նրանց վարքը ամբողջ թիմի առաջադրանքների հետ համակարգելու կարողություն,
- Խաղը ոչ միայն զվարճանք է երեխայի համար, այլև այն միակ գործունեության ձևն է, որը թույլ է տալիս երեխային ազատ արտահայտվել, բացահայտել իր «ես»-ը, իրեն լիարժեք զգալ, լիցքաթափվել, իրականացնել ցանկությունները, հաղորդակցվել, մոռանալ անհանգստություններն ու ազատվել վախից:

Նախադպրոցականի ցանկացած գործունեություն նախ և առաջ հիմնված է նրա հուզական վիճակի վրա: Դրական հույզեր ստանալու դեպքում երեխայի համար բոլոր բարդ թվացող խնդիրները հեշտ են և հաղթահարելի: Հակառակ դեպքում նա լարվում է, ագրեսիվ դառնում, ամեն ինչից տագնապում, մեկուսանում և անհանգստանում:

Խաղը տալիս է մեծ հնարավորություն ճանաչելու սեփական հույզերը, և կարգավորել հուզակամային ոլորտի խնդիրները: Եվ վերջապես խաղի ընթացքում երեխան տիրապետում է բարոյական նորմերին ու վարքի կանոններին, որոնք որոշիչ դեր են խաղում իր անհատականության ձևավորման մեջ: Խոսքս ուզում եմ ավարտել հետևյալ խոսքերով. «Ուրախացի'ր երեխայի գոությամբ, սովորի'ր նրանից, լսի'ր նրան և խաղա' նրա հետ»:

Օգտագործված գրականության ցանկ

1. Մարության Ս.Ա., Դալլաքյան Ա.Մ., Նախադպրոցական մանկավարժություն, Երևան 2008թ., 126 էջ:
2. Ուշինսկի Կ.Դ., Մանկավարժական ընտիր երկեր, Երևան 1981թ., 443 էջ:
3. Бачурина, В. Развивающие игры для дошкольников: игры, рекомендации, планирование. Москва 2013г., 176 с.
4. Губанова, Н.Ф. Игровая деятельность в детском саду. Для работы с детьми 2-7 лет: методическое пособие. Москва 2015г. 128 с.
5. Деркунская, В.А. Воспитываем, обучаем, развиваем дошкольников в игре: планирование и методические рекомендации. Москва 2014г., 128 с.
6. Запорожец А.В., Маркова Т.А., Игра и ее роль в развитии ребенка дошкольного возраста: Сборник научных трудов, Москва 1978г., 155с.
7. Кулагина И. Ю., Возрастная психология, 5-е изд., Москва 1999г., 176 с.
8. Куликова Т.А., Семейная педагогика и домашнее воспитание., Москва 1999г., 232с.
9. Менджерицкая, Д.В. Воспитателю о детской игре. Москва 1982г., 128 с.
10. Петросян, Л.А., Зенкевич, Н.А., Шевкопляс, Е.В. Теория игр, Москва 2014г., 432 с.
11. Усова А.П., Роль игры в воспитании детей, Москва 1976г., 96 с.
12. Эльконин Д.Б., Психология игри, 2-е изд., Москва 1999г., 360с.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ

ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<<ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>> ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Էկոլոգիական կրթության հիմունքները նախադպրոցական տարիքում

ԿԱՏԱՐՈՂ՝Նարինե Հովհաննիսյան

ՂԵԿԱՎԱՐ՝Վաղինակ Նազարյան

ՎԱՆԱՁՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3

Գլուխ1.

1.1Էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին ----------5

1.2Կենդանիների դերը բնության մեջ----------13

1.3Բույսերի դերը բնության մեջ----------16

1.4Բնության երևույթները ----------18

1.5Խաղը որպես էկոլոգիական դաստիարակության միջոց----------21

1.6 Իրերի փոխադարձ կապը բնության մեջ----------23

Գլուխ2. Հետազոտական աշխատանք

2.1 Արդյունքների վերլուծություն----------26

Գործնական աշխատանք----------27

Եզրակացություն----------31

Օգտագործված գրականության ցանկ----------32

Հավելվածներ----------32

Ներածություն

Թեմայի արդիականությունը կայանում է նրանում , որ մարդկային հասարակության կարևորագույն խնդիրներից են բնության մեջ գոյություն ունեցող էկոլոգիական օրենքների իմացության հիման վրա բնության խելամիտ օգտագործումն ու պահպանումը։Պահպանելով բնությունը մենք պաշտպանում ենք մեզ և մեր սերունդների շահերը ։ Զարգանում է խոսքի տարբեր ձևեր. երկխոսություն, նկարագրություն, բացատրություն, բնապահպանական պատմվածք։

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել էկոլոգիա առարկան , որի նպատակն է ձևավորել սեփական երկրի կենսական շահերը պահպանող քաղաքացի։Երեխաների մեջ ձևավորել ճանաչողական ,բնապահպանական գիտելիքներ, հուզական ,հոգատար,մարդասիրական վերաբերմունք բնության,շրջակա միջավայրի նկատմամբ ,բնության հետ հաղորդակցվելու ունակություն,էկոլոգիական կուլտուրա։

Աշխատանքի խնդիրներն են ընդլայնել և համակարգել երեխաների պատկերացումները բնության մասին։

Սովորեցնել նկատել, ,հասկանալ,ընկալել շրջապատող աշխարհի և բնության միասնականությունն ու փոխկապակցվածությունը։

Ա)շրջապատի նկատմամբ ճիշտ վարվելակերպի մշակում

Բ)բնության նկատմամբ քաղաքացիական վերաբերմունքի դաստիարակում

Գ)հասարակություն մեջ ընդունելի մարդկային փոխհարաբերությունների հաստատում

Աշխատանքի կառուցվածքը սույն հետազոտական աշխատանքը բաղկացած է 2 գլխից:

ԳԼՈՒԽ1 1.1Էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին

էկոլոգիական կրթություն՝ անընդմեջ գործընթաց է՝ նպատակաուղղված անձի էկոլոգիական գիտելիքների ուսուցմանը, էկոլոգիական դաստիարակությանը, էկոլոգիական մշակույթի արմատավորմանը, շրջակա միջավայրի պահպանության, բնօգտագործման և էկոլոգիական անվտանգության բնագավառում անձի ճիշտ և խելամիտ կողմնորոշմանը, ունակությունների դրսևորմանը և վարքագծի ձևավորմանը.

էկոլոգիական դաստիարակություն՝ էկոլոգիայի մշակույթի հիմքը և անբաժանելի մասն է, շրջակա միջավայրի նկատմամբ բարոյագիտակցական վերաբերմունքի մակարդակի բարձրացմանը նպատակաուղղված անընդմեջ, համակարգված գործընթաց, որը հնարավորություն է տալիս երեխաներին ձեռք բերել գիտելիքներ և կարողություններ, ձևավորել հմտություններ և բացահայտել ունակություններ, դրսևորել բարոյական չափանիշներ և վարքագիծ՝ բնության հետ փոխներգործության ընթացքում.էկոլոգիական գիտելիք՝ հասարակական իմացության այն ոլորտն է, որը նպատակաուղղված է շրջահայաց բնօգտագործմանն ու մարդու առողջության համար անվտանգ շրջակա բնական միջավայրի ապահովմանը.

էկոլոգիական գիտելիքների նվազագույն՝ հասարակության ամեն մի անձին անհրաժեշտ գիտելիքների նվազագույն ծավալը, որը ծառայում է անվնաս ու սակավաթափոն արտադրության, բնական պաշարների և էներգիայի խնայողության, տնտեսական և այլ գործունեության, ինչպես նաև շրջակա բնական միջավայրի վերականգնման և դրա նկատմամբ հոգատար վերաբերմունքի ձևավորման նպատակին.

էկոլոգիական մշակույթ՝ մարդու և բնության ներդաշնակ փոխազդեցության զարգացման մակարդակ, որը բնութագրվում է մարդկության կողմից էկոլոգիական հիմնախնդիրների առաջնահերթ լուծման գիտակցությամբ ու գիտական հիմնավորվածությամբ, ինչը նպաստում է առողջ ապրելակերպին, սոցիալ-տնտեսական կայուն զարգացմանը, երկրի և յուրաքանչյուր անձի էկոլոգիական անվտանգությանը, սերունդների համերաշխությանը՝ օգտագործելով բնության հնարավորությունները:

Էկոլոգիական կրթության սկիզբը դրվում է նախադպրոցական տարիքում՝ հատուկ կազմակերպված էկոլոգիական կամ զոյապահպանման դաստիարակության միջոցով: Էկոլոգիական դաստիարակությունը երեխայի էկոլոգիական գիտակցության և մտածելակերպի ձևավորման, էկոլոգիական վարքագծի և մշակույթի (վարվելակերպի) դաստիարակչական գործընթաց է: Էկոլոգիական դաստիարակության նպատակն է վաղ տարիքից սկսած բնության հետ երեխայի միավորելը, բնության հանդեպ պատասխանատու վերաբերմունք ձևավորելը: Երեխայի աշխարհճանաչումը կարելի է ասել, որ սկսվում է բնաճանաչողությունից: Նախադպրոցական մանկավարժության համակարգում գրեթե չէր տարանջատվում էկոլոգիական դաստիարակություն և էկոլոգիական կրթություն հասկացությունները, որոնք օգտագործվում էին նույն նշանակությամբ: Էկոլոգիական կրթությունն ավելի լայն հասկացություն է և իր մեջ ներառում է էկոլոգիական ուսուցումը՝ ուղղված էկոլոգիական գիտելիքների համակարգի ձևավորմանն ու կիրառմանը: Նախադպրոցական տարիքում էկոլոգիական ուսուցումը ներառվում է էկոլոգիական դաստիարակության մեջ և օգտագործվում է հիմնականում էկոլոգիական դաստիարակություն տարբերակը: Էկոլոգիական դաստիարակության նպատակը նախադպրոցականի էկո գիտակցության

և մտածելակերպի, ինչպես նաև բնության հանդեպ հոգատար և պատասխանատու

վերաբերմունքի ձևավորումն է: Հետևաբար անհրաժեշտ է՝

– ծանոթացնել երեխաներին բնության հետ,

– սովորեցնել շրջակա միջավայրի խնամքի կարևորությունը և կանոնները,

– հոգատարություն սերմանել շրջակա միջավայրի՝ ծառերի, խոտերի, կենդանիների և բնության մաս կազմող յուրաքանչյուր տարրի նկատմամբ:

Երեխան պետք է հասկանա, որ ինքը բնության մի մասնիկն է: Նախադպրոցական տարիքից բնության հանդեպ վերաբերմունքը և էկոլոգիական հիմնարար պատկերացումները ձևավորելը խիստ անհրաժեշտ է, քանզի ամեն բան սկսվում է այս տարիքից: Ահա թե ինչու նախադպրոցական տարիքի երեխայի զարգացման մեջ կարևոր դեր է գրավում բնագիտական և էկոլոգիական դաստիարակությունը:[4,86-88էջ]

Մանկապարտեզում էկոլոգիական դաստիարակությունը և կրթությունը էկոկենտրոն հայեցակարգի տեսանկյունից կառուցվում է կենդանի բնության մեջ, թանգարաններ, կենդանաբանական, բուսաբանական այգիներ այցելելու հիման վրա, քանի որ էկոլոգիական դաստիարակություն առաջին հերթին ենթադրվում է՝

ա) իրեն զգալ բնության մի մասնիկը.

բ) ձևավորել երեխաների մեջ հուզական հոգատար վերաբերմունք բնության օբյեկտների նկատմամբ.

գ) ձևավորել գեղեցիկը տեսնելու ընդունակություն.

դ) ձևավորել և զարգացնել երեխաների ճանաչողական ընդունակությունները և բնապահպանական տարրական կարողությունները:

Էկոլոգիական դաստիարակության գործընթացի կազմակերպման համար կարևոր է էկոլոգիական կուլտուրայի ձևավորումը, որը դրսևորվում է շրջակա միջավայրի և նրա ամբողջական պահպանման նկատմամբ երեխաների պատասխանատու վերաբերմունքի մեջ, որի հիմքում ընկած է հասարակության մեջ ընդունված բարոյական և իրավական նորմերը: Մանկապարտեզում երեխաների էկոլոգիական կրթության ու դաստիարակության խնդիրներն են՝

ա) շրջապատի նկատմամբ ճիշտ վարվելակերպի մշակում,

բ) բնության նկատմամբ քաղաքացիական վերաբերմունքի դաստիարակում,

գ) հասարակության մեջ ընդունելի մարդկային փոխհարաբերությունների հաստատում: Այս խնդիրների իրականացումը նպաստում է տվյալ տարիքի երեխաների աշխարհայացքի ձևավորման հիմքերը դնելու կարևոր գործընթացին: Էկոլոգիական նպատակասլաց գործընթացը կնպաստի էկոլոգիական կուլտուրայի ձևավորմանը, որն իր հերթին կդառնա մարդկային ընդհանուր կուլտուրայի, նյութական և հոգևոր արժեքների զարգացման շարժիչ ուժ: Էկոլոգիական դաստիարակության խնդիրների թվին պետք է դասել՝ — բնաճանաչողական ընդունակությունների, իմացական հետաքրքրությունների ձևավորումը.բնության երևույթների, բուսական և կենդանական աշխարհի փոխկապակցության վերաբերյալ պատկերացումների, հասկացությունների և գիտելիքների ձևավորումը բնության մեջ ճիշտ վարքագծի դրսևորման դրդապատճառների, սովորույթների ու հմտությունների ձևավորումը. — կենդանի բնության նկատմամբ ապրումակցման զգացմունքի ձևավորումը:

Նախադպրոցականները պետք է ձեռք բերեն կենսաէկոլոգիական տարրական գիտելիքներ, այդ թվում՝ Կենդանի և անկենդան բնության մասին.կենդանի մարմինների առանձնահատկությունները, նրանց բազմաձևությունը, տարածումը և նրանց հարմարվածությունը այդ միջավայրին

. Բնակության միջավայրի բազմաձևությունը (ջրային, վերերկրյա-օդային, հողային (ստորերկրյա).

կենդանիների և բույսերի բնակության վայրը, համակեցությունը (էկոհամակարգեր), նրանց բազմաձևությունը, բաղադրամասերի ամուր կապը: Նախադպրոցականները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում նաև անկենդան բնության և նրա կենդանի բնության հետ ունեցած կապերի հանդեպ: Էկոլոգիական կրթության բովանդակության մեջ սոցիալական էկոլոգիայի հարցերի ներառումը կնպաստի երեխայի՝ շրջակա միջավայրում իր տեղի գիտակցմանը, նրա էկոլոգիապես գրագետ վարքագծի ունակությունների մշակմանը: Այդ նպատակով կարելի է կազմակերպել զրույցներ հետևյալ հարցերի ձևով.

— Մարդիկ և շրջակա միջավայրը.

— Ես և բնությունը

. — Ինչպե՞ս եմ օգտագործում բնության բարիքները.

— Իմ առողջությունը և շրջակա միջավայրը.

— Ի՞նչ կլինի ինձ հետ, եթե ոչնչացվեն շրջապատի կենդանիներն ու բույսերը.

— Ես ի՞նչ կարող եմ անել շրջակա միջավայրի վիճակի բարելավման համար

Երեխան պետք է ծանոթանա մարդկանց ոչ գրագետ էկոլոգիական գործողությունների հետևանքներին, պետք է իմանա, թե ինքը ինչպես պետք է պահի իրեն ոչ միայն բնության գրկում, այլև տանը, գյուղում,

քաղաքում: Պետք է ավագ նախադպրոցականը ծանոթանա էկոլոգիական անվտանգության հարցերին: Նա պետք է իմանա, որ ճանապարհի մոտ խաղալիս կարող է ոչ միայն ավտոմեքենայի կողմից վրաերթի ենթարկվել, այլև ավտոմեքենայի արձակած գազերը շնչելը կամ աղբանոցի մոտ զբոսնելը նույնպես վտանգավոր և վնասակար է առողջության համար: Անհրաժեշտ է նախադպրոցականին պարզաբանել կիրառական էկոլոգիային վերաբերող հետևյալ հարցերը.

— ինչպե՞ս դրսևորել իրեն բնության մեջ.

— ինչպե՞ս ծանոթանալ բնության պաշարներին.

— ինչո՞ւ են մեր պահպանության կարիքը զգում կենդանի էակները և նրանց համակեցությունները.

-ինչո՞ւ պետք է երկրի վրա ապրեն բոլոր կենդանի էակները.

— ինչո՞ւ է ստեղծված Կարմիր գիրքը.

— ծանոթություն իր մարզի (տարածքի) երկրամասի պահպանության տակ վերցված բույսերի և կենդանիների հետ.

— ծանոթացում նրանց թվի կրճատման ուղղակի և անուղղակի պատճառների հետ. — մեծահասակների հետ մասնակցություն բնապահպանական միջոցառումներին (ծառատունկ, շաբաթօրյակ և այլն): Էկոլոգիական գիտելիքները ինքնանպատակ չեն. նրանք նպաստում են երեխայի մեջ արժեքների որոշակի համակարգի, մարդու՝ որպես բնության մի մասնիկի պատկերացման ձևավորմանը, իր կյանքին, բնության վիճակից իր առողջության կախվածության ընկալմանը: Շատ կարևոր է արդեն նախադպրոցական տարիքից երեխաների մոտ դաստիարակելիսելամիտ բնօգտագործման անհրաժեշտության իմացությունը: Էկոլոգիական կրթության բովանդակությունը սերտորեն կապված է երեխայի հույզերի զարգացման, ապրումակցման, զարմանալու, կենդանի էակները տեսնելու կարողության հետ: Դա նշանակում է, ՛որ էկոլոգիական կրթության բովանդակության մեջ

ներառվում է իմացական, արժեքային, նորմատիվային գործնական բաղադրամասեր, քանի որ նրանցից յուրաքանչյուրը ուսումնական գործընթացում ունի իր գործառույթը: Իրենց բովանդակությամբ այդ չորս բաղադրամասերը ընդգրկում են ժամանակակից էկոլոգիական համալիր բոլոր բնագավառները: Բնության մեջ կազմակերպված պարապմունքների, էքսկուրսիաների, դիտումների, շրջապատի հետ շփման մեջ մտնելու շնորհիվ երեխան ձեռք է բերում անձնական փորձ, որը թույլ է տափս նրան հասկանալ իր տեղը բնության մեջ, նրանում վարքի նորմերի ճիշտ դրսևորման՝ ոչինչ չքանդելու, չապականելու, չտրորելու, ա յլ՝ տնկելու, ջրելու, խնամելու, կերակրելու անհրաժեշտություն: Նախադպրոցական տարիքում առանձնակի տեղ է հատկացվում էկոլոգիական բնույթի խաղերին, մրցույթներին և բարոյագիտական զրույցներին: Էկոլոգիական բնույթի խաղերը և բարոյագիտական գյուցյները նպաստում են երեխաների էկոլոգիական գիտակցության ձևավորմանը: Բարոյագիտական զլուցյների թեման պետք է լինի երեխայի շրջակա միջավայրը, բնության մեջ իրեն պահելու վարքի կանոնները, բնության օգտակարության, ինչպես նաև նրան հասցված վնասի հետևանքները: Առանձին շեշտադրում ունեն աշխատանքային գործունեության այնպիսի ձևերի կազմակերպումը, որոնց շնորհիվ երեխայի մեջ ներդրվում են բարոյական վարքագծի ձևավորման, բնության, իրար նկատմամբ պատասխանատվության հիմքերը: Այս տարիքում էկոլոգիականկրթության ու դաստիարակության միջոցով նրանց հույզերի, ըմբռնումների, զգացմունքների և պատկերացումների զարգացման նպատակ է դրվում:

Այսպիսով՝ էկոլոգիական կրթության և դաստիարակության գործընթացի կազմակերպումը նախանշում է՝

— խմբում երեխայի գործունեության էկոլոգիական ուղղվածությունը.

— զբոսանքների ժամանակ դիտումների անցկացում.

— խմբի՝ բնության օրագրում (օրացույցում) դիտումների գրանցում.

— գրականության ընթերցում և ունկնդրում, խաղերի կազմակերպում և անցկացում.

— խմբերում էկոլոգիական դաստիարակության պայմանների ստեղծում՝ բնության անկյան առկայություն, գրադարան, լուսանկարներ, բնական նյութեր՝ ինքնուրույն խաղերի և փորձերի անցկացման համար.

— համապատասխան բույսերի և կենդանիների, թռչունների ընտրություն և խնամք (երեխաների հետ միասին) [1,3-7էջ]

1.2Կենդանիների դերը բնության մեջ

Կենդանիների դերը բնության մեջ

Վերոնշյալ մեթոդների միջոցների արդյունքում հաղորդվումէ եևեխային որոշակի գիտելիքներ կենդանի բնության և կենդանիների նշանակության մասին ;Զրույցների ,էքսկուսիաների ,նկարներ դիտման և այլնի շնորհիվ երեխան իմանում է ,որ կենդանական աշխարհը որոշակի տարածքում կամ ջրատարածությունում ապրող կենդանիների տեսակների ամբողջությունն է;

Այս կամ այն շրջանի կենդանական աշխարհը ձևավորվում է կենդանիների տարբեր խմբերի՝ կենդանական համալիրների պատմական զարգացման պրոցեսում:

Կենդանական աշխարհը կենսոլորտի կարևորագույն տարրերից է:

Կենդանական աշխարհի դերը մեծ է կյանքի և բնության զարգացման գործում չափազանց մեծ է և անփոխարինելի:

Կենդանական աշխարհը անփոխարինելի նշանակություն ունի նաև հողառաջացման գործընթացում: Հողում ապրող անհամար մանր, կլոր որդերը, հողային տիզերը, անձրևաորդերը և այլ կենդանիներ փխրեցնում են հողը, նպաստում են նրա օդաթափանցելիությանը, ջրաթափանցելիությանը, հարստացնում են օրգանական նյութերով, բարձրացնում բերիիությունը:

Կենդանական աշխարհը էական նշանակություն ունի բույսերի կյանքում: Ոմանք բույսերի փոշոտման գործընթացի ակտիվ մասնակից են, մյուսները տարածում են նրանց սերմերը: Մի շարք կենդանիների բացասական դեր են խաղում բույսերի հիվանդությունների և վնասատուների տարածման տեսակետից:

Մասնակցելով բնության մեջ նյութերի շրջանառությանը, կենդանական աշխարհի ներկայացուցիչները հսկայական դեր են խաղում բնության ընդհանուր հաշվեկշռի պահպանման գործում

Անփոխարինելի է նաև կենդանիների դերը մարդու կյանքում: Սովորաբար, դրանցից շատերը մարդու համար հանդիսանում են սննդի հիմնական աղբյուր կամ արտադրության հումք:

Կենդանական աշխարհի ներկայացուցիչները նաև էական ազդեցություն են ունենում գեղագիտական, ճանաչողական, դաստիարակչական ուղղություններով: Բնության մեջ կենդանական աշխարհը համարվում է հզոր թագավորություն: Կենդանական աշխարհը դիտվում է անընդհատ աճի և զարգացման մեջ: Արտաքին աշխարհի ցանկացած աննշան փոփոխություն անգամ իր արդյունքն է թողնում կենդանիների աճի և զարգացման վրա, որի հետևանքով էլ դրանք փոփոխվում են, հարմարվում արտաքին միջավայրի պայմաններին և գնալով առավել կատարելագործվում: Կենդանական աշխարհի բոլոր ներկայացուցիչները բաժանվում են երկու խմբի՝ գիշատիչներ և խոտակերներ: Խոտակեր կենդանիները սնվում են բուսականությամբ: Նրանց բազմացումը կատարվում է շատ արագ, եթե, իհարկե, նրանց աճը սահմանափակող գործոններ չկան:

Անտառը կենդանիների համար ամենաապահով ապաստանն է: Շատ կենդանիներ անտառից դուրս անկարող են պահպանել սեփական գոյությունը: Անտառում առկա է սնունդ, ջուր, կացարան: Երբ մարդը ոչնչացնում է անտառը, դրա հետ միասին ոչնչանում են անտառային միջավայրին բնորոշ մանր և խոշոր կենդանիները: Երկրագնդի երեսից մի

շարք կենդանիներ անհետացել են այն պարզ պատճառով, որ մարդիկ հսկայական անտառային տարածություններ են ոչնչացրել՝ ապաստանից և սննդից զրկելով նրանց:

Որոշ կենդանիներ ապրելով հողում կարևոր ծառայություն են մատուցում բույսերին, քանի որ բներ փորելով և հողում անդադար շարժվելով բարելավում են օդաթափանցելիությունը և ջրաթափանցելիությունը, նպաստավոր պայմաններ են ստեղծում արմատների աճի և զարգացման համար: Այս տեսակետից հատկապես արժեքավոր են համարվում անձրևաորդերը, որոնք անվանվում են անտեսանելի երկրագործնոր: Վերջիններս միաժամանակ ոչնչացնում են հողում գտնվող վնասակար կենդանիներին:

1.3 Բույսերի դերը բնության մեջ

Բույսերի դերը բնության մեջ

Մենք ապրում ենք շնչելով թթվածին, որը մեզ համար ապահովում են կանաչ բույսերը: Նրանք շրջակա միջավայրից կլանում են ածխաթթու գազը եւ օդ արտանետում թթվածին: Մարդու գոյությունը երկրի վրա առանց բնության, ծառերի ու տարբեր բույսերի անհնար կլիներ:Բնությունն ապահովում է Երկիր մոլորակի բնակչության

կենսական անհրաժեշտության բոլոր տարրերը: Մարդիկ հող մշակելով են ստանում սնունդ, խոտով են կերակրում անասուններին, որոնցից հետո ստանում ենք կաթ, կաթնամթերք ու մսամթերք, տարբեր բույսերից օգտակար թուրմեր ու դեղեր են պատրաստում,օդտագործում են թուղթը, որը ստանում են փայտից: Բնության բարիքներն ինչպես երկրի մակերեւույթի վրա են, այնպես էլ ընդերքում:Բազմաթիվ հանքավայրեր շահագործելիս են մարդիկ ստանում օգտակար հանածոներ ու կյանքի գրեթե բոլոր բնագավառներում անհրաժեշտ վառելիք: Բնությունը մարդկանց տվել է ապրելու ու գործելու անսահման հնարավորություններ, բայց մարդիկ մոռանում են, որ պետք է պահպանել բնությունը, որպեսզի այն հետագայում էլ կարողանա ծառայել մարդկանց:Ցավոք, մեր օրերում անխնա շահագործվում են հանքերը, աղտոտվում է բնությունը՝ կանաչ տարածքներն ու ջրերը, ինչն էլ խիստ բացասական ազդեցություն է գործում ջրում եւ ցամաքում ապրող կենդանիների վրա: Անխնա հատվում են ծառերը:Բնությունը պետք է պահպանել, որպես կենսական էներգիայի անփոխարինելի աղբյուր:

<<Մեր խմբասենյակի բնության անկյան բույսերը >>

1.4 Բնության երևույթները

Բնության երևույթներ

Երեխաները պետք է տեղյակ լինեն այնպիսի ընդհանուր բնական երևույթների մասին, ինչպիսիք են արևը, անձրևը, ամպրոպը, ծիածանը, քամին, տերևաթափը և եղանակային այլ երևույթներ, որոնք մենք ամեն օր հանդիպում ենք փողոցում:Նկարներով և բանաստեղծություններով երեխաների համար ավելի լավ է ցուցադրել , բացատրել, թե տարվա ո՞ր ժամին է տեղի ունենում այս կամ այն այլ երևույթ և ինչպիսին է բնությունը, օրինակ, ամռանը անձրևից հետո, երբ ծիածանը հայտնվում է կամ ձմռանը, երբ ծառերը ձյուն են գալիս:Ահա մի քանի օրինակ,թե ինչպես կարելի է երեխաներին հաղորդել երևույթների մասին

Արև

Արևը պայծառ աստղ է, այն երևում է ամեն օր առավոտյան լուսաբացին, իսկ երեկոյան անհետանում է մայրամուտից հետո: Երկնքում մենք տեսնում ենք արևը պայծառ արևային շրջանի տեսքով:Արևը ունի քույր ՝ լուսինը, որը դուրս է գալիս միայն գիշերը:

Անձրև

Անձրևը թափվում է ամպերից, երբ դրանք մթնում են և դառնում մութ, ծանր և, կարծես, կախված մեզանից: Իսկ ինչպես են մթնում ամպերը,երեխան պետք է իմանա ջրի շրջապտույտի մասին,հասկանա ,որ դա կուտակված ջրի ներքև թափվելն է :

Ծիածան

Հորդառատ անձրևից կամ ամպրոպից հետո երբեմն երեխաները կարող են դիտել այնպիսի անսովոր բնական երևույթ, ինչպիսին է ծիածանը: Դա այն դեպքում, երբ արևի պայծառ լույսը ներթափանցում է մի քանի տարբեր գույների:Ծիածանը նման է կամարի ՝ բազմաշերտ գույներով: Այստեղ կարմիր, կապույտ, մանուշակագույն և դեղին գույները այլ

գույներ են: Եվ հետո, երբ ջուրն արագորեն գոլորշիանում է արևի տակ, ծիածանը նույնպես արագորեն անհետանում է:Երեխաներին արդեն ավագ տարիքային խմբում կարելի է ծանոթացնել ծիածանի գույների հետ :

Քամի

Երբեմն երեխաները նայում են պատուհանից, և ասում,որ ծառերի ճյուղերը շարժվում են : Իրականում դա ոչ թե ծառեր են, որոնք շարժում են իրենց ճյուղերը, այլ քամին, որը փչում է այնպիսի ուժով, որ տերևներով ճյուղերը թեքում են տարբեր ուղղություններով: Քամին կարող է լինել թեթև և տաք, և կարող է լինել ուժեղ և ցուրտ: Անհրաժեշտ է զինել երեխաներին գիտելիքներով ,թե ինչպես պետք է հագնվել քամոտ եղանակին :

4.Տարվա եղանակներ

Երեխաների համար տարվա եղանակները կարծես ամեն անգամ նման են նոր աշխարհի՝ իրեն բնորոշ գույներով, հոտերով ու սենսացիաներով, որոնք պատկանում են որոշակի սեզոնին: Սեզոններին երեխաների ծանոթությունը կարող է սկսվել բնությունը նկարագրող նկարներից, ցույց տալով սեզոնի առանձնահատկությունները, նկարներ և հանելուկներ ներկայացնելով երեխաների համար:

Մեկ տարվա ընթացքում կա չորս եղանակ՝ գարուն, ամառ, աշուն և ձմեռ: Յուրաքանչյուր եղանակ բաղկացած է 3 ամսից, իսկ ընդհանուր առմամբ 12 ամիսը ձեռք է բերվում մեկ տարվա ընթացքում: Հին ժամանակներից սկսած տարվա յուրաքանչյուր ամիս իր անունն է կրում: Տարվա ամիսների անունները եկել են հին ժամանակներից, նրանց անուններով կարելի է տեսնել, թե ինչ է կատարվում տարվա տվյալ պահին, տվյալ ամսվա ընթացքում:

Երեխաները հստակ պետք է կարողանան տարբերակել յուրաքանչյուր եղանակ ,իրեն բնորոշ հականիշներով :Պետք է կարողանան անվանել

ամեն եղանակին հատուկ մրգերն ու բանջարեղենները :Այդ ամենին երեխաները ծանոթանում են առօրյա զբոսաքնների,պարապմունքների և զրույցների ընթացքում :Շատ տպավորվում են ,երբ իրենք են իրենց ձեռքով տնկում որևէ բանջարեղեն ,երբ իրենց ձեռքով խնամում են ծաղիկները կամ ջրում ծառերը հետագայում մրգեր հավաքելու նպատակով :Կարևոր է,որ երեխաները իրենց իսկ զգայարաններով տեսնեն,լսեն,զգան բնության մեջ փոփոխվող ամեն բան՝ամռանը շոգ է ,ձմռանը ցուրտ :գարնանը ծառերը ծաղկում են ,իսկ աշնանը այդ ծաղկած ծառեր վերածվում են մրգաշատ ու պտուղներով լի ծառերով: [3,60-63էջ]

1.5Խաղը որպես էկոլոգիական դաստիարակության միջոց

Էկոլոգիական դաստիարակության գործընթացը կազմակերպվում է մեծահասակների կողմից և իրականացվում է մի շարք միջոցներով: Հիմնական միջոցը բնությունն է, բնության հետ շարունակական շփումը: Առավել արդյունավետ է դառնում,երբ երեխանեի համար կազմակերպվում են խաղեր բնության գրկում :

Նախ մի փոքր խոսենք այն մասին, թե ինչ խնդիրներ ունի էկոլոգիական դաստիարակությունը: Մանկապարտեզում երեխաների էկոլոգիական կրթության ու դաստիարակության խնդիրներն են ՝

ա) շրջապատի նկատմամբ ճիշտ վարվելակերպի մշակում,

բ) բնության նկատմամբ քաղաքացիական վերաբերմունքի դաստիարակում,

գ) հասարակության մեջ ընդունելի մարդկային փոխհարաբերությունների հաստատում:

Խաղային գործունեությունը նպաստում է գործունեության նոր ձևերի՝ աշխատանքի և ուսումնական գործունեության, առանձնացմանը: Երեխայի խաղն իր զարգացման ընթացքում ձեռք է բերում աշխատանքային և ուսումնական գործունեությանը բնորոշ կառուցվածքային տարրեր՝ նպատակ, պլանավորում, արդյունք, որոնք, ձևավորվելով խաղային գործունեության ընթացքում, տեղափոխվում են գործունեության այլ ձևեր: Հատուկ կազմակերպված պարապմունքներից բացի էկոլոգիական գիտելիքներ կարող են փոխանցվել խաղ-պարապմունքների ,խաղ-վիկտորինաների,պարապմունք-բանավեճերի և ուսուցման այլ ձևերի միջոցով :Արդյունավետ է նշված հիմնական միջոցների համատեղ կիրառումը բնության գրկում :Պարապմունքների համակարգում իր ուրույն տեղն է գրավում համալիր պարապմունքը ,որը

չափազանց արդյունավետ է նաև նախադպրոցականի էկոլոգիական դաստիարակության ընթացքում: [1,16-17էջ]

1.6 Իրերի փոխադարձ կապը բնության մեջ

Բնության բաղադրիչների միջև ամենուր գոյություն ունեն փոխադարձ սերտ կապեր: Միմյանց հետ կապված են անկենդան և կենդանի բնությունը, բույսերն ու կենդանիները, տարբեր կենդանիները: Մարդը,լինելով բնության մի մասնիկը, նույնպես հազարավոր թելերով կապված է իր շրջապատի բնության՝ հողի, գետերի, օդի, կենդանի օրգանիզմների հետ: Միայն թե բնության մեջ եղած այդ կապերը տեսնել հնարավոր չէ, -այսինքն դրանք անտեսանելի կապեր են: Բայց գիտությունն օգնում է մեզ հասկանալ և բացատրել այդ փոխադարձ նուրբ կապերը, որպեսզի նախ և առաջ մենք ինքներս մեզ չվնասենք:

Եղել են ժամանակներ, երբ մարդը, լավ չիմանալով բնության օրենքները, անխնա ոչնչացնում էր բոլոր գիշատիչ կենդանիներին՝ գայլերին, աղվեսներին, ուրուրներին, որպեսզի պաշտպանի օգտակար և գեղեցիկ կենդանիներին: Դաշտերի ու անտառների վնասատու միջատներին ոչնչացնելու նպատակով մարդն օգտագործում է թունաքիմիկատներ: Բայց դրանցից ոչնչանում են ոչ միայն վնասատու միջատները, այլ նաև օգտակար կենդանիները, բանի որ այդ թույնը ազդում է նաև նրանց վրա:

Բնության մեջ եղած փոխադարձ կապերի արդյունք է հողի առաջացումը: Նախադպրոցականն արդեն պետք է իմանա բնության մեջ եղած ւիոխադարձ կապերի դերն այնքան կարևոր է. որ եթե մի տարածքում բնության որևէ բաղադրամաս փոփոխվում է. ապա փոփոխության են ենթարկվում մյուս բոլոր բաղադրիչները: Օրինակ՝ եթե անտառապատ որևէ տարածքում պակասում է խոնավությունը, ապա անտառը վերածվում է ընդարձակ մարգագետնի: Դրա հետևանքով էլ վերանում են անտառային կենդանիները, ուժեղանում է հողի քայքայումը, քանի որ վերանում են նաև հողը ամուր պահող ծառերի արմատները: Եվ արդյունքում առաջանում է բոլորովին նոր բնական տարածք:

<<Բնությունը հավերժական աշխարհներից մեկն է՝գեղեցիկ,ուրախ,որը ոչ միայն կարող ենք,այլ պարտավոր ենք դարձնել ավելի գեղեցիկ և ուրախ մեզ հետ ապրողների համար,ովքեր մեզանից հետո պետք է ապրեն նրանում։>>

L. Տոլստոյ

Երեխան պետք է հասկանա ,որ իր բարեկեցությունը,վաղվա օրը ,իր ու իր մերձավորներին,ընկերների երջանկությունը կախված է օդի,ջրի մաքրությունից,գետին,պուրակին,թփին կոնկրետ օգնություն ցուցց տալուց,նա կդառնա բնության պաշտպանն ու բարեկամը:Էկոլոգիական դաստիարակչական աշխատանքների հիմնական իմաստը կոնկրետ բնապահպանական գործունեությունն է ,որի օբյեկտներն են `հողը, ջուրը,օդը,կենդանիներն ու բույսերը:

Ժամանակի թելադրանքով պահանջ է առաջացել աճող սերնդին ծանոթացնել շրջակա միաավայրի հետ հաղորդակցվելու կուլտուրական ձևերին՝համապատասխանեցված գործողությունների սկզբունքի վրա:Այսոր ընտանիքի , ն/դ հաստատությունների խնդիրը պետք է լինի երեխայի գիտակցությունը հասցնել այն գաղափարը, որ յուրաքանչյուր մարդ բնության հետ կապված է անտեսանելի թելերով և լրիվ կախման մեջ է նրանից ոչ միայն կենսաբանական,այլ հոգևոր առումով և պեք է նրանից ընդօրինակի ներդաշնակությունը ,ռիթմը,համարձակությունը ,բակրությունը,որպեսզի իրենցից յուրաքանչյուրը գիտակցի որ բնության մի մասնիկն է և պետք է ենթարկվի այն կարգ ու կանոնին,որը տիրում է բնության մեջ:Էկոլոգիական դաստիարակության հիմնական նպատակն է սերմանել երեխայի մեջ էկոլոգիական գիտակցության և մտածողության ,էկոլոգիական կուլտուրայի,բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունք,ճիշտ որոշումների ընդունում,որը և կնպաստի մարդկանց առողջ կենցաղի կայուն զարգացմանը ,երկրի էկոլոգիական անվտանգությանը:Էկոլոգիական դաստիարակություն ասելով հասկանում ենք անձի ուսուցման դաստիարակություն զարգացման գործընթացների

ամբողջական միասնությունը ,որը նպատակաուղղված է աճող սերնդի էկոլոգիական կուլտուրայի և աշխարհայացքի ձևավորմանը:Երեխայի էկոլոգիական դաստիարակությունն սկսվում է շրջակա միջավայրի ճանաչումից : [2,49-55էջ]

Գլուխ 2

<<Հետազոտական աշխատանք >>

2.1 Արդյունքների վերլուծություն

Հետազոտությունների արդյունքների վերլուծության փուլում՝ պարտեզի առօրյայում էկոլոգիական դաստիարակությունը իրողություն մանկապարտեզային կյանքի բոլոր կողմորի գործնթաց է։ Հետազոտության միջոցով եկա այն եզրահանգման , որ էկոլոգիական դաստիարակությունը պատասխանատվության դաստիարակում է։ Այն պետք է անցնի , բնապահպանությունից դեպի բնասիրություն ,ապա՝ բնապահպանության։ Հետազոտական աշխատանքներս անց եմ կացրել Չարենցավան համայնքի , Չարենցավան քաղաքի << Լուսաբաց >> մսուր մանկապարտեզի միջին նախադպրոցական տարիքի երեխաների հետ։

2.2 Գործնական աշխատանք

Գործնական մասը անցկացրել եմ հետևյալ փուլերով

1.<<Աշունը Չարենցավանում>>թեմատիկ շաբաթ

2.Օրինակելի պարապմունք <<Ձուր>>թեմայով

Անցկացրել եմ նպատակային զբոսանքներ,որի նպատակն էր երեխաներին ծանոթացնել իրենց հարազատ քաղաքին և նրա տեսարժան վայրերին:

Երեխաների հետ անցկացրել եմ զրույց,մեր Հայաստանի ,մայրաքաղաք Երևանի մասին,պատմել եմ ,որ մեր երկրում կան բազմաթիվ մեծ ու փոքր քաղաքներ,որոնցից մեկը մեր հրաշք քաղաք Չարենցավանն է, որը գտնվում է Կոտայքի մարզում:

Զրույցին զուգահեռ ցուցադրել եմ տարբեր հետաքրքիր նկարներ և բացատրել եմ երեխաներին ,որ մեր քաղաքը ունի շատ տեսարժան վայրեր:

Երեխաների հետ միասին կատարեցինք նպատակային զբոսանքներ ,դեպի Կարեն Դեմիրճյանի անվան հրապարակ որտեղ գտնվում է Եղիշե Չարենցի կիսանդրին:

Որի անունով է կոչվում մեր գեղեցիկ քաղաքը:Այցելել ենք հաղթանակի զբոսայգի,քաղաքային գրադարան ,երաժշտական դպրոց,սպորտ դպրոց ,

Սուրբ Փրկիչ եկեղեցի,կենտրոնական հրապարակ դիտել ենք քաղաքի մեծ շատրվանը, համայնքապետարանի շենքը, եղել ենք քաղաքային այգում, որտեղ այցելեցինք Չարենցի թանգարան,որը երեխաների մոտ շատ էր տպավորվել,(այն պատմությունը ,որ Չարենցը իր ընկերոջ համար նոր կոշիկներ է գնում և ընկերոջ հնամաշ կոշիկները գամում է հատակին):Այս զբոսանքները նպատակային էին,երեխաները շատ ոգևորված էին ,շաբաթվա վերջին օրը եղանք գանգրահեր տղաի արձանի մոտ ,որը մեր քաղաքի խորհրդանիշն է:Երեխաները ծանոթացան մեր քաղաքի տեսարժան վայրերին,յուրաքանչյուր երեխա ասցաց իր ցանկությունը,ցանկանում էին երաժիշտ դառնալ,մի մասը սպորտով զբաղվել,այնքան էին ոգևորվել որ ամեն օր զբոսանքի ժամին ուզում էին

պարտեզի բակից դուրս գալ: Զբոսանքի ժամանակ նաև կատարեցինք դիտումներ և ամփոփեցինք աշունը:

<< Ջուր >>

Նպատակը - գիտելիքներ տալ բնության մեջ ջրի նշանակության մասին , զարգացնել վերապատմելու կարողությունը , դաստիարակել խնայող վերաբերմունք : Ծանոթացնել ջրի վիճակներին հեզուկ, պինդ,գազային :Սովորեցնել խնայողաբար վերաբերվել ջրին : Հարստացնել բառապաշարը և հղկել խոսքը : Օրինակելի պարապմունքս սկսել եմ << ՈՒրախ և տխուր >> կաթիլիկների պատմությունով : Կաթիլիկները դուրս են գալիս քարանձավից , հանդիպում են ջրափոսի կաթիլիկներին և իրենց համոզում են որ այդ մութ քարանձավի խորքերից դուրս գան , գնում են և ճանապարհին հանդիպում գետակին , զրուցում նրա հետ , շարունակելով ճանապարհը հասնում ջրվեժին : Յուրաքանչյուրը պատմում է իր պատմությունը :

Այս պատմությունից հետո , երեխաների հետ միասին դիտեցինք աշխարհի քարտեզը , գլոբուսը , միասին հասկացանք որ գույնն է գերակշռում դրանց վրա և երեխաները հասկացան , որ ամբողջ երկրագունդը պատված է ջրով : Նրանց հետ միասին դիտեցինք ջրի շրջապտույտը բնության մեջ : Երեխաները շատ գեղեցիկ ներկայացրեցն,թե ինչպեսեեն կուտակվում ամպերը և ինչպես են ամպերը դառնում կաթիլիկներ:

Երեխաներին տրվող հարցերից են

- Ո՞ր գույնն է գերակշռում քարտեզի վրա :

-Ի՞նչ կլինի մարդկանց , կենդանիներին , բույսերին, եթե ջուր չլինի :

-Ի՞նչպիսի ջրեր գիտենք :

- Ի՞նչպիսի ջուր ենք մենք օգտագործում :

-Ի՞նչ դեր ունի ջուրը մարդու կյանքում :

-Ի՞նչ գույն,համ , հոտ ունի ջուրը :

-Ի՞նչ դեր ունի ջուրը բնության մեջ :

-Ջուրը քանի՞ ագրեգատային վիճակ ունի :

Նախապես երեխաների հետ միասին կատարել ենք փորձ , ստացել ենք ջրի պինդ վիճակը : Թեյնիկի մեջ ջուր ենք լցրել և երբ այն սկսել է եռալ երեխաները հստակ տեսան ջրի մյուս ագրեգատային վիճակը : Այս փորձերը նրանց շատ դուր եկավ ,

նրանք շատ զարմացան երբ տեսան որ հեղուկ ջուրը ինչպես է դարձել սառույց :

Այս թեման երեխաներին ավելի պատկերավոր դարձնելու համար , ես առաջարկեցի տեղափոխել սառույցները թեյնիկի մեջ և տեսնել թե ինչպես է այն հալվում դառնում ջուր , հետո , ինչպես է այն եռում և գոլորշիանում :

Ջրի հետ նաև կատարել ենք այլ փորձեր , շաքարավազով , աղով , ավազով ,ձվով , թեյի թուրմով , տարբեր գունավոր նյութերով , կիտրոնով և կաթով : կատարեցինք ջրի չափում:Երեխաները ոգևորված մասնակցեցին փորձին ,հասկացան որ ,ջուրը կարելի է չափել:

Այս փորձերը երեխաներին շատ դուր եկան և նրանք ստացան շատ գիտելիքներ :

Երեխաներին սովորեցրել եմ շատ ասացվածքներ ջրի մասին :

Նրանց համար կազմակերպել եմ երաժշտադիդակտիկ խաղ << Ամպիկ >> Գ.Գաբրիելյան : Որտեղ բոլոր երեխաները կաթիլիկներ էին , երբ հնչում էր ամպիկի երաժշտությունը մտնում էին մեծ ամպիկի հետևում : Երբ հնչում էր անձրևի երաժշտությունը բոլորը դուրս էին գալիս : Նաև խաղացինք շարժախաղ <<Կաթիլները>>:Լսեցինք ուրախ ոտանավորներ ու ասույթներ ջրի մասին

Գործնական մասում իմ կատարած աշխատանքը դիտարկում եմ որպես արդյունավետ :

Եզրակացություն

Այսպիսով ՝ էկոլոգիական դաստիարակությունը անմիջապես կախված է էկոլոգիական գիտակցության ,էկոլոգիական կուլտուրայի և գիտելիքների մակարդակից:էկոլոգիական դաստիարակությունը չափանիշ է համարվում մարդու գործնական և հոգատար վերաբերմունքը շրջակա միջավայրի նկատմամբ և այդ վերաբերմնքի համապատասխանեցումը հասարակական նորմերին:Կատարելով մի շարք պարապմունքներ և փորձեր հասկացա ,որ էկոլոգիական դաստիարակությունը մանկապարտեզում առաջնային կարևոր դեր ունի: Երեխաների մեջ մանկուց պետք է սերմանել սեր հոգատարություն բնության նկատմամբ:Մենք՝դաստիարակներս պետք է շատ կարևորենք և անընդհատ խաղերի ու փորձերի միջոցով հետաքրքրություն առաջացնենք երեխաների մոտ:Վեր նշված փորձերն ու խաղերը դրա վառ ապացույցներ :Որքան հնարավոր է շատ փորձեր պետք է կատարենք , երեխաները մեծ սիրով մասնակցեցին փորձերին եղան հետաքրքիր հարցադրումներ:

Երեխաների հետ փորձերը օգնեցին ,որ նրանք անկաշկանդ շփվեն միմյանց հետ բացահայտեցինք նրանցից յուրաքանչյուրի մեջ ապրող բնապահպանին :Ծնողներն ասում են ,որ երեխաները տանն էլ ուզում են իրենց հետ խաղան ու փորձեր կատարեն :Կարծում եմ ես իմ նպատակին հասնելու ճանապարհին եմ ,ինձ հաջողվել է երեխա —ծնող և մանկապարտեզ կապի ամրապնդումը:Պետք է հաճախ մեր ապագա գանձերին նոր գիտելիքներ մատուցել :

Օգտագործված գրականության ցանկ

1.Գայանե Մարտիրոսյան <<Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում>>մեթոդական ձեռնարկ Երևան 2007

2.Հ.Միտոյան,Ս.Մարության,Լ.Սմբատյան,Հ.Մինասյան,Գ.Մարտիրոսյան ,Հ.Հարությունյան,Կ.Ղազարյան,Լ.Վերդյան,Ժ.Ավետիսյան <<Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր>>2011

3.Ռ.Ծառուկյան,Լ.Սմբատյան,Ս.Մանուչարյան,Ա.Գյուրջյան,Մ.Մկրտչյան <<3-6տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակերպում այլընտրանքային մոդելներով >>Երևան 2018

4.Ս.Մարուտյան,Ա.Մ.Դալաքյան <<Նախադպրոցական Մանկավարժություն>>Երևան 2008

5. https://allasahkyan.wordpress.com/2015/12/08/նախադպրոցականների-էկոլոգիական/

6.https://liliarustamyan.wordpress.com/2021/09/29/երեխաների-էկոլոգիական-և-բնագիտական-դ/

ՀՀԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ

ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Շարժախաղերի դերը նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական զարգացման գործում

ԿԱՏԱՐՈՂ՝ Ն. Ալեքսանյան

ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. Էմինյան

ՎԱՆԱՁՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն……..…….4

2.Գլուխ 1. Շարժախաղերի բնութագիրը ……..……6

3.Գլուխ 2. Շարժախաղերի նշանակությունը երեխայի կյանքում ……..……8

4.Գլուխ 3. Շարժախաղերի տիպերը և կանոնները……..……..…..10

5. Գլուխ 4. Շարժախաղերի ազդեցությունը երեխայի ձևավորման վրա **……..**14

6. Գլուխ 5.Փորձարարական մաս**……**16

7. Եզրակացություն ……..……19

8. Օգտագործած գրականության ցանկ……20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սիրում եք երեխային՝ խաղացեք նրա հետ:

Խաղացեք իսկական, անկեղծ և դա կլինի ձեր ամենամեծ նվերը նրան:

Թեմայի արդիականություն: Յուրաքանչյուր երեխայի կյանքում խաղը չափազանց կարևոր նշանակություն ունի, այն մեծապես ազդում է երեխայի զարգացմանն ու դաստիարակությանը:

Ի՞նչ է խաղը երեխային պատկերացմամբ: Շատերը կարծում են, որ խաղը հաճույք է: Խաղը իհարկե հաճելի է, բայց խաղում նույնպես կա զգալի ջանք ու աշխատանք: Երբեմն երեխաները և մեծահասակները երկար խաղալուց կարող են հոգնել, ուրեմն միտքը և մարմինը ակտիվորեն գործում են խաղի ընթացքում: Այսինքն հաճույքից բացի երեխան սովորում է, շփվում ընկերների, հասակակիցներ հետ: Նախադպրոցականի համար խաղը սովորելու բնական միջոց է և հեշտացնում է իմացական, շարժողական, զգայական և սոցիալական զարգացումը: Խաղի շնորհիվ ակտիվանում է երեխայի հուզական աշխարհը, զարգանում է երևակայությունը: Այն ունի դաստիարակչական, ուսուցանող մեծ նշանակություն: Նախադպրոցական հաստատություններում ֆիզիկակական դաստիարակությունը նպատակաուղղված է երեխաների առողջության ամրապնդմանը, նրանց օրգան-համակարգերի բարելավմանը, ֆիզիկական ներդաշնակ զարգացման ապահովմանը: Ֆիզիկական դաստիարակության խնդիրները կարող են հաջողությամբ լուծել միայն ամենօրյա նպատակային շարժողական ռեժիմի իրականացման պայմաններում: Դրանք են ամենօրա ֆիզկուլտ – առողջարարական միջոցառումների, տաբեր ֆիզիկական վարժությունների ու շարժախաղերի կազմակերպումը:

Ֆիզկուլտուրայի պարապունքներում էական տեղ է տրվում շարժախաղերի անցկացմանը, որի ընթացքում դրսևորում են բարձր ակտիվություն: Շարժախաղերի ճիշտ կազմակերպումը դրական ազդեցություն է ունենում երեխաների բազմակողմանի զարգացման վրա: Հայտնի է, որ երեխայի օրգանիզմը մշտապես գտնվում է շրջապատող միջավայրի ազդեցության տակ, որը նշանակալից չափով որոշում է նրա զարգացմանը ընթացքը: Անհրաժեշտ է մանկապարտեզում ստեղծել

ամենապարզ հնարավորությունները՝ երեխաների շարժողական ակտիվությունը բարձրացնելու և ֆիզիկականն ընդունակությունները զարգացնելու համար:

Հետազոտության նպատակն է.Ուսումնասիրել շարժախաղերի դերը նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական զարգացման գործընթացում

Հետազոտությանխնդիրներն են.

1. Ուսումնասիրել շարժախաղերի վերաբերյալ գրականություն:
2. Բացահայտելրել ինչազդեցություն են ունենում շարժախաղերը ն/դ տարիքի երեխաների ֆիզիկական զարգացման գործում:
3. Ներկայացնել ինչպես արդյունավետ պլանավորել տարբեր շարժունակության խաղերը:

Գլուխ 1. Շարժախաղերի բնութագիրը

Շարժախաղերն իրենց ուրույն տեղն ունեն երեխաների շարժումների ձևավորման գործում, որոնք իրավամբ համարվում են երեխայի շարժուն գործունեության հիմնական ձևի և դաստիարարակության կարևոր միջոցներից մեկը: Ս. Արղությանը շարժախաղերը համարել է մանկապարտեզի բնորոշ զբաղմունք:[4, էջ 34] Նա այս խաղերն անվանում էր նաև հասարակական խաղեր: Շարժախաղերը կանոններով խաղեր են: Նրանց բնորոշ են մի շարք առանձնահատկություններ.

1. Կանոնով խաղի բովանդակությունն ուղղված է մանկավարժության տարբեր խնդիրների իրականացմանը:
2. Կանոնով խաղերն ունեն հստակ մանկավարժական խնդիրներ և նպատակներ:
3. Խաղի ընթացքում լուծվում են մի շարք կրթադաստիարակչական խնդիրներ:
4. Խաղերը ղեկավարվում են ուղղակի եղանակներով՝ սահմանված կանոններով:
5. Կանոններով խաղին բնորոշ են պատրաստի բովանդակությունը ու կանոնների հստակությունը:

Կանոններով խաղերը ծագել են ժողովրդական խնդիրներից, որոնքվերամշակվել են և կատարելագործվել: Յուրաքանչյուր ժողովուրդ դարերի ընթացքում մշակել է և սերնդեսերունդ փոխանցել: Դրանք ազգային խաղերն են, խաղիկներն են, որոնք ունեն հզոր դաստիարակչական ազդեցություն ն/դ երեխաների մտավոր և ֆիզիկական զարգացման գործում:

Շարժախաղերի կազմակերպման և անցկացման ընթացքում շատ կարևոր է յուրաքանչյուր երեխայի անհատական ֆիզիկական հնարավորությունների հաշվառումը, ֆիզիկական ծանրաբեռնվածության ճշգրիտ հաշվարկն ու բաշխումը, սպորտային պարագաների ռացիոնալ օգտագործումը, շարժախաղերին բոլոր երեխաներին հավասար մասնակցության ապահովումը:

Շարժախաղերը երեխաների կողմից ամենասիրված և սպասված խաղերն են: Այս խաղերի միջոցով ավելի հեշտ են զարգանում երեխաների շարժումները, ունակություններն ու կարողությունները: Շարժախաղում երեխան հանդես է բերում

իր նախաձեռնությունը, դրսևորում է բարձր ակտիվություն, հնարամտություն՝ բռնողից, իրեն հետապնդողից խուսափելու, դժվար կացությունից դուրս գալու համար: Շարժախաղերում նրանք հմտանում են քայլքի, վազքի, ցատկերի, նետումների և այլ շարժաձևերում: Մշակվում են նրանց շարժողական ընդունակությունները՝ճարպկություն, ճկունություն, արագաշարժություն, դիմացկունություն, կոորդինացիա, տարածության մեջ կողմնորոշում: Դրանք նպաստում են երեխայի համարձակության, ինքնավստահության, ինքնուրույնության, սեփական ուժերի նկատմամբ վստահության, դաստիարակությանն ու ձևավորմանը:

Գլուխ 2. Շարժախաղերի նշանակությունը երեխայի կյանքում

Խաղերը նպաստում են ընկերական մթնոլորտի ստեղծմանը, բարձրանում է երեխայի օրգանիզմի դիմադրողականությունը, պահպանվում և ամրապնդվում է երեխայիառողջությունը:Խաղերն օգնում են երեխային՝ հաղթահարելու վախը: Խաղի կարևոր հատկանիշն է հուզականության առաջացումը: Այդ ընթացքում երեխաներն ձեռք են բերում մեծ բավականություն: Նրանք դրսևորում են ազատ ստեղծագործական գործունեություն, որին մասնակցում են երեխայի հոգեկան ամենատարբեր բաղադրիչները՝ երևակայությունը, ուշադրությունը, մտածողությունը, կամքը, հիշողությունը, հույզերը, մկանային լարվածությունը և այլն: Խաղը երեխայից պահանջում է այնպիսի որակներ, ինչպիսիք են շփվողականությունը, նախաձեռնող լինելը, իր գործողությունները ընկերների հետ կորդինացնելու ընդունակությունը: Խաղի միջոցով երեխաները փորձում են արտահայտել իրենց զգացմունքները, լուծել ներքին կոնֆլիկտները, բարձրացնում են ինքնագնահատականը: Շարժախաղերը տարբեր տարիքային ժամանակաշրջանում ունեն իրենց հոգեմանկավարժական ուղղվածությունն ու նշանակությունը: Դրանք ուղղված են կենսականորեն անհրաժեշտ շարժողական ընդունակությունների ու հմտությունների զարգացմանը, ինչպես նաևնպաստում են վճռականության, համարձակության, հնարամտության, ընկերասիրության, բարձր բարոյականության դաստիարակմանը: Երեխայի դաստիարակության կազմակերպման գործընթացում պետք է հենվել շարժողական հմտությունների և ընդունակությունների ձևավորման օրինաչափությունների իմացության վրա: Առավել մեծ է շարժախաղերի դերն ու նշանակությունը անձի ձևավորմանգործընթացում:

Շարժախաղերնամբողջությամբ կազմված լինելով տարբեր բնույթի շարժումներից՝ ակտիվ աշխատանքի մեջ է ընդգրում երեխայի օրգանիզմը՝ բարելավում է գլխուղեղի աշխատանքը սրտի և շնչառական համակարգերի գործունեությունը, արագացնում է նյութափոխանակությունը, ամրանում են ոսկորները, մկանները, մեծանում է ողնաշարի ճկունությունը:

Շարժախաղերի միջողով երեխան ճանաչում է իր մարմինը, բացահայտում է իր շարժողական կարողությունները:Ժամանակակից երեխաները ավելի քիչ են

շարժվում, որի արդյունքում օրգանիզմը դառնում է ավելի խոցելի՝ հիվանդությունների նկատմամբ, ավելի հաճախ են հիվանդանում: Շարժունակության նվազման պատճառ են հանդիսանում նաև համակարգչային խաղերի առջև երկար նստելը: Պետք է ավելի շատ քայլել, շարժվել: Մեծ շաժողականություն պահանջող խաղերը պետք է անցկացնել ուտելուց 25 -30 պոպե հետո: Ցուրտ եղանակներին և ձմռանը երեխաների հետ պետք է կազմակերպել մեծ շարժողականության խաղեր, բոլոր երեխաներին ակտիվ շարժման մեջ ընդգրկելու, օրգանիզմը տաքացնելու համար, իսկ շոգ եղանակին՝ պետք է տալ միջին և փոքր շարժողականության խաղեր: Սրանք նպաստում են, որպեսզի երեխան պաշտպանված լինի մրսելուց և գերտաքացումից:

Գլուխ 3. Շարժախաղի տիպերը և կանոնները

Ըստ շարժումների քանակի և ֆիզիկական ծանրաբեռնվածության տարբերում են մեծ, միջին և քիչ շարժողականություն պահանջող խաղեր: Մեծ շարժողականություն պահանջող են համարվում այն խաղերը, որոնք կառուցված են հիմնականում այնպիսի շարժումների հիման վրա, ինչպիսիք ենվազքը, ցատկը, մագլցումը: Խաղին մասնակցող բոլոր երեխաները ակտիվ շարժման մեջ են գտնվում:

Օրինակ « Ծիտիկները և ավտոմեքենան »,« Գտիր քո գույնը », « Արջի մոտ անտառում », « Բնոցի », «Թռչուններ և կատուն » :

Միջին շարժողականություն պահանջող խաղերը առանձնանում են ֆիզիկական համեմատաբար քիչ ծանրաբեռնվածությամբ (Քայլք, ցատկ, առարկաների փոխանցում): Խաղին մասնակցողներից ակտիվ շարժման մեջ են լինում անհատ երեխաներ կամ խմբի մի մասը: Օրինակ՝ «Ինքնաթիռ»,«Բռնիր մոծակը», «Իմ ուրախ հնյուն գնդակ», «Խփիր բուլավային», «Ով շուտ կհասնի դրոշին», «Աչքակապուկ»:

Փոքր շարժողականության խաղերը կառուված են քայլքից (հիմքում ընկած է քայլքը) և խաղին մասնակցող երեխաներից շարժման մեջ կարող է լինել անհատներ կամ ամբողջ խումբը, օրինակ՝ «Գտիր դրոշակը », «Գտիր որտեղ է թաքնված» , «Գտիր և լռիր», «Ով գնաց» :

Շարժախաղերի մասնակիցներից չի պահանջվում հատուկ պատրաստվածություն, որը և հնարավորություն է ընձեռնում դրանք կազմակերպել՝ տարբեր պայմաններում՝ դահլիճում, խմբասենյակում, բակում, անտառում: Խաղերը կազմակերպելիս պետք է հաշվի առնել նաև տարվա եղանակը, օդի ջերմաստիճանը, խաղի բովանդակությունը: Օրինակ՝ ամռանը չտալ ձմռան խաղեր, ձմռանը՝ ամռան խաղեր (օրինակ՝ « Թիթեռ բռնել»): Պետք է հաշվի առնել նաև խաղի տեղը օրվա ռեժիմում: Օրինակ՝ օրվա վերջում, քանի որ երեխաներն արդեն հոգնած են, պետք է տալ ավելի հանգիստ խաղեր, այսինքն միջին և փոքր շարժողականության: Միևնույն խաղը ճիշտ կազմակերպելու դեպքում կարող է ունենալ մեծ հաջողություն և ընդհակառակը՝ ոչ ճիշտ կազմակերպելու դեպքում՝

չառաջացնել ոչ մի հետաքրքրություն: Յուրաքանչուր անգամ խաղը պլանավորելիս դաստիարակը պետք է լավ պատկերացնի այն խնդիրները, որոնք դրել է իր առջև. ինչպիսի ունակություններ և կարողություններ պետք է զարգացնի ևամրապնդի խաղի միջոցով, որովհետև մի խաղում երեխաները տիրապետում են վազքին, մյուսին ցատկին, մի խաղում զարգանում է լարվածությունը, մյուսում ճարպկությունը, մյուսում՝ արագաշարժությունը, մյուսում՝ արագ կողմնորոշումը: Դաստիարակը խաղերը պետք է հագեցնի հուզականությամբ: Խաղերի բացատրման ժամանակ կարևոր է դաստիարևակի ձայնը,ինտոնացիան, բովանդակության բացատրումը: Եթե ճիշտ չի կազմակերպում երեխան երկար սպասելուց հոգնում է, որի հետևանքով աստիճանաբար իջնում է հետաքրքրությունը տվյալ խաղի նկատմամբ: Նույն խաղը կրկնելիս ազդանշանը չպետք է անընհդհատ փոփոխել, որպեսզի հետաքրքրությունը չիջնի խաղի նկատմամբ: Խաղի լավ յուրացման համար խորհուրդ է տրվում բացատրությունն ուղեկցել ցուցադրությամբ: Խաղի բովանդակությունը մանրամասն բացատրվում է միայն այն ժամանակ, երբ մասնակիցներն առաջին անգամ են խաղում, իսկ խաղը կրկնելիս, անհրաժեշտ է հիշել հիմնական բովանդակություն: Ավագ խմբերում ավելի նպատակահարմար է խաղերի կրկնության ժամանակ երեխաներին հարցնել խաղի բովանդակությունը և կանոնները, որը նպաստում է ոչ միայն հիշողությանն ու ուշադրությանը, այլ նաև երեխաների խոսքի զարգացմանը: Խաղերը պահանջում են զսպվածություն, համբերություն և կամքի ուժ: Որևպեսզի խաղի ընթացքը ճիշտ և հետաքրքիր լինի պետք է պահպանել խաղի կանոնները: Կանոններիկատարումը պետք է պարտադիր լինեն խաղին մասնակցող բոլոր երեխաների համար: Եթե որևէ երեխա խախտում է խաղի կանոնները, ապա դաստիարակը ընդհատում է խաղը և զգուշացնում երեխաներին, որպեսզի այն նորից սկսեն: Խաղի կանոները դաստիարակչական նշանակություն ունեն: Դաստիարակում են այնպիսի բարոյական հատկություններ, ինչպիսիք են՝ կարգապահությունը, ազնվությունը, ճմարտասիրությունը, զսպվածությունը, կամքի ուժը: Խաղի կանոնները պետք է համապատասխանեն երեխայի տարիքին: Որքան փոքր է երեխայի տարիքը, այնքան պարզ պետք է լինի խաղի կանոնը: Ավելի բարձր տարիքում խաղերի բովանդակությունն ու կանոնները ավելի են բարդանում: Երեխային հետաքրքրում է ոչ միայն վազելը, նետելը,

փնտրելը, այլ նաև խաղի արդյունքը. Կարողանալ շուտ հասնել, փախչել բռնողից, ցատկել ավելի բարձր և հեռու, ճիշտ կատարել շարժումները:Չի կարելի խաղի կանոնները խախտող երեխային ընդհանրապես զրկել խաղի իրավունքից: Եթե զրկվի էլ, ապա միայն մի խաղաժամանակ: Սխալ է նաև այն, որ կանոնը խախտող երեխային առաջարկվում է երգել, պարել, արտասանել, քանի որ շատ ժամանակ դիտավորյալ խախտում են խաղի կանոնները, որպեսզի երգեն կամ պարեն: Խաղի հաջողությունը կախված է դերերի բաշխումից: Կարելի է տալ խմբի աշխույժ երեխային, ցույց տալու համար, թե ինչպես կարելի է լինել համարձակ, ճարպիկ, արագաշարժ, մի այլ դեպքում՝ ամաչկոտ, ոչ համարձակ երեխաներին՝ ավելի վստահություն և համարձակություն ներշնչելու համար: Պետք է հասնել նրան, որ գլխավոր դերերում հանդես գան բոլոր երեխաները: Խաղի սկզբում որոշ երեխաներ խախտում են խաղի կանոնները. Բռնվելիս, նրանք չսպասելով ազդանշանի, շարունակում են վազել, դուրս են գալիս սահմանից: Պետք է պարզել երեխայի արգելակման մեխանիզմները, սովորեցնել կառավարել իրենց շարժումները, պահպանել խաղի կանոնները: Դրա համար պետք է սիստեմատիկ կրկնել խաղերը: Խաղի կրկնությունը հնարավորություն է տալիս ոչ միայն ամրապնդել երեխայի օրգանիզմը, այլ ապահովում է խաղի բովանդակության յուրացումըերեխաների կողմից:

Մանակպարտեզում խաղերը կարելի է կազմակերպել ինչպես առարկաներով (օղակ, գնդակ, դրոշակ, բուլավա, մարզափայտիկ), այնպես էլ առանց առարկաների, ինչպես նաև արտասանությամբ: Խաղերին ուղեկցվող խոսքերը դաստիարակը երեխաներին սովորեցնում է հենց խաղի ընթացքում: Սկզբում երեխաները արտասանում են , առանձին բառեր, ցածրաձայն, սովորելուց հետո՝ ավելի բարձր: Պետք է չգոռալ, արտասանել արտահայտիչ, հստակ, արտասանության տեմպը հարմարացնել շարժման տեմպին: Արտասանության խաղի անցկացումը միարժամանակ նպաստում է երեխաների շարժողական գործունեության ընթացքում խոսքի ակտիվությանը և զարգացնում է խոսքը շարժման հետ համաձայնեցնելու կարողությունը: Երեխաներին գրավում է հատկապես իրենց հարազատ կերպարների, հեքիաթների սյուժեների հետ կապված շարժումների կատարումը, որն էլ զարգացնում է նրանց երևակայությունը,

ստեղծագործելու կարողությունը: Այդ խաղերից են՝ « Նապաստակները և գայլը » , « Աղվեսը հավաբնում », «Ծիտիկները և կատուն », « Սագեր – սագեր » խաղերը: Եթե խաղերում կան այնպիսի շարժումներ, որոնք երեխային ծանոթ չեն, ապա դաստիարակը սկզբում սովորեցնում է պարապունքների ժամանակ, հետո տալիս խաղերը:

Շարժախաղերը լինում են ինչպես սյուժեով խաղեր, այնպես էլ սյուժե չունեցող խաղեր: Սյուժե չունեցող խաղերի հիմքում ընկած են շարժողական խնդիրներ, արագություն, ճարպկություն, տարածության մեջ ճիշտ կողմնորոշում, հնարամտություն, դժվարությունը հաղթահարելու կարողություն:Այստեղ կա նաև մրցակցություն, որը շահագրգռում է երեխաներին՝ ամեն գնով հասնել նպատակին, հաղթահարել ցանկացած դժվարություն: Օրինակ՝ « Ով շուտ կհասնի դրոշին » , « Ով կարող է ավելի արագ » , « Գցիր օղակի մեջ » և այլն: Մրցություն լինում է նաև սյուժե ունեցող խաղերում, սակայն դերերի կատարումը այն դարձնում է երկրորդական: Մրցությունը օգնում է դաստիարակելու լավագույն հատկություններ և կարողություններ՝ համառություն, վստահություն, ուրախանալ ընկերների հաղթանակով, ուրախ տրամադրություն, վարքի ճիշտ դրսևորում: Դաստիարակը պետք է օբյեկտիվ մոտեցում ցուցաբերի հաղթանակի հարցում: Եթե երեխան խաղի կանոնները խախտել է, հաղթող չի ճանաչվում: Շարժախաղերը կարևվորում են երեխաների վարքի կուլտուրայի ձևավորման առումով: Դրանք հնարավորություն են տալիս վարքային այս կամ այն դրսևորումը հասկանալի, ըմբռնելի դարձնել երեխաներին: Միաժամանակ նրանց դնում են որոշակի իրադրության մեջ, ընտելացնում այս կամ այն օգտակար և ընդունելի արարքը կատարելու: Կան այնպիսի շարժախաղեր, որոնք վերաբերվում են անձի արտաքին տեսքին, ուտելու կանոններին, նրանց փոխհարաբերություններին, գործունեության կուլտուրային: Օրինակ՝« Բռնիր նրան, ով թափթփված տեսք ունի »շարժախաղը: Այս խաղի նպատակն է երեխաներին սովորեցնել տեսնել ընկերոջ արտաքին տեսքի մեջ նկատվող թափթփվածությունը, ուղղել այն ուշադիր լինել նաև իրենց արտաքին տեսքի նկատմամբ:Միարժամանակ զարգացնել վայելուչ վարքը և բանավոր խոսքը

Գլուխ 4. Շարժախաղերի ազդեցությունը երեխայի ձևավորման վրա

Շարժախաղերն ազդում են նաև երեխայի բնավորության դրական գծերի, բարոյական որակների, գեղագիտական զգացումների ձևավորման վրա: Ձեռք են բերում ընկերասիրություն, կոլեկտիվում գործելու կարողություն, վճռականություն, գեղեցիկը տեսնելու ունակություն, ինչպես խաղում, այնպես էլ շրջապատում:

Խաղերը երեխային ուղեկցում են իր ողջ մանկության ընթացքում, դրանք համարվում են նրանց հույզերի, ուրախությունների ակունքը [5,էջ 435]: Խաղերում երեխան պետք է ձեռք բերի ուշիմություն, խուսափի բռնողից, պայմաններին համապատասխան փոխի շարժման բնույթը, համարձակ բարձրանա մարզապատին, հասնի նպատակին: Խաղի մեջ երեխան կարող է դրսևորել նաև բասացական գծեր, դրա համար դաստիարակը պետք է հաշվի առնի երեխայի անհատական առանձնահատկությունները և ներգործի դրանց վրա՝ տալով դրական ուղղվածություն: Շարժախաղերի ազդեցությունը հաստկապես դրական է ազդում երեխաների վրա այն ժամանակ , երբ խաղերը անց են կացվում բացօթյա: Մաքուր օդի ազդեցությամբ երեխաների ախորժակը մեծանում է, ուժեղանում է օրգանիզմնի դիմադրողականությունը, նյարդային համակարգը, շնչառական համակարգը, նյութափոխանակությունը:

Շարժախաղերում մեծ նշանակություն ունի նաև գույքը:

Խաղն ուսուցանելուց առաջ պետք է պահանջվող գույքը պատրաստ լինի, պետք է ընտրել առարկաներ՝ խաղերն ավելի հետաքրքիր դարձնելու համար (օղակ, գնդակ, դրոշակ): Երեխայի անվտանգությունը ապահովելու համար պետք է նաև խաղի ընթացքում վտանգավոր առարկաները հեռացնել:

Խաղից անմիջապես հետո պետք է պահել հիգիենայի կանոնները՝ օճառով լվացվել, եթե քրտնել են, փոխեն խոնավացած շապիկները, անմիջապես չնստել, քայլել մինչև վերականգնվի սրտի նորմալ աշխատանքը: Սրանք կարևորագույն օրենքներ են, որոնք պետք է հաշվի առնել խաղի ժամանակ: Եվ կարևոր է հիշել, որ պարապմունքի հիմնական մասում պետք է տրվի մեկ շարժախաղ՝ մեծ կամ միջին շարժունակություն: Հիմնական մասի տևողությունը 15 - 20 րոպե է:

Մեծ նշանակություն ունի խաղի ավարտը: Եթե խաղն ունի սկիզբ, ունի նաև

ավարտ: Բոլոր շարժախաղերնանկախ նրանից, թե օրվա ո՞ր ժամին է կազմակերպվում՝ զբոսանքներին, պարապմունքների միջև ընկած ժամանակամիջոցում, թե՞ ֆիզկուլտուրայի պարապմունքներին՝ պետք է ավարտել

քայլքով՝ սկզբում արագ, աստիճանաբար դանդաղեցնել:

Քայլքը իջեցնում է երեխայի ծանրաբեռնվածությունը, որն ստացել է խաղի ընթացքում:

Շարժախաղերում մեծ նշանակություն ունեն խաղալիքները՝ գնդակ, դրոշակ, օղակ: Գնդակով շարժախաղերում մեծ հնարավորություն է ստեղծվում աչքաչափի զարգացման համար: Սովորում են բռնել գնդակը, փոխանցել շրջանում, գցել մեկը մյուսին, հարվածել հատակին, պատին:

[4,էջ27] Հին Հունաստանում գնդակը համարվում էր ամենակատարյալ առարկան, քանի որ նման էր արևին:

Գնդակով խաղերը ամենասիրված և ուրախալի խաղերն են:

Սակայն լինում են նաև անախորժություններ, եթե չպահպանենք անվտանգության կանոնները: Օրինակ չի կարելի գնդակով խաղալ բնակարանում, փողոցում, որը կարող է վթարի պատճառ դառնալ:

Գլուխ 5. Փորձարարական մաս

Շարժախաղերն ուղեկցել են մարդկային հասարակությանը, նրա ողջ զարգացման ընթացքում:

Դրանք եղել են ժողովրդական ամենամատչելի դաստիարակության միջոցը: Ժողովրդական խաղերը հանդիսանում են ինքնուրույն ժանր ժողովրդական բանահյուսության մեջ: Այս խաղերը փոխանցվել են սերնդեսերունդ և հասել մինչև մեր օրերը: Դրանք են՝ «Տափկնոցի», «Աղվեսուկ», «Կուկալիկու» և այլն: Շատ խաղեր արտահայտում են մարդկանց կենցաղը, ծիսակատարությունները, բնության երևույթները: Օրինակ հարսանիքների, ուխտագնացության, «Վարդավառի» ժամանակ անբաժանելի մաս են կազմում այնպիսի շարժախաղերը, ինչպիսիք են «Կոխ», Պահմտոցի», «Լախտի» խաղերը:

Գոյություն ունեն նաև ձեռնախաղեր, օրինակ՝ «Քարկտիկ», «Ափ ու բռունցք», «Թռավ-թռավ», «Մատ ճանաչել» և այլն:

Տարբերում ենք շարժուն խաղերից մարզական տեսակը «Օղակների միջոցով», «Վերցրու գնդակը», «Բասկետբոլ», «Գնդակը պարկում» և այլն:

Ազգային ծեսերի խաղարկման մեջ երեխան հիմնականում կարող է ընդգրկվել իր տարիքին համապատասխան ծիսական և մանկական խաղեր խաղալով:

Հետազոտական աշխատանքի խնդիրները, մեթոդները, կազմակերպումը կրտսեր2-րդ խմբում

Թեմա՝ «Գնացք»շարժախաղ

Տեսակը՝ վազքով խաղ

Անհրաժեշտ պարագա – սուլիչ

Նպատակը՝ խաղի միջոցով զարգանում է ուշադրությունը, արագ կողմնորոշվելու կարողությունը, զարգանում է ձայնային ազդանշանի տակ շարժումներ կատարելու կարողությունը, երեխաները վարժվում են քայլքին և վազքին:

Խնդիրները

1.Խաղը համապատասխանի երեխաների տարիքային առանձնահատկություններին:

2. Խաղի կանոնները հասկանալի լինեն երեխաներին:

3. Խաղը նպաստի երեխաների մի շարք կարողությունների զարգացմանը:

4. Խաղը ունենա դաստիարակչական նշանակություն, քանի որ երեխաները մոտիկից են առնչվում, մրցակցում, վիճում, իրար օգնում, դառնում են ավելի ինքնուրույն ու ընկերասեր:

Խաղի ընթացքը – Երեխաները շարվել են խմբասենյակի պատի տակ: Սկզբից «Գնացքի» դերը կատարում եմ ես, իսկ երեխաները «վագոններն» են: Իմ ազդանշանից հետո (սուլում եմ) երեխաները սկսում են շարժվել առաջ՝ միմյանց բռնած: Սկզբում շարժվում են դանդաղ, հետո արագ, իսկ վերջում արդեն անցնում են վազքի:

Նկար 1. Հատված «Գնացք» խաղից

Դանդաղ ընթացքի ժամանակ երեխաները արտասանում են «չու-չու-չու»: Ես հայտարարում եմ, որ գնացքը մոտենում է կայարանին, երեխաները դանդաղեցնում են ընթացքը և կանգնում: Երբ նորից ազդանշան եմ տալիս՝ գնացքը շարժվում է:

Խաղի լավ յուրացումից հետո նկատում եմ մի այսպիսի հետաքրքիր գործողություն: Մինչև ես կորոշեմ, թե ով է լինելու «գնացքը», Նարեկը, որն ունի խոսքի հետ կապված խնդիրներ (չի խոսում), վազում է և արագ կանգնում շարքի առջևում՝ արտաբերելով «չու–չու-չու», ուրախանում է, որ ինքն է վագոնները տանելու: Նա շարժվում է միայն իմ ձայնային ազդանշանից հետո: Այստեղ նա ձեռք է բերում վստահություն, խոսքի մեջ հնչյուններ արտաբերելու ունակություն, բայց այս

Խաղում կան երեխաներ, ովքեր անհամանաչափ են քայլում, դուրս են գալիս շարքից, չսպասելով ազդանշանի, շարունակում են վազել: Դրա համար հարկավոր է խաղը սիստեմատիկաբար կրկնել, որից հետոբարդացնել խաղի բովանդակությունը: Օրինակ՝ կայարան հասնելուց հետո երեխաները պարեն դաստիարակի նվագի տակ: Երբ լսեն ազդանշանը, վազեն և կանգնեն իրենց տեղերում:

Խաղի համար նախատեսված մեթոդական ցուցումներ.

1. Կարգավորում եմ խաղի ժամանակ գնացքի շարժման տեմպը և տևողությունը:
2. Սկզբնական շրջանում խաղն անց եմ կացրել ոչ մեծ խմբով, աստիճանաբար ավելացրել խաղացողների թիվը:

Եզրակացություն

Ավարտելով աշխատանքս, եկա հետևյալ եզրահանգումներին՝

Շարժախաղերն էական դեր են խաղում նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական զարգացման գործում:Շարժախաղերը նպաստում են երեխաների օրգանիզմի ակտիվացմանը, կոփմանն ու առողջությանը:Շարժախաղերը նպաստում են բնավորության դրական գծերի ձևավորմանը, երեխան ձեռք է բերում ընկերասիրություն, համարձակություն, վճռականություն, հաստատակամություն:

Ձևավորվում է պատասխանատվություն՝ կանոնները պահպանելու և կամք՝ որոշակի արդյունքի հասնելու համար:Նպաստում են նետման և ցատկելու, մագլցելու և վազելու կարողությունների ամրապնդմանը:Զարգացնում է արագ կողմնորոշվելու, ազդանշանով գործելու կարողություն և ճարպկություն:Շարժախաղերը նպաստում են նաև խոսքի զարգացմանը: Շարժախաղերում երեխաները հաճախ դրսևորում են նաև բացասական վարք. Վիճում են, խաղալիքը չեն զիջում ընկերոջը, առաջանում է կոնֆլիկտ: Այստեղ դաստիարակի խնդիրն է պահպանել խաղի կանոնները և ամեն ինչ հարթել:Շարժախաղերը կարելի է անվանել դաստիարակության ինստիտուտ:

Շարժախաղերը զարգացնում են երեխայի արագաշարժությունը, ուշադրությունը, գեղեցիկ շարժումներ կատարելու ունակությունը, զսպվածությունը, ազնվությունը:

Զարգացնում է արգելքներ հաղթահարելու կարողությունը:

Օգտագործված գրականության ցանկ.

1. Առաքելյան Ռիմա, «Շարժախաղեր» 2009թ., 177 էջ
2. Առաքելյան Ռ.Ա., «Շարժախաղեր» 1975թ., 86 էջ
3. Մինասյան Հ., «Ֆիզիկական դաստիարակություն» 2011թ., 166 էջ
4. «Նախաշավիղ» 2014թ., 64 էջ
5. Պետրովսկու Ա.Վ. «Ընդհանուր հոգեբանություն» 1974թ., 543 էջ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

ԿԱՏԱՐՈՂ՝ Ն. Մարուքյան

ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. Միրաբյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ----------3

1.Նախադպրոցականների բարոյական դաստիարակությանը նպաստող

Ժողովրդական տոները, ծեսերը----------5

1.1Ծեսերի, ծիսական գործողությունների իրականացում----------7

2.Ժողովրդական բանահյուսություն----------13

2.2Ժողովրդական տոները, ծեսերը, դրանց էությունը----------15

Եզրակացություն----------20

Գրականության ցանկ----------21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ազգային արժանապատվությունը սկսվում է ձևավորվել վաղ տարիքից, երբ երեխան սկսում է ընկալել և իմաստավորել շրջապատը:

Մարդկության դարավոր երազանքը միշտ եղել է և մնում է այնպիսի անձի դաստարակությունը, ով կարող է արժևորել անցյալի բարոյական արժեքները և ինքը հանդիսանա դրա կրողը:

<u>Թեմայի արդիականությունը</u> կայանում է նրանում, որ այն միտված է օգնելու երեխային ճանաչելու իրեն և յուրացնելու անցյալի փորձը սովորույթների, տոների, ծեսերի միջոցով:

Թեմայի արդիականությունը նաև այն է, որ երեխայի դաստիարակությունը անձի զարգացման կարևոր նախապայմանն է, և դրա գլխավոր բաղադրիչը ազգային ոգով հագեցնելն է, որն այժմ էլ նախակրթարանում ընդունված և կիրառելի է:

Բարությունը, պատվասիրությունը և արդարությունը երեխային պետք է անձնական ուրախություն պատճառեն, իսկ չարիքը, անպատվությունը՝ դառնություն, տագնապ, նույնիսկ անձնական վիշտ:

Գիտատեխնիկական հեղափոխությունը կարող է հանգեցնել լուրջ հետևանքների, եթե չուղեկցվի համապատասխան բարոյական զարգացմամբ, հասարակության մեջ ակներև են դառնում բարոյական ավանդական նորմերի անկումը, մարդկանց սպառողական հոգեբանությունը, կողմնորոշումը դեպի կեղծ մշակույթային արժեքները, որոնք արդյունք են զանգվածային անկախ լրատվամիջոցների ակտիվ գործունեության:

Ձևավորված սոցիալ մշակույթային պայմաններում նախակրթարանը և դպրոցն ի զորու են ապահովել աճող սերնդի բարոյական դաստիարակությունը՝ ձևավորելով մարդասիրության, հայրենասիրության, արժանապատվության բարձր հատկանիշները:

Յուրաքանչյուր ժողովուրդ դաստիարակչական մեծ արժեք ներկայացնող ազգային ավանդույթներ, տոներ, ծեսեր ունի, ուստի կարևոր է ժողովրդական ավանդույթների պահպանումը, որն իր դրական աղդեցությունն ունի երեխաների բարոյական արժեքների ձևավորման վրա:

Անձը որպես հասարակական հարաբերությունների անհատական կրող, յուրացնում է անցյալի փորձը սովորույթների, տոների, ծեսերի միջոցով:

Ավանդույթը կրում է հասարակական բնույթ անկախ նոր սերունդների կամքից ու գիտակցությունից:

Հովնաննես Թումանյանն ավանդույթները համարել է հայ ժողովրդի հանճարի, նրա հոգու և մտքի, ազգային բնավորության, աշխարհայացքի ու շնորքի լավագույն ծնունդները:

Մշակույթը չէր պահպանվի և սերնդեսերունդ չէր փոխանցվի, եթե գոյություն չունենային դրան նպաստող որոշակի միջոցներն ու հանգամանքները: Դրանցից կարող ենք առանձնացնել պատմության ընթացքում ձևավորված ծեսերը, ազգային ավանդույթները, տոները:

Հայ մեծ մանկավարժ Ղազարոս Աղայանը անդրադառնալով բարոյական դաստիարակության դերին ու նշանակությանը (<<Արարատ>> ամսագրում իր <<Խորհրդածություն դաստիարակության վերա>> հոդվածաշարում, նշում է, որ մարդն ունի հոգի և միտք. մարմինը կարող է լինել ուժեղ կամ թույլ. հոգին անաղարտ է և տմարդի. միտքը՝ խելոք և անխելք):

Դժվար է գտնել ավելի հարուստ, կոլորիտով, երաժշտական, բազմաբովանդակ լեզվական նյութ, քան ծիսական բանահյուսությունն է: Նրանում եղած լեզվական կառույցները, չափերը, ռիթմերը, բառաձևերը, համեմատությունները, պատկերները նախադպրոցականի լեզվամտածողության զարգացման համար անփոխարինելի են:

<u>Աշխատանքի նպատակը</u>՝ ուսումնասիրել Լոռվա տարածաշրջանում պահպանված ազգային տոներին, ծեսերին, տոնակատարություններին վերաբերող գիտական, մեթոդական, տեսական գրականությունը և բացահայտել ինչքանով են դրանք մանկապարտեզներում ընդունված և կիրառվում՝ որպես ազգային դաստարակության միջոց:

<u>Թեմայի ուսումնասիրության շրջանակներում առանձնացվել են հետևյալ խնդիրները.</u>

- նկարագիել մանկապարտեզում ի՞նչ աշխատանքներ են տարվում ժողովրդական ավանդույթների պահպանման համար:
- լուսաբանել ժողովրդական ավանդույթները՝ որպես ազգային դաստիարակության միջոց, ի՞նչ փոփոխություններ են կրել:
- Բացահայտել, թե ինչպիսի՞ ավանդույթներ, տոներ, ծեսեր են պահպանվել:

1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՆԵՐԸ, ԾԵՍԵՐԸ

Յուրաքանչյուր ժողովուրդ դաստիարակչական մեծ արժեք ներկայացնող ազգային ավանդույթներ, ծեսեր ունի: Հետևաբար, նախադպրոցականների հետ տարվող դաստիարակչական աշխատանքի բովանդակության մեջ անհրաժեշտ տեղ պետք է հատկացվի ժողովրդական առաջադիմական ավանդույթներին.

Անցյալի ազգային ավանդույթների հիման վրա տոների և տոնակատարությունների միջոցով ստեղծել, ձևավորել նոր ազգային առաջադիմական ավանդույթներ:

Դաստիարակչական աշխատանքի հատուկ ձևերով ու մեթոդներիով պայքարել ընտանեկան կենցաղում դեռևս պահպանվող վնասակար սովորույթների, ծեսերի, ավանդույթների դեմ:

Երբ անգլիացի գրող ՈՒ. Թեքերեյին հարցրել են, թե ինչ դաստիարակել երեխայի մեջ, նա պատասխանել է.-<<Արարք ցանեցեք՝ սովորույթ կինձեք, սովորույթ ցանեցեք՝ բնավորություն կինձեք, բնավորություն ցանեցեք և դուք ճակատագիր կինձեք>> :

Մանկապարտեզը երեխայի կյանքում ամենակարևոր և պատասխանատու շրջանն է: Այն նրա համար բացում է մի նոր աշխարհ:

Ժողովրդական ավանդույթներից ծեսերը, տոները ամենա առաջադիմականները և կարևորները հայրենասիրական ավանդույթներն են, որոնք պատմական խոր արմատներ ունեն և նախադպրոցականի համար դառնում են հայեցի դաստիարակության լավագույն օրինակը:

Հայրենիքի իր ժողովրդի նկատմամբ սերը բնորոշ է բոլոր ժողովուրդներին, սակայն որպես ավանդույթ, դա արտահայտման յուրահատուկ ձև ունի, ուստի համարվում է ազգային ավանդույք:

Դարերի ընթացքում հայրենասիրական ավանդույթներ է կուտակել հայ ժողովուրդը:

Իր աշխարհագրական և քաղաքական անբարենպաստ պայմանների պատճառով դարեր շարունակ Հայաստանը արյունահեղ պատերազմների թատերաբեմ է եղել:

Չնայած իրենց փոքրաթվության ու խաղաղասեր ոգուն, ազատատենչ ու հայրենասեր հայերը մշտապես այրունահեղ մարտեր են մղել օտարերկրյա պետությունների անօրինակ բռնությունների, ժողովրդի ազգային արժանապատվությունը վիրավորների դեմ և ազատագրել են հայրենի հողը: Եվ որքան ավելի ուժեղ են եղել թշնամու հարձակումները, այնքան ավելի մեծ թափ է ստացել հայրենիքի ազատության համար պայքարը:

Այդ երկարամյա պայքարի բովում ձևավորվել են հայրենիքի նկատմամբ սիրո ավանդույթները և փոխանցվել սերունդներին:

Երեխայի աշխարհընկալման, գեղագիտական ճաշակի և այդ ոլորտում տարրական պատկերացումների ձևավորման տեսակետից առանձնահատուկ նշանակություն ունեն ազգային սովորությունները, տոները, ընտանեկան հանդիսությունները: [2, 17]

Նախադպրոցականի բարոյական դաստիարակության համար կարևոր նշանակություն կարող են ունենալ մեր նախնիների շրջանում լայնորեն տարածված ժողովրդական որոշ տոներ: Այն տոները, որ հայ ժողովուրդը նշում էր դեռևս հարյուր տարի առաջ շատ քիչ են պահպանվել մեր կենցաղում:

Հայաստանի Հանրապետության առանձին ազգագավառներում շարունակում են նշել Վառդավառ, Համբարձում, իսկ Զատիկ, Սուրբ խաչի, Տյառն ընդառաջի որոշ ծեսեր պահպանվել են համարյա ամենուր:

Սակայն տոնակատարությունների ամբողջականությունը զգալիորեն կորուստներ են կրել՝ մեկ հարյուրամյակ առաջ նշվող տոներն իրենց տևական պատմությունն են ունեցել, և նրանց բացահայտումն ու վերլուծությունը մաս- մաս ցույց է տալիս ինչպես հայ ժողովրդի անցած պատմական ուղին, այնպես էլ հազարամյակների ընթացքի տոմարական փոփոխությունները, մարդկանց միջև հարաբերությունների կաղապարը: [3,7]

Տոների ժամանակ կատարվող ժողովրդական շատ ծեսեր ոչ միայն եկեղեցին չի ընդունում, այլև հակասում են քրիստոնեության տրամաբանությունը: Դրանք բազմաթիվ են . զանազան գուշակությունները, չարախափան կանխարգելիչ ծեսերը, վիճակահանությունները, նախաքրիստոնեական աստվածներին կամ ոգիներին ներկայացնող տիկնիկները, կրակի պաշտանմուքին առնչվող խարույկները, ջրի պաշտանմունքի արարողությունները և այլն:

Սակայն դարերի ընթացքում հայ հոգևորականները կարողացել են հաշտվել դրանց անխուսափելի գոյության հետ և երբեմն նույնիսկ մասնակցել են դրանց: Այսպիսով՝ բուն

ժողովրդական, այսպես կոչված՝ ազգային սովորությունների մի մասը պահպանվել, փոխանցվել են սերնդեսերունդ՝ եկեղեցական տոների միջոցով:

Ոսումնասիրողները հայ ժողովրդի տոնացույցում բացահայտել են նրա վաղնջենական շերտերը, տեսնում արևի ու կրակի, ջրի ու հողի պաշտմունքին նվիրված հանդիսություններ նախաքրիստոնեական շրջանի աստվածներին, մասնավորապես երկրագործական աշխատանքները և անձնական ու հասարակական բարեկեցությունը հովանավորող ուժերին նվիրված ծեսեր:

Ծեսը ներառում է վարքի այն ձևերը, որոնք իրենց էությամբ նշանակալի են, խորհրդանշական և չունեն գործնական բնույթ:

1.1 ԾԵՍԵՐԻ, ԾԻՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ավանդույթների, ծեսերի, տոների տեսքով նաև: Բնականոն կյանքով ապրելու պայմաններում ժողովրդական տոները չէին իմաստազրկվի, այլ նոր որակ, նոր ձև կստանային և կշարունակեին կատարել իրենց կարևորագույն դերը՝ մարդկանց համախմբելու, ազգային և մարդկային արժեքները պահպանելու կարևորագույն գործառույթով:

Երեխան դաստիարակվում և սովորում է՝ յուրացնելով մեծերի փոխանցած մշակույթը: Եթե ընտանիքում չի պահպանվում ավանդականը, ապա այդ գործն իր վրա է վերցնում պետությունը կամ կրթօջախը՝ սկսելով մանկապարտեզից և շարունակելով մինչև դպրոցն ավարտելը:

Ծեսերին նոր կյանք տալու համար հարկավոր է նախ շատ լավ յուրացնել ավանդականը, ճանաչել այն միջավայրը, որտեղ ստեղծվել են դրանք: Լավ իմանալ երգերն ու պարերը, ծիսական գործողությունները, պարագաները դրանց խորհուրդն ու պատրաստման տեխնալոգիան:

- Ո՞ր գործողություններն են, որ կարելի է կատարել կամ փոքր – ինչ ձևափոխել կամ լրացնել նորով:
- Ո՞ր պարագաներն են, որոնք շատ լավ կմտնեն ժամանակակից ծեսի մեջ կամ կստանան նոր ձև, կամ էլ նորերը կլինեն:

Սրանք այն հարցերն են, որոնք առաջ են գալիս և որոնք լուծելու խնդիր ունենք: Իհարկե, ծեսին նոր կյանք տալ՝ չի նշանակում ակունքից այնքան հեռանալ, որ այն դառնա ոչ թե ծես, այլ անհատ մարդկանց երևակայությամբ ստեղծված հնի ու նորի սինթեզ:

Ծիսական հիմնական կարգը պետք չէ շփոթել տոնական մասի հետ: Յուրաքանչյուր ծես, ծիսական գործողություններից բացի, ունի տոնական մաս, որտեղ կարելի է կատարել ժամանակակից բարձրարժեք երգեր ու պարեր: Նպատակն է ծեսը, տոնը դարձնել երեխայինը, որն էլ կլինի ոչ միայն մասնակից, այլև փոխանցող: Երեխան քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով, յուրացնում է ծեսը:

Երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներց մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ավանդույթներ, ծեսեր, տոներ: Բնականոն կյանքով ապրելու պայմաններում ժողովրդական տոները կզարգանային, կփոխվեին հասարակական փոփոխությունների հետ համաքայլ: Դրանք չէին իմաստավորվի, այլ նոր որակ, նոր ձև կստանային և կշարունակեին կատարել իրենց կարևորագույն դերը՝ մարդկանց համախմբելու, ազգային և մարդկային արժեքները պահպանելու:

21-րդ դարի սկզբին հայտնվել ենք մի տխուր փաստի առջև, մենք կորցրել ենք ազգային շատ կարևոր արժեքներ և փորձում ենք վերականգնել կորցրածը: Այս գործը պետք է սկսել վաղ հասակից, այսինքն՝ ծնված օրվանից: Երեխան դաստիարակվում է սովորում է յուրացնել մեծերի փոխանցած մշակույթը:

Մշակույթը չէր պահպանվի և սերնդեսերունդ չէր փոխանցվի, եթե գոյություն չունենային դրան նպաստող որոշակի միջոցներն ու հանգամանքները: Դրանցից կարող ենք առանձնացնել պատմության ընթացքում ձևավորված ծեսերը:

Ազգային ծեսն այն միջավայրն է, որտեղ բոլորը, ազգի մշակույթը յուրացրած ինքնադրսևորվելու, ստեղծելու, որոնելու, հայտնաբերելու, երևակայելու, իմացածը կիրառելու լայն հնարավորություն ունեն:

Ամեն տարիք իր չափով է ներառվում այդ գործընթացին, և միասին ստեղծում, իրականացնում են իրենց ծեսը: Մանկապարտեզում ծիսական միջավայրը ստեղծում են մեծերը: Սակայն տոնի կամ ծեսի կազմակերպիչ ու ակտիվ մասնակիցը ոչ միայն մեծերն են՝ դաստիարակ, դաստիարակի օգնական, ծնող, հարազատ:

Երեխան ինքն է իրական տոնի ակտիվ մասնակիցը, ոչ թե միջոցը: Տոնն էլ բոլորի համար է հանդիսատեսներ, պասիվ դիտողներ, հյուրեր չկան: Ծնողի, դաստիարակի հետ

ամբողջական ծեսին մասնակցելով, յուրացնելով ծեսի նյութը, երեխան դառնում է այդ նյութի կրողը, զարգացնողը: Հետագայում նա հեշտությամբ և գիտակցաբար կյուրացնի իր ժողովրդի ճշմարիտ արժեքները:[1,37]

Ծեսի իրականացումն իր մեջ ներառում է երգ-պար, բանասիրություն, գրականություն, կերպարվեստ- ձեռարվեստ, թատրոն, խաղ, բնագիտություն և այլն:

Մշակույթի փոխանցման ձևերի մեջ կարևոր դեր ունեն ծեսերը: Ծեսը ներառում է վարքի այն ձևերը, որոնք իրենց էությամբ նշանային են, խորհրդանշական և չունեն նպատակագործնական բնույթ: Աշխարհում շատ ու շատ ժողովուրդներ կրոնական, քաղաքական, գաղափարախոսական համակարգերի փոփոխություններից հետո իրենց ծեսերը, այնուամենայնիվ, շարունակում են կատարել: Ժողովրդական ծեսը ծրագրված երևույթ չէ, այն ժողովրդի հավաքական և տևական ստեղծագործության արդյունք է, անընդհատ փոփոխությունների ենթակա, բայց միաժամանակ հիմնական բաղադրիչներով խիստ պաղպանողական:

Հայկական ծեսերը շատ հարուստ երգեր ու պարեր ունեն: Երգերի բովանդակությունը միշտ համապատասխանում է տվյալ ծեսի իմաստին, իսկ ծեսերին բնորոշ ուտելիքները, խնջույքները, տոնական հագուստները, նվերները ունեն իրենց առանձնահատկությունները: Դրանք բոլոր տոներում են առկա: Ոչ մեկն ինքնանպատակ չէ: Խնջույքները չեն կազմակերպվում ուտել-խմելու համար, յուրաքանչյուր ծեսին կազմակերպվող խնջույք պետք է համապատասխանի տվյալ ծեսի իմաստին, ըստ որի համապատասխանեցման համար էլ ընտրվում է ծեսը կազմակերպելու վայրը, ժամը, մասնակիցները, ուտեստների տեսակները:

Հանդես գալով որպես հասարակական կյանքի հոգևոր ոլորտի խտացումներ՝ ծեսերը, սովորույթները անգնահատելի դեր ունեն՝ յուրովի լրացնելով ավանդույթի ընդհանուր կառույցի առանձին կողմերը, որի շնորհիվ ավանդույթը դառնում է միասնական և ներդաշնակ մի ամբողջություն: Դրանցում ժողովուրդը հանդես է գալիս և՛ որպես ստեղծագործ, և՛ որպես գործիչ, և՛ որպես քննադատ: շ

Ծեսերը և սովորույթները հասարակական հարաբերությունները փոխանցող մեխանիզմներ են:

Մեր ժողովուրդը ունի շարժական և անշարժ տոներ:

- Անշարժն այն տոներն են , որոնք նշվում են պարբերաբար միշտ նույն օրը, ինչպես Ամանորը (հունվարի 1) , Սուրբ ծնունդը (հունվարի 6), և այլն:

- Շարժական տոների նշման օրերը ամեն տարի փոխվում են: Մեր տոնացույցի շարժական տոների օրերը պայմանավորված են Զատկի տոնի՝ տվյալ տարուն նշելու օրով:

Սուրբ Զատիկը նշում է գարնանային գիշերահավասարից հետո լուսնի լրմանը հաջորդող կիրակի օրը, որն ընկնում է մարտի 21-ից մինչև ապրիլի 25-ը (35 օր), որևէ կիրակի: Սուրբ Զատիկը ուրախության տոն է, հոգևոր գրականության մեջ այն կոչվում է նաև Հրաշափառ հարության տոն կամ Լուսավոր Զատկի տոն:

Ծաղկազարդը նախորդում է Զատկին, որի ընթացքում սկսում ենք պատրաստվել ծեսին, դիմավորել Ուտիսին ու Ակլատիզին: Զատիկը ունի իր ծիսական ծառը, տիկնիկները և ծիսական զանազան խաղերը: Ծառը խորհրդանշում է անցյալը, ներկան, ապագան: Ծեսի ընթացքում միասին գունավորում ենք ձվեր և թելերով կախում ծառի ճյուղերից:

Ձվերը խորհրդանշում են աշխարհը: «Տի՛զ, տի՛զ, Ակլատի՛զ...» բացականչություններով հարվածում ենք Ակլատիզին և քշում նրան բակից:

Քրիստոնեական եկեղեցու այդ մեծագույն տոնը խորհրդանշում է Հիսուս Քրիստոսի հարությունը: Արդեն երկու հազարամյակ է , ինչ աշխարհի բոլոր քրիստոնյաները տոնում են Սուրբ Զատիկը՝ միմյանց ավետելով՝ <<Քրիստոս հարյավ ի մեռելոց>>, <<Օրհնյալ է հարությունը Քրիստոսի>>:

Սուրբ Զատիկի տոնակատարությունն իր մեջ ամփոփում է հայկական գեղեցիկ սովորույթներ, կենցաղային ավանդույթներ, այն նաև հայեցի դաստիարակության յուրահատուկ մի միջոց է: Այդ օրն ընտանիքները պատրաստում են զուտ հայկական ուտեստներ:

Սուրբ Զատկի տոնը սիրելի է բոլորին: Սուրբ Զատիկն էլ ունի ծիսական ծառը, որը կոչվում է ցանկությունների ծառ: Այդ ծառից կախում են գունավոր ձվեր, ճյուղերին կապում են թաշկինակներ, որոնք մի-մի երազանք են խորհրդանշում: Սուրբ Զատկի տոնին խաղում են ավանդական խաղեր՝ ձվախաղեր: Դրանցից են՝ ձվարշավ, ձուսեղմոցի, ձուպտտոցի, ձվակռիվ:

Հայկական ժողովրդական բոլոր տոների զարդը Համբարձումն է: Այն նվիրված է պտղաբերությանը և կատարվում է բնության գրկում: Տոնի ժամանակ հատկապես մեծ տեղ են գրավում խաղերը, մրցումները, շուրջպարը:

Համբարձման տոնը զարմանալիորեն տարածված է հայ ժողովրդի մեջ:

<u>Համբարձում-Զանգյուլում</u> Սուրբ Զատկին հաջորդում է Համբարձումը, որը նշվում է հինգշաբթի օրը: Դաստիարակները, ծնողները, մանկապարտեզի սաների հետ նախապատրաստվում ենք տոնին: Գույնզգույն ծաղիկներ ենք սոսնձում ռեզինների վրա՝ համադրելով գույները: Ծաղկահավաքի ընթացքում ներկայացնում ենք, թե ինչպես է պետք

ծաղիկը քաղել, որ չփչանա՝ նաև դրանից հետագայում դեղաբույս պատրաստելու համար։ Իրար օգնելով՝ հյուսում ենք ծաղիկները, գունագեղ ծաղկաշղթաներ։ [1, 354]

Մեր կենցաղում ավանդական է դառնում գարնան առաջին օրվա՝ մարտի մեկի տոնակատարությունը, որը հաճախ նմանեցվում է ժողովրդական Ջանգյուլումին։

Բոլոր ժամանակներում էլ հասունացող սերնդի վրա մեծ է եղել ժողովրդական տոների դաստիարակչական ազդեցությունը։ Դարերի ընթացքում ժողովրդի ստեղծագործ հանճարի ուժով ծնված ավանդական տոները, որ այժմ արմատավորվում են կենցաղում, այսօր էլ կարող են մեծ դեր խաղալ հասարակության, այդ թվում և հասունացող սերնդի կյանքում։

Ծեսերն այսօր մենք իրականացնում ենք որպես գործունեության ձև, որով երեխան ապրում է՝ խաղում է, երգում, պարում, ընկալում ու ճանաչում։ Նախակրթարանում, երեխան ծեսն ընկալում է իր երգած երգի, իր պարած պարի, իր ձեռքով պատրաստած ծիսական ուտելիքի, իրի, իր խաղացած խաղի կերպով։ Ավելի մեծ տարիքում տոնին ավելանում է հետազոտական աշխատանքը։

ԾԵՍԻ ԽՈՐՀՈՒՐԴՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՅՈՒԹ

Կարևոր աշխատանք է ծեսի մասին տեղեկատվության հավաքումը։ Համեմատաբար փոքրերը կարող են մանկական բանահավաքություն կատարել. մեծերից օրհնանքներ, խաղիկներ, հաշվերգեր, ասույթներ սովորել, պարզել, թե ինչ սովորույթներ են եղել, որոնք են պահպանվել, խմբասենյակում ներկայացնել դրանք։ Մասնակիցները՝ դաստիարակների, ծնողների ,հետ տարբեր աղբյուներից ինֆորմացիա են հավաքում մոտեցող ծեսի, նրա խորհրդի, պարագաների, սովորույթների, ծեսի հետ կապված իրական և դիցաբանական կերպարների մասին, ավանդություններ և բանահյուսական այլ նյութեր գտնում, կարող են բանահավաքություն անել և այլն։ Ուսումնասիրում են այլ ազգերի համանման ծեսերը։

<u>Այս ընթացքում մենք օգտվում ենք ինտերնետից,</u>

<u>1. կարդում ենք համապատասխան գրականություն,</u>

<u>2. աշխատում մեծահասակների հետ,</u>

<u>3. թարգմանություններ ենք կատարում։</u>

Կարող են մեծահասակներից իմանալ, թե նրանք ինչպես են իրականացրել ծեսը, մեր օրերում իրականացվող ծեսը համեմատել նրանց պատմածների, նախորդ դարերի նկարագրությունների հետ, համեմատություններ կատարել, եզրակացություններ անել, զարգացնել ծեսը՝ ժամանակակից տարրեր ներմուծելով: Ծեսի, նրա տարրերի, նրանում արտացոլված հավատալիքների մասին էլեկտրոնային տեղեկատվական նյութ են պատրաստում:Փոքրիկ հետազոտական նախագծեր են իրականացնում: Այդ ընթացքում նաև ծեսն են յուրացնում:

Հասկանալով ծեսի էությունը՝ դժվար չէ ժամանակակից մարդու կյանքում ևս գտնել ծեսեր, որոնք մենք որպես այդպիսին գուցե չենք էլ ընկալում:

Ուզում ենք ավելացնել, որ ծեսը կարելի է և պետք է դիտարկել ոչ միայն հոգևոր և կրթական դաստիարակության, այլ նաև բարոյական արժեքների և էկոլոգիական դաստիարակություն տեսանկյունից: Երեխան, որը Ծառզարդարի տոնին պատրաստվելիս՝ ծառ, ծաղիկ կամ թուփ է տնկում, ջրում է ու խնամում, ծառին գովաբանում է ու քնքուշ խոսքեր ասում, հազիվ թե ուրիշի տնկած ծառը կոտրի:

Սերունդների բարոյական դաստիարակության համար վճռական նշանակություն ունեն ընտանական ավանդույթները, տոները: Ընտանիքի կենցաղը, նրանում հաստատված սովորույթներն ու ավանդույթները, որոնցում դրսևորվում են մարդու հոգեկան շատ լավ հատկանիշներ՝ բարձր ճաշակ, սրտաբացություն, աշխատասիրություն, ընկերասիրություն և այլն , երեխայի վարքի վրա ներազդող հզոր գործոններն են: Ընտանեկան տոներն ու ծեսերն իրենց արտահայտման բնույթով կարելի էերկու խմբի բաժանել՝ հանդիսավոր- տոնական ավանդույթներ և առօրյա ավանդույթներ: Առաջին խմբին են վերաբերում ընտանիքի կյանքում տեղ գտած հանդիսավոր,հուզականորեն ձևավորված դեպքերը, որոնք տոնականորեն նշվում են ընտանիքի անդամների կողմից և անպայման կրկնվում են: Դրանցից են ընտանիքի անդամների ծննդյան օրերի նշումը,Նոր տարվա հանդիսավոր դիմավորումը, հարսանեկան հանդեսներտ և այլն:

Ընտանիքի ավագ անդամների նկատմամբ հարգալից վերաբերմունք սերմանելու լավագույն ավանդույթ է <<Տոհմի օրվա>> տոնակատարությունը: Այս ավանդույթը լայն տարածում է ստացել շատ ընտանիքներում: Ընտանեկան առաջադիմական ավանդույթ է հյուրընկալությունը: Այն ազգային խոր արմատներ ունի: Տարբեր են հյուրասիրության ավանդական ձևերը, դրա հետ կապված արարողությունները, սովորույթները: [4.142]

Հաջորդ հարցը, թե ինչպիսի՞ ավանդույթներ են պահ պավել, հարցման մասնակիցները նշեցին, որ հիմնականում պահպանվել են բոլորիս կողմից սիրված տոները, սակայն կրել են որոշ փոփոխություններ:

Ծեսերի պահպանման և սերունդներին փոխանցելու վրա ազդող գործոններից առաջնային և կարևոր տեղը զբաղեցնում է ընտանիքը: Նախքան շրջապատ մտնելը, երեխան դաստիարակվում է ընտանիքում: Ընտանիքը եղել և մնում է անձի բարոյական դաստիարակության հիմնական օղակն ու վճռական գործոնը:

Ընտանիքից է սկսվում ազգային ավանդույթների դաստիարակության նախահիմքերի կառուցումը, որից հետագայում ձևավորվում և ամրապնդվում են անձի վարքի ձևերը:

Ընդհանրացնելով ուսումնասիրությունը, եկա այն եզրահանգման, որ 21-րդ դարը իր հետ բերել է նոր գործոններ, որոնք ազդում են ժողովրդական ավանդույթների, ծեսերի, տոների, պահպանման,փոփոխման վրա, որն էլ իր ազդեցությունն է ունենում նախադպրոցականի բարոյական արժեքների ձևավորման վրա:

2. Ժողովրդական բանահյուսություն

Սերունդները բոլոր ժամանակներում խնամքով են վերաբերվել ժողովրդական բանահյուսությանը՝ այն համարելով հազարամյակներով մարդկանց կուտակած փորձն ու իմաստությունն արտահայտող ազգային ավանդույթ:

Ժողովրդական բանահյուսության դաստիարակչական նշանակությունը բարձր են գնահատվել բոլոր ժամանակներում:

Անսահման հարուստ է հայ ժողովրդի ազգային առանձնահատկությունները, նրա հոգևոր մշակույթը, հայրենի բնությունը, ժողովրդի պատկերացումներն իսկական մարդու մասին, նրա ըմբռնած ոգին, ազնիվ ձգտումներն ու վեհ գաղափարները: Հայ ժողովրդի բանահյուսությունն ունի կարևոր նշանակություն: Այն ծողովրդի մեջ առաջացրել է իրենց նախնիներին և նրանց ստեղծմանը հարգելու և գնահատելու ձգտում:

Ժողովրդական բազմադարյան ստեղծագործության մեջ մենք տեսնում ենք թշնամու դեմ նրա դարավոր պայքարի ցայտուն պատկերը:Ժողովուրդը գովերգում է իր հայրենիքը, հերոսներին:

Ազգային հերոսների քաջագործությունների օրինակները այսօր էլ պետք է օգտագործի մանկավարժը՝ նախադպրեցականների մեջ հայրենասիրական զգացմունքներ դաստիարակելու նպատակով՝ գովերգելով մարդու մեջ ազնիվն ու բարին և դատապարտելով չարն ու անարդարը:

Ժողովրդական բանահյուսության տարածման ժանրեր են առածները, ծեսերը, ասացվածքները, տոները որոնք կապ ունեն ավանդույթների հետ:

Առածներում և ասացվածքներում մենք տեսնում ենք աշխարհում գոյություն ունեցող անարդարության պատկերը: Օրինակ՝ <<Տեղ կա՝ ծով է, տեղ կա՝ սով է>> կամ << ով դատի, ով ուտի >> և այլն:

Ժողովրդական առածներից և ասացվածքներից, ծեսերից, հասկանում ենք, որ հայ ժողովրդին հատուկ է աշխատասիրությունը և դրա համար էլ դեռ վաղ տարիքից երեխաների մեջ դաստիարակվում է աշխատասիրություն:

Ժողովրդական բանահյուսության մեջ տեղ են գտել մի կողմից ուրիշի աշխատանքի հաշվին ապրող պորտաբյուծները՝ ազնվականները, մյուս կողմից՝ աշխատավոր մարդը, որոնք խիստ տարբերվում են աշխատանքի նկատմամբ իրենց վերաբերմունքով:

Ժողովուրդը բարձր է գնահատել արհեստի դերը և մշտապես հոգ է տարել սերունդների մեջ սեր առաջացնել արհեստի նկատմամբ: << Փեշակն (արհեստ) որ կա՝ օսկի բիլազուկ է>> , ասում է նա: (Արհեստն է մարդու ոսկի բիլազուկ - Աղայան):

Ժողովրդական մշակույթի հոգևոր հարստություն է հեքիաթը: Ժողովրդի ստեղծած հեքիաթային կերպարներն անմահ են, նրանք ապրում են հազարամյակներ, երեխայի մտքին ու սրտին հասցնելով աշխատավոր ժողովրդի ստեղծագործական հզոր ոգին, կյանքի նկատմամբ նրա հայացքները, ձգտումները:

Ժողովրդական բանահյուսության մի այլ տեսակ է հանելուկը: Այն ճանաչելի է դարձնում առարկաները, երևույթները, շարժում է երեխայի միտքը, ստիպոոոոում է նրան մտածել , որոնել և այսպիսով խթանում է նրա ինքնուրույնությունը և ստեղծագործական կարողությունը:

Ժողովրդական բանահյուսության մեջ հարուստ տեղ է գրավում կրոնական ավանդույթների, ծեսերի, տոների և սովորությունների նկատմամբ քննադատական վերաբերմունքը:

Ժողովրդական ավանդույթները երևան են գալիս նաև աբցյալի ու ներկայի գրական ստեղծագործություններում: Հասկանալի է, ուրեմն, թե դրանց ոգով նոր սերնդին դաստիարակելու գործում որքան մեծ է մասնավորապես ընտանիքի և մանկապարտեզի դերը:

2.2 Ժողովրդական տոները ծեսերը, դրանց էությունը

<<Վաղուց ի վեր մարդիկ ունեն իմաստուն և հոյակապ ավանդույթներ, մենք պետք է դրանցից ուսանենք>> :

Հերոդոտ

Տոները, ծեսերը պատմականորեն ձևավորված և սերնդից սերունդ փոխանցվող կանոնների ու վարվելակարգի նորմեր են: Եթե փորձենք բառացի բացատրել ավանդույթ բառը, ապա շատ հեռու գնալ հարկավոր չի լինի, կարող ենք հենց մեր ընտանիքներում գտնել այդ բառի իմաստն ու նշանակությունը, օրինակ՝ յուրաքանչյուրի ընտանիքում գոյություն ունեն և ընդունված են ազգային սովորույթներից բացի, նաև իրենց ընտանիքներում ընդունված ավանդույթներ, որոնք փոխանցվել է պապերից, օրինակ՝ ընթրելը:

Հայերը, լինելով աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկը, չէին կարող չունենալ ավանդույթների՝ լեգենդը:

Եվ այսպես՝ ժողովուրդը բերնեբերան փոխանցում է գալիք սերնդին իր կյանքով փորձված իմաստությունները, ծեսերը, որոնք իրենց մեջ պարունակում են նաև իր սովորույթները՝ ավանդույթները: Սրանք օգնում են ամեն մի մարդու իմանալ, թե ովքեր և ինչպիսի մարդիկ են եղել իրենց նախնիները, ինչ բարոյական արժեքներ են ունեցել, ինչպես են վերաբերվել տնտեսական, քաղաքական, մարդկային, հասարակական երևույթներին:

Դրանք մեզ են հասել իբրև բառ ու բան կամ մշակվել են, հղկվել գրողների կողմից, դարձել գրական խոսք: Որպես կանոն՝ ժողովրդական ծագում ունեցող պատրաստի խոսքերը հիմնականում բարոյախրատական բնույթ ունեն իրենց մեջ ամփոփում են ժողովրդի դարավոր կյանքի իմաստությունն ու կենսափորձը, այդ պատճառով էլ հնչում են իբրև պատվիրաններ: Դրանք ամեն մի ժողովրդի համար թանկ մասունք, որոնք ձևավորվել են իր նախնիների կենսափորձով: Դրանք դաստիարակչական և ազգային դիմագծի, հոգեկեցվածքի ձևավորման անգնահատելի գանձարան են, և լավ է , որ յուրաքանչյուր մարդ իմանա ոչ միայն իր ժողովրդի, այլ նաև ուրիշ ժողովուրդների այդ իմաստությունները: Դրանք ոչ միայն մարդկային դասեր են, որոնց պետք է հետևել, այլև խոսքի մեջ օգտագործելիս խոսողի միտքը դարձնում են ազդեցիկ, համոզիչ, թայլուն նրան տալիս են շուք ու շքեղություն:

Անձնավորությունը, որպես հասարակական հարաբերությունների անհատական կրող, յուրացնում է նախնիների փորձը սովորույթների, ավանդույթների ու ծեսերի միջոցով:

Ավանդույթը կրում է հասարակական բնույթ, անկախ նոր սերունդների կամքից և գիտակցությունից:

Կենցաղում հաճախ ավանդույթ բառը փոխարինվում է սովորույթով: Սակայն ոչ բոլոր սովորույթներն են , որ կարող են ավանդույթ համարվել: Դրանք ունեն ընդհանուր գծեր, օրինակ, երկուսն էլ արտահայտում են մարդկանց վարքի սոցիալական նորմերը:

Ինչպես ավանդույթները, այնպես էլ սովորույթները, շատ կայուն են և փոխանցվում են սերնդեսերունդ:

Ավանդույթները, ծեսերը, տոները և սովորույթները գերազանցապես արտահայտում են տվյալ ազգին, ժողովրդին, մարդկանց սոցիալական խմբին հատուկ ընտանեկան- կենցաղային առանձնահատկությունները:

Ավանդույթների գործունեության ոլորտը զգալիորեն ընդարձակ է: Ավանդույթներն ընդգրկում են նաև մարդկանց արտադրական գործունեության ոլորտը:

Ինչպես տեսնում ենք, ավանդույթը հասարակական կյանքի ամենից տարածված երևույթն է, որի բնորոշ կողմը հաջորդականությունն է: Ուստի այն ամենը, ինչ առանձնահատուկ է միայն ներկային և չի վերաբերվում գալիք սերունդներին, չի կարող ավանդույթ համարվել:

Առաջադիմական ավանդույթը զարգանում, կատարելագործվում են, հետադիմականները՝ անհետանում, մեռնում: Ավանդույթը ամենից առաջ բարոյական վարժությունների յուրահատուկ ձև է, որը նպաստում է բարոյական սովորույթների ձևավորմանը:

Առանձին ժողովուրդներին բնորոշ ավանդույթները կոչվում են ազգային ավանդույթներ:

Խոսելով ազգային ավանդույթների մասին պետք է հիշել, որ դրանցից շատերը միաժամանակ յուրահատուկ են և այլ ժողովուրդների կամ ժողովուրդների խմբի, անկախ նրանց ռասայական կամ ազգային պատկանելությունից: Հազիվ թե գտնվեն միայն մի ազգին բնորոշ ավանդույթներ: Տարբեր ազգերի ավանդույթներում շատ ընդհանուր, նման գծեր կան:

Հայերը, լինելով աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկը, չէին կարող չունենալ ավանդույթներ, որոնք փոխանցվելով դարեդար, եկել, հասել են մինչև մեր օրերը: [4.145]

Ժողովրդական աղբյուրնեի կենսալից ուժը լավ հասկացավ և իր նյութ այնտեղից վերցրեց հայ ազգային դասական երաժշտության հիմնադիր Կոմիտասը. << Ժողովուրդն է

ամենամեծ ստեղծագործողը, գնացեք և սովորեք նրանից>> ,-ասում է նա: Ահա Կոմիտասի ստեղծագործության հիմնական սկզբունքը, որով նաև բացահայտվում է այն, որ նրա երգերի մեջ դրսևորվում է հայ ժողովրդի բովանդակ կյանքը. Ինձ համար չկա ուրիշ երկինք , քան իմ ժողովրդի հարազատ ոգին:

Ժողովրդի հանճար՝ Ավ.Իսահակյանը ասել է. <<Սիրելագույն Շիրակն ինձ համար տիեզերքի կենտրոնն է եղել… Այստեղ, մեր անուշ տատիկներիդ լսել եմ հոգի կախարդող հեքիաթներ, մեր փորձաշատ պապիկներից՝ իմաստուն զրույցներ, խոսք ու առած: Մեր թափառական գուսաններից և գյուղացի աղջիկներից լսել եմ մեր ժողովրդի չքնաղ տաղերն ու խաղերը, մեր մելոսը՝ սրտահույզ երգերը: Մեր հնադարյան, խորիմաստ ֆոլկլորը, որին ես այ՛նքան ու այ՛քան երախտապարտ եմ…>> :[4,168]

Այսօր սերնդին ժողովրդական ավանդույթների ոգով դաստիարակելու հարցը հատկապես վերջին տասնամյակների ընթացքում լայն ուսումնառության առարկա դարձել: Սակայն լուրջ ուսումնասիրության կարիք ունի:

Ժողովրդական ավանդույթների օգտագործումը այսօր էլ կարող է մեծապես նպաստել նոր մարդու բարոյական կատարելագործմանը, կարող է դաստիարականության պատմական թափ հաղորդել, հնավորություն ստեղծել ղեկավարվելու ժողովրդի և նրա մշակոիյթի հազարամյա փորձով: [3.58]Սակայն սա արտակարգ բարդ ու դժվարին գործ է , որը պահանջում է ստեղծագործական շնորք, անցյալի մշակույթի նկատմամբ բացառիկ նրբազգացողություն, արդիականության խոր ու սուր զգացողություն: Այդ դժվարությունը ամենից առաջ բացատրում է նրանով, որ ժողովրդական ավանդույթներում, ծեսերում տեղ են գտել ոչ միայն առաջադիմական, առողջ, այլև հետադիմական հայացքներ, գաղափարներ, սովորույթներ որոնք պահպանողական ուժ ունեն:

Ժողովրդական բանահյուսությունը վկայում է, որ հայ ժողովրդին հատուկ է եղել աշխատասիրությունը, որով էլ պիտի դաստիարակվի երեխան:

Ժողովրդական տոների և խաղերի մանկավարժական կարևոր կողմն այն է, որ դրանցում առավել արդյունավետությամբ է գործադրվում դաստիարակության բազմապիսի մեթոդները:

Տոների և խաղերի պրոցեսում կրտսեր սերնդի մեջ դաստիարակվում է հարգալից վերաբերմունք աշխատանքային ավանդույթների նկատմամբ: Ազգային ավանդական տոները կարևոր նշանակություն ունեն նաև բարոյական դաստիարակության համար: Ավանդական տոները (Նոր տարին, Վարդավառը և այլն) իրենց արմատներով կապված են հայ ժողովրդի հավատալիքների ու պաշտամունքների հետ:[1.360.] Օրինակ՝ Նոր տարվա տոնակատարությունը կապված է ընտանեկան հարաբերությունների բարելավման, կյանքի

նորացման գաղափարի հետ: Ազգային այս գեղեցիկ տոնը հաստատորեն մտել է ընտանեկան կենցաղի մեջ:

Ընտանիքի հիմնական նպատակը մշակութային արժեքների փոխանցումն է, որով երեխան ոչ միայն ձևավորվում ու զարգանում է, այլև հարմարվում է հասարակական կյանքին՝ ձեռք բերելով անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ, հմտություններ: Ընտանիքում է երեխան առաջին անգամ հաղորդակցվում մշակութային արժեքներին, յուրացնում վարքագծային նորմեր, իրականացվում երեխայի սոցիալականացման առաջին փուլը, հարմարումը կյանքին:[1.360]

Գլոբալացող աշխարհում բոլոր ժողովուրդների համար էլ հրատապ է դառնում ազգային ինքնությունը պահպանելու խնդիրը: Այդ հարցում անփոխարինելի են ազգային ավանդույթներն ու ծեսերը, որոնցից շատերը, ցավոք, մոռացվել են, երիտասարդ սերունդը շատ բան չգիտե:

Կարծում եմ, որ պետք է ոչ միայն վերականգնել, այլ նաև նոր կյանք տալ դրանց, գտնել այն ուղին, որով գնացել է ազգը, բայց կորցրել ճանապարհին և՛ իրեն, և՛ իր մշակույթը ստեղծող միջավայրը:

Դրանք պետք է վերականգնել այնպես, որ այսօրվա մարդը կարողանա ոչ թե արհեստականորեն կրկնել, վերարտադրել, այլ բնական պահանջով կատարել իրենը:

Որ այսօրվա սերունդը դառնա այդ ամենի ոչ թե կրկնողը, այլ կրողը:

Այսինքն՝ ազգային ծեսերն ու ծիսական միջավայրը դարձնել մանկապարտեզի էական բաղադրիչ:

Քանի որ ազգային ծեսերը մեր մշակույթի, կենցաղի, սովորույթների, ավանդույթների խտացված դրսևորումն են, ուստի, երբ ծեսը դառնում է ուսումնական միջավայր ու գործիք, ազգային կրթության և դաստիարակության մի շարք խնդիրներ լուծվում են ինքնաբերաբար:

Ազգային տոներն ու ծեսերը վաղուց ի վեր դարձել են մեր՝ Մարիամ Աստվածածին թիվ 15 մանկապարտեզի օրացույցի պարտադիր բաղադրիչը, իսկ ծեսերն ու ծիսական միջավայրը բաղկացուցիչ մաս :

Ուսումնական գործունեությունը կազմակերպել այնպես, որ նախադպրոցական տարիքից երեխաների մեջ զարգացնել ինչպես ազգային արժեքները, այնպես էլ ծեսերն ու ծիսակատարությունները:

Ազգային, եկեղեցական տոներով, ծիսակատարություններով պայմանավորված պարբերաբար կազմակերպել միջոցառումներ, որոնք կսերմանեն երեխայի մեջ ազգայինը:

Անհրաժեշտ է, որ երեխան դառնա տոնի, ծեսի, ծիսակատարության ոչ թե հանդիսատեսը, այլ մասնակիցը:

Իսկ ազգային երգն ու պարը դառնան ոչ թե սոսկ պարապմունք այլ իր հույզերն ու զգացմունքները դրսևորելուբնական միջոց:

Տոնը ոչ թե բեմադրվի, այլ ապրվի:

Իմ հետազոտության արդյունքում եկա այն համոզմանը, որ ազգային ավանդույթներին, սովորույթներին, ծեսերին կարելի է կյանքի կոչել հետևյալ ճանապարհով.

1. գտնել նյութը.
2. վերականգնել, եթե հնարավոր է
3. ներկայացնել նոր տեսքով՝ չվնասելով բնօրինակը:

Հետազոտական փուլում ծանոթանում են ազգային ավանդական տոներին և ծեսերին, դրանց պատմությանը, խորհրդին, հավաքում են տեղեկություններ տարբեր աղբյուրներից՝ ծեսն իրագործած,իմացող մեծերից, գրքերից, համացանցից : Գրականությունից գտնում են՝ գրի են առնում տվյալ տոնի, ծեսի, ավանդույթի հետ կապված խաղիկներ, առած-ասացվածքներ, հանելուկներ, հեքիաթներ, պատմություններ, երգեր:

Ծեսի իրականացման փուլում երեխաները սովորում են ծեսին համապատասխան երգեր, ասույթներ,օրհնանքներ:Սովորում են ավանդական պարեր: [4.46]

Խաղարկում են ծիսական գործողություններ, ծիսական խաղեր, բեմականացնում երգեր՝ ծեսին համապատասխան գործողություն կատարելով, գնում են ուսումնական էքսկուրսիաներ,վերապատմում, փոխադրում են իրենց տպավորությունները:

Երեխաները քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ,լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով, յուրացնում է ծեսը, ազգային ավանդույթը:

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Առաջարկում եմ նման տոները, տոնակատարություններն ու ծեսերը բովավանդակային ու նպատակային լինեն, հասնենք նրան,որ դա դառնա մանկապարտեզի սանի սեփականությունը: Սա է շարունակությունը ազգային տոների, եթե դա երեխայի սեփականությունը դառնա, դրա համար պետք է նրա մոտ համոզմունք առաջանա,իսկ համոզմունք առաջանում է միայն այն դեպքում, երբ մարդ ներքուստ ընդունում է նրա օբյկտիվ ճշմարտացիությունը:

Երեխաները մեր ապագայի կերտողներն են, իսկ այն, թե նրանք որքան բանիմաց, զարգացած ու ձևավորված անհատներ կլինեն՝ կախվածէ մանկավարժից: Յուրաքանչյուրը պետք է ընկալի, որ իր ուսերին մի ողջ սերնդի ճշմարիտ հոգեկեցվածքի ձևավորման դժվարին խնդիր է ծառացած: Բացի տեսական գիտելիքներից. Երեխայի մոտ պետք ամուր հիմքերի վրա դրվի ազգային արժեքները, ավանդույթների ու պատմության վերաբերյալ գիտելիքները, քանզի նորը կառուցելիս որպես հենք պետք է օգտագործվի լավ ծանոթ հնի ձեռքբերումները, ինքնաճանաչողությունը և իհարկե պետք է խուսափել անցյալի սխալներից:

Այսպիսով՝ ծեսը ավանդական կամ սահմանված կանոններով կատարվող կրոնական արարողություն է, որին հավատացյալները վերագրում են մոգական, խորհրդավոր հատկություններ: Ծագել է հնագույն ժամանակներում և դարձել պաշտամունքային արարողությունների անբաժան մաս: Այն ուղեկցվում է աղոթքներով, խմբերգերով, երաժշտությամբ: Ծեսերը արտահայտում են որոշակի հասարակական հարաբերություններ, ուստի ժամանակի ընթացքում փոփոխվում, վերամշակվում և հարմարեցվում են իրադրության պահանջներին: Հայ ժողովրդական ծիսական համակարգի ավանդական ծեսերն իրենց բացառիկ կարևոր տեղն ու դերն ունեն «Մարիամ Աստվածածին» թիվ 15 մանկապարտեզում, քանի որ նրանց ակունքների վրա է հիմնվում, ապա և կառուցվում բարձրարժեք ուսուցում: Մի շարք ծեսերի ու սովորույթ դարձած ծեսերի միջոցով զարգանում է սանի ստեղծագործելու ունակությունը, երևակայությունը, ուշադրությունը, հիշողությունը, շարժունակությունը, վարքը, ակտիվությունը, անկաշկանդվածությունը, ինքնուրույնությունը, ճանաչողությունը և մի շարք այլ հմտություններ ու կարողություններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գեղամյան Ա. Ա. << Ծեսը, ծիսակարգը և սովորույթը՝ որպես մշակույթի ժառանգման և փոդանցման մեխանիզմներ>>,Երևան, 2015թ.
2. Ենոքյան Զեմֆիրա, Ազգային տոնը որպես հայեցի դաստիարակության կարևոր նախադրյալ,<<Նախաշավիղ>>, 2010, 5
3. Խառատյան-Առաքելյան Հ. <<Հայ ժողովրդական տոնները>> Երևան, 2005թ.
4. Ղարիբջանյան Օ. Բ. <<Ժողովրդական ավանդույթները դպրոցականների բարոյական դաստիարակության գործոն>>, Երևան,1978թ.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա դաստիարակների վերապատրաստման դասընթացներ

Թեմա՝

«Ավագ ն/դպ տարիքի երեխաներին դպրոցական ուսումնառության նախապատրաստումը»

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ղեկավար՝ Լ. Միրաբյան
Կատարող՝ Ջեմմա Մակարյան

ՎԱՆԱՁՈՐ 2022

Բովանդակություն

1. **Ներածություն** ……3

Գլուխ 1. Նախադպրոցականների երևակայության ձևավորումը դպրոցին նախապատրաստվելու համակարգում……5

Գլուխ 2. Դպրոցին՝ նախադպրոցականի պատրաստվածության հայտորոշման առանձնահատկությունները ……8

2. **Փորձարարական մաս** ……13

3. **Եզրակացություն** ……15

4. **Գրականության ցանկ** ……16

Ներածություն

Թեմայի արդիականությունը:

Վաղ կրթության հիմնախնդիրն այսօր արդիական է ամբողջ աշխարհում: Սակայն յուրաքանչյուր տարածաշրջանում վաղ կրթությունը կազմակերպվում է տարբեր նպատակներով և դրանով պայմանավորված՝ զանազան կազմակերպական ձևերով: Վաղ կրթության նպատակն է. «հոգեբանորեն և գործնականորեն նախապատրաստել երեխաներին դպրոցական ուսուցմանը: Սակայն ընտելացնել սովորելուն անհրաժեշտ է աստիճանաբար, խաղերը չփոխարինելով դրանով, այլ քիչ-քիչ կրճատել խաղային գործունեությունը և ավելացնել սովորելու ժամանակը, որը պետք է կրի խաղային բնույթ: Երեխաները դպրոց ընդունվելիս չպետք է զգան մեկ ռեժիմից կտրուկ անցում մյուսին, այդ անցումը պետք լինի շատ բնական» : Վաղ ուսուցման կազմակերպման համար հիմք են հանդիսացել հետևյալ մոտեցումները: Դրանցից են՝

▪ նախապատրաստում դպրոցական ուսուցման, որը կազմակերպվում է թե՛ նախադպրոցական կրթական հաստատություններում, թե՛ դպրոցներում,

▪ մանկության կազմակերպում նախադպրոցական տարաբնույթ կրթական հաստատություններում ՝ ինչպես պետության կողմից հաստատված, այնպես էլ անհատական կամ հեղինակային ծրագրերով:

Հասարակության սոցիալ-տնտեսական վերափոխումների պայմաններում նախադպրոցականի անձի ձևավորումը բարդ խնդիր է, որը պահանջում է ոչ միայն չափորոշիչներով սահմանված գիտելիքների, կարողությունների, հմտությունների ու արժեհամակարգի իմացություն դաստիարակի կողմից, այլև անհատական որակներ:

Նախադպրոցական տարիքի վերջում երեխան արդեն գիտակցում է իր սեռային պատկանելիությունը, կողմնորոշվում տարածության և ժամանակի մեջ, ընտանեկան-ծնողական հարաբերություններում և դառնում ունակ ստեղծելու հարաբերություններ մեծահասակների ու հասակակիցների հետ: Ձևավորվել են ինքնասպասարկման հմտությունները: Երեխան ընդունակ է կողմնորոշվել ըստ հանգամանքների, լինել անզիջում իր ցանկություններում: Այսպիսի երեխայի մեջ արդեն կազմավորվել է հետադարձ կշռադատում կատարելու հմտություն: Երեխայի

անձի զարգացման կարևոր ցուցանիշ է՝ «Ես ուզում եմ» դրդապատճառի փոխարինումը «Ես պետք է» դրդապատճառով: Նախադպրոցական տարիքի վերջում կարևոր նշանակություն է ձեռք բերում դրդապատճառային պատրաստվածությունը դպրոցական ուսուցմանը: Նախադպրոցական տարիքում հոգեբանական զարգացման կարևոր արդյունքներից մեկը երեխայի՝ դպրոցական ուսուցմանը հոգեբանական պատրաստվածությունն է:

Երեխաներին դպրոցական ուսուցմանը նախապատրաստել նշանակում է՝ նրանց զինել գիտելիքների որոշակի պաշարով, ճանաչողական ունակություններով, սովորեցնել մտավոր գործունեության բար ձևեր, ձևավորել հմտություններ, ինքնուրույնություն, աշխատասիրություն, բարոյակամային որակներ:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ՝

- ուսումնասիրել նախադպրոցականների դպրոցական ուսուցմանը նախապատրատելու գործունեության կազմակերպման ձևերի վերաբերյալ գիտատեսական և գիտամեթոդական գրականությունը

Հետազոտական աշխատանքի խնդիրներն են՝

- նկարագրել դպրոցին պատրաստելու կազմակերպման ձևերը
- բացահայտել նախադպրոցականների ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերի կիրառությունը ուսուցման գործընթացում:
- իրականացնել փորձարարական աշխատանքներ՝ միտված նախադպրոցականների դպրոցին հարմարվելու և պատրաստվելու կազմակերպման ձևերի բարելավմանը

Հետազոտությունն իրականացրել ենք հետևյալ մեթոդներով.

1. Գրականության ուսումնասիրում հայ մանկավարժության տեսության մեջ և գործնականում հիմնախնդրի դրվածքի, կրթական առարկայական չափորոշչի ուսումնասիրում
2. Փորձարարական մեթոդներ, դիտման, փորձարարական դասերի վարման և ունկնդրման, համակարգման մեթոդներ:

Հետազոտական աշխատանքը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, փորձարարական մասից, եզրակացությունից և գրականության ցանկից:

Գլուխ 1. Նախադպրոցականների երևակայության ձևավորումը դպրոցին նախապատրաստվելու համակարգում:

Դպրոցին երեխայի նախապատրատությունը որոշվում է ոչ թե գիտելիքների քանակով, գրելու, կարդալու ու խնդիրներ լուծելու կարողությամբ, այլ անհատական, մասնավորապես՝ հոգեկան որակների զարգացմամբ: Հանրագիտարանային բառարանը երևակայությունը բնորոշում է որպես «հոգեկան գործունեություն, որը կայանում է պատկերացումների և մտավոր իրավիճակների ստեղծմամբ իրականության մեջ՝ երբեք ամբողջությամբ չընկալվելով մարդու կողմից»: [1, էջ 244]

Ստեղծագործական երևակայության շնորհիվ ստեղծվում են այնպիսի կերպարներ, նկարներ, գործողություններ, որոնք ոչ մի ընդհանուր կապ չունեն իրականության հետ կամ չափազանց հեռու են դրանից: Այդպիսի երևակայությունը Նեմովն անվանում էր ֆանտազիա: Նախադպրոցական տարիքի երեխաների մեջ տեղի է ունենում երևակայության թվարկված բոլոր տեսակների զարգացումը: Վերստեղծող երևակայությունը մեծամասամբ հատուկ է կրտսեր տարիքի նախադպրոցականներին: Դպրոց ընդունվելու ժամանակ հենց երևակայության այդ տեսակն է լինում անհրաժեշտ մակարդակով զարգացած: [2, էջ 45]

Երևակայությունը կարևոր դեր է խաղում երեխայի ուսումնական գործընթացում և բավական էականորեն ազդում է ուսման արդյունքների վրա: Այն ընկած է զննական- պատկերավոր մտածողության հիմքում: Հենց այդպիսին է նախադպրոցական և տարրական դասարանի աշակերտի մտածողությունը: Հաստատված է, որ եթե աշակերտը տեքստի ընթերցմամբ դերերի մեջ չի պատկերացնում անձանց, սյուժետային իրադրությունները, փոփոխվող

պատկերները, ապա գործնականորեն չի կարող հասկանալ տեքստի բովանդակությունն ու իմաստը: Այդպիսի աշակերտը հասակակիցներից խիստ հետ է մնում կարդալու տեխնիկայի ցուցանիշներով, ընթերցանության որակներով: Երևակայությունն էապես ազդում է երեխաների խոսքի զարգացման վրա: Այդպիսի երախայի համար շատ դժվար է կառուցել ընդարձակ նախադասություններ և համակարգված մտքեր հաղորդել: Նա բավականաչափ դժվարություններ է ունենում գործող անձանց բնութագրելու, նրանց փոխհարաբերությունների, իրադարձությունների նկարագրության, դրանց հաջորդականության կանոնավորման գործընթացում:

Երեխայի ուսման գործընթացի համար անհրաժեշտ է, որ զարգացած լինի ինչպես վերարտադրողական, այնպես էլ ստեղծագործական երևակայությունը: Այդ պատճառով մենք մերր աշխատանքումլուրջ ուշադրություն ենք հատկացնում այ հարցին և չենք մոռանում, որ տարրական դպրոցի ուսուցչի առջև դրված են այլ խնդիրներ: Նա ժամանակ չունի նպատակաուղղված և համակարգված աշխատանք տանել երեխաների երևակայության զարգացման ուղղությամբ: Երեխաներին սովորեցնում ենք մանրակրկիտ կերպով իտարկումներ կատարել շրջապատող աշխարհում, ոչ թե հենց այնպես նայել դրանց խորքը և լսել ուշադիր: Նայելն ու լսելը հեշտ են, տեսնելն ու ընկալելն է դժվար: Երեխաներին առաջարկում ենք կոնկրետ առարկա՝ մեծ քանակությամբ բաղկացուցիչ մասերով. Բաժակ, սովորական խաղալիք, բույսի տերև, առանձին ծաղիկ և այլն: Աստիճանաբար ներկայացնում են ընկալման համար առավել բարդ առարկաներ՝ մեծ քանակությամբ բաղկացուցիչ մասերով, տարբեր ձևերով, գուներանգներով: Առարկան պետք է շատ ուշադիր դիտարկել, այնուհետև փակել աչքերը և այն պատկերացնել իր բաղկացուցիչ մասերով: Ստուգելու համար, թե որքանով է դա հաջողվել երեխային, առաջարկում ենք պատմել դիտարկվող առարկայի մասին: Օգտակար է համեմատություն անցկացնել տվյալ և համանման առարկաների միջև: Նման հնարը թույլ է տալիս տեսնել այնպիսի մանրամասներ, որոնք չեն նկատվել առաջին դիտարկման ժամանակ: Մեր դիտարկումները ցույց են տվել, որ այս մեթոդն առանձնահատուկ արդյունք է տալիս երեխաների հետ անհատական աշխատանքում կամ փոքր խմբերում:

Դպրոցին նախապատրաստելիս մանկավարժը կատարում է հետևյալ առաջադրանքները.

1. Նախադպրոցականների շրջանում դպրոցական գործունեության գաղափարի ձևավորում՝ որպես անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերման կարևոր գործունեություն: Այս հայեցակարգին համապատասխան՝ երեխաները դասարանում զարգացնում են ճանաչողական գործունեություն.

2. Պատասխանատվության, հաստատակամության, անկախության և աշխատասիրության զարգացում. Սա նպաստում է երեխայի՝ գիտելիքներ, հմտություններ և կարողություններ ձեռք բերելու ցանկությանը՝ դրա համար բավարար ջանքեր գործադրելով.

3. Կոլեկտիվ գործունեության հմտությունների յուրացում, հասակակիցների նկատմամբ դրական վերաբերմունք, իրենց հասակակիցների վրա որպես ընդհանուր գործունեության մասնակիցներ ակտիվորեն ազդելու ունակության ձևավորում: Այսինքն՝ իրագործելի օգնություն ցուցաբերելու, հասակակիցների կատարողականի արդարացի գնահատականներ տալու, թույլ տված սխալները գնահատելու տակտություն զարգացնելու կարողություն.

4. Նախադպրոցականների կողմից կոլեկտիվ միջավայրում կազմակերպված վարքի և ուսումնական գործունեության հմտությունների ձեռքբերում: Այս հմտությունները նպաստում են նախադպրոցական տարիքի երեխաների անկախության ձևավորմանը գործունեության տեսակի, խաղի կամ գործունեության ընտրության հարցում: [2, էջ 56]

Գլուխ 2. Դպրոցին՝ նախադպրոցականի պատրաստվածության հայտորոշման առանձնահատկությունները

Երեխաների դպրոցական ուսուցմանը նախապատրաստելը բարդ և բազմատարր խնդիր է, որն իր մեջ ներառում է երեխայի կյանքի և զարգացվածության գրեթե բոլոր ոլորտները: Այն իրենից ներկայացնում է երեխայի հոգեկանի զարգացման բնութագիրը և ուսումնական գործունեության ձևավորման և նոր սոցիալական միջավայր մտնելու համար անհրաժեշտ հոգեբանական որակները: Երեխաներ նախապատրաստումը դպրոցական ուսումնառությանն իրականացվում է նախադպրոցական կրթական հաստատությունների և ընտանիքների համագործակցությամբ: Նախադպրոցական մանկավարաժությունը երեխայի դպրոցի կյանքին նախապատրաստելիս կարևորում և առանձնացնում է մանկավարժական աշխատանքի կազմակերպման հետևյալ ուղղությունները՝

- նախադպրոցականի հոգեբանական պատրաստվածություն
- նախադպրոցականի սոցիալ-անձնային
- նախադպրոցականի ֆիզիկական պատրաստվածություն
- նախադպրոցականի հատուկ պատրաստվածություն

Դպրոցական ուսուցման նկատմամբ հոգեբանական պատրաստվածություն ասելով հասկանում են երեխայի հոգեկանի զարգացման այն անհրաժեշտ և բավարար մակարդակը, որն անհրաժեշտ է հասակակիցների միջավայրում իրականացվող ուսուցման պայմաններում դպրոցի ուսումնական ծրագրի նորմալ և սիստեմատիկ

յուրացման համար: Երեխայի դպրոցական ուսուցման հոգեբանական պատրաստվածությունը ն\դ մանկության շրջանում երեխայիի հոգեկանի զարգացման կարևորագույն արդյունքն ու ապացույցն է հանդիսանում: Ինտելեկտուալ զարգացումն առաջին հերթին ուղղված է գիտելիքների ձեռքբերմանը և դրանց համակարգմանը: Երեխայի ինտելեկտուալ պատրաստության հիմնական ցուցանիշը համակարգված գիտելիքների որոշակի պաշարն է: Լ.Ս Վիգոտսկին նշում է, որ նախադպրոցականի մտածողության համակարգում գերիշխող է ընկալման տրամաբանությունը, միայն ավագ նախադպրոցական տարիքում է երեխան սովորում ընդհանրացնել և վերացարկել, արդյունքում ձևավորվում է տրամաբանական կամ մտքի ընդհանրացումեր, որոնք սինթեզվում են դիտողական և խոսքային ընդհանրացումներից:

Էլկոնինը գրել է. «Նախապրոցական տարիքի երեխաների մոտ, ի տարբերություն վաղ մանկության տարիքի, դասավորվում են նոր տիպի հարաբերություններ, ինչը և ստեղծում է յուրահատուկ, տվյալ շրջանին բնորոշ զարգացման սոցիալական իրավիճա»: [3, էջ 13]

Սոցիալական պատրաստության նպատակը նախադպրոցականի նախապատրաստումն է նոր սոցիալական դիրքի կամ աշակերտի կարգավիճակի ընդունմանը, և աշակերտի պատասխանատու սոցիալական դերակատարման գիտակցմանը: :

Ֆիզիկապես պատրաստ լինելը ենթադրում է ամուր առողջություն, աշխատունակություն և համբերություն: Ֆիզիկապես թույլ երեխաները հաճախ են հիվանդանում, շուտ են հոգնում, ընկնում է աշխատունակությունը: Այս ամենը չի կարող չանդրադառնալ ուսման որակի վրա: Երեխայի ֆիզիկական պատրաստությանը դպրոցին նպաստում է նախադպրոցականի մանկության ողջ շրջանում իրականացվող նպատակային ֆիզիկական դաստիարակությունը: Նախադպրոցականի դպրոցի ուսուցմանը պատրաստ լինելու աստիճանը պայմանավրված է նաև նրա հատուկ պատրաստությամբ, որն արդյունք է նպատակային աշխատանքի: Հատուկ պատրաստությունն իրենից ներկայացնում է որոշակի գիտելիքների և պատկերացումների համակարգ, որի շնորհիվ առաջին դասարանում ուսուցանվող հիմնական առարկաների բովանդակությունը երեխայի

կողմից յուրացվում է առանց ավելորդ դժվարությունների: Հատուկ նախապատրաստման գործընթացում կարևորվում է ոչ այնքան ձեռքբերած գիտելիքների քանակը, որքան դրանց գիտակցման աստիճանը: ‼Շատ կարևոր է նաև նախադպրոցականների նախնական ծանոթացումը դպրոցին, դպրոցական կենսակերպին:

Լավ սովորելու համար երեխան առաջին հերթին պետք է հարմարվի դպրոցական նոր պայմաններին, կարողանա կատարել պատասխանատու հանձնարարություններ: Նրա համար կարևոր է մտերիմ մեծահասակների ու այլ երեխաների ուսման նկատմամբ դրական վերաբերմունքը:

Մ. Պ. Գինզբուրգը հատուկ մեթոդիկայի օգնությամբ ուսումնասիրեել է դպրոցի նկատմամբ հուզական վերաբերմունքը: Նրա կողմից ընտրվել են դրականորեն և բացասականորեն բնութագրվող մարդկանց 11 զույգ («վատ-լավ», «կեղտոտ-մաքուր», «արագ-դանդաղ»): Այդ հատկանիշներից յուրաքանչյուրը տպված է առանձին քարտի վրա: Երեխային ներկայացնում է երկու արկղիկ, որոնց վրա փակցված են նկարներ: Մի արկղի վրա նկարված են երեխաներ դպրոցական համազգեստով և պայուսակով, մյուսի վրա՝ երեխաներ, ովքեր նստած են խաղալիք մեքենայում: Այնուհետև հաջորդում է բանավոր հրահանգ. «Այս երեխաները դպրոցականներ են, նրանք գնում են դպրոց, մյուսները նախադպրոցականներ են, նրանք խաղում են: Հիմա ես քեզ կտամ տարբեր բառեր, իսկ դու մտածիր, թե ում են դրանք համապատասխանում՝ դպրոցականի՞ն, թե նախադպրոցականին: Դրանք տեղարի՛ր համապատասխան արկղում»: Փորձարկողը հաշվում է ածականները և քարտը տալիս երեխային: Վերջինս տեղադրում է արկղերից մեկում: Ածականները տրվում են ոչ դասավորված ձևով: [3, էջ 27]

Երբ երեխայի գիտակցության մեջ դպրոցի մասին պատկերացումը ձեռք է բերում նոր որակ, կարելի է խոսել այն մասին, որ այն կվերափոխվի նոր բովանդակությամբ հատկորոշվող դպրոցականի ներքին դիրքորոշմանը: Եվ սա նշանակում է, որ երեխան հոգեբանորեն ոտք է դրել իր զարգացման նոր տարիքային շրջափուլ: [2, էջ 26]

Որպեսզի երեխան հաջողությամբ սովորի, նա առաջին հերթին պետք է ձգտի նոր դպրոցական կյանքին, «լուրջ» պարապմունքներին, «պատասխանատու»

առաջադրանքներին: Այսպիսի ցանկության առաջացման վրա ազդում է ուսման՝ որպես կարևոր, բովանդակային գործունեության նկատմամբ, մոտիկ մեծահասակների վերաբերմունքը: Ազդում է և այլ երեխաների վերաբերմունքը, հնարավորությունը՝ բարձրանալու նոր տարիքային աստիճան փոքրիկների աչքերում և համեմատվել ավագների հետ: Արդյունքում երեխայի մոտ ձևավորվում է դպրոցականի ներքին դիրքորոշումը: Սկզբնապես երեխաներին գրավում են դպրոցական կյանքի արտաքին ատրիբուտները՝ գրիչները, տետրերը, դասարանը և այլն: Նոր տպավորությունների, նոր մթնոլորտի պահանջմունք է առաջանում, ցանկություն՝ ձեռք բերելու նոր ընկերներ: Եվ միայն հետո սովորելու, ինչ-որ նոր բան իմանալու, գնահատական ստանալու ցանկություն է առաջանում: Նոր սոցիալական դիրքի նկատմամբ երեխայի ձգտումը նախադրյալ է և հիմք կրտսեր դպրոցական տարիքում հոգեբանական շատ առանձնահատկությունների կայացման համար: Մասնավորապես, պատասխանատվությունը դպրոցական պարտականությունների կատարման համար. երեխան սկսում է կատարել ոչ միայն իրեն հետաքրքիր առաջադրանքները, այլև ցանկացած ուսումնական աշխատանք: Դպրոց ընդունվող երեխայի համար կարևոր է նաև ուսուցչի, տարեկիցների և իր նկատմամբ վերաբերմունքը: Նախադպրոցական տարիքի վերջում պետք է մեծահասակների հետ հաստատվի ոչ իրավիճակային-անձնային շփում: Ուսուցանման դաս-դասարանային համակարգը ենթադրում է ոչ միայն ուսուցչի հետ, այլև այլ երեխաների հետ հատուկ հարաբերություններ: Ուսումնական գործունեությունն իր բնույթով կոլեկտիվ գործունեություն է: Աշակերտները պետք է սովորեն միմյանց հետ գործնական հաղորդակցմանը, արդյունավետ փոխազդելու կարողությանը՝ կատարելով համատեղ ուսումնական գործողություններ: Հասակակիցների հետ շփման նոր ձևը հաստատվում է դպրոցական ուսուցման հենց սկզբից: Հոգեկան զարգացման բարձր մակարդակով վեց տարեկան երեխաների համար բնութագրական է համագործակցային-մրցակցային շփումը տարեկիցների հետ: Նրանք հետևում են ընդհանուր խաղային նպատակին, բայց միմյանց համարում են մրցակիցներ, հակառակորդներ: Նրանք պլանավորում են իրենց գործողությունները՝ կանխատեսելով արդյունքը, հետևելով ընկերոջ գործողություններին, փորձելով նրան խանգարել: Դպրոցին անձնային պատրաստվածությունը ներառում է նաև որոշակի

վերաբերմունք սեփական անձի նկատմամբ։ Արդյունավետ ուսումնական գործունեությունը ենթադրում է համարժեք վերաբերմունք սեփական ընդունակությունների, աշխատանքային արդյունքների, վարքի նկատմամբ, այսինքն՝ ինքնագիտակցության զարգացվածության որոշակի մակարդակ։ Դպրոցականի ինքնագնահատականը չպետք է լինի շատ բարձր և չտարբերակված։ Դպրոցին երեխայի պատրաստվածության մասին սովորաբար դատում են խմբային աշխատանքներում նրա վարքով։ Այստեղ շատ կարևոր է նաև երեխայի կամային ոլորտի զարգացման առանձնահատկությունների դուրս բերումը։

Փորձարարական մաս

Մեր կարծիքով, երեխաների ուսումնական հաջողություններն առաջին դասարանում մեծապես պայմանավորված են նրանով, թե արդյոք երեխան հաճախել է նախադպրոցական հաստատություն և ծնողներն ինչպես են վերաբերվում իրենց երեխաների դպրոցական ուսուցմանը պատրաստ լինելու հանգամանքին: Իսկ ինչ է նշանակում «երեխան պատրաստ է ուսումնական գործունեության», ինչպիսի բնութագրիչներ պիտի ունենա երեխան, որպեսզի համոզվենք, որ 6 տարեկանը պատրաստ է դպրոցին: Նշված հիմնախնդրի շուրջ մենք անկետային հարցումներ անցկացրեցինք 41 ծնողի շրջանում: Հարցաթերթիկի առաջին հարցին՝ «Իմ երեխան, կարծում եմ, պատրաստ է դպրոցին, որովհետև...», հարցմանը մասնակցած 41 ծնողներից 37-ի (90%) կարծիքով իրենց երեխաները հիմնականում պատրաստ են դպրոցին:



Այդ պատասխանները գրելիս նրանք հաշվի էին առել մեր ներկայացրած՝ երեխայի դպրոցին նախապատրաստվածության մակարդակների բնութագրիչները: Հարցերի պատասխանները ցույց տվեցին, որ ոչ միշտ են ծնողների պատկերացումները համապատասխանում դպրոցին պատրաստ լինելու ընդհանուր

բնութագրիչներին: Երկրորդ հարցին՝ «Իմ երեխան պատրաստ չէ դպրոցին, որովհետև...» հարցման ծնողների տված պատասխանները միանշանակ չէին և հաճախ հակասում էին 1-ին հարցին տված պատասխաններին: Այս փաստը մեզ հանգեցրեց այն եզրակացության, որ ծնողների մի մասը (40%) ըստ ամենայնի չի պատկերացնում, թե ինչ է նշանակում պատրաստ չլինել դպրոցին: Հարցմանը մասնակից ծնողների 30% որպես դպրոցին նախապատրաստվածության ցուցանիշ նշել է «տառերը չի ճանաչում» պատասխանը:



Հաջորդ հարցին՝ «Ընդգծել այն բառերը, որոնք կգործածեիք Ձեր երեխային բնութագրելիս» ծնողների 40%-ը իրենց երեխաներին բնութագրելիս ընտրել էր հետևյալ բառերը՝ ուշադիր, աշխատասեր, շնորհալի, աշխույժ: 30%-ը իրենց երեխաներին բնութագրելիս ընտրել էր հետևյալները՝ անուշադիր, ամաչկոտ, հարմարվող, խռովկան, լուրջ: Մյուս 30%-ը՝ շնորհալի, շատախոս, ակտիվ, անուշադիր:



Եզրակացություն

Այսպիսով՝ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մանկապարտեզ հաճախող երեխաների համար անցումը դպրոցական կյանքին ավելի հեշտ է լինում: Մանկապարտեզ հաճախելով՝ երեխան սովորում է հարմարվել նոր միջավայրում, հասակակիցների հետ շփվելով ձեռք է բերում անհրաժեշտ սոցիալական հմտություններ, ինչպես նաև սովորում է բաժանվել ծնողից: Եթե ինչ-ինչ պատճառներով երեխան մանկապարտեզ չի գնացել, լավ կլինի, որ գոնե ինչ-որ քոլեջ կամ խմբակ հաճախի, որտեղ գոնե 1-2 ժամով կբաժանվի ծնողից: Շատ կարևոր է, որ այդ ընթացքում ծնողը չսպասի տվյալ հաստատությունում, այլ հեռանա իր գործերով: Երբեմն ծնողի համար էլ է հոգեբանորեն դժվար լինում երեխային նոր և օտար միջավայրում մենակ թողնելը, սակայն ինչքան շուտ դրան վարժվեք՝ այնքան լավ:

Ուսումնասիրությունները վկայում են, որ նախադպրոցական տարիքում երեխայի մեջ արդեն ձևավորվում է ինքնագնահատականը:

5-6 տարեկանում հիմնական նպատակը երեխաներին աստիճանաբար ուսումնական գործընթացի մեջ ներգրավելն է, աննկատ կերպով նրանց ավելի ու ավելի բարդ առաջադրանքներ կատարելուն նախապատրաստելը և, միաժամանակ, նրանց մտածողության զարգացումն է, ստեղծագործական ունակությունների բացահայտումը, ճանաչողական հետաքրքրությունների խթանումը:

Կատարած հետազոտությունները թույլ են տալիս եզրակացնել՝

- 5-6 տարեկան երեխաները տարբերվում են իրենց ինտելեկտուալ մակարդակով
- Այս տարիքի հետ պետք է աշխատել անհատական մոտեցման սկզբունքով, քանի որ նրանք գալիս են դպրոց՝ տարրական ուսուցման ծրագրի յուրացման տարբեր հնարավորություններով
- նախադպրոցական տարիքից պետք է ձևավորել այնպիսի հատկություններ, ինչպիսիք են համեմատումը, դասակարգումը, վերլուծությունը, օբյեկտների հատկանիշների առանձնացումը:

Գրականության ցանկ

1. Նախաշավիղ 3-4. 2006, 62 էջ
2. Նախաշավիղ 3. 2012, 75 էջ
3. Սովետական հանրագիտարանային բառարան, Մ.: Սովետական Հանրագիտարան, 1984, էջ 244
4. Տաթև գիտակրթական համալիր, Նախադպրոցական կրթություն, 2008թ., 63 էջ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Ավագ նախադպրոցական տարիքի երեխաներին դպրոցական ուսումնառության նախապատրաստումը

ԿԱՏԱՐՈՂ՝ Ռաիսա Օհանյան

ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. Էմինյան

ՎԱՆԱՁՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն ……..….**4**

2.Գլուխ 1. Օրվա կանոնակարգը որպես դպրոցին նախապատրաստելու կարևորագույն պայման……..…… ……6

3.Գլուխ 2. Դպրոցին նախապատրաստվող երեխաների ֆիզիկական դաստիարակության ծրագրային խնդիրները …….……..**7**

4.Գլուխ 3. Խոսքի զարգացման նշանակությունը և կարևորությունը ավագ ն/դպ երեխաների մոտ …….…… …...**9**

5. Գլուխ 4. Վաղ գրաճանաչությունը որպես երեխային դպրոց նախապատրաստելու միջոց……. ..…….. **12**

6.Գլուխ 5. Դպրոցին նախապատրաստման հիմնահարցերը…….…… ……**14**

7.Հետազոտական աշխատանք……**16**

8.Եզրակացություն.....**17**

9.Օգտագործած գրականության ցանկ…….……..……**18**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական կրթությունը Հայաստանի հանրապետության շարունակական կրթության համակարգի սկզբնական բաղկացուցիչ մասն է:

Թեմայի արդիականություն: Մանկապարտեզի խնդիրն է ապահովել երեխաների բազմակողմանի զարգացման այնպիսի մակարդակ, որի վրա հենվելով դպրոցը կկարողանա հաջողությամբ լուծել իր առջև դրված խնդիրները:

Սրանում է կայանում մանկապարտեզի և դպրոցի միջև իրականացվող կապը և հաջորդականությունը, հետևաբար նաև նախադպրոցական ու դպրոցական մանկավարժության տեսական հիմքը:

Երեխաներին դաստիարակչական ներգործության միասնական պահանջներ ներկայացնելն է, իսկ դաստիարակչական ներգործության միասնական համակարգ ասելով պետք է հասկանալ տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառման պայմաններում պլանաչափորեն իրականացվող դաստիարակչությունը:

Մանկապարտեզի խնդիրն է ապահովել դպրոցի առաջին դասարան սահուն անցումը:

Ավագ նախադպրոցական տարիքի երեխաներին դպրոցական ուսումնառության նախապատրաստելիս պետք է հաշվի առնել նախադպրոցական կրթության պետական չափորոշիչների հիմնական սկզբունքները, դրանց կառուցվածքը և գործառույթները: Պետք է ամենօրյա կենսագործունեության և պարապմունքների միջոցով երեխաների մեջ մշակվեն սոցիալական, անձնային և այլ որակներ: Անհրաժեշտ է մանկապարտեզն ու դպրոցը ուսուցման ձևերով և մեթոդներով մոտեցնել միմյանց: Պետք չէ մանկապարտեզը վերածել դպրոցի: Այս երկու ոլորտի աշխատանքներում անհրաժեշտ է, որ լինեն ընդհանրություններ՝ պարտականություններ, պարապմունքներ, գործունեության այլ ձևերի համակարգ, որոնք պարտադիր ուսուցման համար ձևավորում են հոգեբանական նախապայմաններ:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ն/դ երեխաների դպրոցական պատրաստվածությանը նպաստող գործոնները:

Աշխատանքի խնդիրներն են ն/դ երեխաների մոտ ձևավորել ինտելեկտուալ, կամային, մոտիվացիոն և սոցիալ-հոգեբանական պատրաստվածություն:

Գլուխ 1. Օրվա կանոնակարգը որպես դպրոցին նախապատրաստելու կարևորագույն պայման

Մանկապարտեզի կրթական համալիր ծրագիրը կառուցված է հինգ կարևոր բաժիններից՝ մայրենի լեզվից, մաթեմատիկայից, կերպարվեստից, ֆիզկուլտուրայից, երաժշտությունից և գործունեության երկու ձևերից՝ խաղից և աշխատանքից: Միաժամանակ ծրագիրը համալրվել է նոր բաղադրիչներով՝ էկոլոգիա, վաղ գրաճանաչություն, բարեկիրթ և անվտանգ վարքագիծ, անվտանգ երթևեկություն, երեխաների կյանքի կազմակերպում, օրվա ռեժիմ, կոփիչ միջոցառումներ՝ տարվա տաք և ցուրտ եղանակներին:

Երեխաների մանկապարտեզից դպրոց սահուն անցման գործում իր մեծ տեղն ունի օրվա կանոնակարգը:

Օրվա կանոնակարգը՝ նախադպրոցական խմբի ծրագրին համապատասխան, ուսումնական և դաստիարակչական խնդիրների իրականացումը երեխաներից պահանջում է ֆիզիկական և մտավոր մեծ լարում, նստունակություն, ուշադրություն:[2, էջ 5]

Օրվա կանոնակարգի մեջ նախատեսված է աճող օրգանիզմի պահանջը դեպի շաժումները, նկատի են առնված բազմազան գործունեության, մտավոր ակտիվության, շարժողականով հերթափոխելու, պարապելու և հանգստանալու, և որքան հնարավոր է բաց օդում շատ լինելու ժամանակին ու նպատակահարմար սննդի պայմանները:

Դաստիարակը պարտավոր է իր աշխատանքում խստորեն ղեկավարվել այդ կանոններով:

5-6 տարեկան երեխաների օրվա կանոնակարգում իրենց ուղղակի տեղը պետք է ունենան ուսումնական պարապմունքները:

Պարապմունքների ընթացքում իրականացվող դաստիարակչական-կրթական աշխատանքը էական նշանակություն ունի 5-6 տարեկան երեխաների մտավոր զարգացման և նրանց դպրոցական ուսուցմանը նախապատրաստելու գործում:

ԳԼՈՒԽ 2. ԴՊՐՈՑԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ֆիզիկապես դպրոցին պատրաստ լինելը ենթադրում է ամուր առողջություն, աշխատունակություն, համբերություն:

Ֆիզիկապես թույլ երեխաները հաճախ են հիվանդանում, շուտ են հոգնում, ընկնում է աշխատունակությունը:

Այս ամենը չի կարող չանդրադառնալ ուսման որակի վրա:

Երեխայի ֆիզիկական պատրաստությունը դպրոցին, նպաստում է նախադպրոցականի մանկության ողջ շրջանում իրականացվող նպատակային ֆիզիկական դաստիարակությանը:

Ավագ նախադպրոցական երեխաների ֆիզիկական դատիարակության ուղղությամբ տարվող աշխատանքների կազմակերպման ձևերից մեկն էլ առավոտյան մարմնամարզության կազմակերպումն է մանկապարտեզում:

Ֆիզիկական դաստիարակության նպատակն է ժամանակին ձևավորել երեխաների շարժողական կարողություններն ու հմտությունները, զարգացնել մանր և խոշոր շարժողական մոտորիկան:

Ֆիզիկական դաստիարակությունը միտված է նախադպրոցականի առողջության պահպանմանն ու ամրապնդմանը: Ձևավորվում է կենսականորեն անհրաժեշտ շաժողական կարողություններն ու հմտությունները, մշակվում է քայլքը, վազքը, ցատկը, սողանցումը, մագլցումը, նետելու ունակությունը:

Դաստիարակը ֆիզիկական դաստիարակության միջոցով կատարելագործում և ձևավորում է երեխաների գիտելիքները, ուսուցանում խաղային գործողությունների տարրերը, ձևավորում ֆիզիկական որակներ՝ ճարպկություն, արագաշարժություն, դիմացկունություն:

Որպես դպրոցին նախապատրաստվող խումբ՝ ավագ խմբում պետք է ուշադրություն դարձնել երեխաների ինքնակազմակերպման ու ինքնավերահսկողության ունակությունների ձևավորմանը:

Նպատակասլաց կերպով պետք է զարգացնել ֆիզիկական որակները, հատկապես՝ ընդհանուր դիմացկունությունը, ճարպկությունը: Պետք է ուշադրություն դարձնել երեխաների հավասարակշռության զգացողությանը, բարելավել նրանց

կողմնորոշումը տարածության մեջ: Պետք է աստիճանաբար ավելացնել, մեծացնել ֆիզիկական վարժությունների կատարման որակի նկատմամբ պահանջը, կատարելագործել ուշադրության կայունությունը, հիշողության, մտածողության, երևակայության որակները, որոնք անհրաժեշտ պայման են դպրոցական ուսուցման նախապատրաստման համար:

ԳԼՈՒԽ 3. ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ և ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՎԱԳ Ն/ԴՊ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Նախադպրոցական տարիքում երեխան մայրենի լեզվին տիրապետում է խոսելու միջոցով: Այս ասպարեզում խիստ կարևոր է իր խոսքի նկատմամբ երեխային վստահության ներշնչումը, նրան անկաշկանդ խոսելու, ազատ արտահայտվելու հնարավորություն տալը: Երեխան անընդհատ մտավոր գործունեություն է կատարում, նրա միտքը ավելի կազմակերպված է դառնում, հետևաբար խոսքն էլ լինում է առավել տրամաբանված:

Ելնելով երեխայի արտահայտվելու կարողությունից՝ կարելի է դատել նրա խոսքի զարգացման աստիճանի մակարդակը: Երեխայի պատմելու, մտքերն արտահայտելու կարողությունն օգնում է նրան դառնալ ավելի շփվող, ինքնվստահ և հաղթահարել սեփական ամաչկոտությունը:

Երեխաների ամենօրյա գործունեությունը ուղեկցվում է մեծերի և հասակակիցների հետ խոսակցական շփումով:

Խոսքի զարգացումը երեխաների ընդհանուր զարգացման կևևոր մասն է: Դպրոց հաճախող երեխան պետք է կարողանա պարզ խոսել, բոլոր հնչյունները ճիշտ արտասանել , սխալ արտասանվող հնչյունները երբեմն հետագայում դպրոցում էլ գրում են գրավոր աշխատանքներում ու շտկելն ավելի բարդ է լինում :

Որքան դաստիարակը մտերիմ է երեխաների հետ, այնքան շատ է գտնում խոսակցության հետաքրքրիր և օգտակար թեմաներ: Երեխաները շատ լավ են հասկանում դաստիարակի վերաբերմունքը, նրանք երբեք չեն բաժանի իրենց խոհերը, տպավորություններն այն դաստիարակի հետ, ով իր շփումը երեխաների հետ սահմանափակում է միայն սահմանված ռեժիմը կատարելու վերաբերյալ տրվող

ցուցումներով: Ցավոք նկատվում է նաև այնպիսի պատկեր, երբ դաստիարակը երկար ժամանակ քաշվում է մի կողմ, իսկ մյուս կողմը եռում է մանկական կյանքը ու մարդ ափսոսանք է զգում, երբ տեսնում է, որ երեխաները դաստիարակի մեջ չեն գտնում իրենց մտերիմին, խորհրդատուին, խաղի մասնակցին:

Այսպիսով դաստիարակին ներկայացվող առաջին պահանջն այն է, որ նա կարողանա երեխաների հետ բովանդակալից խոսակցություն անցկացնի՝ իհարկե հաշվի առնելով նրանց տարիքային հնարվորությունները:

Տարիքի հետ մեկտեղ ընդարձակվում է երեխաների կենսափորձը, իրադարձությունների ավելի մեծ շրջանակ է ընդգրկում նրանց հետաքրքրությունների տեսադաշտը, լայնանում է խոսակցական թեմաների շրջանակը:

Երեխաների խոսքի զարգացման և մտահորիզոնն ընդարձակելուն նպաստում են զբոսանքները, էքսկուրսիաները, տնից մանկապարտեզ և մանկապարտեզից տուն գնալու ճանապարհին կատարվող դիտումները, զրույցները:

Նրանք դաստիարակին պատմում են այն ամենի մասին, ինչ տեսել են մանկապարտեզից դուրս, արտահայտում են իրենց դատողություններն ու վերաբերմունքը, հարցնում են, վիճում: Դաստիարակի հետ երեխաների նման զրույցներն ընդարձակում են նրանց մտահորիզոնը, ձևավորում հետաքրքրությունները, դաստիարակում զգացմունքները, զարգացնում կապակցված խոսքը: Լեզվի ուսուցման կարևորագույն ձև են հատուկ կազմակերպվող պարապմունքները: Պարապմունքները պետք է անցկացվեն դիդակտիկայի պահանջներին համապատասխան: Ամենից առաջ կարևոր է սահմանել պարապմունքի նպատակը, նրա բովանդակությունը, տեղը մյուս պարապմունքների համակարգում, կապը մյուս գործընթացների հետ: Պետք է ապահովել նաև պարապմունքի դաստիարակչական և հուզական բնույթը: Պետք է ապահովվի կապը խոսքի զարգացման մյուս ուղղություններով տարվող աշխատանքների հետ և վերջապես կազմակերպվի պարապմունքի արդյունքի հաշվառում:

Պետք է մինչև դպրոց հաճախելը մանկապարտեզում ձևավորել խոսքի քերականական կառուցվածքը: Երեխաներին վարժեցնել ծանոթ բառերի դժվար ձևերի օգտագործմանը, դաստիարակել քերականական սխալները նկատելու և ուղղելու, մաքուր, հստակ խոսելու ձգտում: Սովորեցնել օգտագործել բառերի տարբեր ձևեր՝ միևնույն առարկայի անվան ժամանակ (շուն-շնիկ, տուն-տնակ...) անվանել մասնագիտական անուններ՝ շինարար, բժիշկ, ուսուցիչ և այլն: Վարժեցնել օժանդակ բայերի ճիշտ օգտագորմանը: Զարգացնել երեխաների խոսքի ձևաբանական և շարահյուսական կողմերը, հոգնակի ձևերը:

Մինչև վեց տարեկանը մայրենի լեզվի մշտական շփումը նրանց առանձնապես ուշադիր է դարձնում հենց այդ լեզվի նկատմամբ: Քերականորեն խոսքի ճիշտ կառուցումը սովորեցնում ենք գեղարվեստական տեքստը վերարտադրելու, ինքնուրույն պատմելու դեպքում: Սովորեցնում ենք պատմել նկարի միջոցով, գրական ստեղծագործությունը վերապատմելու, փոքրիկ պատմություններ հորինելու միջոցով: Կապակցված խոսքը հատկապես զարգանում է, երբ պատմվածք են հորինում բնանկարի մասին: Հասնել նրան, որ երեխան կարողանա վերապատմի: Պատմվածքը պատմի՝ սկսելով սկզբից, մեջտեղից կամ վերջից, նախաձեռնի զրույց, զգացմունքներն արտահայտի բառերի միջոցով: Հուզականորեն ըմբռնի գեղարվեստական ստեղծագործությունները, զգա դրանց բնույթը, գնահատի հերոսների արարքները:

ԳԼՈՒԽ 4. ՎԱՂ ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԵՐԵԽԱՅԻՆ ԴՊՐՈՑ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՄԻՋՈՑ

Հինգից վեց տարեկան երեխաներին դպրոցական ուսուցմանը ժամանակին նախապատրաստելը նպաստում է նրանց մեջ ուսումնական աշխատանքի նկատմամբ սեր և հետաքրքրություն դաստիարակելուն: Ապահովում է նաև նախադպրոցական և դպրոցական տարրական ուսուցման միջև անհրաժեշտ հաջորդականությունը:

Դպրոց ընդունվող երեխաներին ներկայացվող արդի պահանջներից ելնելով՝ հանձնարարվում է ավագ նախադպրոցական խմբում իրականացնել վաղ գրաճանաչության նախապատրաստում, որը հանդիսանում է մայրենի լեզվի բաղադրիչներից մեկը:

Գրաճանաչությունն ունի զարգացնող բնույթ: Երեխաներին պատկերացում է տրվում նախադասություն-բառ–վանկ-հնչյուն վերլուծական շղթայի մասին: Այդ պարապմունքների միջոցով ոչ միայն զարգանում է երեխայի մտավոր կարողությունները, այլև ուշադրությունը, հիշողությունը, մտածողությունը, նաև կամքը, հույզերը, զգացմունքները, զգայարանները, այսինքն ողջ հոգեկան աշխարհը:

Դաստիարակը սովորեցնում է երեխաներին անվանել բառեր տրված հնչյունով, բառը ենթարկել հնչյունային վերլուծության, տարբերել ձայնավոր և բաղաձայն հնչյունները: Պետք է այս հասակի երեխաների հետ տանել աշխատանք ոչ միայն լեզվական նախնական գիտելիքներ հաղորդելու, այլև երեխաների խոսքը, երևակայությունը, վերլուծական մտածողությունը, միտքը զարգացնելու ուղղությամբ: Այս շրջանում օգտագործվող շուտասելուկները, հանելուկները մեծապես նպաստում են երեխայի մտքի, ուշադրության զարգացմանը:

Շատ կարևոր է, որ դաստիարակը հմտորեն ղեկավարի ուսուցման գործընթացը: Գրաճանաչության պարապմունքների հիմնական նպատակը ոչ թե կարդալ գրելու ուսուցումն է, այլ հնարավորին չափով լավ նախապատրաստելը դպրոցական ուսուցմանը:

Անհրաժեշտ է դաստիարակել նաև հնչյունային կուլտուրա, սովորեցնել բառերի մեջ բոլոր հնչյունները մաքուր արտասանել, որպեզի դպրոց գնալուց առաջ

երեխայի խոսքը, արտասանությունը քերականական կառուցվածքի բովանդակության տեսակետից կանոնավոր ու արտահայտիչ լինի:

Անհրաժեշտ է սովորեցնել երեխաներին տիրապետել ձայնի ուժգնությանը և խոսքի տեմպին:

Երեխաների բառապաշարը հարստացնելու նպատակով պետք է ընդարձակել նրանց պատկերացումների շրջանակը, հնարավորություն տալ ակտիվացնելու, ճշտելու և ամրապնդելու նախկինում սովորած բառերն ու արտահայտությունները, ինչպես նաև սովորեցնել նորերը:

Նախադպրոցական գրաճանաչության նախապատրաստական փուլում մեծ տեղ են գրավում բառախաղերը: Այս խաղերը օգնում են երեխաների բառապաշարի ակտիվացմանը, խոսքի հնչյունային կուլտուրայի կատարելագործմանը, կապակցված խոսքի զարգացմանը, շրջապատին ծանոթացնելուն: Շատ կարևոր է, որպեսզի խաղի մեջ տրվի ոչ միայն նյութի ուսուցումը, պարզությունն ու ճշտությունը, այլև պահպանվի խաղի յուրահատուկ զվարճացնող բնույթը:

Ծեփի, կառուցողական պարապմունքների ընթացքում երեխաների սովորած հնչյուն-տառերի յուրացումն ամրապնդելու նպատակով կարելի է հանձնարարել ծեփել ուսուցանվող տառերով սկսվող անուններ ունեցող առարկաներ: Կարելի է դրանց ներքևում գրել ուսուցանվող «տպագիր» տառը, իսկ մնացած տառերի փոխարեն կետեր դնել: Կարող են նաև ծեփել, նկարել, կտրել: Գրաճանաչության պարապմունքները երեխաներին դարձնում են նստունակ, կարգապահ, կազամակերպված: Բացի այդ հոկվում է, զարգանում նրանց խոսքը, ուշադրությունը, մտածելու ունակությունը, որոնք շատ կարևոր են դպրոցական ուսուցմանը նախապատրաստվող 5-6 տարեկան երեխաների համար: [3, էջ 10]

Ուսումնական տարվա ընթացքում դաստիարակը սովորեցնում է, որ երեխան ճիշտ դիրքով պահի գիրքը, տարբերի գրքի կամ տետրի շապիկը, երեսը, թուղթը, տողը, իմանում է, որ տպագիր խոսքը իմաստ ունի, ընթերցվում է ձախից աջ, վերևից ներքև, ըստ չափորոշիչային պահանջների կազմի, կարդա իր անունը:

ԳԼՈՒԽ 5. ԴՊՐՈՑԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄԱՆԱՀԱՐՑԵՐԸ

Մանկապարտեզի հիմնական խնդիրներից մեկը երեխային դպրոցին նախապատրաստելն է:

Դպրոցին նախապատրաստել նշանակում է հստակ նախապատրաստական աշխատանք տանել 5-6 տարեկան երեխաների զարգացման և կրթադաստիարակչական գործում :

Դպրոցին նախապատրաստվելու համար երեխայի մոտ անհրաժեշտ է տրամադրվածություն: Երեխան պետք է պատրաստ լինի նաև հոգեբանորեն: Միայն կարողանալ հաշվել, գրել, կարդալ, չի նշանակում, թե երեխան արդեն պատրաստ է դպրոցին:

Արդյո՞ք երեխաները ցանկանում են դպրոց գնալ: Պետք չէ նույնացնել դպրոց գնալու և սովորելու ցանկությունը: Երեխաները ցանկանում են դպրոց գնալ, որովհետև քույրը, եղբայրը գնում են, տանը այդ մասին խոսում են ոգևորությամբ, նվերներ են խոստանում: Դպրոցն իրենց համար նորություն է: Նրանց հետաքրքրքում է նոր ընկերական կոլեկտիվը, ուսուցչուհին, դասասենյակը...

Գուցե դեռևս չի գիտակցում, որ դասերը պատրաստելու համար պետք է զոհաբերել զվարճանքը, զբոսանքը, խաղը:

Պետք է կարողանալ երեխաներին բացատրել թե ի՞նչ է նշանակում դպրոցական լինել, ի՞նչ պարտականություններ և իրավունքներ ունի դպրոցականը:

Մանկապարտեզից դպրոց գնացող երեխաները հեշտ յուրացնում են մատուցված նյութը, գիտելիքների անհրաժեշտ պաշար ունեն, կարողանում են նաև շփվել, հաղորդակցվել ընկերների, դաստիարակների հետ: Իսկ դա հեշտացնում է նոր դպրոցական միջավայրին հարմարվելու գործընթացը:

Նախադպրոցականն ունի լավ հիշողություն, բայց միայն հիշողությունը չի կարող սովորելու հիմք դառնալ:

Անհրաժեշտ է հասնել նրան, որ երեխան ինքը գիտակցի գիտելիքների և

կարողությունների պատճառահետևանքային կապերը, առանձնացնի ուսումնական խնդիրը, տարբերի գլխավորը երկրորդականից:

Դպրոցում փոխվում է երեխայի կարգավիճակը, նրա սոցիալական դրությունը: Նոր իրադրությունը երեխայից պահանջում է ինքնուրույնություն և որոշակի

պահվածք: Դպրոցին պատրաստ լինել նշանակում է ունենալ կազմակերպված վարք, հմտություններ, գիտելիքների պաշար, դպրոց ընդունվելու ձգտում:

Դպրոցին լավ պատրաստ երեխան միշտ լավ է սովորում: Հակառակ դեպքում դրա պատճառը պետք է փնտրել ոչ թե հատուկ, այլ ընդհանուր նախապատրաստվածության մեջ:

Դպրոցում երեխան պետք է կարողանա աշխատանքը հասցնել ավարտին, կարողանա հաղթահարել դժվարությունները, լինել նպատակասլաց և համբերատար:

Հետազոտական աշխատանի մեթոդները, կազմակերպումը ավագ խմբում

Թեմա« Բժիշկ Այբոլիտ »

Տեսակը՝ Խաղի միջոցով

Անհրաժեշտ պարագաներ- Բժշկական գործիքներ, ջերմաչափ, ներարկիչ

Նպատակը՝ զարգացնել կապակցված խոսքը, ուշադրությունը, մտածողությունը, որը կնպաստի երեխայի երեխայի ինտեգրմանը դպրոցին:

Խնդիրները.

1. Ծանոթանալ բժշկի աշխատանքին, հարստացնել բառապաշարը:
2. Խաղի միջոցով զարգացնել երկխոսություն վարելու ունակությունը:

Պարապմունքի ընթացքը:

Պարապունքի ընթացքը-Բժիշկ Այբոլիտի դերը կատարում է խմբի ակտիվ երեխաներից մեկը՝ Մարիամը:

Մի քանի երեխաներ « հիվանդ կենդանիներ » (արջ, աղվես, գայլ, նապաստակ): Նրանցից մեկի ատամն էր ցավում, մյուսի գլուխը, ականջը, ձեռքը, մեկին էլ ոտքն էր « վնասվել » :

Նապաստակը, որը խմբի ոչ ակտիվ երեխաներից է, մոտենում է բժշկին և գանգատվում ականջի ցավից: Բժիշկ Այբոլիտը նրան զննեց և դեղահաբ նշանակեց, վերջում ավելացրեց, որ անպայման պետք է հետևի մայրիկի խորհուրդներին: Մարիամը այնքան հմտորեն էր կատարում բժշկի դերը, որ իմ մոտ հետաքրքրություն առաջացավ, թե որտեղի՞ց է գալիս նրա իմացությունը բժշկի մասնագիտության մասին: Պարզվեց, որ նրա հայրը բժիշկ է:

Խաղ – պարապմունքի միջոցով փորձեցի օգնել երեխաներին հաղթահարել բժշկի հանդեպ վախը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարելով հետազոտական աշխատանք, եկա այն եզրահանգման, որ խոսքի զարգացումը կարևոր նշանակություն ունի ն/դ տարիքի ավագ խմբի (5-6 տարեկան) երեխաների զարգացման համար:

Վաղ ն/դ տարիքից մինչև ավագ ն/դ տարիք էական զարգացում է ապրում մտածողությունը: Մեծերի հետ շփման ընթացքում աստիճանաբար զարգանում է երախայի խոսքը:

Գրաճանաչության պարապմունքներրը ճիշտ մեթոդներով անցկացնելու դեպքում, երեխաները կարող են սովորել ճիշտ արտասանել մայրենի լեզվի բոլոր հնչյունները, հարստացնել բառապաշարը և ձևավորել քերականական ճիշտ խոսք:

Գրաճանաչության պարապմունքը երեխային դարձնում է ավելի կազմակերպված, գիտունակ, ուշադիր, բարելավվում է տեսողական և լսողական հիշողությունը, խթանվում է ուսման նկատմամբ ցուցաբերվող ձգտումը:

Ցանկացած տեսակի խաղերի կիրառումը պարապմունքի ընթացքում առավել գրավիչ է դարձնում ուսումնառությունը , նպաստում հեշտ ընկալմանը: Երեխաների խոսքը զարգանում է հատկապես սյուժետային խաղի ընթացքում: Դիտելով երեխաների դերային խաղը, պարզեցի, որ այն դարձավ պարապմուքնի ընթացքում ձեռք բերված գիտելիքների ամրապնդման յուրահատուկ ձև, իսկ յուրաքանչուր տառի պատկերի ուրվագծումն ու նրբագծումը օգնում է ավելի լավ հիշել սովորած տառը, զարգացնում է մանր մոտորիկան, երեխաներին դարձնում է նստունակ, նախապատրաստում դպրոցում կոկիկ, մաքուր և ճիշտ գրելուն և աշխատելուն, բավարարվում են երեխաների կարդալ, գրելու նկատմամբ ունեցած ձգտումը:

Կյանքի նոր կերպին պատրաստ լինել՝ նշանակում է երեխաների, հասակակիցների, մեծահասակների միջև դրսևորել դրական փոխհարաբերություններ, անձնային դրական հատկանիշներ՝ ազնվություն, նախաձեռնություն, լավատեսություն:

Երեխան պետք է կարողանա խոսել, մտածել, արտահայտել իր մտքերն ու զգացմունքները, ունենա որոշակի բառապաշար, կարողանա կատարել տարրական տրամաբանական մտահանգումներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գևորգյան Ռ., «Ճիշտ արտասանության ուսուցումը ն/դ հասակի երեխաների մոտ», Երևան 1971, էջ 26 էջ
2. Միտոյան Հ., «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», Երևան 2008, 141 էջ
3. Մոնովյան Լ., Սմբատյան Լ., Սարգսյան Լ., «Վաղ գրաճանաչությունը մանկապարտեզի ավագ խմբում», Երևան 2008, 79 էջ
4. Չիբուխչյան Ս., Սարգսյան Լ., «Մայրենի լեզվի պարապմունքները մանկապարտեզի ավագ խմբում», Երևան 2011, 239 էջ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Էկոլոգիական կրթության հիմունքները նախադպրոցական տարիքում

ԿԱՏԱՐՈՂ՝ Ռուզաննա Օհանյան

ՂԵԿԱՎԱՐ՝մ.գ.թ. Լ. Միրաբյան

Բովանդակություն

Ներածություն 3
Գլուխ առաջին 5
Էկոլոգիական դաստիարակության հիմնախնդիրները նախադպրոցական դաստիարակության տարիքում 5
1.1 Նախադպրոցական դաստիարակչական հաստատությունների դերը էկոլոգիական կրթության համատեքստում 6
Գլուխ Երկրորդ 8
Էկոլոգիական դաստիարակություն 8
2.1 *Փորձարարական մաս* 10
Եզրակացություն 14
Գրականություն 16

Ներածություն

Արդի ժամանակահատվածում հասարակական կյանքում տեղի ունեցող փոփոխությունների և դրանց առաջընթացի հետ կապված կատարելագործվում են նախադպրոցականի դաստիարակության խնդիրները: Դրանք վերաբերում են առողջ ապրելակերպին, արժեքային համակարգի, իմացական կարողությունների ձևավորմանը, բարոյական աշխատանքային, տնտեսական, բնապահպանական դաստիարակությանը:

Էկոլոգիական կրթության հիմքերը դրվում են նախադպրոցական տարիքում՝ հատուկ կազմակերպված բնապահպանական դաստիարակչական աշխատանքների միջոցով: Էկոլոգիական կրթությունը նպաստում է երեխայի էկոլոգիական գիտակցության և մտածելակերպի ձևավորմանը, էկոլոգիական վարքագծին: Նպատակը երեխայի՝ բնության հետ ներդաշնակ կենսահաստատումն է վաղ տարիքից՝ նրա մեջ ձևավորել պատասխանատվություն բնության հանդեպ: Էկոդաստիարակության միջոցով հարկավոր է երեխայի մեջ արմատավորել մարդու և բնության փոփոխությունների գիտակցումը: Երեխան պետք է հասկանա, որ մարդը ինչպես բնության օգտագործողն է, այնպես էլ դրա պահպանողն է:

Հետազոտության նպատակը.

Ուսումնասիրել հիշյալ թեմայով գոյություն ունեցող գիտական, մեթոդական, գիտամեթոդական գրականությունը, այլոց փորձը և կատարել եզրահանգումներ:

Սույն հետազոտության խնդիրներն են՝

ա) նկարագրել էկոլոգիական դաստիարակության հիմնախնդիրներն արդի փուլում,

բ) բացահայտել նախադպրոցական տարիքի երեխաներին ներկայացվող պահանջները էկոլոգիական դաստիարակության համատեքստում,

գ) իրականացնել բաց պարապմունքներ, որոնք միտված են նախադպրոցական տարիքի երեխաների էկոլոգիական դաստիարակությանը

դ) վերլուծել փորձարարական աշխատանքի արդյունքները:

Հետազոտության կառուցվածքը.

Աշխատանքը կազմված է 2 գլխից և ենթագլուխներից, փորձարարական մասից, եզրակացություններից և գրականության ցանկից։

Ծավալը՝ 16 տպագիր էջ։

Գլուխ առաջին

Էկոլոգիական դաստիարակության հիմնախնդիրները նախադպրոցական դաստիարակության տարիքում

Երկար տարիներ շարունակ մարդկությունը բնությունից շռայլորեն վերցնում է նրա ամբողջ հարստությունը, կարծելով, թե ինքը բնության միակ տերն է: Այսպիսին է մարդակենտրոնության բարձրագույն դատողությունը: Այս շղթայում մարդն իրեն համարում է գործող գլխավոր անձ, որը կարող է շրջապատը փոխել, այնպես, ինչպես իրեն դուր է գալիս: Անհրաժեշտ է ձևավորել աճող սերնդի էկոլոգիական նոր գիտակցություն: [4, էջ 25]

Անկախ նրանից, թե ապագայում ի՞նչ մասնագիտություն կունենա երեխան, նա պարտավոր է հասկանալ իր դերը շրջապատող աշխարհում: Նախադպրոցական հաստատությունների գերխնդիրը մարդասեր, սոցիալապես ակտիվ, ստեղծագործող անհատի ձևավորումն է, ընդունակ սիրելու, հասկանալու շրջապատող աշխարհը, բնության առանձնահատկությունները, խնամքով վերաբերելու բնությանը, կանխատեսելու իր արարքների հնարավոր հետևանքները: [4, էջ 27]

Նոր ձևով մտածել նշանակում է բնությանն անհրաժեշտ է պահպանել ոչ միայն այն պատճառով, որ մեր հարստությունն է, այլ նրա համար, որ իրենից արժեք է ներկայացնում: Պետք չէ, մոռանալ, որ բնությունը կարող է գոյություն ունենալ առանց մարդու՝ մի ժամանակ այդպես էլ եղել է, բայց առանց բնության մարդը գոյություն ունենալ չի կարող: [4, էջ 28]

Նախադպրոցականի էկոլոգիական դաստիարակությունը սկսվում է մանկապարտեզ գալու առաջին իսկ պահից: Նախակրթարանում ստեղծում ենք այնպիսի միջավայր, որ նպաստի.

- ✓ Երեխայի ճանաչողական ունակությունների զարգացմանը՝ այսինքն պայմաններ ստեղծել նոր ճանաչողական գործունեության, փորձարկումների, բնական նյութերով կենդանի և անկենդան բնության մեջ անընդմեջ դիտումների, հետաքրքրող հարցերի պատասխանների որոնման, նոր հարցադրումների կառուցման համար:
- ✓ Երեխաների գեղագիտական ունակությունների զարգացմանը:

- ✓ Այստեղ հարկավոր է երեխայի ուշադրությունը բևեռել շրջապատող բնության օբյեկտների, բնության գեղեցկությունը, բազմատեսակ գույներին ու ձևերը տեսնելու կարողության զարգացմանը։
- ✓ Երեխաների առողջության պահպանմանը.

Օգտվել էկոլոգիապես անվտանգ նյութերից, խաղալիքների օգտագործում, խմբասենյակների, դահլիճի և միջանցքի ձևավորում, շենքի շրջապատի էկոպայմանների գնահատում, տարածքի գրագետ կանաչապատում, թարմ օդում պարապմունքների, էքսկուրսիաների համար պայմանների ստեղծում։

- ✓ Երեխաների գործունեության տարբեր ձևերում բնական նյութերի օգտագործմանը.

Պայմաններ ստեղծել ինքնուրույն խաղերի համար։

Բնական նյութերն օգտագործել պարապմունքներում կերպարվեստային գործունեության ժամանակ։

Նախադպրոցական հաստատություններում զարգացող բնական միջավայրի էկոլոգիան պետք է համապատասխանի նրա բովանդակության իրականացման բոլոր բաղադրիչներին։ [3, էջ 40]

1.1 Նախադպրոցական դաստիարակչական հաստատությունների դերը էկոլոգիական կրթության համատեքստում

Քանի որ նախադպրոցական հաստատությունները տարբերվում են իրենց նյութական հնարավորություններով, ուստի նրանց նպատակներն ու խնդիրները պետք է բխեն տվյալ մանկավարժական կոլեկտիվի հնարավորություններից։ Ցանկացած զարգացող միջավայր բաղկացած է բազմաբովանդակ աշխատանքային կենտրոններից՝ խաղային գոտիներից, որոնցից յուրաքանչյուը կատարում է որոշակի դեր։ [1, էջ 3]

Էկոլոգիական դաստիարակությունը պահանջում է, որ երեխաները շփվեն կենդանի բնության և ընտանի կենդանիների հետ, իսկ վայրի գազաններ նրանց կարելի է ցույց տալ կենդանաբանական այգիներում և կրկեսում։

- Էկոլոգիական կրթության արդյունավետությունը բարձրացնելու համար լավագույն ճանապարհներից մեկը՝ աշխատանքի բազմատեսակ ձևերի և մեթոդների կիրառումն է։ [1, էջ 4]

Գլուխ Երկրորդ

Էկոլոգիական դաստիարակություն

5-6 տարեկանների էկոլոգիական դաստիարակությունը կառուցվում է կենդանի բնության մեջ: [1, էջ 5]

էկոլոգիական դաստիարակությունը առաջին հերթին ենթադրում է.

- ✓ Իրան զգալ բնության մի մասնիկը:
- ✓ Ձևավորել երեխաների մեջ հուզական, հոգատար վերաբերմունք բնության նկատմամբ:
- ✓ Ձևավորել գեղեցիկը տեսնելու ընդունակություն:
- ✓ Ձևավորել և զարգացնել երեխաների ճանաչողական ընդունակությունները, բնապահպանական տարրական կարողությունները: [1, էջ 7]

Էկոլոգիական դաստիարակության գործընթացի կազմակերպման համար կարևոր է էկոլոգիական կուլտուրայի ձևավորումը, որը դրսևորվում է շրջակա միջավայրի և նրա պահպանման նկատմամբ երեխաների պատասխանատու վերաբերմունքի մեջ, որի հիմքում ընկած է հասարակության մեջ ընդունված բարոյական և իրավական նորմեր:

Այս տարիքի երեխաների էկոլոգիական կրթության դաստիարակության խնդիրներն են՝

- ✓ Շրջապատի նկատմամբ ճիշտ վարվելակերպի մշակում:
- ✓ Բնության նկատմամբ քաղաքացիական վերաբերմունքի էկոլոգիական դաստիարակում:
- ✓ Հասարակության մեջ ընդունելի մարդկային փոխհարաբերությունների հաստատում: [2, էջ 4]

Էկոլոգիական նպատակասլաց գործընթացը կնպաստի էկոլոգիական կուլտուրայի ձևավորմանը, որն իր հերթին կդառնա մարդկային ընդհանուր կուլտուրայի նյութական և հոգևոր արժեքների զարգացման շարժիչ ուժ:

Էկոլոգիական դաստիարակության խնդիրների թվին պետք է դասել՝

- բնաճանաչողական ընդունակությունների, իմացական հետաքրքրությունների ձևավորումը

- բնության երևույթների բուսական ու կենդանական աշխարհի փոխկապակցվածության վերաբերյալ պատկերացումների, հասկացությունների և գիտելիքների ձևավորումը։
- Բնության մեջ ճիշտ վարքի դրսևորման դրդապատճառների, սովորույթների ու հմտությունների ձևավորումը։

Նախադպրոցականները պետք է ձեռք բերեն կենսաէկոլոգիական տարրական գիտելիքներ.

Կենդանի և անկենդան բնության մասին

- Կենդանի մարմինների առանձնահատկությունները, նրանց բազմազանությունը, տարածումը, հարմարվածությունը այդ միջավայրին։
- Բնակության վայրի բազմազանությունը՝ ջրային, օդային, հողային։
- Կենդանիների և բույսերի բնակության վայրը, համակեցությունը, նրանց բազմաձևությունը, բաղադրամասերի ամուր կապը։

Նախադպրոցականները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում նաև անկենդան բնության և նրա կենդանի բնության հետ ունեցած կապերի հանդեպ։

Երեխաները պետք է ծանոթանան էկոլոգիական անվտանգությանը։ Նրանք պետք է իմանան, որ ճանապարհի մոտ խաղալիս կարող է ոչ միայն ավտոմեքենայի կողմից վրաերթի ենթարկվել, այլ այդ մեքենայի արձակած գազը շնչել, կամ աղբանոցի մոտ զբոսնելը նույնպես վտանգավոր լինի առողջության համար։ [1, էջ 28]

Երեխաները պետք է իմանան էկոլոգիային վերաբերող հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս դրսևորել իրեն բնության մեջ.
- Ինչպես ծանոթանալ բնության պաշարներին։
- Ինչու՞ են մեր պահպանության կարիքը զգում կենդանի էակները.
- Ինչու՞ է ստեղծված Կարմիր գիրքը

Մեծահասակների հետ մասնակցեն բնապահպանական միջոցառումներին՝ ծառատունկ, շաբաթօրյակ և այլն։

Նախադպրոցական հաստատություններում օգտագործում ենք աշխատանքի բազմաթիվ ձևեր և մեթոդներ՝ պարապմունքներ, էքսկուրսիաներ, խմբակներ, էկոլոգիական ակցիաներ, կանաչ պարեկ, փոքրիկ էկոլոգ, մտավարժանքներ, խաղեր, բեմականացումներ։ [1, էջ 9]

Ներկայացնեմ օրինակ՝ «Կանաչ պարեկ»։

Ավագ նախադպրոցականների հետ աշխատելիս ստեղծել ենք կանաչ պարեկը խումբը։ Նրանք շրջում են մանկապարտեզի տարածքում, նշում այն առարկաներն ու օբյեկտները, որոնք պաշտպանության կարիք են զգում։ Միջոցներ ենք ձեռնարկում հետագա օգնության համար։ Օգտվում ենք համատեղ կազմված քարտեզից։ Պարեկը երեխաներին ծանոթացնում է վարքի օրենքներին՝ օրինակ գետնի ծածկույթը չտրորել, հողը չկարծացնելու համար։ Պարեկը որոշում է, թե կ՞ան արդյոք մոտակա տեղամասերում հազվագյուտ և արժեքավոր բույսեր։ Պաշտպանում է ոչ միայն բույսերը, այլ նաև բոլոր մրջյուններին, բզեզներին, թռչուններին։ [1, էջ 10]

Նախադպրոցական համակարգում լայնորեն օգտագործվում են «Ճանապարհորդական» խաղեր։ Այս խաղերում երեխաները տեխնիկական միջոցների օգնությամբ ընկնում են հյուսիսային բևեռ, օվկիանոսի հատակը, անապատներ, բարձրանում երկնային մարմինների մոտ և այլն։ [1, էջ 11]

2.1 Փորձարարական մաս

Ունեցել ենք՝ զրույց-պարապմունք «Արեգակը և մոլորակը թեմայով»։

Նախադպրոցական կրթության և դաստիարակության համալիր ծրագրի համակարգում իր առանձնահատուկ տեղն ունի բնապահպանական դաստիարակությունը։ Դրա խնդիրներից են ոչ միայն ուսուցողական-ճանաչողական գործընթացի իրականացումը, այլ այդ հիմքերի վրա երեխաների մեջ աստիճանաբար բնապահպանական գիտակցության, շրջակա միջավայրի, բնության նկատմամբ մարդասիրական վերաբերմունքի, բարոյագեղագիտական ընկալման և բնությանը հաղորդակցվելու ունակությունների և մշակույթի ձևավորմանը։ Համալիր ծրագրի պահանջներին համապատասխան, երեխաների հետ գնացել ենք զբոսանքի, միասին դիտել ենք երկինքը օրվա տարբեր պահերի՝ առավոտ, կեսօր, երեկո, գիշեր։ Պարապմունքներից դուրս զբոսանքի ժամանակ երեխաները սեփական փորձով ծանոթացել են լույսի հատկություններին, երկրի ձգողականությանը, ցերեկվա և գիշերվա հերթագայությանը։

Պարապմունքի նպատակը.

Երեխաների մեջ ձևավորել պատկերացումներ Արեգակնային համակարգության մասին, հետաքրքրություն առաջացնել և զարգացնել նրանց երևակայությունը, հղկել քերականական ճիշտ կապակցված խոսքը, բառապաշարը հարստացնել մոլորակ, աստղակերպ, տիեզերք, տիեզերանավ, երկնային մարմիններ բառերով և ակտիվացնել դրանց գործածությունը: Զարգացնել տարածության մեջ կողմնորոշվելու կարողությունը:

Պարապմունքին հարկավոր է ունենալ մեծ գլոբուս, Արեգակնային համակարգության պատկերներ, մոլորակների տեսք ունեցող մակետներ, ձայնարկիչ համապատասխան երաժշտության ձայներիզով: Խմբասենյակի մի անկյունում խոշոր կառուցողականներով պատրաստել տիեզերանավ: Պատին փակցնել Արեգակնային համակարգությունը պատկերող պատկերներ, մոլորակներ, երկնային մարմիններ: Երեխաները տեղավորվում են գորգին և լսում իմ պատմությունը.

-Երեխաներ, այսօր ես ձեզ կպատմեմ Արեգակի և մոլորակների մասին: Արեգակը մի հսկայական հրե գունդ է: Այն փոքր է թվում, որովհետև մենք նրանից շատ հեռու ենք գտնվում: Առանց արագակի ճառագայթների, կյանքը երկրի վրա անհնար կլիներ: Արեգակի շուրջ պտտվում են 9 տարբեր գույնի մոլորակներ, որոնցից մեկն էլ մեր «Երկիր մոլորակն է»: Մեծ մոլորակներ են՝ Յուպիտերը, Սատուրնը, Ուրանը, Նեպտունը: Փոքր մոլորակներ են՝ Մերկուրին, Վեներան, Երկիրը, Մարսը, Պլուտոնը: Եթե այս բոլոր մոլորակները միացնենք իրար, միևնույն է Արեգակը մնալու է ամենամեծը: Բացի այս մոլորակներց, տիեզերքում կան նաև շատ փոքրիկ երկնային մարմիններ, որոնց անվանում են աստղակերպեր: Թվարկված մարմիներն էլ պտտվում են Արեգակի շուրջը, և կազմում Արեգակնային համակարգություն: Որքան տվյալ մոլորակը մոտ է Արեգակին, այնքան ավելի տաք է:

Մեր երկնագույն երկիր մոլորակը գտնվում է ճիշտ այն հեռավորության վրա, որն անբարենպաստ է կյանքի համար: Երկրագունդը պտտվում է իր առանցքի շուրջը: Օրվա ընթացքում Արեգակին ուղղված կողմը լուսավոր է՝ ցերեկ, իսկ հակառակ կողմը խավար է, գիշեր: Այսպես գիշերին հաջորդում է ցերեկը: Արեգակի շուրջ մեկ լրիվ պտույտ կատարվում է տարվա ընթացքում: Տիեզերական ձգողականությունը Տիեզերքում և Արեգակնային համակարգությունում կառավարում է բոլոր մարմինների շարժումը: Արեգակնային համակարգությունը մեր տունն է՝

անծայրածիր տիեզերքում։ Բացատրական մասը տալուց հետո առաջարկում եմ «ճանապարհորդել» տիեզերանավով։ Երեխաները նստում են սենյակի մի անկյունում նախապես կառուցված «տիեզերանավը» և բարձրանում երկինք։ Թռիչքի ժամանակ ցուցադրվում է Արևը, նրա շուրջ պտտվող երկնային մարմինները, ամենամեծ մոլորակները, ամենափոքր մոլորակները և ամենակարևորը՝ ինչո՞վ է մեր Երկիր մոլորակը տարբերվում մյուսներից։

Ահա և Լուսինը։ Եկեք վայրէջք կատարենք Լուսնի վրա։ Երեխաները իջնում են Տիեզերանավից և կանգնում Լուսնի վրա։ Սկսում ենք բնութագրել ի՞նչպիսին է Լուսինը՝ սառն է, Արեգակի ճառագայթները ընկնելով Լուսնի վրա, լուսավորում են այն։ Քանի որ այստեղ անօդ տարածություն է, այդ պատճառով մենք շատ թեթև ենք։ Երեխաները քայլում են թեթև, ոտքերը բարձրացնելով ազատ շարժումներով։ Որոշում ենք խաղալ «Արեգակը և մոլորակները խաղը։ Երեխաներից մեկը կատարում է Արեգակի դերը, մյուսները՝ մոլորակների։ Առաջին ազդանշանով մոլորակները ցրվում են, կատարում ազատ շարժումներ։ Իսկ երբ հրահանգ է տրվում գրավե՛ք, ձեր տեղերը, երեխաները զբաղեցնում են իրենց տեղերը։

-Երեխանե՛ր քանի որ չենք կարող լուսնի վրա երկար մնալ, հարկավոր է վերադառնալ մեր հարազատ «Երկիր» մոլորակ։

Եկեք ամփոփենք՝ ձևավորվեց գաղափար արեգակնային համակարգի մասին։ Արևը՝ աստղ է, հսկայական տաք գունդ, որն ունի բարձր ջերմաստիճան և բոլոր կողմերով ճառագում է լույս և ջերմություն։ Արևը պտտվում է ինքն իր, իսկ մոլորակները նրա շուրջը։ Արեգակին ամենամոտ մոլորակը Մերկուրին է, այնուհետ Վեներան, Երկիրը, Մարսը և մյուս մոլորակները։ Յուրաքանչյուր մոլորակ պտտվում է Արեգակի շուրջը։

Մի ամբողջ աշխարհ կա բացահայտելու։ Ոչ մի մանկավարժ չի կարող երեխային ուղղորդել այնտեղ, որտեղ ինքը չի եղել։ [4, էջ 28]

Ես համամիտ եմ այն մտքին, և ցանկանում եմ այնքան տալ իմ սաներին, որ նրանք առաջին քայլերը կատարեն ձևավորելով համապատասխան կարողություններ և հմտություններ։ «Տիեզերքում մի փոքրիկ երկնագույն մարգարտահարտիկ է Երկիր մոլորակը», այսպիսի նկարագիր էին տվել տիեզերագնացները։ Երկիր մոլորակի վրա այնքան արագ են կատարվում փոփոխությունները, որ մարդկային գիտակցությունը

չի կարողանում տեղավորվել դրանց մեջ։ Սակայան կարելի է երեխաներին այնքան գեղեցիկ մատուցել, որ նրանք ճիշտ ընկալեն աշխարհը, կարողանան տարբերակել լավն ու վատը, չարն ու բարին։

Հնագույն իմաստություն է. «Եթե» ուզում ես բարիք գործել, մեկ տարվա համար ցորեն ցանիր, տասը տարվա համար՝ ծիրանի ծառ տնկիր, դարերի համար մարդ դաստիարակիր»։

Էքսկուրսիաների, դիտումների միջոցով երեխաների մոտ ձևավորվում է կոնկրետ պատկերացումներ բնության երեևույթների նկատմամբ։

Եզրակացություն

Այսպիսով, էկոլոգիական կրթության արդիականությունը կայանում է նրանում, որ այն միտված է օգնել երեխաներին ճանաչել և ամենակարևորը՝ պահպանել բնությունը։ Ճանաչելով բնությունը, ճանաչում են նաև աշխարհը իր գեղեցիկ և գունեղ կողմերով։ Էկոկրթությունը նպատակ է դրել ձևավորել մոլորակի և սեփական երկրի կենսական շահերը պահող քաղաքացի։ Շատ կարևոր է յուրաքանչյուր երեխայի անատամիաֆիզոլոգիական և հիգիենիկ առանձնահատկությունների դերը։ Մարդը պարտավոր է առողջ. լինել սա է բնության հրամայական պահանջը։ Միշտ պիտի հիշել, որ բնությունն անհրաժեշտ է պահպանել ոչ միայն այն պատճառով, որ մեր հարստությունն է, այլ նրա համար, որ իրենից արժեք է ներկայացնում և առանց բնության մարդը գոյություն ունենալ չի կարող։

Էկոլոգիական գիտելիքները ինքնանպատակ չեն, նրանք նպաստում են երեխայի մեջ արժեքների որոշակի համակարգի, մարդու՝ որպես մի մասնիկի պատկերացման ձևավորմանը, իր կյանքին, բնության վիճակից իր առողջության կախվածության ընկալմանը։

Շատ կարևոր է նախադպրոցական տարիքից երեխաների մոտ դաստիարակել խելամիտ բնօգտագործման անհրաժեշտության իմացությունը։

Մտածելով ապագայի մասին պարապմունքները կոչված են ապահովելու երեխաների գիտելիքները բուսական և կենդանական աշխարհի բազմազանության, մարդու և բնության փոխհարաբերությունների, բնական պաշարների օգտագործման եղանակների մասին։ Երեխան գիտակցաբար պետք է ցանկություն ունենա պահպանելու բնությունը։

Կարևորելով էկոլոգիական խնդիրների հրատապությունը ոչ միայն մեր հանրապետությունում այլ, նաև աշխարհում՝ ընդգծվում է մանկուց էկոլոգիական կուլտուրայի դաստիարակության անհրաժեշտությունը։

Էկոլոգիական կրթությունը նախատեսում է՝

- ✓ բնության նկատմամբ հատուկ մարդասիրական վերաբերմունքի դաստիարակում,

- ✓ էկոլոգիական տարրական պատկերացումների համակարգի ձևավորում,
- ✓ գեղագիտական զգացումների ձևավորում՝ տեսնել բնության գեղեցկությունը, հմայվել նրանով։

Բնության նկատմամբ ակտիվ վերաբերմունքի դրսևորում և գործնական հոգատարություն բնության նկատմամբ։

Գրականություն

1. Ա. Հովհաննիսյան, Ա. Ամիրխանյան «Փոքրիկ բնասեր», Երևան 2005։
2. Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում՝ մեթոդական ուղեցույց, Երևան 2007։
3. Մանկապարտեզի ավագ խմբի (5-6 տարեկանների) կրթական համալիր ծրագիր, Երևան 2008։
4. «Նախաշավիղ», Երևան 2007։

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ և ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Նախադպրոցական տարիքի երեխաների մտավոր դաստիարակության բովանդակությունը, խնդիրները և մեթոդները

Դաստիարակ՝ Սաթենիկ Մանուկյան

Ղեկավար՝ Գագիկ Էմինյան

ՎԱՆԱՁՈՐ-2022թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն…….3
2. Գլուխ 1. Մտավոր զարգացում և մտավոր դաստիրակություն……
3. Գլուխ 1.1 Մտավոր դաստիրակության տեսական հիմունքները……
4. Գլուխ 2. դաստիրակության նպատակը և խնդիրները……
5. Հետազոտական աշխատանք……..
6. Եզրակացություն……
7. Գրականության ցանկ……..

17 էջ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը:

Մեր հասարակության մեջ կան այնպիսի մարդիկ, ովքեր աչքի են ընկնում իրենց մտածողության, մտքի ճկունության և գիտելիքների հարուստ պաշարով: Այս ամենը գալիս է մանկուց նախադպրոցական տարիքից ճիշտ մանկավարժական դաստիարակման շնորհիվ: Կան դաստիարակներ, ովքեր նպաստում են հեշտ ըմբռնել տարբեր երեվույթներ , զարգացնել տրամաբանական մտածողությունը, ունենալ լավ հիշողութոն , արագ մտածելու ունակություն և այլն: Այստեղից էլ կարելի է ասել , որ մտավոր դաստիրակությունը՝ դաստիարակողի և դաստիարակվողների նպատակասլաց գործունեությունն է՝ սովորողների միտքը ուժեղացնելու համար:

Մտավոր դաստիարակության համակարգում առաջնային են համարվում գիտելիքների կիրառման, մտավոր գործունեության և ճանաչողական ակտիվության ընդունակությունները: Այս բոլոր ընդունակությունները ենթակա են ձևավորման նախադպրոցական տարիքից: Այսօր չափազանց կարևոր է երեխաներին սովորեցնել մտածել, օգնել ինքնուրույն որոնել և որոշումներ կայացնել, քանի որ նախադպրոցական մանկությունը մտավոր զարգացման և դաստիարակության ամենանպաստավոր շրջանն է: Այս տարիքում պետք է ուշադրություն դարձնել երեխանների քերականական ճիշտ խոսքի ձևավորմանը , որ կարողանան իրենց միտքը արտահայտել քերականորեն ճիշտ նախադասություններով: Հոգեբանները կատարել են որոշակի հետազոտություններ և ցույց են տվել թե որքան կարևոր դեր ունի փոքրուց գիտելիքների յուրացման գործում քերականական ճիշտ խոսքտ:

Մտավոր դաստիրակության գործում կարևոր նշանակություն ունի նաև երեխանների հոգեկան, կամային պատրաստակամությունը: Մանկապարտեզում երեխաններին պետք է սովորեցնել կենտրոնացնել ուշադրությունը լսելու և կատարելու ընդունակությունը: Կարևոր է նաև երեխայի հուզական , բարոյական, ֆիզիկական նախապատրաստվածությունը: Նախադպրո-

ցական տարիքում ներգործելով գիտակցության վրա, ներգործում ենք նաև զգացմունքների վրա։ Հուզական նախապատրաստվածության մեջ մտնում է ճիշտ վերաբերմունքի ձևավորումը, հետաքրքրասիրության , հարցասիրության զարգացմանը։ Այս ձևերը երեխայի իմացական վերաբերմունքի արտահայտման տարբեր եղանակներ են, որոնք առանձնանում են զարգացման աստիճանով և դրսևորումների գիտակցվածության չափով։

Երեխայի զարգացումն ու ուսումնառությունը պետք է իրականացվի տարիքին համապատասխան գործունեությամբ և մանկավարժական միջոցներով և պետք է լինի հանգիստ։ Նախադպրոցական տարիքի երեխաների համար նման կրթական գործիքներից մեկը խաղն է։ Երեխայի խաղային գործնեությունը հնարավորություն է տալիս բավարարելու նրա ակտիվությունն այն բնագավառներում , որտեղ անհնար է իրական գործողությունները։ Խաղային գործնեության միջոցով է զարգանում երեխայի մտավոր կարողություններն և ու նակությունները։

Հետազոտության նպատակն է.Ուսումնասիրել նախադպրոցական երեխաների մտավոր զարգացման արդյունավետ մանկավարժական պայմանները նախադպրոցական ուսումնական հաստատություններում։

Հետազոտության խնդիրները.

1.Բացահայտել նախադպրոցական տարիքի երեխաների մտավոր դաստիարակության վրա ազդող գործոնները։

2.Ելնելով նախադպրոցական տաիրքի առանձնահատկություններից՝ կոնկրետացնել և մշակել գիտելիքների բովանդակությունը , որը նպատակահարմար է կիրառել մանկապարտեզում ։

3.բացահայտել նախադպրոցական երեխաների մտավոր հիշողությունը, պատկերացումները, ուշադրությունը։

Գլուխ 1. Մտավոր զարգացում և մտավոր դաստիրակություն

Նախադպրոցական տարիքը մտավոր զարգացման ամենասենզիտիվ շրջանն է, այն ընթանում է առավել արագ և ինտենսիվ։ Երեխայի մտավոր զարգացման

աննախադեպ հնարավորությունները պայմանավորված են հետևյալ կենսաբանական գործոններով։

- գլխուղեղի կառուցվածքով։
- զգայարան - վերլուծիչների կառուցվածքով և գործունեությամբ։
- նյարդային գործունեության առանձնահատկություններով։
- Պայմանա - ռեֆլեկտոր բարդ կապերով։
- նախադրյալների ժառանգական ծրագրով (գենոֆոնդով)։

Մտավոր գործողությունների այն համակարգը, որը ծառայում է նախատեսված կոնկրետ խնդրի լուծմանը կոչվում է ինտելեկտուալ գործունեություն: Ինտելեկտուալ գործունեությունը ձևավորվում է որևէ խնդրի լուծմանն ուղղված մտածական գործողությունների նպատակային կիրառման արդյունքում:

Ինտելեկտուալ գործունեությունն ավելի բարդ գործունեություն է, քան մտավորը: Այսպիսով, ինտելեկտը մտքի հավաքական հատկություն է, որը հնարավորություն է տալիս ռացիոնալ մտածելու նպատակաուղղված գործողություններով լուծելու ծագած տարաբնույթ խնդիրները, կարելի է եզրակացնել, որ ինտելեկտը միջավայրին հարմարվելու մտավոր ընդունակություն է:

Ինտելեկտի զարգացման հիմքում ընկած է մտավոր զարգացման աստիճանը: Ինտելեկտը մտավոր զարգացման արդյունք է: Մտածող, ինտելեկտուալ երեխայի առաջին չափանիշը խնդրի առանձնացումն ու ձևակերպումն է: ռանձնացումն ու ձևակերպումն է:

Մտավոր զարգացումը՝ մտածական գործընթացներում տեղի ունեցող քանակական և որակական փոփոխությունների գործընթաց է՝ պայմանավորված երեխայի անհատական զարգացմամբ, միջավայրի ներգործությամբ, հատուկ կազմակերպված մանկավարժական աշխատանքով և սեփական փորձով: Մտավոր զարգացման ընթացքն ուղեկցվում է մտացողության զարգացմամբ: Երեխայի մտածողության զարգացման ընթացքում զարգանում է նրա իմացական ակտիվությունը, որը հանդես է գալիս իբրև աշխարհճանաչման կարևորագույն գործոն:

Մտածողությունը նախադպրոցական տարիքում զարգանում է

աստիճանաբար: Վաղ տարիքին բնորոշ է առարկայական մտածողություն, այն կոչվում է ակնառու գործնական: Գործնական մտածողությանը փոխարինելու է գալիս ակնառու պատկերային մտածողությունը, որը նպաստում է երեխայի զգայական և երևակայական փորձի ամփոփմանը, զգայական աշխարհընկալմանը: Ավագ նախադպրոցական տարիքում ձևավորվում է խոսքով հիմնավորված տրամաբանական վերացարկման կարողությունը, որը նպաստում է տրամաբանական աշխարհճանաչմանը, հետևաբար և տրամաբանական մտածողությանը:

Նախադպրոցական տարիքի երեխաների մտավոր դաստիարակության համակարգում բացառիկ կարևորություն է տրվում երեխայի մտածողության և ինտելեկտի զարգացմանը, իմացական հետաքրքրությունների և ակտիվության դրսևորմանը:

Մտածողության զարգացման ընթացքը նախադպրոցական տարիքում պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից առանձնահատուկ կարևորվում է հատուկ կազմակերպվող և մտավոր զարգացումն ուղղորդող մտավոր դաստիարակությունն ու ուսուցումը:

Այսպիսով, մտավոր դաստիարակությունը նպատակաուղղված մանկավարժական գործընթաց է, որի նպատակը երեխայի լիարժեք մտավոր զարգացումն է: Մտավոր դաստիարակության գործընթացը մեծահասակների շարունակական ներգործություն է, մանկավարժական գործունեություն, միևնույն ժամանակ փոխներգործություն: Երեխայի մտավոր զարգացումը պայմանավորված է դաստիարակության գործընթացով :

Գլուխ 1.1 Մտավոր դաստիրակության տեսական հիմունքները

Մտավոր դաստիարակության տեսական դրույթներն առաջարկել է խորհրդային հոգեբանության դպրոցի հիմնադիր, աշխարհահռչակ գիտնական Լ.Ս.Վիգոտսկին:

Դրանք մշակվել են երեխայի մտածողության և ինտելեկտի բնույթը բազմաթիվ ուսումնասիրությունների և երկարատև քննարկումների եղանակով պարզելու արդյունքում: Ինտելեկտի զարգացման տեսության մեջ բացահայտվում է

նախադպրոցականի մտածողության եսակենտրոն բնույթը, ինչը էական է երեխայի զարգացման ընթացքում: Հայտնի է, որ երեխայի մտածողությանը բնորոշ են սեփական կարծիքով առաջնորդվելու, սեփական դիրքորոշումից դժվարությամբ հրաժարվելու, դիմացինի կարծիքն անտեսելու միտումը: Հոգեբանության մեջ բոլոր հոգեբանները նույն համոզմունքին են, որ երեխան ընդունակ է միայն դատողությունների, որոնք չափազանց կոնկրետ են՝ հիմնված հիշողության վրա և վերաբերում են ծանոթ երևույթներին և յուրացվում են ընդամենը համեմատության և նույնացման եղանակով:

Երեխան նախադպրոցական տարիքում մտածում է «կեղծ» հասկացություններով և բոլորովին ընդունակ չէ տրամաբանական մտածողության: Երեխայի եսակենտրոն մտածողությունը արգելակում է սեփական կարծիքը սակարկելու, կասկածի ենթարկելու առողջ միտումը, ինչը նրան դարձնում է երեխային որոշ չափով անտարբեր գոյություն ունեցող հակասությունների, պրոբլեմային իրավիճակների հանդեպ և դրդում մտածական գործողությունների շարունակ կրկնության: Ընդ որում, երեխայի ինտելեկտի զարգացման նշված դրսևորումները Ժ.Պիաժեն պայմանավորում է տարիքային առանձնահատկություններով: Չժխտելով երեխայի կողմից արտաքին աշխարհի բազմազանության ընկալման ներքին ցանկությունը, նա այնուամենայնիվ գտնում է, որ նախադպրոցահասակ երեխան հոգեբանորեն պատրաստ չէ տրամաբանական աշխարհընկալման:

Եսակենտրոն մտածողության հաղթահարմանը նպաստում է երեխայի իմացական փորձի հարստացումը, աշխարհճանաչման փորձի ինքնուրույն ձեռքբերումը, մտավոր գործունեության ծավալումը: Նախադպրոցականի մտածողության զարգացման միջոցը իմացական գործունեությունն է: Հետևաբար, իմացական գործունեության զարգացմանը պետք է ուղղված լինի նախադպրոցականի մտավոր դաստիարակության գործընթացը:

Երեխայի մտավոր զարգացումն ընթանում է պարբերաբար անցնելով զարգացման երկու աստիճան՝ առկա (ակտուալ) < հնարավոր (պոտենցիալ): Մտավոր զարգացման առկա աստիճանը կամ մակարդակը բնութագրում է երեխայի արդեն ձևավորված իմացական կարողությունները, որոնք հնարավորություն են տալիս

նրան գործելու առանց մեծահասակի օգնության: Ատավոր զարգացման հնարավոր աստիճանը նախանշում է երեխայի այն ինտելեկտուալ կարողությունները, որոնք ենթակա են ձևավորման մեծահասակների ակտիվ մասնակցությամբ:

Դրանք այն գործողություններն են, որոնք երեխայի կողմից կատարվում են մեծահասակների օգնությամբ և ուղղորդմամբ:

Այսպիսով, նախադպրոցականի մտավոր դաստիարակության կազմակերպման գործընթացում տեսական հիմք են հանդիսանում հետևյալ հոգեբանական դրույթները.

- նախադպրոցականի մտավոր զարգացումը իմացական փորձի յուրացման, իմացական ակտիվության ձևավորման գործընթաց է.
- նախադպրոցականի մտավոր զարգացումն ընթանում է զարգացման երկու մակարդակների հերթափոխությամբ.
- նախադպրոցականի մտավոր զարգացմանը առավելագույնս նպաստում է խաղային գործունեությունը և ուսուցման գրագետ կազմակերպումը:

ԳԼՈՒԽ 2. ԴԱՍՏԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ և ԽՆԴԻՐՆԵՐԸ

<u>Մտավոր դաստիրակության նպատակը</u> Մտավոր դաստիրակությունը նպատակաուղղված գործնեություն է երեխայի մտավոր կարողությունների և հմտությունների զարգացմանը: Նախադպրոցական մանկավարժության առաջացումը կապված է XVIIդ. Չեխ մանկավարժ և փիլիսոփա Յա. Ա. Կոմենսկու անվան հետ: Իր գիտական աշխատություններում՝ «Համընդհանուր խորհուրդ», «Մեծն դիդակտիկա», «Մայրական դպրոց», նա արտացոլել է երեխաների դաստիարակության և ուսուցման նպատակներն ու խնդիրները, ձևերն ու մեթոդները: Դաստիարակության նպատակ նա համարում էր՝ արտաքին աշխարհի ճանաչումը, առարկաներին և սեփական անձին տիրապետելու ունակության, բարոյական որակների զարգացումը:Կարելի է ասել, թե մտավոր դաստիարակությունն ուղղված է մարդկության բազմադարյա փորձի յուրացմանը աճող սերնդի կողմից:

Մարդկային փորձը ներկայացված է նյութական, մշակութային և հոգևոր արժեքներով, գիտելիքներով և հմտություններով, աշխարհճանաչման եղանակներով:

Մտավոր դաստիարակության հիմնական գործառույթը իմացական գործունեության ձևավորումն է:

Նախադպրոցական տարիքում երեխան ճանաչում է արտաքին աշխարհը, յուրացնում է կուտակված փորձը մեծահասակների օգնությամբ: Մեծահասակների ակտիվ մասնակցությունը նպաստում է երեխայի հոգեկան իմացական գործընթացների զարգացմանը, պայմաններ ստեղծում իմացության գործընթացում ինքնուրույնության դրսևորման համար, իսկ նպատակը՝ իմացական ակտիվության համար պայմանների ապահովումը:

Իմացական գործունեությունը նախադպրոցական տարիքում պայմանավորված է ընկալման մտածողության հոգեկան գործընթացներով:

Ընկալման միջոցով յուրացվում են առարկայական աշխարհի արտաքին հատկությունները և գոյանում են առարկաների ամբողջական պատկերը:

Մտածողությունը նպաստում է առարկաների և երևույթների ներքին, անտեսանելի կապերի բացահայտմանը: Մտածողության արդյունքները արտացոլվում են խոսքի միջոցով: Եթե ընկալման ունակությունները սկսում են դրսևորվել կյանքի առաջին ամիսներից, ապա մտածողությունը՝ շատ ավելի ուշ:

Նշված հոգեկան գործընթացները փոխկապված են: Այսպես, մտածողության գործընթացն հնարավոր է միայն ընկալման՝ զգայական փորձի հիման վրա, որը նրան անընդհատ վերամշակման ենթակա «նյութ» է մատուցում, դրդում մտածական գործողությունների: Մտածողությունն իր հերթին նպատակաուղղում է ընկալման գործընթացը, դարձնում այն առավել արդյունավետ: Նշված հոգեկան գործընթացների փոխներգործության արդյունքում հնարավոր է դառնում աշխարհճանաչման երկու՝ զգայական և տրամաբանական ձևերի հերթափոխումը և համագործակցությունը:

<u>Մտավոր դաստիրակության խնդիրները.</u> Մտավոր դաստիարակության խնդիրները բխում են նախադպրոցականի աշխարհճանաչման նշված առանձնահատկություններից և ուղղված են իմացական ակտիվության ձևավորմանը: Մտավոր դաստիարակության կարևորագույն խնդիրներն են.

- ընկալման զարգացումը, որն իրականացվում է զգայական դաստիարակության միջոցով:

- մտածողության զարգացումը, որն իրենից ներկայացնում է մտածական գործողությունների և գործառնությունների զարգացմամբ պայմանավորված մտավոր գործունեության ձևավորման գործընթաց:

Մտավոր դաստիարակության մյուս խնդիրները լրացնում և իմաստավորում են նշված հիմնական խնդիրները: Դրանք են.

.հոգեկան իմացական գործընթացների, հատկապես խոսքի, զարգացումը:

- հետաքրքրասիրության և ճանաչողական հետաքրքրությունների զարգացումը:
- տարրական գիտելիքների համակարգի ձևավորումը:

Մտավոր դաստիարակության առաջնահերթ խնդիրը ընկալման զարգացումն է, քանի որ այդ հոգեկան գործընթացով է պայմանավորված երեխայի հուզական աշխարհճանաչումը:

Մտավոր զարգացման գործընթացը սկսվում է զգայական զարգացումից, որն ուղղված է զգայությունների, ըմբռնումների և ընկալման զարգացմանը: Մտավոր դաստիարակության հիմքում ընկած է երեխայի զգայական դաստիարակությունը: Նախադպրոցական տարիքը չափազանց բարենպաստ է տրամաբանական մտածողության զարգացման համար, պայմանով, որ այս գործընթացը կառուցված է այս տարիքում երեխային բնորոշ տեսողական-փոխաբերական մտածողության հնարավորությունների օգտագործման վրա:

Տրամաբանական բովանդակության խաղերն օգնում են երեխաների ճանաչողական հետաքրքրությունը դաստիարակել, նպաստել հետազոտությանն ու ստեղծագործական որոնմանը, սովորելու ցանկությունն ու կարողությունը: Դիդակտիկ խաղերը որպես երեխաների ամենաբնական գործունեությունից մեկը և նպաստում են ինտելեկտուալ և ստեղծագործական դրսևորումների ձևավորմանն ու զարգացմանը, ինքնադրսևորմանը և անկախությանը: Դիդակտիկ խաղերի միջոցով երեխաների մոտ տրամաբանական մտածողության զարգացումը կարևոր է հետագա դպրոցական կրթության հաջողության, աշակերտի անհատականության ճիշտ ձևավորման և հետագա կրթության համար դրանք կօգնեն հաջողությամբ յուրացնել մաթեմատիկայի և համակարգչային գիտության հիմունքները:

Մտավոր դաստիարակության ընթացքում մեծ նշանակություն ունի երեխաների հարցերին պատասխանելու արվեստը։ Երեխան ի ծնե հարցասեր է <<ինչուիկ>> Փորձում է իմանալ իրեն հետաքրքրող հարցերի պատասխանները և այդ պատասխաններից ձևավորվում է մտավոր կարողությունները։

ՀՈՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Փորձենք հասկանալ թե ի՞նչպես է ձեվավորվում մտավոր դաստիրակությունը մանկապարտեզում։ Չ՞ե, որ նախադպրոցական տաիրքից է զարգանում մարդու մտավոր-գիտակցական գաղափարները։ Մանկապարտեզում սովորեցնում ենք երեխային՝ տիրապետել շրջապատի մասին իրենց համար մատչելի որոշակի գիտելիքներ։ Քերականորեն ճիշտ, մաքուր կապակցված խոսք, որոշ չափով պլանավորել իր գործունեությունը, լինի հայրենասեր , հետաքրքրասեր և գիտելիքներ ստանալու ձգտում դրսևորի։

Ենթադրվում է , որ մանկապարտեզի յուրաքանչյուր սան պետք է ստանա կրթական չափորոշիչներին համապատասխան գիտելիքներ, հմտություններ և կարողություններ։ Երեխան իր տարիքին համապատասխան, ընդունակ է պատճառահետևանքային կապեր տեսնել երևույթների, իրադարձությունների միջև ճանաչել առարկաների և օբյեկտների կապերը, ճանաչել իրեն շրջապատող միջավայրը։Այս ամնեը երեխաներին մոտ ձևավորվում է խաղերի եվ պարպմունքների միջոցով ։ Նախադպրոցական տարիքի երեխաների մոտ ձևավորվում է մտածողություն և տրամաբանություն։ Երեխան համեմատում, հետազոտում է առարկաները՝ նկարագրում է առարկան՝ անվանելով առավել բնորոշ հատկանիշներով։ Զարգացնելով նախադպրոցական տարիքի երեխայի տրամաբանությունն և մտածողությունը օգտագործում ենք այնպիսի խաղային մեթոդներ, որոնք կհամապատասխանեն ժամանակակից երեխաների հնարավորություններին, կհետաքրքրեն նրանց, կօգնեն բացահայտելու նրանց անհատական առանձնահատկությունները , շրջապատի հետ հաղորդակցման հմտությունները ։ Խաղի միջոցով ընդլայնվում է երեխաների ընդհանուր հետաքրքրությունները , նպատակին հասնելու միասնական ջանքերը։ Այն

նպաստում է հուզական ապրումների, իրականության ոլորտների, զգացմունքային, կերպարանային յուրացմանը:

Երեխան հավատում է խաղի ընթացքին և իրական համարում դրա բովանդակությունը: Երեխան խաղի մեջ շատ անմիջական ու անկեղծ է, ապրում է իր ստեղծած կերպարի գործողություններով ու հույզերով:

Խաղերի հիմքում ընկած են հետևյալ նպատակները՝ հետապնդող առաջադրանքները.

- ուշադրության և դիտողականության զարգացում
- ստեղծագործական երևակայության զարգացում
- մտածողությունը զարգացնող, վերլուծական ,կառուցողական , ունակություններն ամրապնդող, տրամաբանական, կատակ խնդիրներ, հանելուկներ

Տրամաբանությունը մտքի քերականություն է և ուսումնասիրում է մտածողության ձևերը, կառուցվածքը, մտքերի կապակցման օրենքները , եղանակներն ու կանոնները:Տրամաբանությունն ունի ինչպես ընդհանուր ճանաչողական, այնպես էլ նեղ մասնագիտական նշանակություն : Տրամաբանությամբ որոշվում է երեխայի կարողությունը , դատողություն անելը, ճիշտ մտածելը եղած փաստերից ճիշտ եզրակացություն անելը:

Խաղ 1. «Գտիր ավելորդը»

Ձեզ եմ ներկայացնում երեխայի զարգացման համար նախատեսված նյութ, որը կօգնի նրանց նախապատրաստել դպրոց հաճախելուն դեռ կրտսեր տարիքի երեխաներին սկսած 3-7 տարեկանները: Առաջադրանքները օգնում է ինձ զարգացնել երեխաների տրամաբանական մտածողությունը, սովորեցնում համեմատել քննարկել ու վերլուծել:

Խաղի նախապատրաստում:

Ներբեռնում , տպում և մկրատի օգնությամբ կտրում խաղաթղթերի գծիկավոր հատվածները :

Ընթացքը

Խաղաթղերը հավասար քանակով բաժանում եմ բոլոր մասնակիցների միջև և առաջարկում երեխաներին ուշադիր

դիտել խաղաթղթերի վրայի նկարները և յուրաքանչյուր խաղաթղթի վրա գտնել ավելորդը, բարձրաձայնել նրա համարը և բացատրում է թե ինչու է դա ընտրել:

Մտածողություն

Մտածողությունը գոյաբանական արժեք ունեցող գործառույթ է մարդկանց համար, դրա սահմանման կամգիտակցման վերաբերյալ փոխհամաձայնություն գոյություն չունի: Քանի որ մտածողությունը հիմնված է մարդու գործողությունների և մարդկային փոխազդեցությունների վրա: Մտածողությունը թույլ է տալիս մարդկանց մեկնաբանել, ներկայացնել կամ մոդելավորել աշխարհում իրենց փորձառությունը և կանխատեսումներ անել հենց այդ աշխարհի վերաբերյալ: Երեխայի մտածողությունը զարգացնելու համար կարևոր , որպեսզի երեխան կարողանա պատասխանել «Ինչու », «Ինչ կլինի եթե… », «Ինչպես » և նման այլ հարցերի:

Խաղ «Թաշկինակը»

Նախապատրաստում:

Երեխաներին նստեցնում են շրջանաձև ոտքերը ծալած, ծանոթացնում խաղի կանոններին , ցույց տալիս թաշկինակը:

Ընթացքը:

Երեխաները ուշադիր հետևում են այն երեխային ում ձեռքին է թաշկինակը և հետևելով նրան ուշադրությունը կենտրոնացնում են: Սպասում են թե ում հետևում կհայտնվի թաշկինակը:

Խաղ 2. «Պապն ու շաղգամը»

Նախապատրաստում:

Բաշխել դերերը երեխաների միջև, ծանոթացնել խաղի կանոններին, սովորեցնել համապատասխան դերի թատերական շարումը, յուրաքանչյուրին հագցնել համապատասխան հագուստ ըստ դերի:

Ընթացքը:

Խաղին մասնակցում է 7 երեխա՝ շաղգամը, պապը, տատը, թոռնիկը, շնիկը, փիսիկը, մկնիկը:

Քննարկումը:

Երեխաներին առաջարկել, որ իրենց դերը ճիշտ կատարեն խաղի մեջ:

Դիտարկում:

«Պապն ու շաղգամը»խաղը երեխաների մեջ արթնացնում է մտածելու, գործողությունները հաջորդաբար կատարելու և պահպանելու ունակությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարած աշխատանքի արդյունքում հանգել ենք
հետևյալ եզրակացություններին՝

.Նախադպրոցական տարիքի երեխան մանկապարտեզում պետք է սովորի արագության մեջ ճիշտ կողմնորոշվել, ուշադրության և դիտողականության զարգացում:

.Մտածելու,կատարելու գործողությունները հաջորդաբար և աշխատասիրության ուսուցումը սերմանել երեխաների մեջ:

.Մտածողության բոլոր տեսակների որակների զարգացման համար հանրակրթությունը կարևորագույն փուլ է, քանի որ անձի մտածողությունը
Ձևավորվում և առավել արդյունավետ է զարգանում վաղ
տարիքում: Իզուր չէ, որ ցանկացած ոլորտի ուղղված քննադատություն, ի վերջո, հասցեագրվում է հանրակրթությանը. դպրոցը չի ձևավորում
մտածողության տեսակների զարգացման անհրաժեշտ նախադրյալները:

Իմ կարծիքով դաստրարակությունը. դա գործնթաց է, որը ունի իր խնդիրները, նպատակները: Այսօր մանկավարժների, դասավանդողների, դաստիարակների և ընդահանրապես կրթության ոլորտում աշխատողների առջև խնդիր է դրվում դաստիարակությանը տալ համընդհանուր, նպատակային բնույթ և ապահովել սովորողի բազմակողմ և ամբողջական դաստիարակությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Բաբանսկի Յու. Աշակերտների դաստիրակությունը կոմպլեքսային մոտեցում. Երևան, էջ 112։

2. Գևորգյան Ա., Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիրակության գործընթացում.Երևան,2002թ, էջ 176։

3. Դավթյան Արմինե դաստիրակության հիմնախնդիրներ

4. Ղուկասյան Ա. Հայոց պատմությունը 6-7-րդ դասարաններում։ Ուսուցչի ձեռնարկ, Երևան, 2007.էջ 88

5. Սարգսյան Արմինե, Արման Մալոյան Հայոց պատմություն 10-12-րդ դասարաններում.Երևան 2009թ ,էջ 95։

6. 3-6 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄՈԴԵԼՆԵՐՈՎ ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ.էջ 37-100

7..https://nelikopoxosyan.files.wordpress.com/2019/05/d586d5a1d5add5a1d5a4d5bad680d5b8d681d5a1d5afd5a1d5b6-d5b4d5a1d5b6d5afd5a1d5bed5a1d680d5aad5b8d682d5a9d5b5d5b8d682d5b6.-d5b1d5a5d5bcd5b6d5a1d680d5af-1.pdf

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

ԿԱՏԱՐՈՂ՝ Սերինե Խուբլարյան

ՂԵԿԱՎԱՐ՝ մ.գ.թ. Լ. Միրաքյան

ՎԱՆԱՁՈՐ 2022

Բովանդակություն

Ներածություն 3
Գլուխ 1 5
Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների հետ
Գլուխ 2 9
Սաների կրթական աշխատանքների կազմակերպումն ու դաստիրակությունը ընտանիքում
Հետազոտական մաս 12
Հավելվածներ 17
Եզրակացություն 19
Գրականություն 20

Ներածություն

Թեմայի արդիականությունը

Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ այն միտված է օգնել ընտանիքի անդամին տարբեր մեթոդների օգնությամբ ավելի արդյունավետ կազմակերպել մանկավարժ-ընտանիք կապը: Սաների կրթությունը և դաստիարակության աշխատանքները ընտանիքում ևս համարվում է շատ արդիական: Այս խնդիրը միշտ էլ հետաքրքրել է թե՛ մասնագետներին, թե՛ մանկավարժներին: Յուրաքանչյուրն աշխատում է գտնել արդյունավետ և ինքնատիպ մոտեցումներ:

Երեխայի կրթադաստիարակչական գործում ընտանիքը ունի առաջնային և շատ մեծ դեր: Դրական համագործակցությունը երեխայի շուրջ ստեղծում է մի միջավայր, որտեղ ընտանիքները, ուսումնական հաստատությունը և համայնքը համատեղ աշխատում են երեխաների կրթությանն ու դաստիարակությանն ուղղված ընդհանուր նպատակներին հասնելու համար: Մանկավարժների և ընտանիքների միջև դրական հաղորդակցությունը ստեղծում է երեխաների արդյունավետ ուսումնադաստիարակչական մթնոլորտ: Այն համարվում է կապող օղակ երեխայի համար:

Վերը հիշյալ հետազոտականի նպատակն է՝

- Ուսումնասիրել մանկավարժական աշխատողի և ընտանիքի դրական համագործակցության ձևերի, մեթոդների և դրույթների վերաբերյալ գիտատեսական և գիտամեթոդական գրականության վերլուծություն, այլոց փորձ:
- Իրականցնել փորձարարական մաս հարցման հարցաթերթի այլ մեթոդներով:

Հետազոտական աշխատանքի խնդիրներն են՝

ա)Նկարագրել ընտանիքի անդամների կարևորությունը կրթադաստիարակչական գործում, ինչպես նաև համագործակցության դերն ու մեթոդները:

բ) Բացահայտել մանկավարժական աշխատողի և սաների ծնողների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերին վերաբերող խնդիրները:

գ) Ծնողների շրջանում իրականցնել հարցում հարցաթերթիկի օգնությամբ: Ուսումնասիրել յուրաքանչյուր սանի ընտանիքի առանձնահատկություններն ու հնարավորությունները:

Աշխատանքի կառուցվածքը

Հետազոտականը կազմված է ներածական մասից, երկու գլուխներից, հետազոտական մասից, հավելվածից, եզրակացությունից և գրականության ցանկից:

Գլուխ 1

Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների հետ

Երեխաներն իրենց վրա կրում են ընտանիքի ազդեցությունը, ուստի մանկավարժները պետք է լրջորեն հաշվի առնեն այդ փաստը և երեխաների հետ աշխատելիս ամրապնդեն կապն ընտանիքների հետ՝ նկատի ունենալով դրանց առանձնահատկություններն ու տարբերությունները:

Ընտանիքի անդամներին ընձեռվում են ուսումնական հաստատություններում իրենց երեխայի կրթադաստիարակչական աշխատանքներին մասնակցելու տարբեր հնարավորություններ: Նրանք կրթական հաստատության ցանկալի հյուրերն են, շատ խրախուսելի է նրանց գիտելիքների և փորձի կիրառումը տարբեր ուսումնական և կազմակերպչական նպատակներով: Օր.՝ կարի, խոհանոցային աշխատանքներում, ընթերցանության և արվեստի պարապմունքների, միջոցառումների և էքսկուրսիաների ժամանակ կարելի է օգտագործել ընտանիքի անդամների ներուժը [2, էջ 133]:

Ծողի մասնակցությունը պարապմունքներին շատ օգտակար է թե՛ դաստիրակի, թե՛երեխաների համար: Ընտանիքի անդամների նպատակային ներգրավումը պահանջում է ժամանակ, պլանավորում և պատկերացում ընտանիքի անդամների հետաքրքրությունների ու հնարավորությունների մասին: Ծնողներին անհրաժեշտ է նախապես ծանոթացնել կատարվելիք աշխատանքներին, իմանալ նրանց նախասիրությունները, մասնագիտական հնարավորությունները, աշխատանքային ծանրաբեռնվածությունը և այլն:

Ծնողների հետ աշխատանքը պետք է իրականացվի կազմակերպված, նախապես պայմանավորվածությամբ, որպեսզի այն ձևական բնույթ չկրի և արդյունավետ լինի բոլոր կողմերի համար: Անհրաժեշտ է հստակ պլանավորել, թե ինչպես պետք է ընտանիքները ներգրավվեն կրթական գործընթացում [2, էջ 133-134]:

Դրույթներ ծնողների հետ աշխատելու վերաբերյալ

- Ծնողներին պարապմունքների և կազմակերպչական աշխատանքների մեջ ներգրավելու համար օգտագործել բազմազան ձևեր: Պետք է լինել ստեղծագործ

և ճկուն:

- Ժողովները և հանդիպումները կազմակերպել ծնողներին հարմար ժամերի:
- Թույլ տալ, որ ընտանիքն ինքը որոշի, թե ինչպես կարող է լավագույն ձևով մասնակցել գործին:
- Լինել համբերատար:
- Հենվել երեխաների և ընտանիքի ուժեղ կողմերի վրա և արձագանքել դրականորեն:
- Պահպանել գաղտնիությունը:

Աշխատականացված ուսուցում ապահովելու համար մանկավարժը պետք է մշտական կապի մեջ լինի երեխայի ընտանիքի հետ:

Նրա պարտականությունը մշտական և ամուր կապեր հաստատելն ու պահպանելն է [2, էջ 134]:

Ծնողական ժողովի և այլ հանդիպումների ընթացքում դաստիարակն անպայման պետք է անդրադառնա երեխայի համակողմանի զարգացման կարևորությանը և առանձին ներկայացնի զարգացման յուրաքանչյուր ոլորտն ըստ տվյալ տարիքի երեխաների զարգացման չափորոշիչների:

Որքան ավելի սերտ ու արդյունավետ լինի ուսումնական հաստատություն-ընտանիք կապը, այնքան ավելի մեծ աջակցություն կստանան երեխաները՝ ուսումնառության և դաստիարակության ընթացքն ավելի դրական և արդյունավետ կազմակերպելու առումով: Ընտանիքին հարմար ժամանակ տնային այցեր կազմակերպելը հնարավորություն է տալիս մանկավարժներին ծանոթանալու երեխաներին և ընտանիքներին նրանց հարազատ միջավայրում: Պետք է նաև աջակցություն ընտանիքներին.

- Ռեսուրսների տրամադրում՝ օր.՝ գրքերի ցանկ, խաղերի տեսակներ, քննարկումներ:
- Նպաստել ծնողների միջև համագործակցության զարգացմանը. օր.՝ ամենամսյա հանդիպումներ, խաղեր մեծահասակների համար, ձեռքի աշխատանքների ցուցադրումներ:

Ընտանիքի հետ համագործակցության ձևեր

ա) այցելություն տուն

բ) երեխայի հաստատություն բերելու և տուն տանելու ընթացքում ընկած ժամանակը

գ) հեռախոսային զանգեր

դ) ծնողական և մանկավարժական ժողովներ

ե) գրքույկներ (բրյոշուրներ)

զ) շաբաթական գրություններ, նաև ոչ պաշտոնական

է) անհատական գրառումների գրքույկներ

ը) պատի տեղեկատվական թերթեր

թ) առաջարկությունների տուփեր

Բացի վերոհիշյալից, ընտանիքի համագործակցությունը կարող է իրականացվել նաև այլ պաշտոնական ձևերով, ինչպիսիք են՝

- Կլոր սեղանները
- Թեմատիկ քննարկումները
- Բաց դիտումները
- Բաց դռների օրերը
- Ցուցահանդեսները և այլն

Երբեմն հայրերը դուրս են մնում երեխաների համար իրականացվող ծրագրերից: Պետք է տարբերակներ որոնել հայրերին ևս ներգրավելու այս ամենի մեջ: Ինչը ես կփորձեմ անել իմ հետազոտական մասում:

- Ծնողները խմբասենյակում

Ծնողները խմբասենյակում կարող են ունենալ տարբեր դերեր: Նրանք կարող են լինել՝

- այցելուներ

Ծնողներին պետք է խրախուսել մտնել խմբասենյակ, որտեղ նրանք կարող են դիտել ու խաղալ իրենց երեխաների հետ:

- կամավորներ

Ծնողների գիտելիքներն ու հմտությունները կարելի է օգտագործել խմբասենյակում երեխաների հետ զբաղվելու ժամանակ: Օգնել մանկավարժին բազմատեսակ հարցերում:

Այսպիսով՝ նկատի ունենալով մանկավարժական աշխատողի սաների ծնողների հետ համագործակցության կարևորությունը և իմանալով, թե ինչպիսի մեծ

ու անփոխարինելի օգուտ կարող է տալ դրական կապը ծնողի և մանկավարժի միջև, հիմնվելով ուսումնասիրված գիտատեսական գրականությանը և փորձերի վրա հանգում եմ այն եզրակացությանը, որ շատ կարևոր և պարտադիր է ընտանիքի անդամներին հնարավորինս շատ ներգրավել ուսումնադաստիարակչական պրոցեսի մեջ, որին կփորձեմ հասնել իմ շարունակական կլոր սեղանների, բաց պարապմունքների, հարցման հարցաթերթիկների և այլ մեթոդների միջոցով: Միասնական գործունեության արդյունքում միայն կունենանք ցանկալի արդյունք: Հարկ է նշել, որ պետք է մանկավարժի խոսքը լինի մատչելի: Ընկալելի ծնողների կողմից: Սոցիալականացումը ևս շատ կարևոր է:

Գլուխ 2

Սաների կրթական աշխատանքների կազմակերպումն ու դաստիրակությունը ընտանիքում

Երեխայի ընտանիքի անդամները նրա առաջին ուսուցիչներն են: Դարեր շարունակ երեխաների դաստիարակությունն իրականացվել է ընտանիքում և ուսումնական հաստատություններում:

Բայց 18-րդ դարում ընտանեկան դաստիարակության առնչությամբ հանդես են եկել երեք ուղղություններ: Առաջին ուղղության կարկառուն ներկայացուցիչը Հ. Պեստալոցին էր: Նա հայրական տունը համարել է բնական դաստիարակության հիմքը, գտել է, որ «մարդկանց ընտանեկան հարաբերություններն առավել բնական հարաբերություններն են և դաստիարակությունը՝ նույնպես»: Երկրորդ վուղղության ներկայացուցիչն անգլիացի ուտոպիստ սոցիալիստ Ռ. Օուենն է: Նա բացասական կարծիք է ունեցել ընտանեկան դաստիարակության մասին և գտել, որ ընտանիքը համարվում է էգոիզմի և երեսպաշտության բույն: Նա գտել է, որ բոլոր երեխաների կրթությունն ու դաստիարակությունը պետք է լինի միատեսակ, պետական հաստատությունների ընձեռնած հնարավորություններով:

Նոր ժամանակներում մեծ մտածողները, մանկավարժներն ու հոգեբանները պահանջեցին դաստիարակության բնագավառում ապահովել ընտանեկան, պետական և հասարակական ուսումնական հաստատությունների դաստիարակության կապը: Եվ ահա հանդես է գալիս երրորդ ուղղությունը, որի ներկայացուցիչները միակարծիք են և իրար չեն հակադրվում: Ա. Ս. Մակարենկոն ասում էր. «Ես գրեթե չեմ լսե, որ ծնողներն ասեն. «Մենք պետք է դաստիարակենք, ինչո՞ւ է դպրոցը խանգարում»: Եվ չեմ լսել, որ մանկավարժն ասի. «Դպրոցը պետք է դաստիարակի, ինչո՞ւ է ընտանիքը խանգարում» [1, էջ 388]:

Ընտանիքում երեխաների ճիշտ դաստիարակության առաջին պայմանն ընտանեկան կոլեկտիվի համախմբումն ու ձևավորումն է, ամուր կարգապահության ստեղծումն ու ամրապնդումը, կոլեկտիվի անդամների մեջ պարտքի ու պատասխանատվության խոր զգացումն է, երեխաների իրար նկատմամբ սիրո և հարգանքի բարձր ձևավորումը: Յան Ամոս Կոմենսկին ասում էր. «Մարդու մեջ

հաստատուն և հուսալի է միայն այն, որ նրա բնավորության մեջ ներծծվել է կյանքի առաջին շրջանում» [1, էջ 390]:

Այսինքն՝ հենց այդ առաջին շրջանում երեխայի բնույթի մեջ պետք է ընտանիքում զարգացնել միայն դրականը, միայն լավը: Անհրաժեշտ է խուսափել երես տալու, նրա բոլոր ցանկությունները կատարելու, զիջումներ անելու սխալ պրակտիկայից: Հակառակ դեպքում կառաջանա վերադաստիարակության հիմնախնդիր:

Երեխայի մեջ լավը, դրականն արմատավորելու, վատն ու անընդունելին նրա բնույթից հեռացնելու համար ծնողները պետք է ունենան հետախույզի աչքեր և զգացողություն: Իմաստնաբար հետևեն նրանց յուրաքանչյուր քայլին, անհաջողության դեպքում՝ խուճապի չմատնվեն:

Պետք է լինեն զուսպ և համբերատար, ունենան արդյունավետ գործելու կարողություն:

Վ. Ա. Սուխոմլինսկին ասում էր. «Շատ դժբախտությունների արմատները հենց նրանք են, որ երեխային մանկությունից չեն սովորեցնում ճիշտ վերաբերվել՝ կարելի է, հարկավոր է, չի կաարելի հասկացություններին» [1, էջ 390]:

Ընտանեկան դաստիարակության երկրորդ կարևոր պայմանը չափավորությունն է (չափի զգացումը) ամեն ինչում: Երրորդ պայմանը ծնողների սկզբունքայնության կայունությունն է: Չորրորդը՝ գեղագիտական, հայերնասիրական, հումանիստական, կոլեկտիվիարական, աշխատանքային զգացմունքների ձևավորումը: Ծնողը (ները) կամ այն անձինք, որոնք դստիարակում են երեխային, իրենց ընդունակությունների և ֆինանսական հնարավորությունների շրջանակներում հիմնական պատասխանատվություն են կրում երեխայի զարգացման համար անհրաժեշտ կեսապայմաններ ապահովելու հարցում [3, 27 հոդ., 2 կետ]:

Մինչև նախադպրոցական ծառայության հաճախելը, երեխաները շատ բան են սովորում ընտանիքում՝ սկսած բաժակով խմելուց մինչև ընթերցանություն: Ընտանիքի անդամներն են երեխաների համար կենսականորեն կարևոր որոշումներ ընդունում, շրջապատում նրանց սիրով, կրթում և դաստիարակում: Երեխաները, ինչպես ասվեց վերը, իրենց վրա կրում են ընտանիքի ազդեցությունը: Ուստի երեխայի կրթության հարցում շատ մեծ և անգնահատելի է կրթական աշխատանքների կազմակերպումը ընտանիքում:

Ծնողների տրամադրվածությունն ապահովելը սկսվում է մանկավարժական կազմի հետ առաջին իսկ հանդիպումից: Այն կարող է լինել դրական կամ բացասական: Հարգալից վերաբերմունքը, քննարկումներն սկզբունքների, ընթացակարգի, նպատակների և գործողությունների վերաբերյալ, մեծապես նպաստում են ընտանիքում երեխաների ուսումնադաստիարակչական գործընթացին: Ծնողի ներգրավումը սաների կրթական աշխատանքներում պետք է բացատրել հենց սկզբից, ինչն էլ օգնում է ունենալ դրական վերաբերմունք մակավարժի նկատմամբ:

Այսպիսով՝ ուսումնասիրելով գիտատնտեսական գրականությունը, վերլուծելով՝ եկա այն եզրակացության, որ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և դաստիարակության սկիզբը դրվում է ընտանիքում: Եվս մեկ անգամ համոզվեցի, որ երեխայի առաջին ուսուցիչը ընտանիքն է, և երկրորդ կարևորեցի ծնող-երեխա հաղորդակցման ժամանակի ընդլայնումը, ինչը, ցավոք, գնալով պակասում է:

Հետազոտական մաս

Հետազոտական աշխատանքը կատարելիս օգտվել եմ հարցաթերթիկի մեթոդից, որը ուղղված է եղել ծնողներին:

Ստորև ներկայացնում եմ հարցման հարցաթերթիկի նմուշ օրինակը և վերլուծությունը:

Հարցաթերթիկ ծնողներին

1. Համարում եք արդյո՞ք Ձեր երեխայի վարքը «դժվար»:

ա) այո

բ) ոչ

գ) երբեմն

Ծնողների 60%-ը ընտրել է գ) երբեմն, 30% -ը՝ բ) ոչ, իսկ 10%-ը՝ ա) այո:



2. Ինչո՞վ է ամենից շատ սիրում զբաղվել Ձեր երեխան:

ա) Խաղալիքով

բ) Հեռախոսով կամ համակարգչով

գ) Մեծերին վերաբերող իրերով

Ծնողների 70%-ը ընտրել է բ, 20%-ը՝ ա, 10%-ը՝ գ տարբերակները:



3. Քանի՞ ժամ եք տրամադրում զբոսանքին օրվա մեջ:

ա) շատ

բ) քիչ

գ) շատ քիչ

Ծնողների 80%-ը ընտրել է գ, 15%-ը՝ բ, 5%-ը՝ ա տարբերակը:



4. Ինչպե՞ս է պահում իրեն երեխան, երբ բարկանում է:

ա) գոռում է

բ) հիստերիկա է անում

գ) կոտրում է խաղալիքը

Ծնողների 50%-ը՝ բ, 30%-ը՝ ա, 20%-ը՝ գ տարբերակն է ընտրել:



5. Ինչպե՞ս եք կողմնորոշվում երեխայի անհագիստ վարքի ժամանակ:

ա) համոզում եք

բ) բերում եք լավ երեխայի օրինակ

գ) թողնում եք հանգստանա, հետո բացատրում եք

Ծնողների 70%-ը ընտրել է ա, 20%-ը՝ բ, և միայն 10%-ը՝ գ տարբերակը:



6. Համարո՞ւմ եք Ձեզ խիստ ծնող:

ա) այո

բ) ոչ

գ) երբեմն

Ծնողների 40%-ը՝ ա, 40%-ը՝ բ, 20%-ը՝ գ տարբերակը:



7. Ոգևորում եք արդյո՞ք երեխայի լավ վարքը:

ա) միշտ

բ) հաճախ

գ) երբեմն

Ծնողների 80% -ը ընտրել է ա, 15% -ը՝ բ, 5% -ը՝ երբեմն տարբերակը:



Այսպիսով՝ սույն հետազոտության արդյունքում ստացա այնպսիի պատկեր, ինչը ակնկալում էի:

Ծնողները ճիշտ են գնահատում արդի իրականությունը և ակնկալում, որ մանկավարժ-ընտանիք ամուր կապի միջոցով կտանք այն հարցերի լուծումները, որոնք նրանց նույնպես խորապես անհանգստացնում են: Ծնողները հարցման հարցաթերթիկը լրացրեցին անկեղծ, մեծ սիրով և պատասխանատվությամբ: Աշխատանքները կլինեն շարունակական: Կարծում եմ նաև արդյունավետ քննարկեցինք որոշ պատասխաններ և միասին ընտրեցինք ավելի ճիշտ եղանակներ:

Հավելված

Հարցաթերթիկ ծնողներին

1. Համարում եք արդյո՞ք Ձեր երեխայի վարքը «դժվար»:

ա) այո

բ) ոչ

գ) երբեմն

2. Ինչո՞վ է ամենից շատ սիրում զբաղվել Ձեր երեխան:

ա) Խաղալիքով

բ) Հեռախոսով կամ համակարգչով

գ) Մեծերին վերաբերող իրերով

3. Քանի՞ ժամ եք տրամադրում զբոսանքին օրվա մեջ:

ա) շատ

բ) քիչ

գ) շատ քիչ

4. Ինչպե՞ս է պահում իրեն երեխան, երբ բարկանում է:

ա) գոռում է

բ) հիստերիկա է անում

գ) կատրում է խաղալիքը

5. Ինչպե՞ս եք կողմնորոշվում երեխայի անհագիստ վարքի ժամանակ:

ա) համոզում եք

բ) բերում եք լավ երեխայի օրինակ

գ) թողնում եք հանգստանա, հետո բացատրում եք

6. Համարո՞ւմ եք Ձեզ խիստ ծնող:

ա) այո

բ) ոչ

գ) երբեմն

7. Ոգևորում եք արդյո՞ք երեխայի լավ վարքը:

ա) միշտ

բ) հաճախ

գ) երբեմն

Հարգանքներով՝ Ը. Սերինե

Շնորհակալություն

Եզրակացություն

Սույն հետազոտության արդյունքում հանգեցի այն եզրակացության, որ մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների հետ՝ սաների կրթական աշխատանքների և ընտանեկան դաստիարակության հարցը եղել է, կա ու կլինի շատ արդիական և կարևոր հիմնահարց:

Հիմնվելով ուսումնասիրված գիտատեսական գրականության հետազոտությանը և այլ աղբյուրներին՝ հանգեցի այն եզրակացության, որ պարտադիր է ընտանիքի անդամներին և հատկապես հայր ծնողներին ներգրավել ուսումնադաստիարակչական պրոցեսի մեջ (միջոցառումներ, էքսկուրսիաներ, կառուցողական և այլ պարապմունքներ, ծնողական ժողովներ, հարցման հարցաթեթրիկներ): Վերը նշվածը իրականացրերցի հարցման հարցաթեթիկի միջոցով:

Ինպես նշել եմ առաջին գլխում, ծնողի հետ համագործակցության դրույթները օգնում են մանկավարժին ընտրել և իրականացնել արդյունավետ շփման ճիշտ եղանակներ, տրամադրել աջակցություն ընտանիքներին:

Ընտանիքի հետ հաագործակցության ձևերը նույնպես շատ կարևոր են: Դրանք մենք օգտագործում ենք ամենօրյա ռեժիմում: Այն նշված է առաջին գլխում:

«Ընտանիքը երեխայի ուսուցիչն է»: Այս գաղափարախոսությունը նշվել է երկրորդ գլխում, որը ունեցել է նաև հակասական տեսակետներ: Վերը նշված երկրորդ ուղղության մեջ այս միտքը հակասել են՝ ասելով.
«Ընտանիքը համարվում է էգոիզմի և երեսպաշտության բույն»: Հետազոտության արդյունքում եկա այն երակացության, որ ընտանիքն է երխայի դաստիարակության և կրթության հիմքը:

Այսպիսով՝ կատարեցի հետազոտություն, կազմեցի հարցաթերթիկ ծնողի համար, որը նպատակ ուներ պարզելու ծնողների ներգրավածության, փորձառության, տեղեկատվության և գիտակից ծնող լինելու չափանիշը, առանձնահատկություններն ու կարողությունները:

Արդյունքում ևս մեկ անգամ կարող ենք փաստել, որ մանկավարժ-ընտանիք համագործակցության արդյունքում է հնարավոր հասնել ցանկալի արդյունքենրի, որն էլ բխում է երեխայի շահերից:

Գրականություն

1. Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան, «Մանկավարժություն», Երևան, 2004թ., էջ 443:
2. 3-6 տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակերպումն այլընտրանքային մոդելներով
   Դաստիարակի ուղեցույց, Երևան, 2018թ., էջ 200
   Երաշխավորված ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից
3. ՀՀ օրենսդրություն
4. armedu.am

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ <<Խաղը որպես նախադպրոցականի առաջատար գործունեություն>>

ԿԱՏԱՐՈՂ՝ Սյուզաննա Ավետիսյան

ՂԵԿԱՎԱՐ՝ Գագիկ Էմինյան

ՎԱՆԱՁՈՐ 2022

Բովանդակություն

1.Ներածություն…….3

2.Խաղի առանձնահատկությունները……6

3.Խաղի տեսակները……...7

4.Խաղի նշանակությունը երեխաների դաստիարակության և զարգացման գործում.12

5.Խաղի դերը երեխաների կյանքի կազմակերպման գործում……...…..13

6.Եզրակացություն……15

7.Գրականության ցանկ……16

Ներածություն

Երեխան զարգանում է խաղում և խաղի միջոցով, և որքան էլ ուսումանսիրված է խաղային գործունեությունն այն միևնույնն է արդիական է, քանի որ յուրաքանչյուր երեխա խաղի մեջ ինքնադրսևորվում է ուրույն ձևով և արտացոլում է այն ժամանակաշրջանի առանձնահատկությունները, որում ինքն ապրում է:

Աշխատանքի ուսումասիրության օբյեկտը նախադպրոցական տարիքի երեխան է,ուսումնասիրության առարկան նախադպրոցականի խաղային գոծունեությունը:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել խաղի դերը նախադպրոցական տարիքի երեխայի զարգացման գործում:

Ելնելով նպատակից առանձնացրել ենք հետևյալ **խնդիրները՝**

- ✓ ՈՒսումնասիրել խաղը, որպես նախադպրոցական տարիքի երեխայի առաջատար գործունեություն
- ✓ ՈՒսումնասիրել խաղի տեսակները և առանձնահատկությունները

Երեխայի զարգացման գործում հսկայական է խաղի առաջատար գործունեության դերը:

Խաղի ծագման, էության երեխաների կյանքում նրա տեղի և նշանակության, առավել արդյունավետ օգտագործման և այլ շատ հարցեր՝ կապված խաղի հիմնահարցի հետ, հետաքրքրել ու շարունակում է հետաքրքրել փիլիսոփաներին, պատմաբաններին, հոգեբաններին:

Զ.Ֆրեյդի՝ խաղի հայեցակետի հիմքում ընկած է հոգեվերլուծական տեսությունը: Նա գտնում է, որ հոգեկան կյանքին հատուկ է վերարտադրելու միտումը, որը դուրս է գալիս հաճույքի սկզբունքի սահմաններից:Երեխաների խաղերը բացատրվում են այդ միտումով: Ըստ Ֆրեյդի մարդը ի սկզբանե ունի ձգտումներ, ցանկություններ, որոնք անմիջական ելքի պահանջ ունեն: Սակայն հասարակությունն արգելքներ է դնում մարդու այդ ձգտումներիշ, ցանկությունների վրա և ահա ի հայտ են գալիս բազմապիսի արգելքները շրջանցելու ուղիներ: Երեխան հասնում է դրան խաղի շնորհիվ: Իր խաղերում նա վերարտադրում է այս կամ այն ծանոթ իրադրությունը՝ կապված նաև ծանր տպավորությունների, ապրումների հետ:

Ֆրեյդը մանկությունը դիտում է որպես մի ժամանակաշրջան, երբ երեխան գտնվում է հոգեկան ծանր իրադրությունների մեջ, հասարակության և մեծերի անընդհատ

ճնշման տակ:Մանկության մասին նման պատկերացումը բավականին լայն տարածում գտավ: Այն ի հայտ եկավ մանկության և խաղի մի շարք տեսություններում (Վ. Շտեռն,Կ.Կոֆֆկա, Մ. Լովենֆիլդն ուրիշներ):

Խաղի նշված տեսությունները քնադատվեցին առանձին հոգեբանների կողմից: [1;191]

Խաղի դաստիարակչական նշանակությունն ընդգծել են խոշորագույն հայ մտածողներ,գրողներ,մանկավարժներ,հոգեբաններ: Հայ մեծ լուսավորիչ-դեմոկրատ, գրող, մանկավարժ Խաչատուր Աբովյանը,խոսելով նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության խնդիրների և ուղիների մասին, մասնավորապես պահանջում էր չզրկել երեխային <<անմեղ խաղերից>>: Իր <<Պարապ վախտի խաղալիք>> և մի շարք այլ աշխատություններում նա ընդգծում է հետաքրքիր զրույցների, պատմությունների արժեքը երեխաներին ուրախություն և հաճույք պատճառելու գործում: Խաչատուր Աբովյանն այդ առումով հատկապես բարձր էր դասում մանկական խաղերը:

Երեխան կյանքի ու բնության վերաբերյալ տեղեկություններ է ստանում հեքիաթների,պատմությունների,զրույցների ինչպես և խաղալու, կյանքի հետ անմիջականորեն շփվելու միջոցով:

Հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը գտնում էր,որ մարդու համար խաղը <<բնական,օրգանական պահանջ է, նրա լրջությունն է, նրա էությունն է…կյանքում ամեն բանի նա խաղով է մոտենում,խաղով է քնում, խաղով ճանաչում և ընդունում…Եվ ամեն բան, ինչ որ նրան տրվում է խաղով,ուրախությունով ընդունվում է, հեշտ է յուրացվում>>: [1;192]

Թումանյանը հավաքեց և մշակեց ժողովրդական բանահյուսության հոգևոր գանձերը և երեխաների համար ստեղծեց հայրենագիտական խաղեր՝դրսևորելով այս հարցում մանկավարժական, հոգեբանական հմտություններ:

Այսպես նա տալիս է խաղերի հոգեբանական վերլուծությունը, գնահատում դրանք երեխաների վրա ունեցած ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական ներազդեցության տեսանկյունից: Թումանյանը գտնում է, որ երեխաների համար խաղն անհրաժեշտություն է, մանկության պարտադիր ուղեկից: Ընդգծելով նախադպրոցական տարիքի նշանակությունն ընդհանուր, ինչպես նաև մտավոր զարգացման համար՝ Թումանյանը ճիշտ էր համարում սնել երեխայի միտքը,

հաղորդել նրան բազմապիսի գիտելիքներ շրջապատող աշխարհի, առարկաների, երևույթների մասին: Այդ խնդրի լուծման լավագույն ձևը նա համարում է խաղը, որը նշված առումով ստեղծում էլայն հնարավորություններ:

Արժեքավոր է այն, որ Թումանյանը ոչ միայն առաջարկեց մի շարք խաղեր, այլև ցույց տվեց դրանց անցկացման մեթոդները, խաղերի բացատրման եղանակները կանոնների մատուցման ձևերը:Այդ աղերը կրում էին ինչպես շարժական, այնպես էլ դիդակտիկ՝ ուսուցողական բնույթ: Այդ խաղերի թվին է պատկանում օրինակ՝ <<Առաջին խաղ>>, <<Աստղերի խաղ>>, <<Գույների խաղ>>,<<Հանելուկներ>>,<<Հայոց գետեր>> և այլ խաղեր: Օգտագործելով նշված խաղերը՝ ինչպես ծնողները, այնպես էլ դաստիարակները, կարողանում են լուծել լուրջ կրթադաստիարակչական խնդիրներ:[3;192]

Խաղերը պետք է այնպես անցկացվեն, որպեսզի ծառայեն երեխաների բազմակողմանի դաստիարակչական գործին: Երեխայի համար խաղն առաջնային գործոնեությունն է: Այդ զգացմունքների արտահայտման և շրջապատող իրականության ճանաչման հզոր միջոց է: Խաղը երեխաների համար նաև հաղորդակցման և ինքնաճանաչման միակ միջոցն է: Հատկապես կևոր են այն խաղերը, որոնք հորինում են հենց իրենք՝ երեխաները: Խաղի ընթացքում հնարավոր են, որ երեխաները հիասթափվեն կամ վախի զգացումներ ունենան: Երեխաները միմյանց հետ շփվելով իրարից սովորում և ընդօրինակում են: Խաղը որպես առաջատար գործունեության ձև իրականացնում է մի շարք գործառույթներ

- ✓ Կարգավորող
- ✓ Դաստիարակող
- ✓ Զարգացնող
- ✓ Առողջարարական
- ✓ Հաղորդակցման

Նախադպրոցական տարիքում արդյունավետ է երեխաների համար կազմակերպել խաղային գործունեությամբ ընթացող ուսուցում, որի շնորհիվ երեխաները դառնում են ավելի ուշադիր, կարողանում են համեմատել առարկաները: Իսկ այս ամենը նպաստում է երեխաների մտավոր զարգացմանը, ընկալունակությանը, խոսքին, ուշադրությանը: [4]

Խաղը երեխաների համար սոցիալական հասունացման ուղի է: Խաղի ժամանակ երեխաները սկսում են զգալ իրենց որպես ընդհանուր խմբի անդամ: Լ. Ս. Վիգոտսկու կարծիքով քիչ խաղացող երեխաները կորցնում են զարգացման բազում հնարավորություններ:

Խաղի միջոցով ընդլայնվում և խորանում է երեխաների հետաքրքրությունները՝ տարբեր մասնագիտությունների նկատմամբ, և հարգանք է ձևավորվում աշխատանքի հանդեպ: [3;110]

Խաղի առանձնահատկությունները

Երեխաների խաղերն աչքի են ընկում որոշակի առանձնահատկություններով: Նրանց հիմնականն այն է, որ խաղը երեխաների կողմից շրջապատող կյանքի՝ մեծերի գործողությունների, գործունեության, նրանց փոխհարաբերությունների արտացոլումն է, որոնք ստեղծվում են երեխաների երևակայությամբ:

Խաղի առանձնահատկություններն են՝

1. Խաղը երեխաների կողմից շրջապատող կյանքի արտացոլումն է, բայց խաղում խախտում են ժամանակն ու տարածությունը և երեխաները խոր հավատով են լցված խաղին:
2. Խաղային գործունեությունը ծագում է առարկայական գործունեության վրա:
3. Երեխաների խաղը բնութագրվում է որպես դեր, կերպար:
4. Խաղային գործունեության ընթացքում շատ կարևոր է խոսքը, քանի որ այն ունի լուրջ դաստիարակչական գործառույթ և նպաստում է միջավայրի հետ հաղորդակցվելուն և հասակակիցների հետ լիարժեք շփվելուն:
5. Խաղային գործունեությունը ձևավորված է, և զարգանում են մեծահասկների օգնությամբ:
6. Խաղային գործունեությանը բնորոշ է սյուժեն:
7. Խաղային գործունեության նպատակը սոցիալական դերերի յուրացումն է:
8. Նախադպրոցականի խաղը ստեղծագործական բնույթ է կրում, որը համարվում է նրա համակողմանի զարգացման և դաստիարակության արդյունավետ միջոց:

Նախադպրոցականի խաղային գործունեությունը պահանջում է խելացի և գրագետ ղեկավարում:

Խաղի առանձնահատկություններից է այն, որ երեխան հավատով է լցված և ճշմարիտ է համարում հորինված խաղի բովանդակությունը:

Ինքնագործ բնույթը խաղի մյուս առանձնահատկություններից է: Երեխաներն իրենք են ստեղծում խաղերը, ուր դրսևորվում են երեխաների գիտելիքները կյանքի երևույթների և իրադրությունների մասին: [1,199]

Խաղի կարևոր առանձնահատկություններից է, այն որ խաղային գործունեությունը, կերպարը և խոսքը հանդես են գալիս միասնական, կապակցված ձևով:

Խաղային գործընթացում ուրույն նշանակություն ունի խոսքը, քանի որ երեխաները երբեք լուռ չեն խաղում: Խոսքային շփումը խողի ընթացքում ունի մեծ նշանակություն, քանր որ նման ճանապարհով երեխաները մտքեր, ապրումներ են փոխանակում, ճշտում և լրացնում են խաղի բովանդակությունը: Այսպիսով կերպարի, խաղային գործողությունների և խոսքի միասնականությունը խաղային գործունեության առանցքն է, որը նպաստում է իրականության արտացոլմանը:[1,199]

Խաղի տեսակները

Ուսումնասիրելով խաղի հիմնահարցը մի շարք հոգեբաններ, մանկավարժներ տարբեր ձևով են մեկնաբանել խաղի դասակարգման հարցը: Սա բացատրվում է նրանով, որ երեխաների խաղերը շատ բազմազան են, հետևաբար և նրանց խմբավորումը, դասակարգումը բարդ է:

Նախադպրոցական մանկավարժությունը խաղի դասկարգման հիմքում դնում էայն փաստը, որ խաղերը տարբերվում են իրենց բովանդակությամբ, բնորոշ առանջնահատկություններով, նրանով թե ինչպիսի տեղ են զբաղեցնում երեխաների կյանքում:Ներկայումս ընդունված է խաղերի հետևյալ դասակարգումը:

Գծապատկեր 1





Նախադպրոցական տարիքի երեխաների ակտիվության, ինքնուրույնության, երևակայության և նախաձեռնողականության դրսևորման արդյունավետ միջոցներից են ստեղծագործական խաղերը:

Սյուժետադերային խաղերին բնորոշ առանձնահատկությունն այն է, երեխաներն իրենք են ստեղծում խաղը: Երեխաները հավատում են իրենց հորինած կերպարներին: Նրան ոչ միայն հավատում են, այլև իրենք են կատարում այդ դերերը: Սյուժետա-դերային խաղերի խմբին են պատկանում նաև խաղ-բեմականացումները և կառուցողական խաղերը:

- ✓ **Խաղ-բեմականացումները** նպաստում են արտահայտել խոսքի և շարժումների զարգացումը, միավորում են երեխաներին: Խաղ-բեմականացումների հիմքում մեծ մասամբ ընկած են հեքիաթները: Խաղ-բեմականացման լիարժեք անցկացմանն օգնում է գեղարվեստական ստեղծագործությունների, նկարների,իլյուստրացիաների դիտումը, որոշ կերպարների բնորոշ գծերի պարզաբանումը:[2,121]
- ✓ **Կառուցողական խաղերի** հիմնական բովանդակությունն արտաքին աշարհի արտացոլումն է կառույցների և նրանց հետ կապված գործողությունների միջոցով:

Գոյություն ունի կառուցողական խաղերի մի քանի տեսակ՝

1.Կառուցում նմուշով

2.Կառուցում առաջադրված թեմառվ

3.Կառուցում սեփական մտահղացմամբ

Կառուցողական խաղերում ձեռք բերած հմտություններն ու կարողությունները հետագայում օգտագործում են աշխատանքի և ուսուցման ընթացքում, կենցաղային գործողություններ կատարելիս: Այս խմբերն ունեն բացառիկ նշանակություն, որոնք ընթացքում բացահայտվում և զարգանում են երեխաների անհատական առանձնահատկությունները, նախասիրությունները, հետաքրքրությունները և այլն:

Այսպիսով, կառուղոցական խաղերի ուսուցանող և դաստիարակոց կարևոր պայմաններից է երեխաների ստեղծագործական ինքնագործունեության պահպանումը, աշխատանքի նկատմամբ հետաքրքրության զարգացումը:

- ✓ **Կանոներով խաղերում** գործողությունները կարգավորվում են կանոններով: Խաղի մասնակիցները հանդես են գալիս, որպես այդ կանոնների կատարողներ:

  Կանոններով խաղերը հիմնականում ուղղված են երեխաների ֆիզիկականն զարգացմանը:

  Կանոներով խաղերը տարբեր տարիքային խմբերում տարբեր ձևով են ընթանում: Օրինակ կրտսեր խմբերում խաղի կանոնները և բովանդակությունը բացատրվում են խաղի ընթացքում , իսկ ավագ խմբերում՝ խաղից առաջ է բացատրվում: Կանոններով խաղերը մշակվել են ժողովրդական խաղերի

հիման վրա: Կանոններով խաղերի բովանդակությունը նախապես մշակվում է և պատրաստի տալիս ենք երեխաներին: Այս խաղերն առանձնահատուկ նշանակություն ունեն երեխաների զարգացման գործում, նպաստում են փոխգնահատմանը: Չնայած այս խաղերը սահմանափակված են, այնուամենայնիվ խաղում են ինքնուրույն:

- ✓ **Շարժախաղերն**ուղղված են ֆիզիկական զարգացման, կամ այն որակների ձևավորմանը, բնավորության գծերի դրսևորմանը: Շարժախաղերի ժամանակ մենք՝ դաստիարակներս պետք է երեխաներին սովորեցնենք ճիշտ կատարել խաղի կանոնները, շարժվել արագ, դրսևորել ճարպկություն, խթանել շարժախաղեր կազմակերպելու և դրանք մինչև ավարտ հասցնելու ջանքերը, խաղալ մրցության տարրեր պարունակող խաղեր՝ դրսևորելով համարձակություն, ընկերասիրություն, փոխօգնություն:
- ✓ **Խաղ-զվարճալիքները** կազմում են յուրահատուկ խումբ: Այս խաղերում առաջին պլանի վրա են դրված անսպասելի,ծիծաղելի, հանկարծակի բառերը, կատակը,հումորը: Այս խաղերի նպատակն է ուրախացնել երեխաներին: Հումորը, կատակը, պատմությունը, խաղալիքների անսպասելի ի հայտ գալը զարգացնում է երեխաների հուզական ոլորտը, նպաստում արյան լավ շրջանառությանը:
- ✓ **Դիդակտիկ խաղերը** նախադպրոցական տարիքի երեխաների ուսուցման և դաստիարակության լավագույն միջոցներ են համարվում: Դիդակտիկ խաղերի խնդիրն է նպաստել երեխաներին ուսումնական և իմացական, ինչպես նաև մտավոր գործունեության ձևավոնմանը: Դիդակտիկ խաղերի միջոցով ընդլայնվում են նաև երեխաների պատկերացումները շրջապատի, կյանքի և բնության մասին: Դիդակտիկ խաղերի միջոցով հարստանում է նաև երեխաների բառապաշարը, կանոնավորվում է արտասանությունը, ինչն էլ շատ կարևոր է ապագա դպրոցական երեխաների համար:

  Դիդակտիկ խաղերը ղեկավարելու համար պետք է նախապատրաստվել խաղի անցկացմանը:

  1.Նախապատրաստական խաղի անցկացմանը

  2.Մուտքն ինչպես սկսեցինք խաղը

3. Խաղի անալիզ և անցկացում

Դաստիարակը երեխաներին նախապատրաստում է խաղին հարստացնելով գիտելիքները երեխաների,պատկերացումները շրջապատող առարկաների և երևույթների մասին,որոնք անհրաժեշտ են խաղային խնդիրները լուծելու համար: Առարկաներով և խաղալիքներով դիդակտիկ խաղերը հիմնականում խոշոր տիկնիկներով առաջարկվող խաղերն է՝ օրինակ- տիկնիկը ճաշում է:

Դիդակտիկ խաղերը զարգացնում են բոլոր հոգեկան պրոցեսները: Դիդակտիկ խաղերը պահանջում են՝

1. Առարկաներ, որոնցով խաղում է երեխան
2. Առարկաներ և նկարներ, որոնք պատկերում են գործողություններ
3. Կանոնների հստակ, պարզ բացատրություն

Դիդակտիկ խաղերի նյութական կենտրոնը խաղալիքն է: Եվ այս է այն հիմնական պատճառը, որ յուրաքանչյուր տարիքային խումբ ունի հատուկ խաղալիքներ, տարբեր առարկաներ, նկարներ և այլն: Նախադպրոցական ուսումնական հաստատություններում անհրաժեշտ է ունենալ տիկնիկ, որը պետք է իր մեծությամբ տարբերվի մյուս տիկնիկներից, որպեսզի բոլոր երեխաները կարողանան տեսնել այդ տիկնիկին:

- ✓ **Սեղանային խաղերն** անց են կացվում սեղանի շուրջ 2-4 հոգով: Այս խաղերը տարբեր խաղ- պիտույքներ ենէ թեմատիկ խաղեր,նկարներ, լոտոներ և այլն: Սեղանային խաղերի ժամանակ մենք՝ դաստիարակներս տալիս ենք հակիրճ, պարզ հասկանալի բացատրություններ, օրինակ- բանանը դեղին է, վարունգը- կանաչ,աճում է մարգերի վրա և այլն: Այս ձևով հարստացնում ենք երեխաների գիտելիքները և բառապաշարը: Սեղանային խաղերը զարգացնում են մտածողությունը, ուշադրությունը և այլն:
- ✓ **Խոսքային խաղերն** անց են կացվում առանց խաղալիքների, պիտույքների: Այս խաղերի հիմքում ընկած է խոսքը: Խոսքային խաղերը պահանջում են հակադրելու ունակություն, այս խաղերի մեծամասնությունը խաղ հանելուկներն են: Այս խաղերը հիմնականում անց են կացվում ավագ խմբերում:

Խաղի նշանակությունը երեխաների դաստիարակության և զարգացման գործում

Նախադպրոցական տարիքն ունի բացառիկ, շատ կարևոր նշանակություն երեխանեչի ֆիզիկական, հոգեկան զարգացման համար: Նախադպրոցական տարիքում զարգացող գործունեության ձևերը հիմնականում գտնվում ենբարդ հարաբերությունների մեջ միահյուսվում և լրացնում են մեկը մյուսին: Այս համակարգի կենտրոնում է գտնվում խաղը, որի համարվում է ն ախադպրոցակն տարիքի երեխաների առաջատար գործունեություն: Խաղը որոշիչ ազդեցություն է թողնում երեխաների անձնավորության ձևավորման վրա:

Խաղը գործունեություն է, ուր հաղթահարվում են երեխաների ցանկությունները2, և երեխաները սովորում են գործել ոչ թե ակընթարթային, վայրկյանական ցանկությունների ազդեցության տակ, այլ ապագա գործունեության իրադրությունը:

Խաղը նախապատրաստում է երեխաներին դպրոցական ուսուցմանը, օգնում է նաև կատարել իրենվ վրա կամավոր վերցրած պարտականությունները:

Խաղը կարող է ծառայել երեխաների դաստիարակության և զարգացման բարդ խնդիր միայն այն դեպքում,երբ այն ներգրավվում է կազմակերպվող և կատարող մանկավարժական գործընթացի մեջ:[1;202]

Խաղը նպաստում է երեխաների բազմակողմանի՝ մտավոր, ֆիզիկական, գեղագիտական, բարոյական, աշխատանքային դաստիարակության: Ղեկավարելով խաղը մենք՝ դաստիարակներս ազդում ենք երեխաների վարիք, կամքի, գիտակցության, զգացմունքների, իմացական գործընթացների՝ հիշողության, ուշադրության, երևակայության, խոսքի, մտքի, ընկալման, ըմբռնման, ինչպես նաև դիտունակության զարգացման վրա:[1;202]

Մեծ է խաղի դերը երեխաների մտավոր զարգացման գործում, որովհետև ճշտում ենք, թե երեխաներն ինչ գիտելիքներ ունեն և խորացնում ենք երեխաների գիտելիքները:

Խաղն ունի շատ մեծ նշանակություն երեխաների բարոյական, դաստիարակության հարցում: Մենք օգտագործում ենք խաղերի բովանդակությունը՝ իրականության նկատմամբ դրական վերաբերմունք ենք սերմանում հայրենիքի, մշակույթի, կրոնի, ժողովրդի հանդեպ սիրո զգացմունք և այլն:

Խաղի ընթացքում երեխաների մտավոր ակտիվությունը միշտ կապված են երևակայության հետ: Օրինակ դերի ընտրությունը, կատարումը, իրականացման միջոցների հայթայթումը ենթադրում է երևակայության առկայություն:

Բոլոր խաղերն օգտագործվում են,որպես ֆիզիկական դաստիարակության միջոց: Խաղերը հիմնականում պահանջում են ակտիվ շարժումներ, ինչի շնորհիվ արյան շրջանառությունն է ուժեղանում, ավելի լիարժեք է կատարվում նյութափոխանակությունը, ինչպես նաև խաղերը նպատում են ճիշտ կեցվածքի ձևավորմանը:

Խաղը զգալիորեն նպաստում է աշխատանքային դաստիարակությանը: Խաղերի ժամանակ աղջիկը երեխաներն ընդօրինակում են մայրիկներին, տատիկներին, դաստիարակին, իսկ տղաները հայրիկներին, պապիկներին: Հետևաբար խաղերում դաստիարակվում է հարգանք օգտակար աշխատանքի նկատմամբ:

Խաղը ծառայում է նաև գեղագիտական դաստիարակությանը: Շրջապատող կյանքը խաղերում արտացոլվում է կերպարի, դերի միջոցով: Խաղը շատ անմիջական կապված է նախադպրոցական երեխաների գեղագիտական ստեղծագործության՝ ծեփի, կառուցողական աշխատանքի, նկարչության հետ:[1;205]

Այսպիսով, խաղը երեխաների բազմակողմանի դաստիարակության միջոց է: Այստեց ձևավորվում են երեխաների անձնավորության բոլոր կողմերը: Սրանով են բացատրվում խաղի դաստիարակչական հնարավորությունները:

Խաղի դերը երեխաների կյանքի կազմակերպման գործում

Խաղը երեխաների համար իրական կյանք է: Խաղի մեջ դրսևորվում են երեաների անձնավորությունը, նրանց անհատական առանձնահատկությունները: Խաղը հնարավորություն է տալիս դաստիարակությունն իրականացնել կազմակերպված և պլանավորված ձևերով:

Կազմակերպելով և ղեկավարելով խաղը, մենք՝ դաստիարակներս ուսումնասիրում ենք կազմվող միավորները, պարզում ենք խմբավորումների օգտակար կամ վնասակար լինելը և եզրակացնում են, թե երբ և ինչպես միջամտենք, ինչպես ազդենք երեխաների վրա:

Խաղի միջոցով երեխաները սովորում են՝

- ✓ Զարգացնել իրենց ստեղծագործական կարողությունները
- ✓ Զարգացնել պրոբլեմներ լուծելու իրենց հմտությունները
- ✓ Հաճույք զգալ,ուրախանալ
- ✓ Սոցիալական հմտություններ
- ✓ Հմտություններ զարգացման բոլոր ոլորտներում
- ✓ Մարդկանց,կենդանիներին և առարկաներին բնորոշ հատկանիշները:[4]

Ես միշտ ուղղություն եմ տալիս երեխաներին և զարգացնում են նրանց ընդհանուր հետաքրքրությունները,ամրապնդում եմ մանկական կոլեկտիվը, օգնում եմ և խաղը դարձնում ավելի հետաքրքիր: Երեխաներն իրենց զարգացումը ստանում են ի շնորհիվ մեր բարյացկամ վերաբերմունքի, նրանց ժամանակին տված խորհրդի, երեխաների մտահղացմանը նպաստող անհրաժեշտ նյութերի առկայության:

Ես ինքս աշխատում են երեխաների համար լինել օրինակելի, սիրելի դաստիարակ և դա այդպես է և կլինի այդպես միշտ: Դաստիարակը պետք է լինի երեխաների խաղերի ցանկալի մասնակիցը:

Գործնական աշխատանք

Ներկայացնում եմ գործնական աշխատանքիս օրինակը:

Միջին խմբում կազմակերպել եմ սյուժետադերային խաղ << Տուն-տունիկ>>: Երեխաներն ընդօրինակում էին իրենց մայրիկներին՝ ափսեները լվանում էին սպասք լվացող մեքենայով, հացը թխում էին հաց թխող մեքենայով(եթե տարիներ առաջ կարող էին դա անել խմորը հունցելու և վառարանի մեջ թխելու տարբերակով): Երեխաները տիկնիկի հագուստները լվանում էին լվացքի մեքենայով(եթե տարիներ առաջ այդ պրոցեսը կարող էին անել տաշտակի մեջ հագուստն օճառելու և տրորելու եղանակով): Հատակը մաքրեցին փոշեկուլով (եթե տարիներ առաջ դա կարող էին անել ավելով):

Եզրակացություն

Այսպիսով,ուսումնասիրելով <<Խաղը որպես նախադպրոցականի առաջատար գործունեություն>> թեման եկա այն եզրակացության, որ խաղն ունի շատ մեծ նշանակություն նախադպրոցական տարիքի երեխաների կյանքում, քանի որ խաղն ուղղված է նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր զարգացմանը, հուզազգացմունքային ոլորտի հարստացմանը, հասակակիցների հետ փոհարաբերությունների հաստատման, սեփական սոցիալական փոձի ձեռք բերմանը:

Խաղը հանդիսանում է երեխայի ճանաչողական հնարավորությունների ճանաչման հատուկ գործոն, որտեղ առաջնային են համարվում հուզական ապրումները և իրականության զգացմունքային կերպարային յուրացումը: Սա նշանակում է, որ խաղը հանդիսանում է կարևոր գործոն ուսուցման և դաստիարակության գործընթացում, իսկ դրա իրականացնողները՝ մենք դասիտարակներս ենք նախադպրոցական ուսումնական հաստատություններում:

Գրականության ցանկ

1.Ալեքսանդրյան Է. Ա. , Նախադպրոցական մանկավարժություն, Երևան,1992թ.,էջ 271

2.Մանուկյան Լ., Միտոյան Հ., Սարգսյան Մ., և ուրիշներ, Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր, Երևան, 2007թ., էջ 141

3.Միտոյան Հ., Մարության Ս., Սմբատյան Լ., և ուրիշներ, Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր, Երևան, 2011թ., էջ 165

4. https://drive.google.com/drive/folders/1kFocOiHVsCPORbwSEXWUbXlpllOjanv6